

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ս.Պողոսյան, Ա.Ասրյան, Խ.Ստեփանյան, Է.Հովհաննիսյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**Ուսումնական ծեռնարկ ոչ մասնագիտական
ֆակուլտետների համար**

ԵՐԵՎԱՆ 2009

*Հրատարակվում է ի. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
որոշմամբ*

**Խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Մ. Կարապետյան
պ.գ.թ., դոցենտ Է. Գևորգյան**

**Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Է. Մինասյան
պ.գ.թ., դոցենտ Յ. Մուրադյան**

Հայոց պատմության այս ձեռնարկում սկզբնաղբյուրների և նորագույն ուսումնասիրությունների հենքի վրա համառոտակի ներկայացված հայ ժողովրդի պատմական անցյալի գլխավոր իրադարձությունները: Ձեռնարկը նախատեսված է բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնագույն և հին շրջան

1. Հայկական լեռնաշխարհի	5
2. Հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը	8
3. Վանի (Արարատյան) թագավորություն	12
4. Հայաստանը Երվանդունիների օրոք	16
5. Արտաշեսյան արքայատոհմի հիմնումը: Արտաշես 1-ին	20
6. Հայաստանը Տիգրան Մեծի օրոք	23
7. Արտավազդ 2-րդ: Արտաշեսյան արքայատոհմի անկումը	27
8. Արշակունիների արքայատոհմի հիմնումը: Տրդատ 1-ին	31
9. Հայաստանը 2-3-րդ դարերում	34
10. Քրիստոնեության հռչակումը պետական կրոն	38
11. Հայաստանը 4-րդ դարում	41
12. Արշակունիների արքայատոհմի անկումը	45
13. Պետական կարգը Արշակունիների օրոք	49
14. Ազատագրական պայքարը 450-451թթ.	52
15. Ազատագրական պայքարը 481-484թթ.	57
16. Հայաստանը 6-րդ դարում	59
17. Արաբական տիրապետության հաստատումը Հայաստանում	64
18. Հակաարաբական ապստամբությունները Հայաստանում	67

Միջին դարեր (9-18-րդ դարեր)

19. Բագրատունիների թագավորության հիմնադրումը: Աշոտ I	70
20. Պայքար պետականության պահպանման համար: Սմբատ I, Աշոտ II	73
21. Բագրատունիների թագավորության վերելքը	76
22. Բագրատունիների պետության թուլացումը և անկումը	79
23. Պետական կարգը և բանակը Բագրատունիների օրոք	82
24. Հայաստանի նվաճումը սելջուկների կողմից	85
25. Ջաթարյանների իշխանապետությունը	88
26. Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից	91
27. Կիլիկիայի աշխարհագրական տարածքը և բնակչությունը	94
28. Կիլիկիայում Ռուբինյան իշխանության ստեղծումը և ամրապնդումը	96
29. Լևոն II: Թագավորության հռչակումը Կիլիկիայում	99
30. Հեթումյան արքայատոհմի հաստատումը Կիլիկիայում	103
31. Կիլիկիայի հայոց թագավորության թուլացումը և անկումը	105
32. Կիլիկիայի հայոց թագավորության պետական կարգը և բանակը	109
33. Հայաստանի բաժանումը Թուրքիայի և Իրանի միջև 16-17-րդ	112

34. Հայաստանի ազատագրության ջանքերը 16-17-րդ դդ.	115
35. Իսրայել Օրին և Հայաստանի ազատագրության հարցը	118
36. Ազատագրական պայքարը 1722-1730թթ.	121
37. Արևելյան Հայաստանը 1730-40-ական թթ.	125
38. Հովսեփ Էմինը և Հայաստանի ազատագրության հարցը	128
39. Հայաստանի ազատագրության ծրագրերը 1760-80-ական թթ.....	132

Նոր շրջան (1800-1914թթ.)

40. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին	136
41. Արևելյան Հայաստանը 1830-1860-ական թթ.	139
42. Արևմտյան Հայաստանը 1830-1860-ական թթ.	143
43. Ջեյթունի 1862թ. ապստամբությունը	146
44. Հայկական հարցի միջազգայնացումը	149
45. Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները	154
46. Ազգային կուսակցությունների ստեղծումը	157
47. Թուրքական պետության հայահալած քաղաքականության սաստկացումը 19-րդ դ. վերջերին	160
48. Ֆիդայական շարժման սկզբնավորումը	163
49. Սասունի 1894թ. ապստամբությունը: Բարենորոգումների մայիսյան ծրագիրը	167
50. Հայկական կոտորածները 1895-1896թթ.: Մեծ տերությունների դիրքորոշումը	171
51. 1895-1896թթ. հերոսամարտերը	174
52. Առաքելոց վանքի կռիվը և Սասունի 1904թ. ինքնապաշտպանությունը	178
53. Արևելյան Հայաստանը 20-րդ դ. սկզբին	181
54. Երիտթուրքերի 1908թ. հեղաշրջումը: Օսմանիզմ և պանթուրքիզմ	184
55. Կիլիկիայի 1909թ. հայկական ջարդերը և ինքնապաշտպանական մարտերը	187
56. Հայկական բարենորոգումների հարցը 1912-1914թթ.	190

Նորագույն շրջան (1914-2008թթ.)

57. Հայ ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին	193
58. Հայոց մեծ եղեռնը	196
59. Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915թ.	200
60. Եղեռնի կազմակերպիչների դատաստանը	203
61. Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում	207
62. 1918թ. մայիսյան հերոսամարտերը և հայկական պետականության վերականգնումը	210

63. Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1918-1920թթ.	216
64. ՀՀ արտաքին հարաբերությունները 1918-1920թթ.: Սևրի պայմանագիրը	221
65. 1920թ. հայ-թուրքական պատերազմը	225
66. Հայաստանի խորհրդայնացումը	227
67. 1921թ. փետրվարյան ապստամբությունը	230
68. Արցախը և Ջանգեզուրի 1918-1923թթ.	233
69. Հայաստանի սահմանների հարցը 1921-1923թթ.	240
70. Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թթ.	243
71. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին	246
72. Հայկական տարածքների խնդիրը 1945-1946թթ.	249
73. Խորհրդային Հայաստանը 1945-1988թթ.	252
74. Ազգային զարթոնքը Խորհրդային Հայաստանում 1960-ական թվականներին	255
75. Արցախյան ազատագրական շարժումը: ԼՂՀ հռչակումը	258
76. Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումը	262
77. Հայաստանի Երրորդ Հանրապետության ներքին և արտաքին դրությունը	264
78. Հայկական սփյուռքը 1920-2008 թթ.	269

Հայկական մշակույթը
(հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)

79. Հայկական հնագույն մշակույթը	273
80. Հայկական մշակույթը 5-8-րդ դդ.	278
81. Հայկական մշակույթը 9-14-րդ դդ.	280
82. Հայկական մշակույթը 15-18-րդ դդ.	285
83. Հայկական մշակույթը 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին	287
84. Նորագույն շրջանի հայկական մշակույթը	292

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀ

Հայ ժողովուրդը կազմավորվել և հազարամյակների ընթացքում իր քաղաքական ու մշակութային զարգացումն է ապրել Հայկական Լեռնաշխարհում և հարակից տարածքներում: Հայկական Լեռնաշխարհը գտնվում է Առաջավոր Ասիայի հյուսիսում: Նրա արևելքում գտնվում է Իրանական սարահարթը, արևմուտքում՝ Փոքր Ասիա թերակղզին, հյուսիսում՝ Կովկասյան լեռները, իսկ հարավում՝ Միջագետքը: Այն զբաղեցնում է մոտ 350.000 կմ² տարածք, ունի ծովի մակերևույթից 1500-1800 մետր միջին բարձրություն և ավելի բարձրադիր է, քան հարևան երկրները, որի համար էլ անվանվել է «Լեռնային կղզի»:

Հյուսիս-արևմուտքից Հայկական Լեռնաշխարհը եզերում են Արևելապոնտական, հյուսիսից՝ Փոքր Կովկասի, հարավից՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթաները: Արևելքում Հայկական Լեռնաշղթան տարածվում է մինչև Ուրմիա լճի զոգավորությունը և Ղարա Դաղի (Հայկական) լեռները: Արևմուտքում Հայկական Լեռնաշխարհի սահմանը կազմում են Անտիտավրոսի և Անտիպոնտոսի լեռները:

Հայկական Լեռնաշխարհի գրեթե կենտրոնով՝ արևելքից արևմուտք, ձգվում է Հայկական պար Լեռնաշղթան, որը Լեռնաշխարհը բաժանում է հյուսիսային և հարավային մասերի: Հայկական պարն արևելքում սկիզբ է առնում Մասիս (Մեծ Արարատ, 5165 մ) սարից, որը Լեռնաշխարհի ամենաբարձր գագաթն է և ձգվում է մինչև Արևմտյան Եփրատ: Երկրորդ բարձր լեռը Սիփանն է (4434 մ), որը բարձրանում է Վանա լճի հյուսիսային ափին: Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռը Արագածն է (4090 մ):

Աշխարհագրական բարձր դիրքի շնորհիվ Հայկական Լեռնաշխարհից են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի խոշոր գետերը: Եփրատը և Տիգրիսը թափվում են Պարսից ծոցը, ճորոխը, Հալիսը և Գայը՝ Սև ծովը, Կուրը և Արաքսը՝ Կասպից ծովը, Ջիհունը՝ Միջերկրական ծովը: Արաքս (Երասխ) գետը սկիզբ է առնում Բյուրակն լեռներից և միակն է, որ ամբողջությամբ հոսում է Հայաստանի տարածքով և միանալով Կուրին թափվում է Կասպից ծովը: Արաքսն իր վտակներով սնուցում է Հայկական Լեռնաշխարհի ամենամեծ՝ Արարատյան

դաշտը: Հայ ժողովուրդը սիրով Արաքսն անվանում է Մայր գետ:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է մեծ ու փոքր լճերով: Սևանա լիճը (Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով) աշխարհի բարձրադիր խոշոր լճերից է, ունի քաղցրահամ ջուր, հայտնի է իշխան, գեղարքունի, կարմրախայտ, սիգ ձկնատեսակներով: Լիճն ունեցել է մեկ կղզի, որը ջրի մակարդակի իջեցումից հետո վերածվել է թերակղզու: Սևանի մեջ են լցվում 29 գետեր և գետակներ, իսկ նրանից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Վանա լիճը (Բզունյաց ծով) ավելի մեծ է, իսկ նրա աղի ջրերում բազմանում է միայն տառեխ ձուկը: Վանա լիճն ունի չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Կտուց, Արտեր: Աղթամարը ժամանակին եղել է կաթողիկոսական նստավայր, հայտնի է իր ճարտարապետական կոթողներով, հատկապես Ս.Խաչ եկեղեցով:

Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի միջև գտնվում է Կապուտան կամ Ուրմիա լիճը: Այն լեռնաշխարհի ամենախոշոր լիճն է և ունի բազմաթիվ կղզիներ: Նրա չափազանց աղի ջրերում ձկներ չկան:

Այս երեք խոշոր լճերից բացի Հայկական լեռնաշխարհում կան բազմաթիվ մանր քաղցրահամ լճեր՝ Փարվանա, Զըլդը (Ծովակ Հյուսիս), Ծովք, Արճակ, Գայլատու և այլն:

Հայկական լեռնաշխարհում անտառները համեմատաբար քիչ են: Անտառներ կան Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Տայքում, Ռշտունիքում: Անտառներում տարածված են կաղնին, հաճարենին, բոխին, թխկին, հացենին, կեչին: Հին Հայաստանում տնկվել են նաև արիեստական անտառներ (Սոսյաց, Խոսրովի):

Հայկական լեռնաշխարհի բուսականությունը հարուստ է և բազմազան: Երկրի ցածրադիր վայրերում արիեստական ոռոգման դեպքում աճում են բամբակ, նուռ, թուզ, բրինձ և այլն: Մեծ տարածում ունի պտուղների (ծիրան, դեղձ, տանձ, խնձոր, բալ, կեռաս և այլն) և խաղողի մշակությունը: Մշակվում են ցորեն, գարի, կորեկ, հաճար: Հայաստանը վայրի ցորենի նախահայրենիքներից մեկն է:

Բազմազան է նաև Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը: Ընտանի կենդանիներից տարածված են

ոչխարը, այծը, կովը, ձին, գոմեշը, իսկ վայրի կենդանիներից՝ աղվեսը, գայլը, արջը, նապաստակը, վարազը, եղջերուն, այծյամը, վայրի ոչխարը: Հնուց ի վեր զարգացած է եղել մեղ-վապահությունը: Թռչուններից հանդիպում են արծիվ, բազե, արագիլ, կաքավ, բադ, լոր և այլն:

Հայաստանը պատմական տարբեր ժամանակաշրջան-ներում ենթարկվել է վարչական բազմապիսի բաժանումների: Ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ հաճախ Հայաստանի տարածքում առաջ են եկել մի քանի թագավորություններ կամ երկրի որոշ հատվածներ հայտնվել են օտարների տիրապետության տակ: Այժմ ընդունված է պատմական Հայաստանի վարչական բաժանման հիմքում դնել VII դ. նշանավոր գիտնական Անանիա Շիրակացու կազ-մած «Աշխարհացույցը»: Ըստ դրա, Հայաստանը բաժանվում է երկու վարչաքաղաքական միավորների՝ Մեծ Հայք և Փոքր Հայք, որոնք իրարից բաժանվում էին Արևմտյան Եփրատով: Մեծ Հայքն ուներ ավելի քան 300.000 կմ² տարածք, իսկ Փոքր Հայքը՝ շուրջ 100.000 կմ²:

Մեծ Հայքը բաժանված էր 15 նահանգների կամ աշ-խարհների՝ Այրարատ, Գուգարք, Սյունիք, Ուտիք, Արցախ, Փայտակարան, Պարսկահայք, Վասպուրական, Կորճայք, Սոկք, Աղձնիք, Տուրուբերան, Ծոփք, Բարձր Հայք, Տայք: Դրանք իրենց հերթին բաժանվում էին շուրջ 190 գավառների: Փոքր Հայքն ուներ 5 նահանգ:

11-րդ դարում հայկական պետականության կենտրոնը տեղափոխվեց Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին գտնվող Կիլիկիա, ուր մինչև 14-րդ դարի վերջը պահպանվեց հայոց թագավորությունը: Կիլիկիան զբաղեցնում էր մոտ 40.000 կմ² տարածք:

Հայկական լեռնաշխարհի տարածքում հայ ժողովուրդը մեծամասնություն է կազմել մինչև 1915թ. Մեծ եղեռնը, որի հետևանքով մեր հայրենիքի մեծագույն մասը հայաթափվեց, իսկ թուրքերը փորձում են հայության բնօրրանը դարձնել սեփական հայրենիքի մի մասը:

Հայաստանի Հանրապետության տարածքն ընդգրկում է Մեծ Հայքի Այրարատ, Սյունիք, Գուգարք, Ուտիք նահանգնե-րի մի մասը և ունի 29.800 կմ² տարածք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը զբաղեցնում է մոտ 10.000 կմ² տարածք և

ընդգրկում է Արցախ, Ուտիք և Սյունիք նահանգների մի մասը: Փաստորեն, այսօր հայկական պետականության հովանու ներքո է ավելի քան 400.000 կմ² զբաղեցնող մեր հայրենիքի միայն 10%-ը:

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ պատմագիտության մեջ տարբեր տեսակետներ են արտահայտվել: Սակայն անվիճելի փաստ է, որ հայ ժողովրդի մարդաբանական, լեզվական և մշակութային ակունքները Հայկական լեռնաշխարհում են: Հայերը պատկանում են եվրոպոիդ ռասայի արմենոիդ (առաջավորասիական) մարդաբանական տիպին, որին հատուկ են կլոր, հետևամասը տափակ գանգատիպը, ուղիղ, լայն և միջին բարձրության ճակատը, կոր քիթը, մուգ մազերն ու աչքերը: Այն համարվում է Առաջավոր Ասիայի հնագույն տիպը, որի մասին վկայում են Հայաստանի, Կապադոկիայի, Կիլիկիայի, Միջագետքի ու Իրանի տարածքում կատարված պեղումները:

Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղերից է: Ըստ գիտական նորագույն տեսություններից մեկի՝ հնդեվրոպական ցեղերի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհին է ու նրա հարակից տարածքը:

Ք.ա. 4-3-րդ հազարամյակներում այս տարածքներից պարբերական արտագաղթի հետևանքով հնդեվրոպական ցեղերը սփռվեցին Եվրոպայից Հնդկաստան ընկած ընդարձակ տարածքներում: Այսպիսով, տարբեր ցեղերից կազմավորվեցին մարդկանց ավելի մեծ և կայուն խմբեր՝ ժողովուրդներ: Այս եղանակով առաջացան հույները, խեթերը, գերմանացիները, պարսիկները, հնդիկները և այլն:

Նախահայրենիքում մնացած հնդեվրոպական և այլ տեղաբնիկ ցեղերի միավորումից ու միաձուլումից ժամանակի ընթացքում կազմավորվեց հայ ժողովուրդը: Այսպիսով, մարդաբանական, լեզվաբանական ուսումնասիրությունների, հնագիտական նյութերի վկայությամբ հայերը հանդիսանում են Հայկական լեռնաշխարհի բնիկները:

Հայկական լեռնաշխարհը վաղնջագույն ժամանակներից տարբեր ժողովուրդների կողմից ընկալվել է որպես մարդկության բնօրրան: Հետաքրքիր է մարդկության ծագման Աստվածաշնչյան ավանդությունը, ըստ որի մարդկությունը երկու անգամ էլ, թե Ադամի, թե Նոյի ժամանակ, առաջացել է Հայկական լեռնաշխարհում: Այս տեսակետի համար հիմք է ծառայում Աստվածաշնչի Ծննդոց գրքում նկարագրված երկրային դրախտի գտնվելու վայրը, որտեղից բխում էին չորս գետեր՝ Փիսոնը, Գեհոնը, Տիգրիսը և Եփրատը: Փիսոն և Գեհոն գետերը նույնացվում են ճորոխի ու Արաքսի հետ: Իսկ Նոյը, ինչպես գիտենք, ջրհեղեղից հետո հանգրվանեց Արարատի վրա: Աշխարհի հնագույն՝ շումերական, ասորական, բաբելոնական էպոսները նույնպես վկայում են, որ համաշխարհային ջրհեղեղից փրկված մարդը ապաստանել է Հայկական լեռնաշխարհի տարածքում:

Ինչպես տեսնում ենք, հնագույն աղբյուրները վկայում են Հայաստանի տարածքից մարդկության և քաղաքակրթության տարածման մասին: Այդ մասին են վկայում նաև XX դ. գիտնականների կողմից կատարված մի շարք լուրջ ուսումնասիրություններ: Ըստ աշխարհահռչակ ակադեմիկոս Ն. Վավիլովի և այլ գիտնականների ուսումնասիրությունների վաղ անասնապահական և երկրագործական գյուղերը (հացահատիկային բույսեր և խաղողի տեսակներ, թանկարժեք քարեր, օբսիդիան կամ վանակատ, պղինձ, երկաթ ևն) և նրանց մշակման կենտրոնները եղել են Հայկական լեռնաշխարհի տարածքում: Իսկ Ու. Օլկոտտի կարծիքով՝ Ք.ա. III հազարամյակում Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիայում են սկիզբ առել երկնականարի 12 կենդանակերպ համաստեղությունների մասին գաղափարը, դրանց անունները և արեգակնային օրացույցը:

Հնդեվրոպական ցեղերի տրոհումից հետո ստեղծվեցին առաջին հայալեզու ցեղային պետական կազմավորումները, որոնք հետզհետե վերածվեցին համեմատաբար կայուն պետականությունների:

Հայկական լեռնաշխարհի տարածքում դեռևս ամենահին ժամանակներից առաջ են եկել տարբեր պետական կազմավորումներ, որոնք նպաստեցին հայ ժողովրդի նախնիների քաղաքական հասունացմանը և ձևավորմանը որպես ազգ: Այդ

իշխանությունների, ցեղային միությունների ու փոքր թագավորությունների միավորումից հետագայում առաջ եկան առաջին համահայկական թագավորությունները:

Ըստ հայկական ավանդության Ք.ա. III հազարամյակի սկզբին է կազմավորվել հայ ժողովուրդը, որի նախահայրն է համարվում Յայկ Նահապետը: Ք.ա. 2492թ. օգոստոսի 11-ին Վանա լճի մոտ գտնվող Յայոց ձորում տեղի ունեցած ճակատամարտում Յայկը սպանեց Միջագետքի տիրակալ Բելին, որով ապահովեց մեր երկրի ազատությունն ու անկախությունը: Հետագա դարերում այդ օրը՝ Նավասարդի 1-ը (օգոստոսի 11) համարվել է հայկական տոմարի սկիզբը: Այդ օրը կազմակերպվել են Նավասարդյան խաղերն ու տոնախմբությունները:

Յայկական լեռնաշխարհում կազմավորված պետական կազմավորումների մասին պահպանվել են մեծ թվով գրավոր վկայություններ: Ամենահին գրավոր հիշատակությունները վերաբերում են շումերական և աքքադական էպոսներից հայտնի Արատտա պետությանը, որը գոյություն է ունեցել Ք.ա. 28-27-րդ դարերում: Արատտա անունը Արարատի աղավաղված ձևն է: Շումերները, որոնք համարվում են առաջինը գիր և քաղաքակրթություն ստեղծած ժողովուրդներից, Արատտան անվանում էին «սրբազան օրենքների երկիր», որտեղից տարածվել է քաղաքակրթությունը, իսկ իրենք ձեռք են բերել իրենց գիտելիքները: Այն եղել է թեոկրատական պետություն՝ երկիրը ղեկավարում էր քրմապետը:

Հայաստանի տարածքում պետության մասին հաջորդ հիշատակությունը պատկանում է Աքքադի թագավորության հիմնադիր Սարգոնին (Ք.ա. 24-րդ դ.): Ք.ա. 23-րդ դ. Աքքադի թագավոր Նարամ-Սուենը հիշատակում է Արմանի կամ Արմանում երկիրը, որի բնակիչներին կոչում է Հայայի զավակներ կամ Հայա ժողովուրդ:

Ք.ա. 15-13-րդ դդ. խեթական արձանագրություններում բազմիցս հիշատակվում է խեթական թագավորությունից արևելք գտնվող Հայասա երկիրը: Նրանց սահմանը եղել է Եփրատ գետը և ուղիղ գծով ձգվել է մինչև Սև ծով: Բազմաթիվ պատերազմներ են տեղի ունեցել խեթերի ու Հայասայի միջև, որոնք ընթացել են փոփոխակի հաջողություններով: Հայասան, դաշնակցելով Սև ծովի հարավ-արևելյան ափին

ապրող կասկերի հետ, նույնիսկ կարողացավ գրավել ու ավերել խեթերի մայրաքաղաք Խաթուսան: Խեթական Սուլիլուլիուն թագավորը (1380-1346) դաշինք կնքեց Հայասալի Հուգաննա թագավորի հետ, որին կնության տվեց դստերը: Նրանք ջախջախեցին Միտանի պետությանը, որի հյուսիսային շրջանները միացվեցին Հայասալին:

Հետաքրքիր է նշել, որ երբ խեթական Թուդիալիա IV թագավորը (1250-1220) մեր երկիրն անվանում է Հայասա, նույն ժամանակ Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտան (1243-1221) այն կոչում է Նաիրի:

Հավանաբար Ք.ա. 13-րդ դ. Հայասան մասնատվեց մի քանի տասնյակ իշխանությունների, և ասորեստանյան թագավորները Հայաստան արշավելիս հանդիպում էին 40, 60 և ավելի թագավորների միացյալ դիմադրությանը:

Այդ իշխանություններից հայտնի է Սուխմու երկիրը, որի անունով վրացիները Հայաստանը անվանում են Սոմ-խեթի: Եփրատի աջափնյակում ընկած էր Թեգարամա երկիրը, որն Աստվածաշնչում անվանված է Թորգոմի տուն: Ըստ հայոց ավանդության, Թորգոմը հայ ժողովրդի նախահայր Հայկի հայրն էր: Դրանից հարավ ընկած էր Մելիդ երկիրը (Մալաթիա), որի հարևաններն էին հարավից՝ Խաթե երկիրը և Ծոփքը: Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում գտնվող Արմե և Ուրմե իշխանություններում բնակվում էր «արմեն» ցեղախումբը, որի անունով են մեզ անվանում տարբեր ժողովուրդներ: Արարատյան դաշտի տարածքում ձևավորվել էր Էթիունի երկիրը, Գեղարքունիքում՝ Վելիքուխին, Տայքում՝ Դիաուխին և այլն:

Քաղաքականապես մասնատված լեռնաշխարհը Ք.ա. 9-րդ դարում իր իշխանության ներքո միավորեց Վանի կամ Արարատյան թագավորությունը: Ավելի քան երկուսուկես դար գոյություն ունեցած միասնական քաղաքական, տնտեսական և մշակութային դաշտը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի վերջնական կազմավորման գործում: Վանի պետության բնակչության գերակշիռ հայկական տարրի տարբեր հատվածները հնարավորություն ստացան սերտորեն շփվելու ինչպես միմյանց, այնպես էլ ուրիշ էթնիկական խմբերի հետ: Վանի արքայատոհմի անկման շրջանում հայկական երվանդական արքայատոհմը հասավ քաղաքական գերիշխանու-

յան, որի շնորհիվ հայերը կարճ ժամանակում ձևավորվեցին որպես միասնական, ընդհանուր պետականություն, լեզու և մշակույթ ունեցող ժողովուրդ:

3. ՎԱՆԻ (ԱՐԱՐԱՏՅԱՆ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ք.ա. IX դարից Հայկական լեռնաշխարհում ասպարեզ իջավ մի պետություն, որին ասորեստանցիները կոչում էին Ուրարտու, իսկ այդ պետության թագավորներն իրենց երկիրն անվանում էին Բիայնիլի: Ուրարտուն Արարատի աղավաղված ձևն է, իսկ Բիայնիլիից ծագում է Վան անունը: Այդ պատճառով էլ ընդունված է այդ պետությունը կոչել Վանի կամ Արարատյան թագավորություն:

Այս թագավորությունը ձգտում էր մեկ միասնական պետության մեջ միավորել լեռնաշխարհի բոլոր իշխանություններին: Միասնական պետություն անհրաժեշտությունը ստեղծվել էր արտաքին թշնամիների, առաջին հերթին Ասորեստանի ավերիչ արշավանքներից դիմակայելու համար: Այս պետության առաջին թագավորը Արամեն էր (Ք.ա. 859-843թթ.), որը երկարատև պայքար էր մղում Ասորեստանի նվաճողական քաղաքականության դեմ:

Սարգուր I-ը (Ք.ա. 835-825թթ.) կառուցեց մայրաքաղաք Տուշպան (Վան): Նա իրեն անվանում է. «Մեծ արքա, հզոր արքա, բազմությունների արքա, Նաիրի երկրների արքա, արքա, որին ոչ մի թշնամի չի հաղթել»: Նրան հաջորդեց Իշպուլինին (Ք.ա. 825-810թթ.), որն իր պետությանը միացրեց Եփրատից մինչև Վանա և Ուրմիա լիճ ընկած տարածքները, այդ թվում Մուսասիրը, որը դարձավ թագավորության կրոնական կենտրոնը, քանի որ այդտեղ էր գլխավոր աստծո՝ Խալդիի տաճարը: Նրա օրոք երկրի հյուսիսային սահմանը դարձավ Հայկական պար լեռնաշղթան: Իշպուլինիի օրոք ասորեստանյան զրային համակարգի փոխարեն սկսեցին օգտագործել նորաստեղծ ուրարտական սեպագիրը:

Մենուայի օրոք (Ք.ա. 810-786թթ.) սկսվեց թագավորության վերելքը, որը տևեց մոտ 70 տարի: Վանի թագավորությունը դարձավ Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը, իսկ Ասորեստանը այդ ընթացքում ժամանակավորապես կորցրեց իր նախկին ազդեցությունը: Մենուան գրավեց

Ծուփանին (Ծոփքը), Եփրատից արևմուտք ընկած Մելիդը (Մալաթիա) և Արարատյան դաշտավայրը, ուր կառուցեց Մենուախինիլի ամրոցը: Վանում կառուցեց 72 կմ երկարությամբ ջրանցք, որը հայտնի է «Շամիրամի ջրանցք» անունով: Նա նվաճեց Ասորեստանին ենթակա Մանա, Բուշտու, Պարսուա երկրները և անմիջական սպառնալիք ստեղծեց Ասորեստանի համար: Իր կառավարման վերջին տարիներին նա արշավեց հյուսիս և իրեն ենթարկեց Դիաուխին (Տայքը):

Մենուային հաջորդեց որդին՝ Արգիշտի I-ը (Ք.ա. 786-764թթ.), որի օրոք երկիրը հասավ իր քաղաքական ու ռազմական հզորության գագաթնակետին: Նա ճնշեց Ծոփքում, Մելիդում, Տայքում և այլ վայրերում ծագած ապստամբությունները, գրավեց Շիրակը (Երիախի), ապա ներխուժեց Ասորեստան, որտեղից վերադարձավ հարուստ ավարով և տասնյակ հազարավոր գերիներով: Արարատյան դաշտում Ք.ա. 782թ. նա կառուցեց Երեբունի քաղաքը, իսկ Ք.ա. 776թ.՝ նաև Արգիշտիխինիլի քաղաքը՝ հետագա Արմավիրը:

Արգիշտի I-ի օրոք Վանի թագավորությունը դարձել էր Առաջավոր Ասիայի ամենահզոր տերությունը, որի ազդեցության ոլորտում էին հայտնվել բազմաթիվ երկրներ, իսկ Ասորեստանը դժվարությամբ էր դիմակայում ուրարտական բանակների ներխուժմանը:

Արգիշտիին հաջորդեց Սարգուրի II-ը (Ք.ա. 764-735թթ.): Նա գրավեց Սևանա լճի ավազանը, Կումմուխը (Կոմմագենը), հյուսիսում հասավ մինչև Կոլխա, իսկ հարավում՝ Բաբելոն: Միաժամանակ նա հակաասորեստանյան երկրների դաշինք ստեղծեց: Այս շրջանում Ասորեստանը կրկին բռնել էր հզորացման ու վերելքի ուղին:

Ք.ա 743թ. Ասորեստանի Թիգլաթպալասար III թագավորը Դյուխսային Ասորիքի Արպադ քաղաքի մոտ ջախջախեց Սարգուրիի բանակը և մեծ ավար վերցրեց: Ք.ա. 735թ. Կոմմագենում Թիգլաթպալասարը երկրորդ անգամ հաղթեց Սարգուրիին և ներխուժեց Վանի թագավորության տարածք, պաշարեց մայրաքաղաք Տուշպան, սակայն գրավել չկարողացավ: Այդ պարտությունից հետո Ուրարտուն կորցրեց քաղաքական գերիշխանությունը Առաջավոր Ասիայում:

Ռուսա I թագավորը (Ք.ա. 735-713թթ.) կարողացավ կարճ ժամանակում ամրապնդել երկիրը, նվաճումներ կատա-

րեց Սևանից արևելք, Ուրմիա լճի հյուսիսային ու արևելյան շրջաններում: Նա խոշոր շինարարական աշխատանքներ կատարեց՝ կառուցեց Ռուսախիմիլի քաղաքը, Ռուսայի ջրանցքը և այլն: Ռուսան նույնպես ստեղծեց հակաստորեստանյան երկրների դաշինք և փորձեց Առաջավոր Ասիայում վերականգնել Ուրարտուի գերիշխանությունը: Ք.ա. 715թ. նա ետ մղեց հյուսիսից ներխուժած կիմերներին, ճնշեց կենտրոնախույս ուժերի ընթուստությունները, սակայն դրանք թուլացրին երկիրը: Ք.ա. 714թ. Ուրմիա լճի մոտ Ատրեստանի Սարգոն II թագավորը պարտության մատնեց Ռուսայի զորքերին, ներխուժեց Վանի թագավորության կենտրոնական շրջանները և մեծ ավերածություններ կատարեց: Սարգոնը գրավեց Մուսասիր քաղաքը և թալանեց խալդի աստծո գլխավոր տաճարում պահվող հսկայական հարստությունները: Սարգոնի արշավանքից հետո երկիրը այլևս նախկին հզորությունը չվերականգնեց:

Վերջին հզոր թագավորն էր Ռուսա II-ը (Ք.ա. 685-645թթ.), որը արևմուտքում արշավեց Փռյուգիա, Խաթթի և Խալիտու երկրներ, կառուցեց Թեյշեբահնի քաղաքը և բազմաթիվ հզոր բերդեր:

Ք.ա VII դարի 2-րդ կեսից հզորացավ Մարաստանը, որը Ք.ա. 612թ. գրավեց Նինվեն և կործանեց Ատրեստանը: Ք.ա. 609թ. մարերը գրավեցին և ավերեցին Տուշպան: Սակայն Վանի թագավորությունը գոյատևեց մինչև Ք.ա. 590թ. և վերջին թագավորն էր Ռուսա IV-ը (Ք.ա. 609-590թթ.):

Վանի թագավորությունը վաղ ստրկատիրական պետություն էր, որը ղեկավարում էր արքան՝ անսահմանափակ իշխանությամբ: Նրա ձեռքում էին կենտրոնացված երկրի գերագույն իշխանությունը, դատավարությունը, զինված ուժերի հրամանատարությունը, հողն ու ընդերքի հարստությունները և այլն: Արքան համարվում էր գլխավոր աստծու՝ Խալդիի ներկայացուցիչը երկրի վրա: Արքայի գահը ժառանգում էր ավագ որդին:

Արտաքին թշնամիներին դիմակայելու, արշավանքներ ձեռնարկելու, միջազգային հեղինակությունն ապահովելու, կենտրոնախույս ուժերին ընկճելու, երկրում կարգ ու կանոն հաստատելու համար անհրաժեշտ էր ունենալ հզոր զինված ուժեր: Տարեգրություններում հիշատակվում է, որ երկրում

զինվորական ծառայության ենթակա այրերի թիվը հասել է մոտ 350.000-ի: Ձինված ուժերի կորիզը կազմում էր արքունի 50.000-ոց մշտական բանակը, որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունի բերդերում, ամրոցներում և սահմանային զորակայաններում: Բանակի սպառազինության մեջ մտել են մարտականքեր, երկաթե սրեր ու դաշույններ, նիզակներ, տեգեր, սակրեր, երկաթե կեռ դանակներ, լայնալիճ աղեղներ: Վահանները, արմնակալները, սաղավարտները բրոնզից էին, օգտագործվում էին նաև երկաթե թերթավոր զրահներ, ձիու բրոնզե լանջապանակներ ու ճակատակալներ: Վանի թագավորները հետևողականորեն զբաղվել են ամրաշինությամբ, երկրի պաշտպանական համակարգի և ռազմական տեխնիկայի կատարելագործմամբ: Հարյուրավոր բերդեր ու ամրոցներ են հիմնվել տերության կենտրոնական և սահմանային շրջաններում:

Վանի թագավորության հզորությունը և ռազմաքաղաքական հաջողությունները մեծապես պայմանավորվել են նրա տնտեսական զարգացման բարձր մակարդակով: Տնտեսության վերելքը զգալիորեն խթանվեց երկրի հարուստ մետաղահանքերի շահագործմամբ և երկաթե գործիքների օգտագործմամբ: Մետաղագործության հիման վրա ծավալվեցին արհեստները (դարբնություն, զինագործություն, ոսկերչություն, քարագործություն, փայտամշակություն, ոսկորի մշակում և այլն), ընդլայնվեց առևտուրը, կատարելագործվեց շինարարական տեխնիկան: Երկաթյա գործիքների կիրառությունը և պետական հիմքերի վրա դրված ջրանցքաշինությունը (Շամիրամի ջրանցք, Ռուսայի ջրանցք և այլն) խթանեց երկրագործության առաջընթացին, յուրացվեցին նոր ցանքադաշտեր, բարելավվեց հողամշակումը: Լեռնային և նախալեռնային շրջաններում զարգացած էին անասնապահությունը և անասնաբուծությունը: Զարգացած է եղել հատիկավոր բույսերի մշակումը, խաղողագործությունը, գինու և զարեջրի արտադրությունը, ձիթագործությունը:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Ըստ ավանդության, Նինվեի գրավման ժամանակ (Ք.ա. 612թ.) մարերին աջակցել է հայոց նահապետներից Պարույր Սկայորդին, որին Մարաստանի Կիաքսար թագավորը ճանաչել է Հայոց արքա: Պարույրի ազգականներից Երվանդ Սակավակյացը հիմք դրեց հայկական նոր արքայատոհմի, որը նրա անունով կոչվեց Երվանդունիների հարստություն: Մայրաքաղաքը շարունակում էր մնալ Վանը, իսկ IV դարից դարձավ Արմավիրը: Երվանդունիների համահայկական թագավորությունը ընդգրկում էր նախկին Վանի թագավորության տարածքը, այսինքն՝ գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը և համապատասխանում էր հայ ժողովրդի եթնիկական սահմաններին:

Հույն պատմագիր Հերոդոտոսը Ք.ա. 6-5-րդ դարերի Հայաստանը ներկայացնում է միաձույլ հայ ժողովրդով բնակեցված և ընդարձակ մի երկիր, որի սահմանները հարավ-արևելքում հասնում էին մինչև Փոքր Զավ գետի ակունքները և Մարաստան, հարավում՝ մինչև Ադիաբենե (Ասորեստան), հյուսիս-արևմուտքում՝ մինչև Պոնտոս, արևմուտքում՝ մինչև Կիլիկիա: Հերոդոտոսը Հայաստանի անբաժան երկրամասն է համարում նաև Եփրատից արևմուտք ընկած Պակտիկեն, որը համընկնում է Փոքր Հայքին: Այլ խոսքով՝ Հերոդոտոսին ծանոթ Հայաստանը լիովին ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը:

Երվանդ Սակավակյացը ստիպված ընդունում է Մարաստանի գերիշխանությունը և պարտավորվում է հարկ վճարել, իսկ պատերազմի դեպքում տրամադրել զորքի կեսը: Ըստ հույն պատմիչ Քսենոփոնի հայերն ունեին 8.000 հեծյալ և 40.000 հետևակ զորք: Հայաստանը լիովին պահպանում էր պետական անկախությունը, տարածքային ամբողջականությունը, հոգևոր-մշակութային ինքնուրույնությունն ու կենսունակությունը, որոնք հաստատուն հիմքերի վրա էին դրվել նախընթաց դարերում: Երվանդ Սակավակյացը փորձեց ապստամբել Մարաստանի Աժդահակ (Ք.ա. 585-550թթ.) թագավորի դեմ: Վերջինիս զորավար Կյուրոսը կարողացավ խաբելությամբ ձերբակալել Հայոց արքային և նրա ընտանիքի

անդամներին: Հայոց թագաժառանգ Տիգրանի միջնորդությամբ, որը Կյուրոսի ընկերն էր, հաշտություն է կնքվում:

Մարաստանի գերիշխանությունը Առաջավոր Ասիայում երկար չտևեց: Աժդահակի դեմ ապստամբեց Կյուրոսը, որը պարսկական Աքեմենյան տոհմից էր: Նրան միացավ Հայոց արքա Տիգրան Երվանդյանը (Ք.ա. 560-530թթ.): Հայ-պարսկական զորքերը գրավեցին Մարաստանի մայրաքաղաք Էկբատանը, իսկ Աժդահակը սպանվեց: Ք.ա. 550թ. Կյուրոս Մեծը ստեղծեց հին աշխարհի ամենահզոր տերություններից մեկը՝ Աքեմենյան կայսրությունը, որի դաշնակիցն էր Հայաստանը: Ք.ա. 538թ. Հայոց արքա Տիգրանը Կյուրոսի հետ մասնակցել է նաև Նոր Բաբելոնի թագավորության կործանմանը:

Ք.ա. 522-520թթ. մի շարք հպատակ երկրներ ապստամբեցին Աքեմենյան Դարեհ I արքայի (Ք.ա. 522-486թթ.) դեմ: Այդ ապստամբության և մղած ճակատամարտերի մասին հիշատակված է Դարեհի Բիհիսթուն ժայռի վրա թողած եռալեզու արձանագրության մեջ: Չնայած Դարեհը Հայաստանը չի հիշատակում ապստամբած հպատակ երկրների շարքում, սակայն նրա զորքերը մտան նաև մեր երկիր, ուր հանդիպեցին ամենահամառ դիմադրությանը: Դա վկայում է, որ Հայաստանը մինչ այդ պահպանել էր անկախություն և նույնիսկ աջակցել էր Աքեմենյանների դեմ ապստամբած երկրներին: Այդ ժամանակ ապստամբել էր նաև Բաբելոնը, ուր արքա էր հռչակվել հայազգի Արախան: Այդ ամենը վկայում են հայերի ռազմաքաղաքական մեծ դերակատարության մասին: Դարեհը Հայաստան էր ուղարկել երկու բանակ՝ պարսիկ Վահունիսայի և հայազգի Դադարշիշի գլխավորությամբ: Ճակատամարտերը հիմնականում տեղի ունեցան Յուսիսային Միջագետքում և Հայաստանի հարավում: Նրանք միայն 5 ճակատամարտերից հետո կարողացան հաղթել և հնազանդեցնել Հայաստանը:

Ապստամբության ճնշումից հետո Դարեհը Աքեմենյան պետությունը բաժանեց 20 սատրապությունների: Հայաստանն ընդգրկում էր 13-րդ և 18-րդ սատրապությունների տարածքը: Սատրապի պաշտոնը հիմնականում տրվում էր Երվանդունի թագավորներին, որոնք պահպանել էին իրավունքների մեծ մասը և ներքին ինքնավարությունը, իսկ որոշ դեպքերում սատրապ էր նշանակվում որևէ պարսիկ մեծա-

տոհմիկ: Այս վիճակը շարունակվեց մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը:

Ք.ա. 334թ. Ալեքսանդր Մակեդոնացին հարձակվեց Աքեմենյան կայսրության վրա և գրավեց նրա արևմտյան մասը: Ք.ա. 331թ. Գավգամելայի վճռորոշ ճակատամարտում Ալեքսանդրը ջախջախեց Դարեհ III արքայի բանակը և կործանեց Աքեմենյան կայսրությունը: Գավգամելայի ճակատամարտին մասնակցեցին և իրենց մարտական բարձր որակներով փայլեցին Մեծ և Փոքր Հայքերի բանակները՝ Երվանդ III-ի և Միթրաուստեսի գլխավորությամբ:

Աքեմենյան Պարսկաստանի կործանումից հետո Ք.ա. 336 թվականից Մեծ Հայքում իշխող Երվանդ III-ը իրեն հռչակեց անկախ թագավոր (Ք.ա. 331-300թթ.), Փոքր Հայքում նույնը արեց Միթրաուստեսը: Երվանդը, հակահարված հասցնելով Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներ Մեննոնոսի և Սելևկիոս Նիկատորի ոտնձգություններին, հաջողությամբ պաշտպանեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը: Նրա աջակցությամբ իրենց անկախությունը պահպանեցին նաև Փոքր Հայքի, Պոնտոսի և Կապադովկիայի թագավորությունները:

Ք.ա 323թ. Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ և նրա կայսրությունը տրոհվեց մի քանի մասի, որոնցից ամենամեծը Սելևկյան պետությունն էր: Վերջինս դարձավ Մեծ Հայքի գլխավոր հակառակորդը և բազմիցս փորձեց նվաճել այն: Սակայն հայկական բանակը կարողանում էր արժանի հակահարված տալ սելևկյաններին:

Ք.ա. 260թ. Սամոս (Շամ) Երվանդունին, որը Ծոփքի և Կոմմագենների կառավարիչն էր, հրաժարվեց ենթարկվել Մեծ Հայքի թագավորին և հռչակվեց ինքնուրույն թագավոր: Սամոսը հիմնեց Սամոսատ (Կոմմագենեում) և Սամոկերտ (Ծոփքում) քաղաքները: Սամոսին հաջորդեց որդին՝ Արշամը (Ք.ա. 240-220թթ.), որը հիմնեց Արշամաշատ մայրաքաղաքը (Ծոփքում) և Արսամեա անունով երկու քաղաք (Կոմմագենեում): Ք.ա. 220թ. սելևկյանների միջամտությամբ Ծոփքից առանձնացավ Կոմմագենեն:

Այսպիսով Ք.ա. 3-րդ դարի վերջին Հայաստանը բաժանված էր չորս թագավորությունների՝ Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենեն: Տրոհված և մասնատված երկիրը

այլևս չունեն հաշվառված, որպեսզի հակահարված տար օտար նվաճողներին:

Մեծ Հայքում Երվանդունիների վերջին ներկայացուցիչն էր Երվանդ IV-ը (Ք.ա. 220-201թթ.): Նա Ախուրյանի և Արաքսի գետախառնման մոտ հիմնադրեց Երվանդաշատ նոր մայրաքաղաքը, նրանից քիչ հյուսիս՝ Երվանդակերտը և Երվանդավանը, իսկ Ախուրյանի աջ ափին՝ Բագարանը, որը դարձավ խոշոր սրբավայր:

Ք.ա. 201թ. սելևկյան արքա Անտիոքոս III Մեծի զորքերը՝ հայ զորավար Արտաշեսի գլխավորությամբ, տապալեցին Երվանդ IV-ին և նվաճեցին Մեծ Հայքը, որտեղ կառավարիչ (ստրատեգոս) կարգվեց Արտաշեսը: Ծովքի Երվանդունի արքա Քսերքսեսը (Ք.ա. 220-201թթ.) նախ դարձավ սելևկյան արքա Անտիոքոս III-ի կիսահպատակը, իսկ Ք.ա. 201թ. դավադրությամբ սպանվեց: Փոքր Հայքը և Կոմմագենեն ևս դարձան սելևկյան պետության ստրատեգիաներ: Անտիոքոս III-ը Ծովքում կառավարիչ կարգեց՝ Ջարեհին, Փոքր Հայքում՝ Միհրդատին, Կոմմագենեում՝ Պտղոմեոսին:

Այսպիսով՝ Երվանդունիների հայկական թագավորությունները դարձան սելևկյան կայսրության նվաճողական քաղաքականության զոհը:

Երվանդյան արքայատան, այդ թվում՝ Ծովք-Կոմմագենեի արքայաճյուղի ներկայացուցիչները, կառուցել են բազմաթիվ քաղաքներ, իրենց ամուններով ու պատկերներով հատել են դրամներ, խթանել են երկրի տնտեսական զարգացմանը, խրախուսել հելլենիստական մշակույթը: Նրանց օրոք Հայաստանում պետականությունը այնպիսի ամուր հիմքերի վրա էր դրվել, որ օտարերկրյա տիրապետությունը շարունակվեց միայն մեկ տասնամյակ:

5. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՐՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ԱՐՏԱՇԵՍ I

Սելևկյան պետության կարճատև գերիշխանության տարիներին Անտիոքոս III-ը, Հայաստանը ջլատելու և իր տիրապետությունն այստեղ ամրապնդելու նպատակով, մի շարք սահմանային «աշխարհներ» ու գավառներ կտրեց Մեծ Հայքից և բռնակցեց շրջակա այլ երկրների:

Ք.ա. 190թ. Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ Անտիոքոս III-ը ծանր պարտություն կրեց հռոմեացիներից: Օգտվելով սելևկյան պետության թուլացումից՝ Ք.ա. 189թ. Մեծ Հայքում անկախ թագավոր հռչակվեց Արտաշես I-ը, Փոքր Հայքում՝ Միհրդատը, Ծոփքում՝ Ջարեհը, Կոմմագենեում՝ Պտղոմեոսը: Այսպիսով՝ հայկական թագավորությունները կործանումից մեկ տասնամյակ անց վերականգնեցին պետական անկախությունը:

Արտաշես I-ը (Ք.ա. 189-160թթ.) մեր ժողովրդի պատմության նշանավոր թագավորներից մեկն է եղել: Արտաշես I-ը իրագործում է բազմաթիվ բարենորոգումներ, որոնք նպաստում են երկրի անմախքընթաց վերելքին: Արտաշեսն իրեն ներկայացնում էր որպես Երվանդական արքայատոհմի սերունդ: Սակայն իրականում նա հիմնադրում է նոր թագավորական հարստություն, որն իր անունով կոչում ենք Արտաշեսյան: Այս դինաստիան Մեծ Հայքում իշխեց մոտ երկու դար (Ք.ա. 189-1թթ.) և այդ շրջանում մեր երկիրը դարձավ տարածաշրջանի ամենահզոր թագավորություններից մեկը:

Արտաշես I-ի առաջնահերթ խնդիրներից էր վերամիավորել Մեծ Հայքից բռնի առանձնացված հողերը: Իր միավորիչ գործունեությունը հաջողությամբ իրականացնելու համար Արտաշեսին անհրաժեշտ էր հզոր բանակ: Նա բանակը բաժանեց չորս սահմանապահ զորաթևերի՝ զորավարությունների: Դրանցից յուրաքանչյուրը խնդիր ուներ օտար հարձակման դեպքում պաշտպանել սահմանի իր մասը մինչև արքայական բանակի հասնելը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնել հարձակողական արշավանքները: Այդ զորավարությունների հիմքի վրա հետագայում ստեղծվեցին բղեշխությունները:

Հզոր բանակի միջոցով Արտաշեսը միավորեց հայկական տարածքների մեծ մասը: Արևելքում նա հասավ մինչև Կասպից ծովը և վերադարձրեց Փայտակարանն ու Պարսպատունիքը, հյուսիսում վրացիներից հետ վերցրեց Կղարջքը և Գուգարքը, արևմուտքում Փոքր Հայքից վերցրեց Դերջանը, Կարինը, Ծոփքի արքա Ջարեհի հետ գրավեցին ու բաժանեցին Եկեղիքը, հարավում սելևկյաններից հետ գրավեց Տմորիքը: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնի վկայությամբ այդ բոլոր տարածքների բնակչությունը հայախոս էր: Այսպիսով՝

Հայաստանի հիմնական մասը ընդգրկվեց Արտաշեսի պետության մեջ: Սակայն նա հաջողության չհասավ Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմնագենեն վերամիավորելու փորձերում: Չնայած դրան, նա աջակցեց Ծոփքի և Փոքր Հայքի տարածքների ընդարձակմանը:

Միավորված ու ընդարձակված պետության կառավարումը հեշտացնելու նպատակով նա Մեծ Հայքը բաժանել է 120 գավառների (ստրատեգիաների), որոնք ղեկավարում էին թագավորի նշանակած ստրատեգոսները:

Հատկապես կարևոր էր Արտաշեսի իրականացրած հողային բարեփոխումը: Չնայած երկրում տիրում էր ստրկատիրական հասարակարգ, սակայն ի տարբերություն հունահռոմեական «դասական» ստրկատիրության, ուր աշխատավոր դասակարգը հիմնականում կազմված էր ստրուկներից, Հայաստանում աշխատավորների հիմնական մասը ազատ գյուղացիներն էին, որոնք միավորված էին համայնքներում: Ավագանու ներկայացուցիչները ամեն կերպ ձգտում էին լավագույն տարածքները խլել գյուղական համայնքներից և դրանք միացնել իրենց սեփական տնտեսություններին՝ դաստակերտներին կամ ագարակներին, ուր օգտագործում էին մշակ-ստրուկների աշխատանքը: Գյուղացի համայնականները սեփական ուժերով չէին կարող ընդդիմանալ խոշոր հողատերերի ոտնձգություններին, իսկ դա կարող էր հանգեցնել գյուղական համայնքների քայքայմանը: Դա վնաս էր պետությանը, քանի որ համայնքներն էին թագավորին տալիս հարկ և զորք: Արտաշեսը իրականացրեց հողաբաժանում և համայնքների ու ագարակների միջև կանգնեցրեց արամերեն արձանագրությամբ հողաբաժան սահմանաքարերը: Այս բարեփոխումը կարգավորել է հողի սեփականության խնդիրը՝ արգելելով ագարակատեր-ավագանուն յուրացնել գյուղացի-համայնականների հողերը: Պատմահայր Մովսես Խորենացին խոսելով Արտաշես I-ի հողային բարեփոխումների մասին, գրում է. «Արտաշեսի ժամանակ մեր հայոց աշխարհում անմշակ հող չէր մնացել՝ ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան էր շենացել երկրիը»:

Արտաշես I-ինը հիմնադրում է Արտաշատ մայրաքաղաքը, որը շուտով դառնում է Հին աշխարհի կարևոր կենտրոններից մեկը: Ըստ հռոմեացի պատմիչ Պլուտարքոսի,

քաղաքի տեղն ընտրելու և հատակագիծը կազմելու գործում հայոց արքային աջակցել է Հին աշխարհի նշանավոր գորավարներից կարթագենցի Հաննիբալը: Նա Հռոմի երբեմնի ահեղ թշնամին էր, որն իր պարտությունից հետո անցել էր արևելք և ապաստանել Հայաստանում: Արտաշատ քաղաքը հելլենիստական դարաշրջանին բնորոշ ձևով կոչվել է երկրի թագավորի՝ այս դեպքում Արտաշեսի անունով: Արտաշատի հիմնադրման ժամանակ այնտեղ են տեղափոխվել նախկին մայրաքաղաք Երվանդաշատի բնակչության մի մասը: Հին աշխարհում ընդունված էր նորաստեղծ քաղաքները բնակեցնել ավելի հին քաղաքների բնակչության հաշվին:

Քաղաքը կառուցվել է Արարատյան դաշտում, Արաքս և Մեծամոր գետերի միախառնման տեղում, ներկայիս Խոր Վիրապի տարածքում: Քաղաքի աշխարհագրական դիրքը շատ բարենպաստ էր: Արարատյան դաշտում էին խաչվում արևելքից արևմուտք և հարավից հյուսիս տանող առևտրական ճանապարհները: Պատահական չէ, որ այստեղ են կառուցվել Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը, Երևանը:

Նորաստեղծ Արտաշատում թագավորը կառուցեց Հայոց աշխարհի հովանավոր Անահիտ աստվածուհու տաճարը: Այնտեղ Անահիտի արձանի կողքին տեղադրվեցին Արտաշեսի նախնիների՝ Երվանդական և Աքեմենյան թագավորների քանդակները: Սրանց ժողվուրդը պետք է պաշտեր որպես աստվածների: Թագավորի նախնիների աստվածացումը բարձրացնում էր նրա իշխանության հեղինակությունը ժողովրդի մոտ:

Արտաշեսը կառուցել է նաև Ջարեհավան և Ջարիշատ քաղաքները: Նրա օրոք վերականգնվեց նավագնացությունը Հայաստանի լճերի ու գետերի վրա, բարեփոխվեց տոմարը:

Արտաշեսը մեծ հեղինակություն էր վայելում տարածաշրջանում, և հարևան երկրների թագավորները վեճերը լուծելու համար հաճախ դիմում էին հայոց արքայի միջնորդությանը: Փաստորեն, Հայաստանը կրկին վերականգնել էր նախկին հզորությունը և երկրորդական երկրից հետզհետե վերածվում էր առաջատար պետության:

Հին աշխարհի պետություններում ընդունված էր թագավորներին պատվանունների շնորհումը: Արտաշես I-ը իր կատարած բարի գործերի համար ստացել էր «Բարեպաշտ» պատվանունը:

Արտաշես I-ի բարեփոխումների և գործունեության շնորհիվ Մեծ Հայքը բռնեց սրընթաց վերելքի ուղին, որի հետագա արտացոլումը հանդիսացավ նրա թոռ Տիգրան Մեծի օրոք հայկական կայսրության ստեղծումը:

6. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՕՐՈՔ

Արտաշես I-ի հաջորդների՝ Արտավազդ I-ի (Ք.ա. 160-115թթ.) և Տիրան-Տիգրան I-ի (Ք.ա. 115-95թթ.) գահակալության տարիները համեմատաբար հանգիստ են եղել, հարուստ չեն եղել արտաքին իրադարձություններով և պատերազմներով: Թերևս այդ պատճառով նրանց կառավարման ժամանակաշրջանի մասին տեղեկությունները չափազանց սակավ են: Հռոմեացի պատմագիր Հուստինոսի վկայությամբ, հզորացած Պարթևստանի դեմ պատերազմում Հայաստանի պարտության հետևանքով Տիգրան I-ի գահաժառանգ որդի Տիգրանը պատանդ ուղարկվեց պարթևների թագավոր Միհրդատ II Արշակունու արքունիք:

Ք.ա. 95թ., հոր մահից հետո Տիգրան II-ը, Պարթևստանին զիջելով Մեծ Հայքի հարավարևելյան որոշ հողեր («70 հովիտները»), ազատվեց պատանդությունից և ժառանգեց հայրենի գահը: Տաղանդավոր դիվանագետ, պետական, ռազմական գործիչ Տիգրան II Մեծի 40-ամյա գահակալման տարիները (Ք.ա. 95-55թթ.) նշանավորվել են Հայաստանի աննախադեպ ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային վերելքով, հայկական պետության միջազգային դերի և հեղինակության բարձրացմամբ:

Ք.ա. 94թ. Տիգրան Մեծը վերամիավորեց Ծոփքը, որով Մեծ Հայքը ամբողջացավ:

Հռոմեական և պարթևական հզոր տերությունների առաջխաղացմանը դիմակայելու և Հայաստանի դեմ նրանց սպառնալիքները չեզոքացնելու նպատակով Տիգրան Մեծը Ք.ա. 94թ. ռազմաքաղաքական դաշինք կնքեց Պոնտոսի և Փոքր Հայքի թագավոր Միհրդատ VI Եվպատորի հետ: Դաշին-

քը ամրապնդելու նպատակով Տիգրանը կնության վերցրեց Միհրդատի դստերը՝ Կլեոպատրային:

Ք.ա. 93թ. հայ-պոնտական զորքերը գրավեցին Կապադովկիան: Հռոմի միջամտությունների դեմ տևական պայքարից հետո այն մնաց Միհրդատ VI-ի հսկողության տակ:

Այնուհետև Տիգրան Մեծը գրավելով Իբերիան և Աղվանքը՝ հյուսիսում ապահովեց թիկունքը և նախապատրաստվեց Պարթևստանի դեմ պատերազմի: Արևելքի երկրների ընդհանուր թշնամի Հռոմը, որը Ք.ա. 89-84թթ. ներքաշվել էր Միհրդատյան առաջին պատերազմի մեջ, չէր կարող խանգարել Հայաստանի ծավալմանը:

Ք.ա. 87-85թթ. Պարթևստանի դեմ պատերազմում Տիգրան Մեծը նախ ազատագրեց Հայոց Միջագետք և Կորդուք «աշխարհները», ինչպես նաև «70 հովիտները», ապա պարթևներին դուրս մղեց Ատրպատականից և Հյուսիսային Միջագետքից՝ Միգդոնիայից, Օսրոյենեից (Եդեսիա), Ադիաբենեից, որոնք այնուհետև ճանաչվեցին Մեծ Հայքի հպատակ և դաշնակից թագավորություններ, իսկ պարթև Արշակունիները հարկադրված եղան ընդունել Հայոց թագավորի գերագահությունը և նրան զիջել «արքայից արքա» տիտղոսը: Գլխավոր հակառակորդ Պարթևստանին հաղթելուց և նրա հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո, Տիգրան Մեծը նրան որոշ ժամանակ դուրս մղեց միջազգային ասպարեզից:

Այնուհետև Տիգրանը ուշադրությունը սևեռեց դեպի հարավ: Նա Ք.ա. 84-83թթ. նվաճեց Կոնմագենեն, Կիլիկիան, Ատրիքը (Սիրիա), Փյունիկիան (Լիբանան), Հրեաստանը և Նաբատեան: Ատրիքի նվաճումով Տիգրանը վերացրեց Սելևկյանների երբեմնի հզոր թագավորությունը: Ք.ա. 83թ. Տիգրան Մեծը Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքում բազմեց նրանց գահին:

Այսպիսով՝ ստեղծվեց հայկական հզոր և ընդարձակ կայսրություն: Տիգրանի տերության մեջ խոսում էին 15-ից ավելի լեզուներով: Նորաստեղծ հայկական տերությունը դյուրությամբ կառավարելու համար Տիգրան Մեծը հիմնեց մի շարք փոխարքայություններ ու կուսակալություններ, որոնց կառավարիչներ կարգեց իր մերձավոր ազգականներին ու հավատարիմ մեծատոհմիկներին:

Տիգրան Մեծը զբաղվել է խոշորամասշտաբ շինարարական աշխատանքներով, հատկապես՝ քաղաքաշինությամբ և ճանապարհաշինությամբ: Աղձնիքում նա հիմնադրեց և կառուցապատեց իր նորակերտ տերության նոր մայրաքաղաք Տիգրանակերտը, կառուցեց հայկական երկու մայրաքաղաքները միացնող Արտաշատ-Տիգրանակերտ «արքունի պողոտան», հիմնեց Տիգրանակերտ և Տիգրանավան անվանումներով այլ քաղաքներ Հայաստանի տարբեր շրջաններում, հովանավորեց հելլենիստական մշակույթի և տնտեսության, հատկապես՝ արհեստի և առևտրի զարգացումը, իր պատկերով և հունարեն մակագրությամբ հատեց դրամներ: Նորաստեղծ քաղաքները արագորեն բնակեցնելու նպատակով Տիգրանը նվաճված երկրներից մեծ թվով արհեստավորներ ու առևտրականներ վերաբնակեցրեց այնտեղ:

Տիգրան Մեծի խաղաղ շինարարական գործունեությունը խաթարվեց Հռոմի և Պոնտոսի միջև Ք.ա. 74թ. բռնկված Միհրդատյան երրորդ պատերազմի տարիներին: Հայաստանը հայտարարելով իր ամենավտանգավոր և զորեղ թշնամին Արևելքում՝ Հռոմը Հայոց տերության ներսում հրահրեց մի շարք հուժկու խռովություններ և կաշկանդեց Տիգրան Մեծի ռազմական օգնությունը Միհրդատ VI-ին: Հայոց արքայի դեմ հերթով ապստամբեցին նրա երկու որդիները, բայց պարտվեցին և սպանվեցին:

Ք.ա. 71թ. Արևելքում հռոմեական զորքերի հրամանատար Լուկիոս Լուկուլլոսը ծանր պարտության մատնեց Միհրդատին, որն իր ընտանիքի և բազմաթիվ մեծատոհմիկների հետ ապաստանեց Հայաստանում: Լուկուլլոսը պահանջեց նրանց հանձնել Հռոմին, սակայն Տիգրանը կտրականապես մերժեց:

Ք.ա. 69 թ. Տիգրան Մեծը զբաղված էր Նաբատեայի և Հուդայի թագավորությունների ապստամբությունները ճնշելով: Դրանից օգտվելով՝ Լուկուլլոսի բանակը ներխուժեց Հայաստան և պաշարեց Տիգրանակերտ մայրաքաղաքը: Հռոմեացիների ներխուժման լուրը Տիգրան Մեծը ստացավ Պտղոմայիս քաղաքում: Նա Մերուժան զորավարի գլխավորությամբ 3.000-ոց հեծելազոր ուղարկեց հռոմեացիների դեմ, սակայն այդ փոքրաթիվ զորամասը չէր կարող կասեցնել Լուկուլլոսի բանակին: Մերուժանը մարտի մեջ մտավ մոտ տաս անգամ

գերազանցող թշնամու հետ և հերոսաբար զոհվեց: Տիգրան Մեծը մոտ 70.000-ոց բանակով հասավ թշնամու կողմից պաշարված Տիգրանակերտ և որոշեց այդտեղ ճակատամարտ տալ: Ք.ա. 69թ. հոկտեմբերի 6-ին Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլոսին հաջողվեց պարտության մատնել Տիգրանին և գրավել մայրաքաղաքը, սակայն նրան չհաջողվեց վերջնականապես պարտության մատնել Հայաստանին: Ք.ա. 68թ. սեպտեմբերին Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծը պարտության մատնեց Լուկուլլոսին և վտարեց Հայաստանից: Ք.ա 67թ. Ձեւայի ճակատամարտում հայկական բանակը վերջնականապես ջախջախեց Լուկուլլոսին և նրան վտարեց նաև Պոնտոսից: Այսպիսով՝ Տիգրան Մեծը վերականգնեց ոչ միայն իր տերության հզորությունն ու ամբողջականությունը, այլև Պոնտոսի գահը կրկին հանձնեց Միհրդատին:

Հռոմի սենատը Լուկուլլոսի փոխարեն Արևելքի գորավար նշանակեց Գնեոս Պոմպեոսին, որը վերջնականապես պարտության մատնեց Միհրդատ Եվպատորին: Այդ ընթացքում Հռոմը և Պարթևստանի Հրահատ III թագավորը կարողացան Տիգրան Մեծի թիկունքում կազմակերպել նոր խռովություն, որի պարագլուխը դարձավ գահատենչ հայ արքայազն և Ծոփքի փոխարքա Տիգրան Կրտսերը: Վերջինս Ք.ա. 67թ. ջախջախվեց, փախավ Պարթևստան և դարձավ Հրահատ III-ի փեսան: Ք.ա. 66թ. Տիգրան Կրտսերը պարթևական զորքով ներխուժեց Հայաստան՝ փորձելով գրավել Արտաշատ մայրաքաղաքը և հռչակվել Հայոց արքա: Սակայն նա դարձյալ ծանր պարտություն կրեց և այս անգամ ապաստանեց Պոմպեոսի մոտ: Վերջինս Ք.ա. 66թ., ջախջախելով Միհրդատ VI-ին, զինակալեց Կապադոկիան, Պոնտոսը և Փոքր Հայքը, ապա Տիգրան Կրտսերի ուղեկցությամբ ներխուժեց Մեծ Հայք:

Տիգրան Մեծը, հաշվի առնելով, որ գտնվում է երկու հզոր տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի հարձակման սպառնալիքի տակ, Ք.ա. 66թ. Արտաշատում Պոմպեոսի հետ կնքեց հաշտության պայմանագիր, որով թեև հրաժարվեց նվաճված երկրների մեծ մասից, վճարեց հսկայական ռազմատուգանք, բայց պահպանեց Մեծ Հայքի ամբողջականությունը և անկախությունը: Տիգրան Մեծը նաև պահպանեց «արքայից

արքա» տիտղոսը: Արտաշատի պայմանագրով Հայաստանը հռչակելով «դաշնակից և բարեկամ» պետություն, Հռոմը շուտով Արևելքում իր հիմնական նպատակը դարձրեց Պարթևստանի նվաճումը:

Հռոմի արևելյան քաղաքականությունը հակակշռելու և Մեծ Հայքի պետական ինքնուրույնությունը պահպանելու համար՝ Տիգրան Մեծը և նրա հաջորդներն այնուհետև վարում էին դրացի Պարթևստանի հետ մերձեցման և ռազմաքաղաքական համագործակցության քաղաքականություն, որի սկիզբը դրվեց Ք.ա. 64թ. կնքված հայ-պարթևական դաշնագրով: Տիգրան Մեծի գահակալության վերջին տասնամյակը անցավ խաղաղ:

7. ԱՐՏԱՎԱԶԴ II: ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Տիգրան Մեծին հաջորդեց որդին Արտավազդ II-ը (Ք.ա. 55-34թթ.), որի գահակալման տարիներին Մեծ Հայքը հայտնվել էր պարթևա-հռոմեական սուր զինաբախումների ոլորտում: Նա երկրի անկախության ու անվտանգության ապահովման հուսալի միջոց դարձրեց պատերազմող տերությունների միջև խուսանավելու քաղաքականությունը, ըստ իրավիճակի թելադրման՝ հարելով մերթ մեկին, մերթ մյուսին: Հայաստանը թե Հռոմի, թե Պարթևստանի համար ուներ ռազմական եւ տնտեսական կարևոր նշանակություն: Հայկական լեռնաշխարհն իր բարձրադիր դիրքով ուներ առաջնակարգ ռազմավարական նշանակություն, այստեղով էին անցնում արևելք-արևմուտք, հյուսիս-հարավ ռազմական ու տնտեսական կարևոր մայրուղիները: Իր ռազմական ու տնտեսական հզորությամբ Հայաստանը Պարթևստանից ու Հռոմից հետո երրորդ ուժն էր տարածաշրջանում, և նրա հետ դաշինքից էր կախված այդ տերությունների հաղթանակը կամ պարտությունը:

Ք.ա. 60թ. Հռոմում ստեղծվեց առաջին եռապետությունը: Երեք նշանավոր զորավարները՝ Յուլիոս Կեսարը, Պոմպեոսը և Մարկոս Կրասոսը Հռոմի ընդարձակածավալ նահանգների կառավարումը բաժանեցին իրենց միջև: Հռոմի արևելյան շրջանների կառավարումը անցավ Կրասոսին:

Ք.ա. 53թ. Մարկոս Կրասոսը խոշոր արշավանք կազմակերպեց գլխավոր հակառակորդ Պարթևստանի դեմ և օգնական զորքեր պահանջեց դաշնակից Հայաստանից: Տեղեկանալով այդ մասին՝ պարթևական արքա Օրոդեսը իր բանակը բաժանեց երկու մասի. ինքը որոշեց արշավել Հայաստան, իսկ Սուրեն զորավարին ուղարկեց Միջագետք՝ հռոմեացիների դեմ: Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկեց արշավանքն իրականացնել Հայաստանի հարավի լեռնային շրջաններով՝ խոստանալով տրամադրել 10.000 հեծյալ և 30.000 հետևակ զորք: Դրա շնորհիվ հռոմեական լեգեոնները կխուսափեին պարթևական բանակի հիմնական հարվածային ուժը հանդիսացող հեծելազորի հանկարծակի հարձակումներից բաց տափաստաններում, իսկ Հայաստանը զերծ կմնար պարթևների ներխուժման վտանգից: Կրասոսը մերժեց Հայոց արքայի ծրագիրը և որոշեց արշավել Միջագետքի տափաստաններով: Նման պայմաններում Արտավազդը ճիշտ որոշում ընդունեց և դաշինք կնքեց Օրոդեսի հետ, որն ամրապնդվեց Արտավազդի քրոջ և պարթև թագաժառանգ Բակուրի ամուսնությամբ:

Ք.ա. 53թ. մայիսի 6-ին Խառանի ճակատամարտում պարթևական զորավար Սուրենը գլխովին ջախջախեց հռոմեական բանակը, իսկ սպանված Կրասոսի գլուխն ուղարկեց Արտաշատ, ուր այդ ժամանակ գտնվում էր Օրոդեսը: Սուրհանդակը տեղ հասավ այն ժամանակ, երբ Արտավազդ II-ը և Օրոդեսը Արտաշատի թատրոնում դիտում էին հույն դրամատուրգ Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը և Կրասոսի գլուխը նետեց արքաների ոտքերի առաջ: Նման անփառունակ վախճան ունեցավ Կրասոսը, որը փորձում էր Արևելքի երկրների նվաճումով հարստանալ Լուկուլլոսի և փառքի հասնել Պոմպեոսի պես:

Հայ-պարթևական ուժերը հռոմեացիներին վտարեցին Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից: Տեղի բնակչությունը որպես ազատարարներ էր ընդունում նրանց, քանի որ դժգոհ էին Հռոմի դաժան կեղեքումներից և դեռ չէին մոռացել Տիգրան Մեծի օրոք ունեցած արտոնությունները: Հայ-պարթևական զորքերի հաջողություններին նպաստեց նաև այն, որ Կրասոսի մահից հետո Հռոմում եռապետությունը կազմալուծվեց և շուտով քաղաքացիական պատերազմ սկսվեց Կեսարի և Պոմպեոսի միջև:

Ք.ա. 43թ. Հռոմում երկրորդ եռապետությունը ստեղծեցին Մարկոս Անտոնիոսը, Օգոստոս Օկտավիանոսը և Մարկոս Լեպիդոսը: Անտոնիոսը ստացավ Արևելքի երկրները և ամուսնացավ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի հետ:

Ք.ա. 36թ. Պարթևստանի դեմ խոշոր արշավանք կազմակերպեց Մարկոս Անտոնիոսը: Հաշվի առնելով Կրասոսի դառը փորձը, նա որոշեց արշավել Հայաստանի տարածքով և Արտավազդ II-ից պահանջեց աջակցել իրեն: Ք.ա. 37թ. մահացել էին Օրոդեսը և Բակուրը, Պարթևստանում գահակալական արյունահեղ պայքարից հետո գահ էր բարձրացել Հրահատ IV-ը: Այդ ժամանակ սրվել էին նաև հայ-պարթևական հարաբերությունները, որը հաշվի առավ Անտոնիոսը և օգնական զորքեր խնդրեց Հայոց արքայից: Արտավազդ II-ը ստիպված համաձայնեց օգնել հռոմեացիներին, սակայն տրամադրեց միայն փոքրաթիվ ուժեր:

Անտոնիոսը 100.000-ոց բանակով սկզբում ներխուժեց պարթևների դաշնակից Ատրպատականի թագավորություն: Սակայն պարթևական հեծելազորը կարողացավ ոչնչացնել հռոմեացիների պաշարողական տեխնիկան, որի հետևանքով արշավանքը ձախողման դատապարտվեց: Անտոնիոսը դեռ Պարթևստան չմտած հսկայական կորուստներ ունեցավ, և նրա զորքի մնացորդները փրկվեցին Հայաստան մտնելով և Արտավազդից օժանդակություն ստանալու շնորհիվ:

Անտոնիոսի հեղինակությանը ծանր հարված էր այդ պարտությունը, և որպես իր արշավանքի ձախողման գլխավոր մեղավոր նա փորձեց ներկայացնել Արտավազդին և ցանկանում էր խաբեությամբ ձերբակալել նրան: Այդ փորձերի ձախողումից հետո, օգտվելով հայ-պարթևական հարաբերությունների վատթարացումից, որի պատճառներից մեկը հայ-հռոմեական համագործակցությունն էր, Անտոնիոսը Ք.ա. 34թ. գարնանը խոշոր ուժերով ներխուժեց Մեծ Հայք: Երկիրը ավերածություններից փրկելու հույսով Հայոց արքան որոշեց բանակցություններ սկսել Անտոնիոսի հետ, սակայն վերջինս զերեվարեց Արտավազդին և տարավ Ալեքսանդրիա՝ իր կնոջ՝ Եգիպտոսի Կլեոպատրա թագուհու մոտ: Արտավազդին և նրա ընտանիքին խոստացան ազատ թողնել, եթե հաղթահանդեսի ժամանակ խոնարհվեին Կլեոպատրայի առաջ: Սակայն Արտավազդն իրեն պահեց արքայավայել և գլուխը բարձր

պահելով անցավ թագուհու առջևից, որը մեծ տպավորություն գործեց ներկաների վրա: Նրան հետագայում մահապատժի ենթարկեցին:

Ք.ա. 31թ. Օկտավիանոսը Ակտիոսի ծովային ճակատամարտում պարտության մատնեց Անտոնիոսին ու Կլեոպատրային, որոնք ինքնասպանություն գործեցին: Օգտվելով նպաստավոր իրավիճակից, Արտավազդ II-ի որդին՝ Արտաշեսը, պարթևների աջակցությամբ, ազատագրեց Մեծ Հայքը և հռչակվեց թագավոր: Արտաշես II-ը (Ք.ա. 30-20թթ.) նաև ջախջախեց հռոմեացիների հետ համագործակցող Ատրպատականի թագավոր Արտավազդ Մեդացուն, իսկ Ատրպատականը միացրեց Հայոց թագավորությանը: Արտաշես II-ը կրում էր «արքայից արքա» տիտղոսը, վարում էր անկախ և ընդգծված հակահռոմեական քաղաքականություն:

Հռոմը, հաշվի առնելով Կրասոսի և Անտոնիոսի պարտությունների դառը փորձը, շուրջ 10 տարի չհամարձակվեց պատերազմել հայ-պարթևական միացյալ ուժերի դեմ: Օգոստոս Օկտավիանոսը, որը Ք.ա. 27թ. հռչակվեց Հռոմի առաջին կայսր, խոստումների, կաշառքների ու դավերի միջոցով վարում էր Մեծ Հայքն իր ավանդական դաշնակիցներից մեկուսացնելու, այն թշնամի դրացիներով օղակելու և հայ ավագանուն պառակտելու քաղաքականություն: Նա կարողացավ Մեծ Հայքի հետ թշնամացնել Փոքր Հայքին, որի թագավոր էր կարգվել Արտավազդ Մեդացին, Կապադովկիային, Պոնտոսին, իբերական և ադվանական ցեղերին: Ք.ա. 20թ. Օգոստոս կայսրը խոշոր ուժերով ժամանեց Ասորիք և գահակալական կռիվներում թուլացած պարթևներին հարկադրեց կնքել պայմանագիր, որով արձակվեցին Հռոմի ձեռքերը Մեծ Հայքի թագավորության դեմ: Նույն թվականին հռոմեական զորքերը ներխուժեցին Մեծ Հայք:

Հուսալքված և Հռոմի սադրանքներից դրդված հայ ավագանու որոշ ներկայացուցիչներ հզոր թշնամու դեմ պատերազմից խուսափելու և պետական անկախությունը չկորցնելու հույսերով՝ դավադրաբար սպանեցին Արտաշես II-ին և համաձայնեցին գահը հանձնել նրա եղբորը՝ երկար տարիներ Հռոմում պատանդ մնացած Տիգրան III-ին (Ք.ա. 20-9թթ.): Միաժամանակ Մեծ Հայքից անջատվեց Ատրպատականը:

Տիգրան III-ը գահակալման վերջին տարիներին գրեթե ձերբագատվեց Հռոմի միջամտություններից, մերձեցավ Պարթևստանին և սկսեց իր դրամները հատել պահլավերեն մակագրություններով: Տիգրան III-ին հաջորդեց որդին՝ Տիգրան IV-ը (Ք.ա. 9-1թթ.): Հռոմի միջամտությամբ Ք.ա. 5-3թթ. Հայոց գահին տիրեց Տիգրան III-ի եղբայր Արտավազդ III-ը, սակայն շուտով տապալվեց և գահը կրկին անցավ Տիգրան IV-ին: Նա զոհվեց 1թ. կովկասյան լեռնականների դեմ մղած ճակատամարտում:

Տիգրան IV-ի մահով վերացավ Արտաշեսյան արքայատոհմը (Ք.ա 189-1թթ.): Այս դինաստիայի օրոք Հայաստանը հասել էր առավելագույն հզորության, նույնիսկ մի կարճ ժամանակով վերածվել հզոր կայսրության: Արտաշեսյանների օրոք երկրի պետական կառուցվածքը մեծապես ամրապնդվել էր և հետագայում Հայոց թագավորությունը վերացնելու Հռոմի ջանքերը բախվեցին համառ դիմադրության և մատնվեցին անհաջողության:

8. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՂՅՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՏՐԴԱՏ I

Արտաշեսյան արքայատան անկումից հետո Հռոմեական կայսրությունը ձգտում էր իր ազդեցությունը Մեծ Հայքում պահպանել դրածո թագավորների միջոցով: Հայոց գահի համար պայքարում էին մաև պարթևները: Ռազմավարական խոշոր կարևորություն ունեցող Հայաստանը պայքարի թատերաբեմ էր դարձել հարևան երկու տերությունների համար: Հայերը հակված էին համագործակցել պարթևների հետ, քանի որ նրանք ավելի մոտ էին սովորույթներով ու բարքերով և, ի տարբերություն Հռոմի, չէին սպառնում հայոց պետականության գոյությանը: Նախկինում Հռոմի հետ դաշնակցած և նրա ազդեցության ոլորտում հայտնված երկրների մեծ մասը հետզհետե կորցրել էին անկախությունը և վերածվել հռոմեական նահանգների՝ պրովինցիաների:

Հայոց գահին Հռոմի օգնությամբ հավակնում էին տիրել Ատրպատականի, Վրաստանի և հարևան այլ երկրների արքայատների ներկայացուցիչները: Սակայն հայերը հրաժարվում էին ենթարկվել այդ դրածոներին, և նրանցից ոչ

մեկը չկարողացավ երկար իշխել: Հայերի համակրանքը կարողացավ շահել միայն Պոնտոսի Պոլեմոն թագավորի որդի Ջենոնը (18-34), որը ստացավ հայկական Արտաշես անունը: Նա մեծացել էր հայկական միջավայրում, ծանոթ էր հայերի սովորույթներին ու բարքերին, քանի որ հայրը երկար ժամանակ եղել էր Փոքր Հայքի թագավոր:

Հայ ժողովուրդը ջանում էր ձերբագատվել հռոմեական դրածոների տիրապետությունից, վերականգնել Մեծ Հայքի թագավորության ինքնուրույնությունը, մանավանդ որ Արտաշեսյանների օրոք երկրում ամուր հիմքերի վրա էր դրվել պետական կառավարման համակարգը և տարածաշրջանի հզոր թագավորություններից մեկը լինելու մտածելակերպը: Հռոմեական հզոր կայսրության և նրա դաշնակիցների դեմ կես դար տևած համառ պայքարը, ի վերջո, պսակվեց հաջողությամբ:

Պարթև Արշակունիները ցանկանում էին հայկական գահին հաստատել իրենց արքայատոհմի ներկայացուցչին, որպեսզի սերտացնեին համագործակցությունը Հայաստանի հետ և հզոր դաշնակից ձեռք բերեին Հռոմի դեմ պայքարում: Առաջին փորձը կատարվեց 34թ., երբ Հայոց թագավոր հռչակվեց պարթևական արքայի որդին՝ Արշակ I Արշակունին, սակայն մեկ տարի իշխելուց հետո դարձավ հռոմեացիների կազմակերպած դավադրության զոհ: Բնականաբար, Արշակունիները հետագայում ևս փորձելու էին հաստատվել հայկական գահին, քանի որ նրանց համակրում էր մասն հայոց ավագանին:

Պարթևստանի արքա Վաղարշ I Արշակունին իր եղբայր Տրդատին 52թ. մեծ բանակով ուղարկեց Հայաստան: Հայ ավագանու աջակցությամբ Տրդատը երկրից վտարեց հռոմեացիների դրածո թագավոր վրացի Հռադամիստին: 54թ. Արտաշատ մայրաքաղաքում Տրդատ I-ը (54-88) հանդիսավորությամբ օծվեց Հայոց արքա: Վաղարշ Արշակունին մինչ այդ մյուս եղբորը՝ Բակուրին դարձրել էր Ատրպատականի արքա: Այսպիսով՝ Արշակունիների արքայատոհմի իշխանության տակ էին հայտնվում Պարթևստանը, Ատրպատականը և Հայաստանը, որոնց միջև կիսատատվեին սերտ բարեկամական ու դաշնակցային հարաբերություններ:

Հռոմեական կայսրության վճռական գործողությունների դիմեց Տրդատ Արշակունուն Հայաստանից վտարելու և իր ազդեցությունը վերականգնելու համար, սակայն նրա ծրագրերը ձախողվեցին հայ-պարթևական համագործակցության շնորհիվ:

Ներոն կայսրը 58թ. մեծ բանակով Հայաստան ուղարկեց Կորբուլոնին: Նա 59թ. գրավեց ու ավերեց Արտաշատը, Գառնին, ապա Տիգրանակերտում Հայոց արքա հռչակեց հռոմեական դրածո Տիգրան VI-ին: Այդ ժամանակավոր հաջողությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Վաղարշը զբաղված էր Պարթևստանին ենթակա Վրկանից երկրում բռնկված ապստամբությունը ճնշելով:

60թ. Տիգրան VI-ը հարձակվեց և ավերեց պարթևներին ենթակա Ադիաբենե երկիրը: Վաղարշը հաշտություն կնքեց Վրկանում և բոլոր ուժերով շարժվեց արևմուտք: 61թ. Տրդատը պաշարեց Տիգրանակերտը, իսկ Վաղարշը շարժվեց Ասորիք՝ Կորբուլոնի դեմ: Վերջինս հաշտություն առաջարկեց, զորքերը հեռացրեց Հայաստանից և ճանաչեց Տրդատի գահակալությունը: Վաղարշը դեսպաններ ուղարկեց Ներոնի մոտ, որպեսզի նա հաստատի հաշտության պայմանագիրը և Տրդատին թագ ուղարկի: Սակայն Ներոնը հրաժարվեց թագ ուղարկել Տրդատին և պահանջեց, որպեսզի նա անձամբ մեկնի Հռոմ և իր ձեռքից ստանա թագը:

Ներոնը Հայաստան ուղարկեց նոր բանակ Պետոսի գլխավորությամբ: 62թ. գարնանը Ծոփաց աշխարհի Խարբերդի դաշտում, Հռանդեա վայրում հայ-պարթևական զորքերը հռոմեական բանակին պարտության մատնեցին և պարտադրեցին անձնատուր լինել: Հռոմեացի զինվորները ստիպված էին անցնել երեք նիզակներից կազմված անարգանքի «լծի» տակով, որը խայտառակություն էր նրանց համար:

Պարտությունից հետո Ներոն կայսրը հարկադրված եղավ հրաժարվել ռազմական միջամտություններից և Կորբուլոնին լիազորեց բանակցություններ վարել: 64թ. կողմերի միջև հաշտության պայմանագիր կնքվեց: Տրդատի պահանջով այն ստորագրվեց Հռանդեայում՝ հռոմեական զորքերի պարտության վայրում: Դրանով նա ցույց էր տալիս, որ Հայոց գահին է բազմում ոչ թե Հռոմի ողորմածության, այլ իր

հաղթանակի շնորհիվ: Հռոմը և Պարթևստանը պայմանագրով ճանաչեցին Տրդատ I-ի գահակալությունը, Մեծ Հայքի անկախությունը և իրենց զորքերը հեռացրին նրա սահմաններից: Միաժամանակ պայմանավորվեցին, որ այսուհետև Մեծ Հայքի գահի թեկնածուին առաջադրելու էր Պարթևստանը և հաստատելու էր Հռոմը:

65թ. Տրդատ I-ը իր ընտանիքով և 3.000-ոց շքախմբով մեկնեց Հռոմ: Ուղևորության ծախսերը պարտավորվեց վճարել հռոմեական արքունիքը: Հռոմում Ներոնը Տրդատ I-ին մեծ հանդիսավորությամբ օծվեց Մեծ Հայքի թագավոր և նրա պատվին կազմակերպեց ճոխ հանդիսություններ: Ներոնը խոշոր գումարներ հատկացրեց պատերազմի ժամանակ ավերված հայկական քաղաքները վերականգնելու համար:

Տրդատը 66թ. վերադարձավ Հայաստան, զբաղվեց երկրի տնտեսության վերականգնմամբ և շինարարական աշխատանքներով: Նա վերականգնեց Արտաշատը, Գառնին, ուր կառուցեց Արևի աստված Միհրին նվիրված հեթանոսական տաճարը և այլն:

72թ. և 75թ. Տրդատը հակահարված տվեց հյուսիսից ներխուժած ալանական (այժմյան օսերը) ռազմատենչ ցեղերի ավարառուական արշավանքներին:

Տրդատ I-ը կառավարեց մինչև 88թ. և Մեծ Հայքում հիմք դրեց Արշակունի արքայատոհմի իշխանությանը, որն աննշան ընդհատումներով կառավարեց մինչև 428թ.:

9. ՀԱՅԱՍՏԱՆԸ 2-3-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Տրդատ I-ից հետո Մեծ Հայքում գահ էին բարձրանում պարթևական Արշակունի արքայատոհմի ներկայացուցիչները, սակայն նրանք մինչև 2-րդ դարի վերջերը ժառանգաբար չէին իշխում այստեղ: Հայոց արքայի թեկնածությունը առաջադրում էր պարթևների արքան, հաստատում էր Հռոմի կայսրը: Այդպիսով պահպանվում էր երկու գերտերությունների ազդեցության հավասարակշռությունը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Հայաստանում:

Մեծ Հայքի գահի վրա Տրդատ I-ին հաջորդում է Սանատրուկը (88-110թթ.), որը շարունակեց իր նախորդի շինա-

րարական գործունեությունը, իսկ երկրի մշակույթը և տնտեսությունը շարունակում են զարգանալ: Նա Արածանիի վտակ Մեղրագետի ափին հիմնում է Մծուրք քաղաքը: Սանատրուկը թաղվեց Արշակունիների տոհմական դամբարանում՝ Դարանաղի գավառի Անի ամրոցում: Երբ պարսից զորքերը 364թ. հայոց արքաների դամբարանները թալանեցին, չկարողացան քանդել Սանատրուկի դամբարանը, որը չափից ավելի ամուր էր կառուցված:

Սանատրուկին հաջորդում է Աշխադարը (110-113): Սակայն 113թ. պարթևների արքան առանց Յոնի համաձայնության գահագրկեց Աշխադարին և Հայոց գահը հանձնեց նրա եղբորը՝ Պարթամասիրին: Յոն կայսր Տրայանոսը, որը ձգտում էր խոշոր արշավանք սկսել պարթևների դեմ և Արևելքում գրավել այն երկրները, ուր հասել էր Ալեքսանդր Մակեդոնացին, դա առիթ դարձնելով, 114թ. ներխուժեց և գրավեց Հայաստանը, որը հայտարարվեց հռոմեական պրովինցիա՝ նահանգ: Տրայանոսը գրավեց նաև պարթևների մայրաքաղաքը: 117թ. Հայաստանում խոշոր ապստամբություն սկսվեց և հռոմեացիները վտարվեցին երկրից: Նույն թվին մահացավ նաև Տրայանոսը և հռոմեական բանակը նահանջեց:

117թ. Մեծ Հայքի գահին բարձրացավ Սանատրուկի որդին՝ Վաղարշ I-ը (117-140թթ.): Նա հիմնադրում է Վաղարշապատ մայրաքաղաքը, Վաղարշակետ և Վաղարշավան քաղաքները: 140թ. հռոմեացիները տապալում են Վաղարշին և Հայոց գահը հանձնում Սոհեմոսին (140-185թթ.), որը ստացավ Տիգրան անունը: Նա սերում էր Կոմմագենեի Երվանդունիների արքայատոհմից և Յոնի Սենատի անդամ էր:

161թ. հայերը Տրդատ իշխանի գլխավորությամբ ապստամբեցին և վտարեցին Սոհեմոսին: Պարթևների միջամտությամբ հայոց գահին է բարձրանում Բակուր Արշակունին: Սակայն 163թ. հռոմեական բանակը գրավեց Հայաստանը, ավերեց Արտաշատը, իսկ Սոհեմոսը կրկին հաստատվեց հայոց գահին: Նա շարունակեց Վաղարշապատի կառուցապատումը, որը դարձավ Հայաստանի նոր մայրաքաղաքը ավերված Արտաշատի փոխարեն:

Սոհեմոսից հետո գահ է բարձրանում Վաղարշ I-ի թոռ Վաղարշ II-ը (185-198թթ.): Նա կարողանում է բարելավել

հարաբերությունները Հռոմի հետ: Վերջինս նույնիսկ դրամ է տրամադրում հայկական հեծելազորի մեծացման համար, որպեսզի հայերը պաշտպանեն Կովկասյան լեռնանցքները բարբարոս ցեղերի ավարառուական արշավանքներից: Վաղարշը խոհեմ քաղաքականության շնորհիվ կարողացավ ժառանգական դարձնել Արշակունիների արքայատոհմի իշխանությունը Հայաստանում: Նա զոհվում է հյուսիսկովկասյան ցեղերի դեմ կռիվներից մեկում:

Վաղարշ II-ին փոխարինում է որդին՝ Խոսրով I-ը (198-216թթ.): Նա պատժիչ արշավանք կազմակերպեց Հյուսիսային Կովկասի ցեղերի դեմ: Հայոց թագավորների հաստատման ժառանգական կարգի սահմանումը դժկամությամբ ընդունվեց հռոմեացիների կողմից: 216թ. Հռոմի Կարակալլա կայսրը խաբեությամբ ձերբակալում է Խոսրովին և բանտարկում: Հայկական զորքերի օգնությամբ հայոց գահին բարձրանում է Խոսրովի որդին՝ Տրդատ II-Խոսրով II-ը (216-256թթ.): (Պատմագրության մեջ Տրդատ II և Խոսրով II արքաները նույնացվում են մեկ անձի մեջ): Նա հակահարված տվեց երկիր ներխուժած հռոմեական բանակին, իսկ Հռոմի նոր կայսրը ստիպված էր ճանաչել Տրդատ-Խոսրովի գահակալությունը:

Շուտով Իրանում Արշակունիների արքայատոհմի դեմ պայքար սկսեցին Սասանյանները: 226թ. Արտաշիր Սասանյանը պարտության է մատնում Արտավան V Արշակունուն և գրավում Պարսկաստանի գահը: Խոսրով II-ը իր շուրջը համախմբեց Արտավանի որդիներին, Կովկասի ժողովուրդներին և համառ պայքար սկսեց Սասանյանների դեմ: Վերջիններս իրենց հերթին փորձում էին տապալել իրենց տոհմական հակառակորդ Արշակունիներին Հայաստանում և այստեղ հաստատել Սասանյանների արքայատոհմը:

253թ. պարսիկներին հաջողվեց նվաճել Հայաստանի մեծ մասը: Միայն արևմտյան որոշ շրջաններ մնացին անվաճ, ուր շարունակեց իշխել Խոսրով II-ը: Մեծ Հայքի թագավոր հռչակվեց պարսից արքայի թագաժառանգը՝ Որմիզդ-Արտաշիրը (253-272թթ.): Այսպիսով Հայաստանում փորձ էր արվում հաստատել Սասանյանների արքայատոհմը: Սասանյան տերության մեջ Հայոց արքային տրվում էր երկրորդ

պատվավոր գահը պարսից արքայից հետո: Հայոց գահը հանձնվում էր պարսից թագաժառանգին:

256թ. Խոսրով II Արշակունին սպանվեց Սասանյանների ուղարկած վարձու մարդասպան Անակ Պարթևի ձեռքով: Դրանից հետո պարսկական զորքերը նվաճեցին նաև Հայաստանի արևմտյան շրջանները: Որմիզդի արքայից արքա դառնալուց հետո Հայոց գահին անցավ նրա թագաժառանգ որդուն՝ Որմզդակին (272-276թթ.):

276թ. Հռոմը և Պարսկաստանը համաձայնության եկան Հայաստանի բաժանման հարցի շուրջ: Երկրի մեծագույն մասը մնաց Սասանյաններին, իսկ Բարձր Հայքը և Ծոփքը՝ Հռոմին: Մեծ Հայքի թագավոր դարձավ Ներսես Սասանյանը (276-293): Սկզբում հռոմեացիները Արևմտյան Հայաստանում թագավոր չնշանակեցին: Միայն 287թ. Դիոկղետիանոս կայսրը Խոսրով II-ի որդուն՝ Տրդատ III Արշակունուն ճանաչեց Հայոց արքա (287-330 թթ.):

293թ. Պարսկաստանում գահակալական պայքար սկսվեց: Հայոց արքա Ներսեսը իր թիկունքն ապահովելու և արքայից արքայի գահին տիրելու համար զինույնների գնաց: Նա Մեծ Հայքի պարսկական մասի կառավարումը հանձնեց Տրդատ III-ին, որը փաստորեն դարձավ ամբողջ Հայաստանի թագավոր:

Պարսից գահին տիրելուց հետո Ներսեսը պատերազմ սկսեց Հռոմի դեմ, սակայն 297թ. ծանր պարտություն կրեց: 298թ. Մծբինում կնքված 40-ամյա հաշտության պայմանագրով պարսիկները հրաժարվեցին Հայաստանի նկատմամբ ունեցած իրավունքներից: Չորս տասնամյակ շարունակված խաղաղությունը հնարավորություն տվեց Տրդատ III Մեծին վերականգնելու Հայաստանի տնտեսական ու քաղաքական հզորությունը, կատարելու վարչական, մշակութային ու հոգևոր բարեփոխումներ:

10. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Համաշխարհային քաղաքակրթության մեջ նոր ժամանակաշրջան սկսվեց, երբ ճգնաժամ ապրող հեթանոսական կրոնին ու բազմաթիվ կուռքերի պաշտամունքին փոխարինելու եկավ նոր, միաստվածային կրոնը՝ քրիստոնեությունը:

Նոր կրոնի հիմնադիրը Հիսուս Քրիստոսն էր, որը գործել է Հրեաստանում: Նա քարոզում էր սեր մարդկանց, բնության և ամբողջ աշխարհի նկատմամբ: Քրիստոսի ծնունդով հիմք դրվեց նոր թվականությանը և քաղաքակրթության նոր փուլին: Հիսուս Քրիստոսին հրեա կրոնավորների պահանջով հռոմեացիները 33թ. երուսաղեմում խաչեցին: Սակայն դա չկասեցրեց նոր ուսմունքի ու մարդկային բարոյականության նոր գաղափարների տարածմանը ամբողջ աշխարհում:

Քրիստոսի 12 աշակերտները՝ առաքյալները և բազմաթիվ հետևորդները սկսեցին քրիստոնեական վարդապետությունը քարոզել բոլոր երկրներում: Սկզբում ամենուրեք թշնամաբար էին ընդունում նոր ուսմունքը, հալածում էին քրիստոնյաներին, որոնք ստիպված էին գործել խիստ գաղտնիության պայմաններում: Չնայած հարուցված դժվարություններին, քրիստոնյաների թիվն աշխարհի բազմաթիվ երկրներում օրեցօր աճում էր՝ ընդգրկելով ոչ միայն ստորին խավերին, այլև ազնվականության լայն շերտերին: Բազմաթիվ երկրներում հետզհետե նախադրյալներ էին ստեղծվում՝ ժողովրդական լայն զանգվածների հոգևոր կարիքները այլևս չբավարարող հեթանոսական հավատալիքների փոխարեն քրիստոնեությունը պետական կրոն դարձնելու համար:

Նոր կրոնը, նրա քարոզած բարոյականության և մարդկային ապրելակերպի նոր գաղափարները տարածում էին ստացել նաև Հայաստանում: Մեր երկիրը հանդիսացավ աշխարհում առաջինը, որը 301թ. քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն:

Հայ ժողովուրդը առաջինն ընկալեց և ընդունեց նոր վարդապետության առաջադիմական գաղափարները, հրաժարվեց հեթանոսական հնացած հավատալիքներից և քրիստոնեական հավատքի հիմքերի վրա ստեղծեց նոր և առաջադեմ մշակույթ, փորձեց հենվել բարոյականության նոր՝ հումանիստական սկզբունքների վրա:

Հայաստանում, ըստ ավանդության, քրիստոնեությունն քարոզել և քրիստոնեական համայնքներ ու կազմակերպություն՝ եկեղեցի են ստեղծել Հիսուս Քրիստոսի 12 առաքյալներից երկուսը Թադեոսը և Բարդուղիմեոսը, որոնք դարձել են Սանատրուկ թագավորի հալածանքների զոհերը: Մեր եկեղեցին կոչվում է Առաքելական, քանի որ նրա կազմա-

կերպական հիմքը դրել են այդ առաքյալները: II-III դդ. գաղտնի գործող քրիստոնեական համայնքների թիվը Հայաստանում աճել է:

Հայոց Տրդատ III Մեծ թագավորը (287-330թթ.) և սկզբնական շրջանում հալածում էր քրիստոնյաներին: Նա տանջանքների ենթարկեց ու Արտաշատի արքունի բանտում՝ խոր Վիրապում բանտարկեց քրիստոնեության ակտիվ քարոզիչ Գրիգոր Լուսավորչին: Արքային հայտնի էր դարձել, որ Գրիգորը ոչ միայն քրիստոնյա է, այլև իր հորը՝ Խոսրով II-ին սպանող Անակ Պարթևի որդին է:

Հավանաբար Գրիգորը կմնար բանտում, իսկ Տրդատը դարձի չէր գա, եթե տեղի չունենար մի հետաքրքիր, սակայն ցավալի վախճանով իրադարձություն: Հռոմեական կայսրության մեջ խիստ հալածանքներ էին սկսվել քրիստոնյաների նկատմամբ, որոնցից շատերը ստիպված ապաստանում էին Հայաստանում, ուր զանգվածային հալածանքներ չկային: Այդ փախստականներից էին նաև մի խումբ քրիստոնյա կույսեր, որոնց առաջնորդում էր Գայանեն: Այդ խմբում էր գեղեցկուհի Հռիփսիմեն: Տրդատ Մեծը սիրահարվեց Հռիփսիմեին և փորձեց կնության վերցնել նրան: Սակայն իրենց Քրիստոսի ծառայությանը նվիրած կույսը չէր ցանկանում ամուսնանալ, առավել ևս հեթանոսի հետ: Բարկացած Տրդատը հրամայեց տանջամահ անել Հռիփսիմեին, Գայանեին և մյուս կույսերին:

Շուտով Տրդատը խիստ զղջաց իր դաժանության համար և հոգեկան ծանր ապրումների մեջ ընկնելով հիվանդացավ: Ըստ ավանդության, արքայի քույր Խոսրովիդուխտի երագի շնորհիվ Գրիգոր Լուսավորչին դուրս բերեցին բանտից, և նա բժշկեց ու դարձի բերեց Տրդատին: Հայոց արքան, նրա ընտանիքը, նախարարները և զորքը 301թ. Տարոնի Աշտիշատ ավանի մոտ, Արածանի գետում մկրտվեցին Գրիգոր Լուսավորչի կողմից, որն էլ դարձավ Հայոց առաջին կաթողիկոսը: Հայաստանում հեթանոսական հավատալիքները արգելվեցին և պետական կրոն հռչակվեց քրիստոնեությունը:

Երկրի կարևոր հոգևոր կենտրոն Աշտիշատում Արամազդի, Վահագնի, Անահիտի տաճարները կործանվեցին և կառուցվեց առաջին քրիստոնեական եկեղեցին: Վաղարշապատում կույսերի նահատակման վայրերում նրանց անուններով կառուցվեցին եկեղեցիներ, ինչպես նաև Մայր տաճարը:

Բոլոր հեթանոսական տաճարները վերածվեցին եկեղեցիների: Քրմերը փորձեցին դիմադրել նոր կրոնի տարածմանը, սակայն արքունի զորքերը Տարոնում պարտության մատնեցին նրանց, իսկ քրմապետ Արծանը զոհվեց:

Հեթանոսական ամբողջ հոգևոր ու նյութական մշակույթը ոչնչացվեց, որպեսզի ոչինչ չհիշեցներ հին աստվածներին: Դա բավական ծանր հարված էր հայկական հազարամյակների մշակույթին: Սակայն դեռևս երկար ժամանակ էր պետք, մինչև քրիստոնեությունը թափանցեր ժողովրդի բոլոր խավերի մեջ և վերջնականապես դուրս մղեր հեթանոսության մնացորդները:

Այսպիսով՝ Հայաստանը դարձավ առաջին երկիրը, որտեղ, մյուս բոլոր երկրներում դաժան հալածանքների ենթարկվող քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն: Դա կատարվեց մի շրջանում, երբ մեր երկու հարևան գերտերությունները՝ Պարսկաստանը և Հռոմը թշնամաբար էին տրամադրված նոր կրոնի նկատմամբ: Հայաստանը պետք է բավական հզոր և ինքնուրույն լիներ, որպեսզի կարողանար դեմ գնար նրանց և կատարեր հոգևոր-մշակութային հեղափոխություն: 311թ. Հռոմի կայսր Մաքսիմիանոս Դայան արշավեց Հայաստան, սակայն Տրդատը պարտության մատնեց կայսերական բանակին և Մեծ Հայքին վերամիավորեց Մծբինի պայմանագրով Հռոմին միացված Ծոփքը, Աղծնիքը, Կորդուքը, Ծավդեքը:

Հայաստանը ստիպված չեղավ երկար պայքարել նախկին դաշնակից Հռոմի դեմ: 313թ. Հռոմեական կայսրության մեջ թույլատրվեց ազատորեն դավանել քրիստոնեությունը՝ մյուս կրոնների շարքում, իսկ 324թ. դարձավ պետական կրոն, սակայն հեթանոսական կրոնները չարգելվեցին: Միայն 381թ. քրիստոնեությունը հռչակվեց Հռոմի պաշտոնական ու միակ կրոնը:

Տրդատ Մեծը եկեղեցուն նվիրեց հեթանոսական տաճարների ու քրմերի ամբողջ ունեցվածքը և այլ կալվածքներ: Եկեղեցուն էր տրվում տասանորդ տուրքը՝ երկրի ամբողջ բերքի մեկ տասներորդ մասը: Հաջորդ թագավորները և խոշոր նախարարները եկեղեցուն էին նվիրում նորանոր հարստություններ: Եկեղեցին, այսպիսով, ժամանակի ընթացքում դառնում է երկրի խոշորագույն հողատերերից մեկը և զիջում էր

միայն արքունիքին: Հայոց եկեղեցին իր տնտեսական հզորության ու հարստության շնորհիվ ձեռք բերեց խոշոր քաղաքական ազդեցություն և հետզհետե դարձավ երկրի իշխող ուժերից մեկը:

Հայ առաքելական եկեղեցին սկզբում մաս էր կազմում քրիստոնեական համաշխարհային եկեղեցուն: Հայոց եկեղեցու դավանաբանության հիմքում դրված են քրիստոնեական եկեղեցու առաջին երեք տիեզերական ժողովների (Նիկիայի՝ 325թ., Կոստանդնուպոլսի՝ 380թ., Եփեսոսի՝ 431թ.) որոշումները: Քաղկեդոնի 451թ. ժողովում ընդունված որոշումների արդյունքում տիեզերական քրիստոնեական եկեղեցին պառակտվեց, և Հայոց եկեղեցին դարձավ ինքնուրույն:

Հայոց եկեղեցին կարևոր դեր է կատարել միասնական պետականության պահպանման համար, իսկ այդ կարևոր ազգային արժեքի կորստից հետո եկեղեցին իր վրա է վերցրել հայ ժողովրդի ղեկավարությունը, մեր մշակույթի պահպանման ու զարգացման ողջ ծանրությունը, գլխավորել է ազատագրական շարժումները, հայ երիտասարդության մեջ սերմանել ու վառ է պահել ազգային գիտակցությունը:

11. ՀԱՅԱՍՏԱՆԸ 4-ԴԴ ԴԱՐՈՒՄ

Տրդատ Մեծին հաջորդեց որդին՝ Խոսրով III Կոտակը (330-338): Նրա կառավարման առաջին տարիները խաղաղ անցան: Խոսրով Կոտակը ծավալել է շինարարական աշխատանքներ, հիմնել է Դվին քաղաքը, տնկել Տաճար մայրի և Խոսրովակերտ արգելանոց անտառները: Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրով կաշկանդված Պարսկաստանը խրախուսում էր որոշ հայ նախարարների կենտրոնախույս հակումները: Խոսրով Կոտակը հարկադրված էր զենքի ուժով ճնշել ներքին խռովությունները, սրի քաշել ըմբոստացած տոհմերին: Խոսրովը ստիպված սահմանեց օրենք, ըստ որի 1000-ից ավելի զորք ունեցող նախարարներն ապրելու էին արքունիքում, որպեսզի լինեին թագավորի անմիջական հսկողության ներքո և անջատողական ձգտումներով հանդես չգային:

336թ. պարսից արքա Շապուհ II-ի հրահրմամբ Հայաստան ներխուժեց մազքութների թագավոր Սանեսանը: Օշա-

կանի ճակատամարտում հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը ջախջախեց թշնամուն և սպանեց Սանեսանին:

337թ. Մծբինի դաշնագրի ժամկետը լրանալուն պես Հայաստան արշավեց Շապուհ II-ը: Հակառակորդին միացավ նաև դավաճան նախարար Դատաբեն Բզնունին: Վանա լճի մոտ, Առեստի ճակատամարտում Վաչե Մամիկոնյանը ջախջախիչ պարտության մատնեց ոսոխին, սակայն ինքն էլ հերոսաբար զոհվեց: Այդ ճակատամարտից հետո Գրիգոր Լուսավորչի որդին՝ Վրթանես կաթողիկոսը կարգ սահմանեց, որ հայրենիքի և հավատքի համար զոհված զինվորների հիշատակը պետք է միշտ վառ պահել՝ ինչպես սրբերինը:

Խոսրով III Կոտակի մահից հետո պարսկական զորքերը վերստին ներխուժեցին Մեծ Հայք: Սակայն թագաժառանգ Տիրանը հռոմեական զորքերի օգնությամբ նրանց դուրս մղեց և հաստատվեց հայրենի գահին (338-350): Տիրանը փորձեց սահմանափակել տնտեսապես չափազանց հզորացած եկեղեցու կալվածքները, տապալեց ընդդիմացող կաթողիկոս Հուսիկ Ա Պարթևին և կաթողիկոսական աթոռին դրեց Աղբիանոսյան տոհմի ներկայացուցիչ Փառեն Աշտիշատցուն:

350թ. Շապուհ II-ը խոշոր բանակով ներխուժեց Մեծ Հայք, խարդախությամբ գերեվարեց Տիրան արքային և կուրացրեց: Սակայն նույն թվականին հայ-հռոմեական միացյալ զորքերը Բասեն գավառում, Ոսխայի ճակատամարտում գլխովին ջախջախեցին պարսկական ուժերին: Շապուհը հարկադրված էր կնքել հաշտություն և գերությունից վերադարձնել Հայոց արքային: Քանի որ Տիրանը կույր էր, գահը հանձնեց որդուն՝ Արշակ II-ին (350-368):

Արշակ II-ը հաշտվեց Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ և կաթողիկոսական աթոռին հաստատեց Ներսես Ա Պարթևին, փորձեց բարելավել հարաբերությունները բոլոր նախարարական տների հետ: Այդ քայլերը բարենպաստ ազդեցություն ունեցան երկրի զարգացման ու հզորացման համար:

354թ. Աշտիշատում տեղի ունեցավ առաջին հայկական եկեղեցական ժողովը: Այստեղ որոշումներ ընդունվեցին հարկերը չափավորելու մասին, արգելվեցին մերձավոր հարազատների ամուսնությունը, բազմակնությունը և այլ հեթանոսական սովորույթներ: Որոշվեց եկեղեցու եկամուտների

հաշվին բացել անվճար հյուրանոցներ, հիվանդանոցներ, ծերանոցներ, որբանոցներ և այլ բարեգործական հաստատություններ, բոլոր բնակավայրերում պետք է հիմնվեին դպրոցներ: Նման սոցիալական ու կրթական խոշորամասշտաբ ծրագրերի ու գաղափարների իրագործումը չափազանց առաջադեմ երևույթ էր:

Կենտրոնական իշխանության տնտեսական և քաղաքական հզորությունը մեծացնելու նպատակով Արշակը Կոգովիտ գավառում հիմնեց Արշակավան քաղաքը, ուր բնակվելու հրավիրեց բոլոր ցանկացողներին: Տասնյակ հազարավոր գյուղացիներ լքում էին նախարարների տիրույթները և գալիս Արշակավան: Դա հարուցեց նախարարների դժգոհությունը, որոնք կործանեցին Արշակավանը և ծախողեցին արքայի ծրագրերը: Արքունի և նախարարական զորքերի միջև ճակատամարտը հաղթանակ չբերեց կողմերից որևէ մեկին, և Ներսես Մեծ կաթողիկոսի միջնորդությամբ թագավորը հաշտվեց նախարարների հետ:

363թ. վերսկսված պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ Արշակ II-ը միացավ հռոմեացիներին: Սակայն Յուլիանոս կայսրի զոհվելուց հետո, նրան հաջորդած կայսր Յուլիանոսը Շապուհ II-ի հետ կնքեց Յոռնի համար ստորագուցիչ պայմաններով հաշտության պայմանագիր և պարտավորվեց այլևս չաջակցել Արշակին: Այդ պայմանագիրը հռոմեացի պատմիչներն անվանել են «ամոթալի դաշինք»:

Օգտվելով նպաստավոր իրավիճակից՝ 364թ. գարնանը Շապուհ II-ը խոշոր ուժերով ներխուժեց Մեծ Հայք, միաժամանակ Արշակ II-ի դեմ բերեց որոշ դժգոհ նախարարների՝ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Արշակ II-ը և տաղանդավոր սպարապետ Վասակ Մամիկոնյանը չորս տարի հերոսաբար դիմագրավեցին պարսկական զորքերին և պահպանեցին Մեծ Հայքի թագավորության անկախությունը: Ջենքի ուժով չհասնելով հաջողության՝ Շապուհը դիմեց նենգության: Նա, հաշտություն կնքելու պատրվակով, 368թ. Տիգրոն հրավիրեց Արշակին ու Վասակ Մամիկոնյանին և կալանավորեց: Սպարապետին տանջամահ արեցին, իսկ արքան մահացավ Ամհուշ բերդում:

368թ. պարսկական բանակը ներխուժեց Մեծ Հայք, ավերեց խոշոր քաղաքները, գերեվարեց հարյուր հազա-

րավոր բնակիչների, ռազմակալեց երկիրը: Հայոց թագուհի Փառանձենը փոքրաքանակ արքունի կայազորով և գանձերով ամրացավ Արշարունիք գավառի Արտագերս ամրոցում: Նա 14 ամիս հերոսաբար դիմադրեց թշնամուն, սպասելով հռոմեական ուժերի օգնությանը՝ թագաժառանգ Պապի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Ի վերջո՝ սովի և համաճարակի հարկադրանքով Արտագերսը հանձնվեց թշնամուն: Պարսիկները կողոպտեցին Արշակունյաց գանձերը, տանջամահ արեցին Փառանձենին:

Պապ թագավորի (369-374թթ.) և Մուշեղ Մամիկոնյանի շուրջ համախմբված հայրենասեր նախարարները մի շարք հաջող մարտեր մղեցին պարսկական զավթիչների դեմ և ազատագրեցին երկրի մեծ մասը: Շուտով Հռոմի Վաղես կայսրը օգնական զորամաս ուղարկեց Մեծ Հայք: Մուշեղ Մամիկոնյանը Շապուհին խայտառակ պարտության մատնեց Ատրպատականում: 371թ. գարնանը հայ-հռոմեական միացյալ ուժերը Բագրևանդ գավառի Ձիրավի դաշտում Նպատ լեռան մոտ գլխովին ջախջախեցին պարսկական բանակը: Շապուհը հարկադրված եղավ հաշտություն կնքել, ճանաչել Մեծ Հայքի անկախությունը և Պապ Արշակունու գահակալությունը:

Երիտասարդ ու եռանդուն Հայոց արքան մեծ ջանքեր գործադրեց նաև երկրի առջև ծառացած ներքին խնդիրների լուծման ուղղությամբ: Նա զենքի ուժով ճնշեց կենտրոնական իշխանության դեմ ապստամբած նախարարներին և վերամիավորեց Մեծ Հայքի ամբողջականությունը:

Պապը փորձեց թուլացնել եկեղեցու տնտեսական հզորությունը և այդ միջոցներն օգտագործել երկրի պաշտպանունակությունը ուժեղացնելու համար: Նա փակեց կուսակրոն հաստատությունները, որոնք խոչընդոտում էին բնակչության վերարտադրությանը և կլանում երիտասարդ ուժերին, կրճատեց եկեղեցու հողային կալվածքները և եկեղեցու օգտին գանձվող հարկերը, սահմանափակեց հոգևորականության իրավունքներն ու արտոնությունները: Նա ընդարձակեց զինված ուժերը և բռնագրաված հողերը շնորհեց զինվորական ծառայություն կրող մանր ազնվականներին: Այդ քայլերի շնորհիվ կազմավորեց ուժեղ և մարտունակ բանակ, իսկ զորքի թիվը 10.000-ից հասավ 90.000-ի: Պապը բարե-

լավեց հարաբերությունները նաև Պարսկաստանի հետ, որպեսզի թուլացնի կախումը Հռոմից:

Հայոց արքայի ընդգծված ազգային և ինքնուրույն քաղաքականությունը հարուցեց հռոմեական արքունիքի դժգոհությունը: Հռոմին պետք էր թույլ և կախվածության մեջ գտնվող թագավոր, իսկ ուժեղ ու ինքնուրույն Հայոց արքան, որը փորձում էր բարեփոխումների միջոցով երկիրը դուրս բերել ճգնաժամից և վերականգնել հայկական պետության նախկին հզորությունը, կարող էր խոչընդոտել կայսրության ծավալապաշտական հետագա ծրագրերին: Ի վերջո, Պապ թագավորը դարձավ Վաղես կայսեր կազմակերպած դավադրության զոհը: Հայաստանի հռոմեական դեսպանը Հայոց արքային հրավիրեց խնջույքի և հյուրասիրության ժամանակ սպանեց: Նույնիսկ հռոմեացի պատմիչները այդ ոճիրը հիշում են արգահատանքով: Այսպիսով՝ երիտասարդ արքայի բարեփոխումները մնացին անավարտ, իսկ երկրի հզորացմանն ու ամրապնդմանն ուղղված ջանքերը տապալվեցին:

12. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Պապի դավադիր սպանությունից հետո Հռոմի աջակցությամբ Մեծ Հայքի թագավոր դարձավ նրա ազգական Վարազդատը (374-378), որն ապրել և կրթվել էր Հռոմում, հռչակվել օլիմպիական մրցախաղերում: Վարազդատը ևս վարում էր Հռոմի ու Պարսկաստանի միջև խուսանավելու քաղաքականություն: Պատմիչների վկայությամբ Վարազդատը հուժկու մարզիկ էր, բայց բավական միամիտ էր, որի համար էլ գլուխ չէր հանում պետական գործերից: Շուտով տարածայնություններ առաջ եկան արքայի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի միջև: Վարազդատը իր դայակ Բատ Սահառունու դրոժմամբ սպանել տվեց Մուշեղ Մամիկոնյանին, իսկ սպարապետության գործակալությունը հանձնեց Սահառունուն: Վարազդատի քաղաքականությունից դժգոհ հայ նախարարները սկսեցին համախմբվել Մանվել Մամիկոնյանի շուրջը, որը 378թ. Կարինի ճակատամարտում պարտության մատնեց Վարազդատին և վտարեց երկրից:

Մանվել Մամիկոնյանի խնամակալությամբ Մեծ Հայքի թագավոր հռչակվեց Պապի անչափահաս որդի Արշակ III-ը

(378-389): Երկրի փաստացի ղեկավար դարձավ Մանվելը, որը կարողացավ որոշ ժամանակով համախմբել բոլոր նախարարներին և երկիրը զերծ պահել պարսիկների ու հռոմեացիների ոտնձգություններից:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Մանվել Մամիկոնյանի մահվանից հետո: Նախարարների մեծ մասը հրաժարվեց ենթարկվել Արշակ III-ին, և պարսից արքայի աջակցությամբ Հայոց արքա հռչակվեց Խոսրով IV Արշակունին (385-389): Արշակի իշխանության տակ մնացին երկրի արևմտյան մի քանի գավառները, իսկ երկրի մեծագույն մասը անցավ Խոսրովի իշխանության տակ: Մեծ Հայքը փաստորեն բաժանվեց երկու մասի և ավելի թուլացավ:

Երկարատև բանակցություններից հետո բյուզանդական կայսրը և պարսից արքան համաձայնության եկան վավերացնելու Հայաստանի բաժանումը: 387թ. կնքված պայմանագրով Հայաստանի արևմտյան մասը հռչակվեց Հռոմի ազդեցության շրջան, իսկ արևելյան մեծագույն մասը՝ Պարսկաստանի: Բյուզանդական ու պարսկական զորքեր հաստատվեցին իրենց ազդեցության գոտիներում: Այսպիսով՝ հարևան տերությունների միջև բաժանված ու թուլացած Հայոց պետությունը այլևս ի զորու չէր ինքնուրույն քաղաքականություն վարել և ժամանակի հարց էր նաև թագավորության վերացումը:

389թ. Արշակ III-ի մահից հետո Հռոմը իր ազդեցության տակ գտնվող Հայաստանի արևմտյան մասի կառավարումը վստահեց Խոսրով IV-ին, որով երկիրը նորից միավորվեց մեկ թագավորի իշխանության տակ: Խոսրովը պարտավոր էր արևմտյան շրջաններից հավաքած հարկը ուղարկել կայսրին, իսկ արևելյանից հավաքածը՝ պարսից արքային:

389թ. պարսից արքան բանտարկեց Խոսրով IV-ին, քանի որ առանց իր համաձայնության կաթողիկոս էր հաստատել Սահակ Ա Պարթևին: Սակայն պարսից արքան չհամարձակվեց վերացնել Հայոց թագավորությունը, քանի որ հայ նախարարները դեմ էին այդ քայլին: Հայկական գահը տրվեց Խոսրով IV-ի եղբայր Վռամշապուհին (389-415 թթ.):

Նա ևս կառավարում էր Հայաստանի երկու մասերում: Վռամշապուհը, օգտվելով Պարսկաստանի և Հռոմի միջև ստեղծված քաղաքական հավասարակշռությունից, բա-

րեկամական կապեր հաստատեց նրանց արքունիքների հետ, կարողացավ լավ հարաբերություններ պահպանել նաև հայ նախարարների հետ և քառորդ դար գահակալեց խաղաղությամբ, մեծապես նպաստեց երկրի բարգավաճմանը, հատկապես ազգային մշակույթի ու կրթության զարգացմանը: Վռամշապուհն աջակցեց Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին՝ հայոց գրերի ստեղծման և ազգային դպրոցների բացման գործում, մեծապես խրախուսեց նրանց լուսավորական ձեռնարկումները:

Վռամշապուհը կարգավորեց և Պարսից արքունիքին հաստատել տվեց հայոց նոր «Գահնամակը»՝ նախարարությունների տեղն ու պաշտոնները կառավարման նվիրապետական համակարգում:

Վռամշապուհի մահից հետո, նրա որդի Արտաշեսի մանկահասակության պատճառով, հայ նախարարների առաջարկով 415թ. կրկին թագավորեց բանտարկությունից ազատված Խոսրով IV-ը, բայց մի քանի ամսից վախճանվեց:

Օգտվելով պատեհ առիթից՝ Պարսից արքա Չագկերտ I-ը, հակառակ հայ նախարարների կամքին, 416թ. Չայոց գահին դրեց իր որդի Շապուհին (416-419): Դրանով պարսիկները նպատակ ունեին Չայաստանում հաստատել Սասանյան արքայատոհմի իշխանությունը, ապա հետզհետե հայերին քրիստոնեությունից շեղել դեպի զրադաշտականություն: Սակայն Շապուհը չկարողացավ շահել նախարարների համակրանքը, որոնք ամեն առիթով բացահայտորեն ցույց էին տալիս իրենց արհամարանքը նրա նկատմամբ: 419թ. Շապուհի Տիգրոն մեկնելուց և սպանվելուց հետո հայ նախարարները՝ Ներսես իշխանի գլխավորությամբ, ապստամբեցին և ժամանակավորապես թոթափեցին պարսից տիրապետությունը:

Սասանյան արքան հարկադրված եղավ Վռամշապուհի որդի Արտաշեսին ճանաչել Չայոց թագավոր (422-428), իսկ Վարդան Մամիկոնյանին՝ Չայոց սպարապետ: Սակայն Արտաշեսը փորձեց նախարարների իրավունքները սահմանափակել, ավելի շատ ժամանակ էր հատկացնում որսին ու զվարճություններին, քան պետական գործերին: Անխոհեմ քայլերով նա հետզհետե իր դեմ գրգռեց նախարարներին, որոնց պահանջով և կեղծ ամբաստանությամբ 428թ. պարսից արքան գահազրկեց նրան:

Արշակունի վերջին արքայի դեմ պարսից արքունիքի առաջ ամբաստանությամբ հանդես գալուց հրաժարվեց Գրիգոր Լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչ կաթողիկոս Սահակ Պարթևը, որի համար ինքը ևս գահագրկվեց:

Այսպիսով՝ տապալվեց Արշակունիների արքայատոհմը և վերացավ Հայոց թագավորությունը: Հայաստանը վերածվեց պարսից տերության մարզպանության, որի առաջին մարզպան նշանակվեց Վեհմիհրշապուհը (428-443): Մարզպանական Հայաստանը թուլացնելու նպատակով նրանից առանձնացվեցին և հարևան մարզպանություններին միացվեցին սահմանային նահանգները՝ Գուգարքը, Ուտիքը, Արցախը, Փայտակարանը, Պարսկահայքը, Կորճայքը և Աղձնիքը:

Փաստորեն, հայոց թագավորության վերացման ուղղությամբ պարսիկների դարավոր պայքարը, որ միշտ անհաջողության էր մատնվել հայոց բանակի և նախարարների դիմադրության շնորհիվ, ի վերջո պսակվեց հաջողությամբ հենց հայ նախարարների միջոցով: Թագավորության կորուստը ծանր հարված էր հայ ժողովրդին, քանի որ ազգային պետությունը այն կարևոր միջոցն է, որով ժողովուրդները պաշտպանվում են օտարների ոտնձգություններից: Այս շրջանում հայկական պետականության կրողները մնացին նախարարությունները, որոնց ձեռքում էր կենտրոնացված երկրի տնտեսական ու պետական գործառույթների հիմնական մասը և բանակը:

13. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում ավարտուն տեսք և իրավական ձևակերպում ստացավ ավատատիրական (ֆեոդալական) հասարակարգին բնորոշ կառավարման համակարգը, սեփականության ձևերը, տարբեր խավերի միջև եղած փոխհարաբերությունները:

Նվիրապետական կամ հիերարխիկ «սանդուղքը» գլխավորում էր երկրի գերագույն տերը՝ Հայոց արքան: Նրա իրավունքն էր քաղաքներ ու ամրոցներ հիմնելը, պատերազմ հայտարարելը, հաշտություն կնքելը, նա էր բանակի գերա-

գույն գլխավոր հրամանատարը: Երկրի համար մեծ կարևորություն ունեցող հարցերը լուծելու համար արքան հրավիրում էր բարձրաստիճան նախարարների ու հոգևորականների հավաք՝ աշխարհաժողով:

Թագավորին հաջորդում էին սահմանապահ չորս «աշխարհների»՝ Աղձնիքի, Կորճայքի, Նոր Շիրականի և Գուգարքի բղեշխները: Նրանց խնդիրն էր սեփական ուժերով պաշտպանել երկրի սահմանները մանր հարձակումներից, իսկ հզոր ուժերին կասեցնել մինչև արքունի բանակի հասնելը:

Նվիրապետական հաջորդ աստիճանին կանգնած էին «աշխարհատեր» և գավառատեր նախարարները, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականները: Նախարարներն իրենց տիրույթները կառավարում էին անսահմանափակ իրավունքներով: Նրանց կախումը արքայից արտահայտվում էր սահմանված չափի հարկ ու զորք տրամադրելով:

Նախարարներին ժառանգաբար պատկանող հողը կոչվում էր «Հայրենիք» կամ «Հայրենական»: Այն հանդիսանում էր անտրոհելի տոհմական սեփականություն և ժառանգաբար հորից անցնում էր ավագ որդուն: Նախարարական տան կրտսեր անդամները՝ սեպուհները, ենթարկվում էին տոհմի նահապետին: Այդպիսով նախարարական տոհմերի տիրույթները մնում էին ամբողջական և ապահովում էին նրանց տնտեսական ու ռազմական կենսունակությունը:

Նախարարները նաև արքունիքում վարում էին որևէ պաշտոն, որի համար թագավորից որպես վարձատրություն ստանում էին հողատարածք: Նման տիրույթները կոչվում էին «Պարգևական» և տրվում էին այնքան ժամանակով, քանի դեռ նախարարը վարում էր պաշտոնը: Հետզհետե արքունի գործակալություններն ու պաշտոնները դառնում էին որևէ նախարարական տոհմի ժառանգական սեփականությունը և այդ պաշտոնների հետ կապված հողերն էլ կամաց-կամաց վերածվում էին հայրենական տիրույթների:

Նվիրապետական «սանդուղքի» հաջորդ աստիճանը կազմում էին ազնվականության կրտսեր սերունդը՝ «ոստանիկները» և «սեպուհները», որոնք իրենց անմիջական տերերից՝ թագավորից կամ նախարարներից, ստանում էին «պարգևական» տիրույթներ՝ զինվորական և վարչական ծառայություններ կատարելու պայմանադրությամբ:

Նախարարները ժառանգաբար արքունիքում զբաղեցնում էին իրենց հատկացված «գահերը» կամ «բարձերը», որոնց աստիճանները կամ տեղերը, ըստ նրանց ռազմական և տնտեսական հզորության, վավերացվում էին «Գահնամակ» կոչվող հատուկ արքունի հրովարտակով: Բղեշխները ավելի բարձր էին, քան մյուս նախարարները և «Գահնամակում» նրանց չէին հաշվառում:

Հայոց արքան երկիրը կառավարում էր արքունի գործակալությունների միջոցով: Գործակալական պաշտոնները վարում էին նախարարները, հիմնականում՝ ժառանգաբար, սերնդե սերունդ փոխանցելով իրենց հմտությունները: Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում կարևոր դերակատարություն ունեին հետևյալ գործակալությունները.

1. Հազարապետություն գործակալությունը ղեկավարում էր երկրի տնտեսական կյանքը՝ հարկազանձումներն ու եկամուտների բաշխումը, շինարարական աշխատանքները և այլն: Հազարապետի պաշտոնը տարբեր ժամանակներում վարել են Գնունի և Ամատունի տոհմերի ներկայացուցիչները:

2. Մեծ դատավարություն գործակալությունը ղեկավարել է դատական ատյանները, ընդունել հասարակական կյանքը կարգավորող օրենքներ ու կանոններ, հետևել դրանց կենսագործմանը, մեծ դատավորը այդ գործերում համարվել թագավորի առաջին խորհրդականը: Մեծ դատավարության գործակալությունը Հայոց քրմապետի, իսկ 301թ.-ից՝ Հայոց կաթողիկոսի մենաշնորհն էր:

3. Սպարապետություն գործակալությունը ղեկավարում էր երկրի ռազմական ուժերը: Սպարապետը հայկական բանակի հրամանատարն էր: Այս գործակալությունը ժառանգաբար վարում էին Մամիկոնյան նախարարական տան ներկայացուցիչները:

4. Թագադիր ասպետություն գործակալությունը ղեկավարում էր նորընծա արքայի թագադրման, արքունի արարողությունների, օտարերկրյա դեսպանների ընդունելության գործը: Թագադիր ասպետի պաշտոնը ժառանգաբար վարում էին Բագրատունիները, որոնց նաև կոչում էին «Ասպետունի»:

5. Մաղխագություն գործակալությունը գլխավորում էր արքունի պահակազորը և թիկնազորը, հոգում թագավորի և նրա ընտանիքի պաշտպանությունը: Մաղխագի պաշտոնը

ժառանգաբար վարում էին Խորխոռունիները, որի համար էլ այդ տոհմի անդամները հաճախ կոչվում էին «Մաղխագունի»:

6. Մարդաբնություն գործակալությունը հսկում էր թագավորի ապարանքը, կանանոցը, բերդերն ու ամրոցները, ղեկավարում արքունի տնտեսությունը, կալվածները, եկամուտներն ու գանձերը: Մարդաբնությունը գլխավորում արքայազունների դաստիարակությանը, թագավորի առաջին խորհրդականն էր և մեծարվում էր «Հայր» պատվանունով: Նա գլխավորում «մարդաբնական» կամ «սեպհական» կոչվող հեծելազունոցը, որը կազմվում էր նախարարների ավագ որդիներից:

7. Սենեկապետությունը գործակալությունը ղեկավարում էր պետական գրագրությունները: Սենեկապետը համարվում արքունի դիվանի քարտուղարը, դպրապետը և կնքապահը: Արքայի հանձնարարությամբ այդ պաշտոնը վարում էին հավատարիմ, գրագետ և օտար լեզուների տիրապետող ազնվականները:

Գոյություն ունեին նաև բազմաթիվ մանր գործակալություններ ու արքունի պաշտոններ:

Արշակունյաց Հայաստանում զինված ուժերը համալրվում էին արքունի և նախարարական զորամիավորումներով: Հայկական հեծելազորը՝ այրուծին, ըստ մեզ հասած «Զորանամակ» կոչվող արքունի հրովարտակի կազմված էր 124.000 մարտիկներից: Արքունի հեծելազունոցը կազմված էր 40.000 հեծյալից, իսկ 86 նախարարություններ տրամադրում էին 84.000 հեծյալ:

«Զորանամակով» սահմանված էր յուրաքանչյուր նախարարի հեծելազորի թիվը, որը ըստ նրա հզորության հասնում էր 50-ից մինչև մի քանի հազար զինվորի: Յուրաքանչյուր զորամաս մարտադաշտ էր դուրս գալիս իր նախարարի հրամանատարությամբ ու նրա դրոշի ներքո: Զինված ուժերի կորիզը կազմող այրուծին համալրվում էր գերազանցապես ազնվականներով, որոնք վաղ հասակից հմտանում էին ձիավարության և զինավարժության մեջ:

Պատերազմի ժամանակ խիստ անհրաժեշտության դեպքում գյուղացիներից հավաքագրում էին հետևակ զորամասեր, որոնք կոչվում էին «աշխարագոր»: Դրանց մարտունակությունը անհամեմատ ցածր էր: Նրանք ևս մարտի էին գնում իրենց նախարարի հրամանատարությամբ:

Արշակունիների թագավորության անկումից հետո պետական կարգը լուրջ փոփոխությունների չենթարկվեց: Հայոց բանակը շարունակում էր միասնական միավոր համարվել և գտնվում էր Հայոց սպարապետի հրամանատարության տակ, խոշոր գործակալությունները շարունակեցին գործել՝ ապահովելով երկրի կյանքի կանոնավոր գործունեությունը, որոշ գործակալություններ վերափմաստավորվեցին, իսկ պալատական մանր գործակալությունները դադարեցին գործելուց:

14. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 450-451 ԹԹ.

Չնայած հայկական թագավորությունը 428թ. վերացվեց և երկիրը վերածվեց Սասանյան Պարսկաստանի առանձին մարզպանության, այնուամենայնիվ Հայաստանը պահպանեց ներքին ինքնավարությունը: Հայ նախարարները և հոգևորականները լիովին պահպանեցին ավանդական իրավունքներն ու արտոնությունները, հայ նախարարների ձեռքում էին գրեթե բոլոր պաշտոնները, Հայոց սպարապետն էր առաջնորդում հայկական բանակը: Սասանյաններին տրվում էին միայն այն հարկերը, որոնք գանձվում էին Արշակունի թագավորների օգտին: 443թ. պարսից արքա Հազկերտ II-ը Հայաստանի կառավարիչ՝ մարզպան նշանակեց Վասակ Սյունուն (443-451թթ.): Այսպիսով՝ պարսից արքայից արքայի գերիշխանության տակ Հայաստանը փաստացիորեն պահպանել էր ներքին ինքնուրույնությունը:

Սակայն Հայաստանի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը պայմանավորված էր նրանով, որ երկիրը մոր էր կորցրել թագավորության կարգավիճակը, իսկ պարսկաբյուզանդական հարաբերությունները բավական սրված էին: Պարսից արքունիքը հարմար առիթի էր սպասում, որպեսզի իրագործի Հայաստանի պետական ինքնավարությունը վերացնելու և այն սովորական նահանգի վերածելու քաղաքականություն:

441թ. Հազկերտը Բյուզանդիային պարտության մատնեց և ստիպեց հաշտության պայմանագիր ստորագրել, որով կայսրը չէր աջակցելու հայերին: Ապա հայկական հեծելազորը ուղարկվեց Միջին Ասիա՝ քուշանների դեմ պատերազմելու, և երկար ժամանակ արգելափակվեց այնտեղ: 447թ. Հազկերտը

լայն լիազորություններով Հայաստան ուղարկեց Դեմշապուհ անունով մի պաշտոնյայի, որը «աշխարհագիր» (մարդահամար ու եկամուտների հաշվառում) անցկացրեց ու ավելացրեց հարկերի չափը: Նա սահմանափակեց հոգևորականների իրավունքները, քայլեր ձեռնարկեց պառակտելու հայ նախարարների միասնությունը, որոշ նախարարների գրկեց ժառանգական պաշտոններից ու արտոնություններից:

Նախապատրաստական քայլերից հետո Հագկերտը 449թ. հատուկ հրովարտակով հայ, վրացի և աղվան նախարարներից պահանջեց ուրանալ քրիստոնեությունը և ընդունել զրադաշտականություն: Արտաշատում հրավիրվեց աշխարհաժողով, ուր հայ նախարարներն ու հոգևորականները մերժեցին պարսից արքունիքի պահանջները:

Նշանավոր հայ, վրացի և աղվան նախարարները մարգապան Վասակ Սյունու և սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ կանչվեցին պարսից մայրաքաղաք Տիզբոն՝ բացատրություններ տալու: Այնտեղ հաշվեհարդարից խուսափելու համար նախարարները ստիպված էին առերես ընդունել զրադաշտականություն:

Մինչև նախարարների վերադարձը հայրենիք, հոգևորականները լայնածավալ աշխատանքներ էին ծավալել, և հայ ժողովուրդը տարերայնորեն ոտքի էր կանգնում դիմագրավելու կրոնափոխության վտանգը: Երբ պարսիկ մոգերը Բագրևանդ գավառի Անգդ ավանում փորձեցին մեռյալների վերածել եկեղեցին, բոլորքված բնակչությունը Ղևոնդ Երեցի գլխավորությամբ հարձակվեցին մոգերի վրա և հալածեցին: Իսկ հարևան Ջարեհավանում ժողովուրդը սպանեց մոգերին:

Համաժողովրդական վճռականությունը ոգևորեց նաև այն նախարարներին, որոնք մինչ այդ տատանվում էին պարսկական հզոր տերության դեմ ապստամբելու հարցում: Վասակ Սյունու և Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հայկական բանակը պարսկական կայսրության դեմ տարեց երկրից: Ապա պատվիրակություն ուղարկվեց Կոստանդնուպոլիս՝ բյուզանդական կայսրից օգնություն խնդրելու համար: Սակայն կայսրը մերժեց Հայաստանին աջակցել և դա անել արգելեց նաև Բյուզանդիային ենթակա հայ նախարարներից:

Հայ նախարարները դրանից չհուսահատվեցին և պատրաստվում էին վերականգնել Հայաստանի անկախութ-

յունը և թագավորությունը: Հայոց գահի թեկնածուներ առաջադրվեցին երեք նշանավոր նախարարներ Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին և Վահան (Ներշապուհ) Արծրունին:

Նախարարների մեծ մասը հակված էր Հայոց գահին տեսնել սպարապետ Վարդան Մամիկոնյանին, որը Գրիգոր Լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչ Սահակ Պարթևի թոռն ու ժառանգորդն էր և հետևաբար ազգակից էր Արշակունիներին: Վարդանին Հայոց թագավոր հռչակելու հարցը առաջին անգամ քննարկվել էր 428թ: Այդ ժամանակ նախարարները պատրաստ էին նրան տալ Հայոց թագը, եթե Սահակ Պարթևը միանար իրենց՝ ընդդեմ վերջին Արշակունի թագավոր Արտաշեսի: Սակայն հայրենասեր կաթողիկոսը մերժել էր միանալ սեփական արքայի դեմ կազմակերպվող դավադրությանը:

Վասակ Սյունին երկրի մարզպանն էր՝ կառավարիչը, նրա տոհմը սերում էր Հայկ նահապետի սերունդներից և «Գահնամակում» զբաղեցնում էր առաջին տեղը, քանի որ Սյունյաց տերը մարտադաշտ էր դուրս բերում 19.400 հեծյալ, որը մի քանի անգամ ավելի շատ էր, քան մյուս խոշոր նախարարների ռազմական ուժը: Բնականաբար Վասակը հավակնություն ուներ դառնալու Հայոց արքա և չէր ցանկանում երկրի ղեկավարումը զիջել «Գահնամակում» հինգերորդ տեղը զբաղեցնող Մամիկոնյաններին:

Թագավորության վերականգնման հարցում փաստորեն լուրջ հակասություններ առաջացան մարզպանի և սպարապետի միջև, որն էլ կարողացավ օգտագործել պարսից արքունիքը: Պարսիկները կեղծ խոստումներով իրենց կողմը հրապուրեցին Վասակ Սյունուն և ուրիշ նախարարների, պառակտեցին հայերի ուժերը: Նրանք խոստացան, որ կհրաժարվեն կրոնափոխությունից, կթեթևացնեն հարկերը, կվերականգնեն նախարարների իրավունքները, ներում կշնորհեն ապստամբներին:

Վասակ Սյունին, Բյուզանդիայի հետ դաշինքի ծախողումից և իր թագավոր դառնալը հարցականի տակ դրվելուց հետո, հակվեց հաշտություն կնքելուն, որպեսզի կանխեր բախումը պարսկական զերակշիռ ուժերի հետ, ինչպես նաև փրկեր Տիգրեմուն պատանդ մնացած երկու որդիների կյանքը: Չնայած Վասակ Սյունին նախկինում իրեն դրսևորել էր որպես

հայրենաճակեր գործիչ, մեծապես աջակցել էր Մեսրոպ Մաշտոցին Սյունիքում հայ գրերի ու դպրոցների տարածման գործում, մարգպանի պաշտոնում եղել էր երկրի հմուտ կառավարիչ, ապստամբության ոգեշնչողներից ու կազմակերպիչներից էր, սակայն հետզհետե հակվեց պարսիկների հետ համագործակցելու մտքին, որով սերունդների առաջ վաստակեց դավաճանի ու ազգադավ գործչի անոթալի պիտակը:

450թ. պարսկական բանակը ներխուժեց Աղվանք և սկսեց բռնությամբ տարածել զրադաշտականություն: Աղվանները օգնություն խնդրեցին հայերից: Որոշվեց նրանց օգնության ուղարկել Վարդան Մամիկոնյանի զորամասը, իսկ Վահան Արծրունու զորամասը շարժվեց սահմանամերձ Հեր և Զարեվանդ գավառները, որպեսզի պարսկական բանակը հանկարծակիորեն չներխուժեր երկիր: Վասակ Սյունու զորամասը մնաց Այրարատում և անհրաժեշտության դեպքում Աղվանքին օգնելու էր Սյունիքից: Քանի դեռ սպարապետը երկրում էր, մարգպանը չէր համարձակվում բացահայտորեն հանդես գալ պարսիկների հետ հաշտվելու հարցով:

450թ. Խաղխաղի (այժմ՝ Ղազախ) ճակատամարտում Հայոց սպարապետը զլխովին ջախջախեց պարսկական ավելի մեծաթիվ բանակին: Վարդան Մամիկոնյանը ամբողջությամբ ազատագրեց Աղվանքը, գրավեց նրա հյուսիսում գտնվող ճորա պահակի (այժմ՝ Դերբենդ) հզոր ամրությունները, որոնք պատվար էին հյուսիսից ներխուժող ցեղերի դեմ: Նա պայմանագիր կնքեց հոների հետ և խոստացավ թույլ տալ անցնելու ճորա պահակի ամրությունները, եթե նրանք ներխուժեին Պարսկաստան և օգնեին հայերին:

Շուտով սպարապետը լուր ստացավ, որ Վասակ Սյունին որոշել է դադարեցնել պայքարը և հեռացել է ապստամբությունից: Սպարապետը անմիջապես վերադարձավ հայրենիք, իսկ Վասակը ապաստանեց Սյունիքում: Այսպիսով՝ հայկական ուժերը պառակտվեցին, որը լուրջ հարված էր ազատագրական պայքարի դուրս եկած Հայաստանի համար:

451թ. գարնանը պարսկական հսկայական բանակը ներխուժեց Հայաստան: Հայկական բանակը ոսոխին հանդիպեց Վասպուրականի Արտազ գավառի Ավարայրի դաշտում: Հայկական 66.000-ոց բանակը, որի հիմնական մասը կազմված էր աշխարհագորից, կանգ առավ Տղմուտ գետի ձախ

ափին, իսկ թշնամու երեք անգամ գերակշիռ բանակը՝ աջ ափին: Նրանց էր միացել նաև Վասակ Սյունին:

451թ. մայիսի 26-ին հայկական բանակի գրոհով սկսվեց Ավարայրի նշանավոր ճակատամարտը: Այն հաղթանակ չբերեց կողմերից ոչ մեկին: Չնայած թվական գերակշռությանը և մարտական փղերի առկայությանը, պարսիկները չկարողացան հաջողության հասնել: Հայ զինվորները կռվում էին «Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն» նշանաբանով: Ճակատամարտը ավարտվեց երեկոյան, և կողմերը կանգնած մնացին նախկին դիրքերում: Պարսիկները երեք անգամ ավելի շատ կորուստներ ունեցան: Սակայն ճակատամարտում զոհվել էր Վարդան Մամիկոնյանը և այլ նշանավոր նախարարներ: Հայկական բանակը որոշեց հաջորդ օրը ճակատամարտ չտալ և պայքարը շարունակել երկրի անմատչելի վայրերում:

Չնայած ապստամբությունը հաղթական ավարտի չհասավ և Հայոց թագավորությունը չվերականգնվեց, այնուամենայնիվ ունեցավ խոշոր նշանակություն: Հազկերտը ստիպված էր ետ կանգնել պարսկական զորքերին, հրաժարվել կրոնափոխության ծրագրից, թեթևացնել հարկերը, հայկական այրուծին վերադարձնել հայրենիք, ճանաչել Հայաստանի ինքնավարությունը և վարել սիրաշահելու քաղաքականություն:

Վարդանանց պատերազմը մեր պատմության ամենահերոսական էջերից է, և Հայոց եկեղեցին սրբացրել է Ավարայրում զոհված մարտիկներին, որոնց հիշատակի օրը նշվում է մինչև այժմ:

15. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 481-484 ԹԹ.

Հաջորդ խոշոր հակապարսկական ապստամբությունը բռնկվեց Ավարայրից 30 տարի անց, երբ Պարսից արքունիքը կրկին փորձեց վերադառնալ Հայաստանի ինքնավարությունը վերացնելու և հայերին կրոնափոխելու նախկին քաղաքականությանը: Պերոզ արքան դարձյալ մեծացրեց Հայաստանից գանձվող հարկերը, սահմանափակեց հայ տոհմիկ

ավագանու իրավունքները, սկսեց բարձր պաշտոններից հեռացնել նշանավոր նախարարներին և դրանք տալ պարսիկներին հլու և դավանափոխ եղած նախարարներին: Դրանով թշնամություն էր առաջանում հայ իշխանական տների միջև և խրախուսվում էր կրոնափոխ լինելը: Երկրում առաջացած լուրջ դժգոհությունները ի վերջո հանգեցրին նոր ազատագրական պատերազմի:

Ապստամբության անմիջական առիթ դարձավ Վրաստանում սկսված հակապարսկական ելույթը: Վրաց թագավոր Վախթանգը սպանել էր դավանափոխ եղած Վազգեն բեշշխին և հրաժարվել էր ճանաչել պարսկական գերիշխանությունը: Հայաստանում գտնվող պարսկական զորքերը և հայկական հեծելազորը հրաման ստացան ճնշելու վրացիների ելույթը: Շիրակի Անի ամրոցի մոտ հայ նախարարները գաղտնի խորհրդակցություն հրավիրեցին և որոշեցին, որ պահը հարմար է պարսկական ատելի լուծը թոթափելու համար: Այդ մասին տեղեկանալով, Հայաստանի պարսիկ մարզպան Ատրվշնասպը և մյուս պարսիկ պաշտոնյաները փախան Ատրպատական:

Նախարարները մարզպան ընտրեցին Սահակ Բագրատունուն, իսկ սպարապետ՝ Վահան Մամիկոնյանին: Վերջինս Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանի եղբոր որդին էր, երկար ժամանակ պատանդ էր եղել Տիգրանուն: Նա իր խելքի, համարձակության ու առաքինությունների շնորհիվ բոլորի կողմից հարգված գործիչ էր և դարձավ այս ազատագրական պատերազմի ղեկավարն ու իսկական հերոսը: Ապստամբների կենտրոնը դարձավ մայրաքաղաք Դվինը:

Ատրպատականում եղած զորքերով Ատրվշնասպը անմիջապես ներխուժեց Հայաստան, որպեսզի արագորեն ճնշի շարժումը և թույլ չտա ծավալվելու: 481թ. Մասիսի լանջերին գտնվող Ակոռի գյուղի մոտ սպարապետի եղբայր Վասակ Մամիկոնյանը գլխովին ջախջախեց մի քանի անգամ գերակշիռ թշնամուն, իսկ Ատրվշնասպը սպանվեց:

Ակոռիի հաղթանակը չափազանց բարձրացրեց ազատագրական ուժերի հեղինակությունը և նորանոր նախարարներ միացան պայքարին:

482թ. գարնանը հայկական բանակը սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ Արտազ գավառի Ներսե-

հապատ գյուղի մոտ (Ավարայրից ոչ հեռու) փայլուն հաղթանակ տարավ երկիր ներխուժած պարսիկների դեմ: Այստեղ փայլեց սպարապետի զորավարական տաղանդը

Շուտով հայերից օգնություն խնդրեցին վրացիները: Բախտակից ժողովրդին աջակցելու համար Վրաստան մեկնեց հայկական բանակը Վահան Մամիկոնյանի և Սահակ Բագրատունու գլխավորությամբ: Այնտեղ պարզվեց, որ վրացական բանակը չափազանց փոքրաթիվ է, իսկ նրանց օգնության գալ խոստացած հոները դրժել էին խոստումը: Չնայած պարսկական բանակը շատ ավելի մեծ էր, սակայն որոշվեց ճակատամարտ տալ:

482թ. Թիֆլիսից ոչ հեռու, Կուր գետի մոտ, ճարմանայի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում հայ-վրացական բանակը պարտվեց, զոհվեցին Սահակ Բագրատունին, Վասակ Մամիկոնյանը և այլ նշանավոր նախարարներ: Պարտության պատճառը ոչ միայն թշնամու գերակշռությունն էր, այլև որոշ հայ և վրացի նախարարների դավաճանությունը: Վահան Մամիկոնյանը զորքի մնացորդներով վերադարձավ հայրենիք և շարունակեց պայքարը զավթիչների դեմ, չնայած նախարարների մեծ մասը հակված էր դադարեցնելու պայքարը:

483թ. պարսկական բանակը հանկարծակի ներխուժեց Չայաստան և պաշարեց Դվինը: Վահան Մամիկոնյանը իր փոքրաթիվ ուժերով ճեղքեց թշնամական օղակը և քաշվեց Տայք, որտեղից անընդմեջ հարձակումներ էր գործում թշնամու մեծաթիվ զորքերի դեմ: Նրա հեղինակությունը այնքան մեծ էր, որ պարսիկները խուճապահար փախչում էին, երբ իրենց առջև հայտնվում էր Չայոց սպարապետը, թեկուզև մի քանի անգամ ավելի փոքրաթիվ զորքերով: Պարսիկների դեմ սկսվեց նաև գյուղացիական պարտիզանական պայքար: Պարսից արքունիքի համար հետզհետե պարզ էր դառնում, որ հայերին զենքի ուժով չեն կարող հաղթել, իսկ Չայաստանում իրենց քաղաքականությունը լիովին ձախողվել է:

484թ. հեփթաղների դեմ պատերազմում Պերոզը պարտվեց և սպանվեց: Սասանյան նոր արքա Վաղարշը Չայաստանից դուրս բերեց պարսկական զորքերը և հաշտության առաջարկով Վահան Մամիկոնյանի մոտ ուղարկեց պատվիրակություն՝ Նիխոր զորավարի գլխավորությամբ: Բանակ-

ցությունները տեղի ունեցան սահմանագլխին՝ Յեր գավառի Նվարսակ գյուղում: Պարսկական կողմը առանց բացառության ընդունեց Վահան Մամիկոնյանի բոլոր պահանջները:

484թ. Նվարսակում ստորագրված հայ-պարսկական հաշտության պայմանագրով Սասանյան արքունիքը վերստին հաստատեց և նույնիսկ ընդլայնեց Մարզպանական Հայաստանի քաղաքական ինքնավարությունը, հայ նախարարների ավանդական իրավունքները, պարտավորվեց չմիջամտել նրանց ներքին գործերին, չխրախուսել հայրենադավ և հավատուրաց մարդկանց, թույլ չտալ կամայականություններ, հարգել հայոց դավանանքի ազատությունը: Վահան Մամիկոնյանը ճանաչվեց սպարապետ: Վերջինս իր հերթին օժանդակ գործառնա տրամադրեց պարսից արքա Վաղարշին, որպեսզի նա ամրապնդի իր գահը: 485թ. Վահան Մամիկոնյանը անձամբ մեկնեց Տիգրոն, և Վաղարշը նրան տվեց նաև Հայոց մարզպանի պաշտոնը, որը նա վարեց 20 տարի:

Այսպիսով՝ 481-484թթ. ազատագրական պայքարի շնորհիվ Հայաստանը ավելի ընդլայնեց ինքնավարությունը, իսկ պարսիկները երկար ժամանակով հրաժարվեցին կրոնափոխության հարկադրանքից:

16. ՀԱՅԱՍՏԱՆԸ 6-ՐԴ ՂԱՐՈՒՄ

VIդ. Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Երկու տերություններում էլ փորձում էին սահմանափակել հայ նախարարների ու եկեղեցու իրավունքները, վերացնել Հայաստանի ներքին ինքնավարությունը, դավանափոխ անել հայերին:

Հայաստանի արևմտյան՝ Բյուզանդիայի գերիշխանության տակ գտնվող տարածքները կառավարվում էին տարբեր ձևերով: Փոքր Հայքը, որը ավելի շուտ էր կորցրել անկախությունը և միացվել կայսրությանը, բաժանված էր Առաջին ու Երկրորդ Հայք նահանգների, որոնք կառավարվում էին ինչպես Բյուզանդիայի մյուս սովորական նահանգները:

Հայաստանի հարավարևմտյան շրջանները, որոնք հիմնականում ընդգրկում էին Մեծ Հայքի Ծոփք նահանգի տարածքը, Բյուզանդիային էին միացվել IVդ. երկրորդ կեսին և ունեին լայն ինքնավարություն: Դրանք բաժանված էին հինգ

իշխանությունների՝ Մեծ Ծովք, Շահունյաց Ծովք, Հանձիտ, Հաշտյանք, Բալահովիտ, որոնք կոչվում էին սատրապություններ: Սատրապները հազնվում էին թագավորների նման, հարկ չէին տալիս կայսրին և պարտավոր էին սահմանի իրենց հատվածը պահպանել սեփական ուժերով: Սատրապները սկզբում իշխում էին ժառանգաբար, իսկ Վդ. կարգը փոխվեց և նրանց նշանակում էր կայսրը՝ ցմահ:

Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանները Բյուզանդիային էին միացվել 387թ. բաժանումից հետո: Այդ տարածքը կոչվում էր Ներքին Հայք: Չնայած այստեղ նշանակվում էր բյուզանդական կառավարիչ (հիմնականում ազգությամբ հայ), սակայն հայ նախարարները լիովին պահպանել էին ներքին ինքնուրույնությունը:

Հուստինիանոս I կայսրը (527-565թթ.) որոշել էր վերականգնել Հռոմեական կայսրության նախկին տարածքն ու հզորությունը, ձգտում էր վերացնել ինքնուրույն միավորները և միատեսակ կառավարում մտցնել կայսրության բոլոր շրջաններում: Արևմտյան Հայաստանի ինքնուրույնությունը վերացնելու նպատակով կայսրն իրականացրեց մի շարք ռեֆորմներ: 529թ. օրենքով հայ նախարարներին արգելվեց պահել ռազմական խոշոր ուժեր և թույլատրվում էր ունենալ միայն նետածիզ գնդեր: Դրանով մեծ հարված էր հասցվում հայ նախարարների ռազմական հզորությանը: Միաժամանակ, Բյուզանդիային ենթակա բոլոր հայկական հողերը (Փոքր, Ներքին, Սատրապական Հայքերը) միացվում են մեկ վարչական միավորի մեջ՝ բյուզանդացի մագիստրոսի կամ ստրատեգոսի գլխավորությամբ, որի ձեռքում էր կենտրոնացվում Հայաստանի ռազմական ու վարչական ամբողջ իշխանությունը: Հայ իշխանների նախկին իրավունքները փաստորեն էականորեն կրճատվեցին: Մագիստրոսի նստավայր դարձավ Թեոդոսուպոլիսը (Կարին):

536թ. Հուստինիանոսի մոր հրովարտակով արևմտյան Հայաստանը բաժանվում է չորս նահանգների՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ Հայքերի: Առաջին Հայքի մեջ մտան նախկին Ներքին Հայքը և սևծովյան որոշ քաղաքներ: Երկրորդ Հայքը կազմվեց նախկին Առաջին Հայքից և սևծովյան որոշ շրջաններից: Երրորդ Հայքը զբաղեցնում էր նախկին Երկրորդ

Հայքի տարածքը: Չորրորդ Հայքի մեջ ընդգրկվեց նախկին Սատրապական Հայքը:

Հուստինիանոսը հրովարտակով նախարարների դուստրերին նույնպես իրավունք վերապահեց հավասար սկզբունքներով ժառանգություն ստանալ իրենց հայրերից: Նախկինում նախարարի բոլոր տիրույթները և ամբողջ հարստությունը ժառանգում էր ավագ որդին, որի շնորհիվ նախարարական կալվածքները չէին մասնատվում, իսկ նախարարը պահպանում էր տնտեսական, ռազմական, քաղաքական հզորությունը և ներքին ինքնիշխանությունը: Այժմ տիրույթները բաժանվելու էին նախարարի որդիների ու դուստրերի միջև: Հետզհետե խոշոր նախարարներին փոխարինելու էին մանր ազնվականները, որոնք ի վիճակի չէին լինի հակադարձել Բյուզանդիային և պահպանել Հայաստանի ներքին ինքնուրույնությունը:

Հուստինիանոսի այս վերափոխումները առաջացրին հայ նախարարական տների դժգոհությունը:

539թ. Առաջին Հայքում հզոր ապստամբություն բռնկվեց, որը մեծ դժվարությամբ ճնշվեց: 548թ. հայ իշխանները մահափորձ կազմակերպեցին Հուստինիանոսի դեմ, որը ձախողվեց: Չնայած կազմակերպիչները ձերբակալվեցին, սակայն հաշվի առնելով նախարարների դժգոհությունը, կայսրը ստիպված էր ներում շնորհել դավադիրներին:

Հուստինիանոսի վերափոխումների հետևանքով Հայաստանը կորցրեց նախկին ինքնավար կարգավիճակը, իսկ նախարարությունները հետզհետե թուլացան, և մեծ չափեր ընդունեց հայերի տեղաշարժը դեպի արևմուտք:

Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող Արևելյան (Մարզպանական) Հայաստանը որոշ ժամանակ շարունակում էր օգտվել Մի. ազատագրական պատերազմների արդյունքում ձեռք բերած ինքնավարությունից: Պարսից արքունիքը սիրաշահում էր հայերին, քանի որ հայ նախարարները ամուր հեմարան էին հանդիսանում Բյուզանդիայի ոտնձգությունների դեմ: Նույնիսկ բյուզանդական մասի հայ նախարարները կայսրերից դժգոհ լինելու դեպքում դիմում էին պարսից տերության օժանդակությամբ: Մի. առաջին կեսին տեղի ունեցած պարսկա-բյուզանդական բախումների ժամանակ Մարզպանական Հայաստանի նախարարները դուրս էին

բերում 30.000-ոց հեծելազոր, որը հաջողությամբ հարձակողական գործողություններ էր ծավալում Արևմտյան Հայաստանում՝ ստանալով նաև տեղի հայ բնակչության աջակցությունը: Դա էր այն գլխավոր պատճառներից մեկը, որ գրեթե միշտ հաղթանակը Պարսկաստանի կողմն էր:

Այդ ինքնուրույն կարգավիճակը խաթարվում է Վոդերկորդո կեսին: Խոսրով Անուշիրվան արքայի օրոք (531-578թթ.) Պարսկաստանը մեծ հզորության հասավ, նույնիսկ Բյուզանդիային ստիպեց որոշակի հարկ վճարել: Պարսից արքունիքը կրկին հայացքն ուղղում է Հայաստանի ներքին ինքնավարությունը վերացնելու և զրադաշտականություն տարածելու խնդիրների վրա: Հայաստանի պարսիկ մարզպան Սուրենը (564-571թթ.) սկսում է ոտնահարել հայ նախարարների և հոգևորականների իրավունքները, բարձրացնում է հարկերը, կրոնական հալածանքներ է սկսում, փորձում է զրադաշտական մեհյան կառուցել մայրաքաղաք Դվինում: Այդ ամենը հանգեցրին նոր ապստամբության: Այն ղեկավարեց Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որի եղբորը՝ Մանվելին սպանել էր մարզպան Սուրենը:

Հայերը համաձայնության եկան նաև Բյուզանդիայի հետ: Կայսրը խոստացավ աջակցել ապստամբներին, իսկ անհաջողության դեպքում ապաստան տալ նրանց: Այսպիսով՝ բյուզանդացիները փորձում էին հայերի օգնությամբ պայքարել հակառակորդ պարսիկների դեմ և դուրս գալ այն ստորացված վիճակից, որի մեջ հայտնվել էին վերջին պարսկա-բյուզանդական պատերազմից հետո:

Մարզպանը, տեսնելով հայերի նախապատրաստությունները, մեկնեց Տիգրոն և արքային զեկուցեց այդ մասին: Խոսրով I-ը Սուրենին տրամադրեց 15.000-ոց բանակ և պատվիրեց ամենայն խստությամբ ճնշել հայերի ելույթները: Այդ ընթացքում Վարդան Մամիկոնյանը հավաքել էր 20.000-ոց բանակ: 571թ. փետրվարին հայկական զորքերը հարձակվում են Դվինի վրա, պարտության մատնում պարսկական զորաբանակին և սպանում մարզպանին:

Շուտով, պարսկական նոր բանակ է ներխուժում Հայաստան: Խաղամախյա դաշտում հայկական բանակը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ կրկին ջախջախում է թշնամուն և վտարում երկրից: Այս հաղթանակից հետո հա-

յերին են միանում վրացիները, ադվանները, աբխազները, որոնք հրաժարվում են պարսից գերիշխանությունից և ընդունում են Բյուզանդիային: Հայաստան է մտնում բյուզանդական բանակը: Այսպիսով՝ հայկական ապստամբությունը վերաճում է պարսկա-բյուզանդական պատերազմի, որը փոփոխակի հաջողություններով շարունակվում է երկու տասնամյակ: Այս անգամ հայ նախարարները աջակցում էին Բյուզանդիային:

Պատերազմն ավարտվեց 591թ.՝ Բյուզանդիայի հաղթանակով: Կնքված հաշտության պայմանագրով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Այս անգամ Բյուզանդիային անցան ավելի շատ տարածքներ՝ Տուրուբերանը և Այրարատի մեծ մասը:

Այս պատերազմի ժամանակ հայերի համակրանքը և աջակցությունը Բյուզանդիայի կողմն էր, սակայն պատերազմի ավարտից հետո Մորիկ կայսրը որոշեց թուլացնել հայերի ռազմական ուժը: Կայսրը ոչ միայն իրեն ենթակա հայ նախարարներին ու նրանց ռազմական ուժերն էր ուղարկում կայսրության ծայրամասերը, այլև նույնը խորհուրդ էր տալիս անել պարսից արքային: Փաստորեն, հայկական զինված ուժերը տարբեր ճակատներում պատերազմների ուղարկելով և դրանք նվազեցնելով՝ փորձ էր արվում թուլացնել երկու տերությունների միջև հայտնված Հայաստանի դիմադրողականությունը:

Դա էր պատճառը, որ VIIդ. սկզբներին վերսկսված պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ հայերը կրկին սկսեցին աջակցել պարսիկներին: Երկու տերությունների միջև պայքարը շարունակվեց մինչև արաբների հանդես գալը, սակայն Հայաստանում տարածքային փոփոխություններ այլևս տեղի չունեցան:

17. ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

620-ական թվականներին արաբական ցեղերը միավորվեցին նոր կրոնի՝ իսլամի (մահմեդականության) շուրջ, ստեղծեցին Արաբական խալիֆայությունը, որը կարճ ժամանակամիջոցում դարձավ աշխարհի հզորագույն տերություններից

մեկը: Արաբները փայլուն հաղթանակներ տարան Բյուզանդիայի դեմ և գրավեցին Միջագետքը, Ասորիքը, Եգիպտոսը: Արաբները կործանեցին Սասանյան Պարսկաստանը (652թ.), իսկ պարսիկներին պարտադրեցին հրաժարվել զրադաշտականությունից և ընդունել մահմեդականություն: Կարճ ժամանակում արաբները նվաճեցին Հյուսիսային Աֆրիկան, Իսպանիան, իսկ արևելքում հասան Միջին Ասիա և Հնդկաստան: Նվաճած գրեթե բոլոր երկրներին պարտադրվեց ընդունել մահմեդականություն:

640թ. արաբները Աղձնիքի վրայով առաջին անգամ մտան Հայաստան, հասան Արարատյան դաշտ և գրավեցին Դվինը, ուր կոտորեցին 12.000 մարդ, իսկ 35.000-ին գերեվարեցին: Այդ արշավանքից հետո հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին համախմբեց երկրի ուժերը, ամրացրեց բերդերն ու ամրոցները, իսկ Բյուզանդիայի կայսրը օժանդակ զորք ուղարկեց Հայաստան: 642թ. արաբները Ատրպատականի վրայով երկրորդ անգամ արշավեցին Հայաստան: Նրանք մտան Կոզովիտ, ուր Թեոդորոս Ռշտունին նրանց լուրջ հարված հասցրեց: Հայերը դիմադրություն ցույց տվեցին նաև այլ վայրերում: Այս շրջանում Հայաստանը կրկին միավորվել էր, իսկ Թեոդորոս Ռշտունին բյուզանդական կայսրի կողմից նշանակվել էր Հայոց իշխան՝ երկրի կառավարիչ: Արաբները Հայաստան արշավեցին նաև 650թ.: Այս անգամ ևս հայերը դիմադրեցին: Թեոդորոս Ռշտունին Արծափ ամրոցի մոտ ջախջախեց 3.000-ոց արաբական զորամասը: Այդ հաղթանակը զգալի բարձրացրեց Ռշտունու հեղինակությունը և բանակի մարտական ոգին: Այդ արշավանքների ժամանակ Հայաստանում գտնվող բյուզանդական զորքերը արաբներին դիմադրություն ցույց տալու փորձեր գրեթե չարեցին և մնում էին դիտորդի դերում:

Արաբական կրկնվող արշավանքները և նոր քաղաքական իրադրությունը Թեոդորոս Ռշտունուն ստիպեցին մտածել նոր ռազմավարություն որդեգրելու մասին: Արաբներն օրեցօր հզորանում էին, իսկ Բյուզանդիան իրական օգնություն ցույց չէր տալիս, միաժամանակ փորձում էր հայերին քաղկեդոնականություն պարտադրել: Նման պայմաններում 652թ. Ռշտունին Ասորիքի արաբական կառավարիչ Մուավիայի հետ Դամասկոսում կնքեց հայ-արաբական պայմա-

նագիր: Ըստ դրա Հայաստանը ճանաչում էր խալիֆայության գերիշխանությունը, պահպանում էր ներքին ինքնուրույնությունը, հայերը երեք տարով ազատվում էին հարկերից, որից հետո պետք է վճարեին այնքան, որքան կամենային, Հայաստանը ունենալու էր 15.000-ոց հեծելազոր, որի ծախսերը հոգալու էր խալիֆայությունը, օտար տերությունների հարձակումների դեպքում խալիֆայությունը օգնելու էր հայերին:

Փաստորեն, ձևականորեն ընդունելով խալիֆայության գերիշխանությունը, Հայաստանը պահպանեց ներքին ինքնուրույնությունը և առժամանակ խուսափեց արաբական ասպատակություններից:

Տեղեկանալով այդ մասին, բյուզանդական կայսրը 652թ. 100.000-ոց զորքով արշավեց Հայաստան, մեծ ավերածություններ կատարեց: Սակայն կայսրի հեռանալուց հետո Թեոդորոս Ռշտունին, որն ապաստանել էր Աղթամար կղզում, 7.000-ոց օժանդակ ուժեր ստացավ արաբներից և բյուզանդացիներին դուրս վռնդեց երկրից: Դրանից հետո Ռշտունին Մուսավիայի կողմից նշանակվեց նաև Վիրքի և Աղվանքի կառավարիչ: Չնայած բյուզանդական և արաբական զորքերը հետագայում ևս մի քանի արշավանքներ կազմակերպեցին դեպի Հայաստան, սակայն երկրի առաջընթացին ու ներքին ինքնավարությանը լուրջ հարված հասցնել չկարողացան: Հայաստանի կիսանկախ վիճակը պահպանվեց մինչև VII դ. վերջը: Դա նպաստեց երկրի տնտեսական ու մշակութային վերելքին:

Արաբները Հայաստանը և Անդրկովկասը վերջնականապես նվաճեցին միայն 700թ.: Այս երկրամասերից ստեղծեցին վարչական մեկ միավոր՝ Արմինիա (Հայաստան) անունով, որի վարչական կենտրոնը մինչև 789թ. Դվինն էր, այնուհետև՝ Պարտավը: Երկիրը ղեկավարում էր խալիֆի նշանակած էմիրը, որին հայկական աղբյուրները կոչում են ոստիկան: Պահպանվեցին Հայոց իշխանի և սպարապետի պաշտոնները, որոնց ևս նշանակում էր խալիֆը:

Արաբական իշխանությունները Հայաստանում ամրապնդվելու և ամուր հենարան ունենալու համար իրականացնում էին արաբական և մահմեդական ցեղերի զանգվածային վերաբնակեցում, որի հետևանքով բազմաթիվ կարևոր հանգույցներում ստեղծվեցին փոքր էմիրություններ կամ ամիրա-

յություններ: Սրանք գտնվում էին արտոնյալ պայմաններում և հենարան էին հանդիսանում արաբական տիրապետության համար: Արաբները իրականացնում էին նաև հայ զինական ուժի և նախարարների բնաջնջման քաղաքականություն: 705թ. Նախիջևանի արաբ զորահրամանատարը խաբեությամբ իր մոտ կանչեց 1200 հայ նախարարների և փակելով Նախիջևանի և Խրամ ավանի եկեղեցիներում այրեց: Սակայն հայ նախարարներին վերջնականապես ոչնչացնելու կամ թուլացնելու քաղաքականությունը ի վերջո ձախողվեց:

Արաբները ստիպված էին ճանաչել հայ նախարարների ժառանգական հողատիրության իրավունքը, որը խոշոր զիջում էր, քանի որ արաբների գրաված երկրներում ոչ մահմեդականները զրկված էին այդ իրավունքից: Դա արվեց, քանի որ 652թ. հայ-արաբական պայմանագրով Հայաստանը սեփական կամքով էր ընդունել արաբների գերիշխանությունը: Արաբական օրենքներով, եթե երկիրը զենքի ուժով չէր գրավվել, այլ առանց պատերազմի էր ընդունել իրենց իշխանությունը, ապա կարող էր պահպանել սեփական կրոնը, իսկ տեղական իշխանները՝ իրենց կալվածքները: Իհարկե, արաբները բազմիցս փորձեցին խախտել հայ իշխանների իրավունքները, սակայն նրանք ամեն անգամ զենքի ուժով պահպանում էին իրենց իրավունքներն ու հայրենի հավատը:

Արաբների հարկային քաղաքականությունը հատկապես խստացավ 725թ. Հերթ ոստիկանի անցկացրած աշխարհագրից հետո: Գլխավոր հարկատեսակներն էին գլխահարկը (ջիզիե) և հողահարկը (խարաջ), կային նաև բազմաթիվ այլ հարկեր: Երկրում ստեղծված սոցիալական ու քաղաքական անապահով ու անկայուն վիճակը հանգեցրեց նաև արտագաղթի: Արաբական տիրապետության հաստատումը տնտեսական և քաղաքական բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի համար:

18. ՀԱՎԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արաբների Հայաստանում կատարած անօրինությունները, կրոնական ու ազգային հալածանքները, ծանր հարկերը հանգեցրին մի շարք ապստամբությունների:

702թ. սպարապետ Սմբատ Բագրատունին որոշեց 2.000 հեծյալներով հեռանալ Բյուզանդիա: 703թ. փետրվարին, երբ նրանք Ակոռի գյուղի մոտ էին, արաբների 5.000-ոց պատժիչ զորամասը փակեց ճանապարհը: Սմբատ Բագրատունին ամրացավ Արաքսի մոտ գտնվող Վարդանակերտ գյուղում: Վաղ առավոտյան հայերը հարձակվեցին ձմռան խստաշունչ գիշերը բաց դաշտում մնացած արաբների վրա: Թշնամին մեծ կորուստներ տալով, փորձեց անցնել սառած Արաքսը, որի սառույցը կոտրվեց և շատերը խեղդվեցին գետում: Արաբները ծանր պարտություններ կրեցին նաև Ռշտունիքում և Վանանդում: Շուտով Սմբատ Բագրատունին Բյուզանդիայի կայսրից կյուրոպաղատի կոչում ստացավ և հաստատվեց Տայքում:

Հայաստանում մնացած նախարարները, հասկանալով, որ չեն կարող պայքարել մեծաքանակ արաբական ուժերի դեմ, փորձեցին համաձայնության գալ: Այդպիսով, առաջին ապստամբությունը արագորեն ճնշվեց, բայց արաբներին ստիպեց հաշվի նստել հայ նախարարների հետ և ճանաչել նրանց ժառանգական հողատիրության իրավունքը:

Հաջորդ հակաարաբական ապստամբությունը բռնկվեց 748թ., երբ խալիֆայությունում գահակալական կռիվներ էին ընթանում: Այն ղեկավարեց արքայից վերադարձած Գրիգոր Մամիկոնյանը, որին միացավ նաև Հայոց իշխան Աշոտ Բագրատունին: Նրանք շարժվեցին Տայք՝ բյուզանդական զորքերին միանալու համար: Սակայն այստեղ Աշոտ Բագրատունին հրաժարվեց շարունակել պայքարը և վերադարձավ Բագրևանդ: Գրիգոր Մամիկոնյանը հետապնդեց նրան, ձերբակալեց և կուրացրեց: Գրիգոր Մամիկոնյանը այնուհետև ամրացավ Կարին քաղաքում: Գրիգորի մահից հետո շարժումը գլխավորեց եղբայրը՝ Մուշեղ Մամիկոնյանը: 750թ. արաբները դաժանորեն ճնշեցին այս ապստամբությունը:

762թ. արաբների դեմ ազատագրական կռիվներ ծավալվեցին նաև Վասպուրականում՝ Սահակ, Համազասպ և Գագիկ Արծրունիների գլխավորությամբ: Արաբները կարողացան ճնշել նաև Արծրունի եղբայրների պայքարը:

774թ. բռնկվեց արաբների դեմ ամենախոշոր ապստամբությունը: Արտավազդ Մամիկոնյանը, ձևանալով արաբներին հավատարիմ, եկավ Դվին, գինեց իր ջոկատը և Շիրակի

Կումայրի գյուղի մոտ հարձակվեց արաբ հարկահավաքների վրա, խլեց հարկերը և հեռացավ Բյուզանդիա: Այս դեպքից հետո ողջ երկրում տարածվեց ապստամբություն, որի գլուխ կանգնեց Մուշեղ Մամիկոնյանը: Նա ամրացավ Արտագերս ամրոցում և լուրջ հարվածներ հասցրեց արաբներին: Նրան միացավ նաև սպարապետ Սմբատ Բագրատունին, իսկ հայկական զորքի թիվը հասավ 5.000-ի: Հայկական բանակը 774-775թթ. ձմռանը պաշարեց Կարինը, սակայն գրավել չկարողացավ:

775թ. խալիֆը 30.000-ոց բանակ ուղարկեց հայերի դեմ: 775թ. ապրիլի 12-ին հայկական 5.000-ոց բանակը հարձակվեց Արճեշ քաղաքի վրա, սակայն թիկունքից նրան հարվածեց դարանակալած արաբական մեծաքանակ բանակը: Հայերը ծանր պարտություն կրեցին: Դրանից հետո արաբները շարժվեցին Կարինը պաշարած հայկական ուժերի դեմ: Լսելով Արճեշի աղետի մասին, հայ նախարարները կանգնեցին երկընտրանքի առաջ. կամ պետք է հեռանային Բյուզանդիա, կամ ընդառաջ գնային մոտ 6 անգամ մեծաքանակ հակառակորդին՝ հաղթանակի հույս գրեթե չունենալով: Հայ նախարարները խորհրդակցելով որոշեցին, որ ավելի լավ է զոհվել հայրենիքի համար կռվելով, քան ապրել օտարության մեջ: ճակատամարտը տեղի ունեցավ ապրիլի 25-ին, Արածանիի հովտում՝ Բագրևանդի Արծնի գյուղի մոտ: Չնայած հայերի խիզախությանն ու տոկունությանը, անհամեմատ մեծաքանակ թշնամին հաղթեց: 5.000 հայ մարտիկներից 3000-ը զոհվեց մարտադաշտում: Ջոհվեցին Մուշեղ և Սամվել Մամիկոնյանները, Սմբատ Բագրատունին և բազմաթիվ այլ նախարարներ: Այս ապստամբությունից հետո Մամիկոնյանները դուրս եկան Հայաստանի քաղաքական թատերաբեմից:

9-րդ դարի սկզբներին հայ նախարարական տները կրկին հզորացան, իրենց դիրքերն ամրապնդեցին և լուրջ դերակատարություն ստանձնեցին երկրի քաղաքական և տնտեսական կյանքում, իսկ արաբ ոստիկանի ազդեցությունը թուլացավ:

849թ. խալիֆը Հայաստան ուղարկեց Աբուսեթ ոստիկանին՝ հարկերը հավաքելու և հայ իշխանների իրավունքները սահմանափակելու համար: Հայոց իշխան Բագարատ Բագրատունու և Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունու

պատվիրակները Աբուսեֆին դիմավորեցին սահմանի մոտ և առաջարկեցին վերցնել հարկերն ու հեռանալ: Աբուսեֆը խոհեմաբար վերադարձավ Բաղդադ, բայց միաժամանակ իր զորքը բաժանեց երկու մասի և հանձնարարեց ասպատակել Տարոնն ու Վասպուրականը: Սակայն հայկական ուժերը ջախջախեցին արաբներին:

Խալիֆը ապստամբությունը ճնշելու համար մեծ բանակ տրամադրեց Աբուսեֆին, բայց նա ճանապարհին մահացավ և նրան փոխարինեց որդին՝ Յուսուֆը: Նա խաբեությամբ գերեց Բագարատին, ասպատակեց Տարոնն ու Վասպուրականը: Այս ամենը բերեց համաժողովրդական ընդվզումների: Սասունցիներն ու խուբեցիները Հովնան իշխանի, Բագարատ Բագրատունու որդիներ Աշոտի ու Դավիթի գլխավորությամբ հարձակվեցին Մուշում ձմեռող Յուսուֆի վրա, կոտորեցին արաբական զորքը, սպանեցին եկեղեցում թաքնված Յուսուֆին:

Հայերին պատժելու համար խալիֆը 851թ. հսկայական բանակ ուղարկեց թուրք զորավար Բուղայի գլխավորությամբ, որը սկսեց դաժանորեն ավերել երկիրը: Խալիֆը խոստացել էր արաբ զորավարներին հանձնել սպանված կամ ձերբակալված հայ իշխանների տիրույթները: Դրանից ոգևորված արաբները ձերբակալում էին նաև ապստամբությանը չմիացած հայ իշխաններին:

Հայերը համառ դիմադրություն ցույց տվեցին հատկապես Վասպուրականում: 852թ. Գուրգեն Արծրունին Արյան լճի ճակատամարտում 900 ռազմիկներով հաղթեց 10.000-ոց արաբական բանակին: Բուղան ասպատակեց գրեթե ողջ Հայաստանն ու Վրաստանը: Արցախում Բուղան 28 անգամ գրոհեց Քթիշ ամրոցը, բայց եսայի իշխանը հաջողությամբ ետ մղեց թշնամուն: Համառ պայքարով Արծրունիները իրենց ազդեցությունը վերականգնեցին Վասպուրականի զգալի մասում: Համոզվելով, որ հայերին զենքի ուժով անհնար է ծնկի բերել, խալիֆը 855թ. Բուղային ետ կանչեց:

Այսպիսով, 850-855թթ. ապստամբությունը զգալի հարված հասցրեց խալիֆայությանը և Հայոց պետականությունը վերականգնելու նախադրյալներ ստեղծեց:

19. ԲԱԳՐԱՏՈՒՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: ԱՇՈՏ I

Հայոց պետականության վերականգնման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին IX դ. II կեսին: Արաբական խալիֆայությունը սկսել էր թուլանալ ու մասնատվել, իսկ Բյուզանդիան աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին, որպեսզի թուլացնի իր գլխավոր հակառակորդին: Միաժամանակ, Հայաստանում տնտեսական ու ռազմական մեծ հզորության հասան Բագրատունի, Արծրունի, Սյունի և Արցախի իշխանական տները, որոնք IX դ. կեսերից ավելի ընդարձակեցին իրենց տարածքները: Ժողովրդի բոլոր խավերի մոտ աճեց ու ամրապնդվեց օտար լուծը վերջնականապես թոթափելու ձգտումը: Աշխատավորները ցանկանում էին ազատվել օտարների կեղեքումներից, ազնվականությունն ու հոգևորականությունը ևս շահագրգռված էր ազատվել արաբների կամայականություններից ու բռնություններից: Նման պայմաններում արաբները ստիպված էին գնալ զիջումների, հատկապես 850-855թթ. ապստամբությունից հետո, երբ պարզ դարձավ, որ բռնի միջոցներով անհնար է հայերին ծնկի բերել:

855թ. խալիֆը հետ կանչեց Բուղային, Հայաստանից դուրս բերեց արաբական զորքերը, սահմանափակեց Դվինի ոստիկանի իրավունքները, իսկ Աշոտ Բագրատունուն նշանակեց Հայոց սպարապետ: Հայաստանից գանձվող հարկերը կրճատվեցին երեք անգամ: 862թ. խալիֆը Աշոտին շնորհեց Հայոց իշխանի տիտղոսը և հարկահանության իրավունքը:

Այսպիսով, Աշոտ Բագրատունին իրավական և տնտեսական լայն լիազորություններ ստացավ, որով կարողացավ իր ազդեցությանը ենթարկել Հայաստանի, Աղվանքի, Վրաստանի գրեթե բոլոր իշխաններին: Նա, օգտվելով արաբ ամիրաների միջև եղած հակասություններից, նրանց թույլ չտվեց միջամտել Հայաստանի ներքին գործերին:

Աշոտ Բագրատունին հմտորեն օգտագործեց արաբաբյուզանդական հակամարտությունը՝ Հայաստանի ինքնուրույնությունն ամրապնդելու և երկիրը ներխուժումներից զերծ պահելու համար: Նրա ջանքերով ստեղծվեց 40.000-ոց բանակ, որն ի վիճակի էր պաշտպանելու երկրի սահմանները:

Սպարապետ դարձավ Աշոտի եղբայր Աբասը: Հայաստանի ռազմական ուժն ավելի մեծացավ, երբ հայրենիք սկսեցին վերադառնալ Բուղայի գերեվարած հայ իշխանները:

Աշոտ Բագրատունին բարիդրացիական հարաբերություններ հաստատեց Բյուզանդիայի հայազգի կայսր Վասիլ I-ի (867-886թթ.) հետ: Վերջինս Աշոտին խնդրեց թագադրել իրեն, քանի որ ինքը ծագում էր Արշակունիներից, իսկ Բագրատունիները նրանց թագադիրներն էին: Այդ փաստը վկայում է Աշոտի միջազգային հեղինակության մասին:

Փաստորեն երկրի կառավարումն ամբողջությամբ անցավ Բագրատունիներին, իսկ Հայաստանը վերականգնեց ներքին ինքնավարությունը: Արտաքին ու ներքին նպաստավոր պայմանները խթանեցին երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելքին: Աշոտը խոհեմ և հեռատես գործիչ էր և հմտորեն ղեկավարում էր երկրի անկախացման գործընթացը: Արաբական իշխանությունը Հայաստանում ձևական բնույթ էր ստացել:

Հայաստանում հետզհետե հասունացավ ավելի քան չորս դար առաջ կործանված Հայոց թագավորության վերականգնման հարցը: Դեռևս 869թ. Չաքարիա Չագեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ հայ նշանավոր իշխանների ժողով հրավիրվեց, ուր միահամուռ որոշվեց Աշոտ Բագրատունուն հռչակել Հայոց թագավոր: Այդ նպատակով նրանք դիմեցին խալիֆի հաստատմանը, սակայն արաբները ձգձգում էին թագավորության ճանաչման հարցը:

873թ. Հայաստանի նոր ոստիկան Ահմադը (Մուհամեդ իբն Խալիդ) և Պարտավի Յամանիկ (Մուհամմադ ալ-Յամանի) ամիրան որոշեցին հայ իշխանների դեմ դավադրություն կազմակերպել և ձախողել Հայաստանի անկախացումը: Բայց Աշոտ Բագրատունին, որը ուշադիր հետևում էր արաբ ամիրաների գործողություններին, կանխեց նրանց, իսկ Ահմադին վտարեց երկրից:

877թ. Գևորգ Գառնեցի կաթողիկոսի և նշանավոր հայ իշխանների նախաձեռնությամբ նորից գումարվեց ժողով, ուր որոշվեց կրկին դիմել խալիֆին՝ Աշոտ Բագրատունուն Հայոց թագավոր ճանաչելու համար: Երկարատև ձգձգումներից հետո խալիֆայությունը ստիպված էր տեղի տալ և

բավարարվել նրանով, որ Աշոտը կճանաչեր խալիֆի գերիշխանությունը ու հարկ կվճարեր:

885թ. Հայաստանի ոստիկան Հիսեի միջնորդությամբ խալիֆ Ահմեդ Աբուլ-Աբասը Աշոտ Բագրատունուն ճանաչեց Հայոց թագավոր և ուղարկեց արքայական թագ և հանդերձանք: Աշոտին թագ ուղարկեց նաև կայսր Վասիլ I-ը:

885թ. օգոստոսի 26-ին Բագարան քաղաքում կաթողիկոս Գևորգ Գառնեցին Աշոտ I Բագրատունուն (885-890թթ.) օծեց Հայոց թագավոր, որով վերականգնվեց 428թ. կործանված հայոց թագավորությունը: Դա պատմական շրջադարձային նշանակություն ունեցավ Հայաստանի հետագա զարգացման համար:

Աշոտ I-ը հմուտ պետական և ռազմական գործիչ էր, մեծ ուշադրություն էր դարձնում հայկական տարածքների միավորմանը: Նա ճնշեց Վանանդի իշխանների ապստամբությունը և իր պետությանը միացրեց այդ երկրամասը՝ Կարս բերդաքաղաքով, որը դարձավ հայոց սպարապետների նստավայրը:

Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի իշխանական տները տնտեսական ու ռազմական հզորությամբ գրեթե չէին զիջում Բագրատունիներին: Աշոտ I-ը կարողացավ ամուսնական կապերի միջոցով այդ հզոր տոհմերին ենթարկել իրեն: Աշոտին ենթարկվեցին նաև Հայաստանի հարավի արաբական ամիրայությունները: Նա սանձահարեց Գուգարքի և Ուտիքի կենտրոնախույս ուժերին: Հաջող արշավանքներով Աշոտը սաստեց նաև Կովկասի լեռնականներին, որոնք անընդհատ ասպատակում էին Վրաստանի ու Աղվանքի տարածքները: Աշոտը վերականգնեց Արշակունիների ժամանակ գոյություն ունեցած արքունի գործակալությունների համակարգը: Երկրի խոշոր իշխաններին հանձնեց բարձր պաշտոնները, իսկ մանր ազնվականներից շատերին կալվածքներ նվիրեց:

890թ. Աշոտ I Բագրատունին մեկնեց Կ. Պոլիս, դաշինք կնքեց Բյուզանդիայի հետ, սակայն վերադարձի ճանապարհին հիվանդացավ և մայրաքաղաք չհասած մահացավ:

Այս խոշոր պետական գործչի ջանքերով վերականգնվեց հայոց թագավորությունը, որը գոյատևեց մեկուկես դար՝ մինչև 1045թ.:

20. ՊԱՅՔԱՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ: ՍՄԲԱՏ I, ԱՇՈՏ II

Աշոտ I-ին փոխարինեց ավագ որդին՝ Սմբատ I-ինը (890-914թթ.): Նա արտաքին և ներքին քաղաքականության մեջ շարունակեց հոր ուղեգիծը և ընդարձակեց թագավորության սահմանները: 892թ. հայկական զորքերը գրավեցին Դվինը: Սմբատ I-ը արաբ ամիրաներին դուրս քշեց Թիֆլիսից: Նա 899թ. թագ շնորհեց վրաց իշխան Ատրներսեհին, որով վերականգնվեց վրացական թագավորությունը, ուր նույնպես իշխում էր Բագրատունիների արքայատոհմը:

Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին Բյուզանդիայի հետ: 893թ. Սմբատ I-ը առևտրական պայմանագիր կնքեց Բյուզանդիայի հետ, որի շնորհիվ Հայաստանը ազատ առևտրական գոտի էր դառնում իրար հետ պատերազմող Բյուզանդիայի ու խալիֆայության միջև: Դրա շնորհիվ Հայաստանը տնտեսական մեծ օգուտներ էր ստանում:

Հայաստանի հզորացումն ու քաղաքական դերի մեծացումը անհանգստացնում էր հարևան արաբական ամիրայություններին: Այդ պատճառով նրանք փորձեցին կասեցնել Հայաստանի հետագա հզորացումը: Այս շրջանում Հայաստանի գլխավոր հակառակորդն էր Ատրպատականում առաջացած Սաջյան էմիրությունը: Հայ-բյուզանդական առևտրական պայմանագիրը դիտելով որպես արաբների դեմ ուղղված քայլ՝ 893թ. Ատրպատականի էմիր Ավշինը արշավեց Հայաստան: Սմբատ I-ը 30.000-ոց բանակով շարժվեց ընդառաջ և թշնամուն դիմավորեց սահմանի մոտ: Ավշինը, հանդիպելով հայկական բանակին, չհամարձակվեց ճակատամարտ տալ, այլ՝ առաջարկեց հաշտություն և հեռացավ: 894թ. Ավշինը հանկարծակի ներխուժեց Հայաստան և գրավեց Դվինը, որն ավերվել էր 893թ. երկրաշարժից: Արագածոտն գավառի Դոդս գյուղի մոտ հայկական բանակը պարտության մատնեց թշնամուն և վտարեց Հայաստանից: 896թ. Ավշինը երրորդ անգամ արշավեց Հայաստան, գրավեց Կարսը և գերեց թագավորի ընտանիքին: Սմբատը բանակցություններ սկսեց Ավշինի հետ և փոխադարձ զիջումներով հաշտություն կնքվեց: Ավշինի արշավանքները թեև խռովում էին երկրի անդորրը և նյութական

վնասներ էին հասցնում, սակայն չկարողացան կասեցնել Հայաստանի տնտեսական ու քաղաքական վերելքը:

Երկրի միասնության ու հզորացման համար առավել մեծ վտանգ էին ներկայացնում ներքին տարածայնությունները: Սմբատ I-ը ճնշեց Մանազկերտի կայսիկների ամիրայության, Սյունյաց Սմբատ իշխանի ընդվզումները, Հավնունի իշխանների կազմակերպած դավադրությունը: Չնայած ֆեոդալական ընդվզումները ճնշվեցին, սակայն ավատատիրական հարաբերությունների խորացումը տանում էր երկրի քաղաքական մասնատմանը, որից օգտվում էին արտաքին թշնամիները:

899թ. Ավշինի մահից հետո Ատրպատականի էմիր դարձավ նրա եղբայր Յուսուֆը, որը հարմար առիթի էր սպասում հայոց պետականության դեմ ոտնձգություններ իրականացնելու համար: Շուտով Նախիջևան քաղաքի համար վեճ ծագեց Արծրունիների և Սյունիների միջև: Սմբատ I-ը քաղաքը հանձնեց Սյունիներին, որից դժգոհելով, արքայի քրոջ որդին՝ Գագիկ Արծրունին, դիմեց Յուսուֆի օգնությանը: Վերջինիս առիթ էր պետք Բագրատունիների թագավորությունը թուլացնելու համար: Նրա միջնորդությամբ խալիֆը թագուղարկեց Գագիկ Արծրունուն, որով 908թ. Վասպուրականը հռչակվեց առանձին թագավորություն: Դրանով հայոց պետությունը տվեց առաջին ճեղքերը: Խալիֆը Հայաստանից հարկեր հավաքելու իրավունքը տվեց Յուսուֆին, որը հնարավորություն ստացավ բացահայտորեն միջամտելու Հայաստանի ներքին գործերին:

909թ. գարնանը Յուսուֆը Արծրունիների հետ արշավեց Հայաստան: Նրանք գրավեցին Սյունիքն ու Նախիջևանը: 910թ. գարնանը Յուսուֆի զորքերը ներխուժեցին Արարատյան դաշտ և գրավեցին Դվինը: Հայ իշխանների մի մասը, թշնամու հաջողություններից ահաբեկված, անձնատուր եղան Յուսուֆին: Վճռորոշ ճակատամարտը տեղի ունեցավ Նիգ գավառի Ջկնավաճառ կոչվող վայրում: Սակայն Սմբատ I-ի բանակը ծանր պարտություն կրեց: Դրանից հետո հայկական բանակն այլևս կազմակերպված դիմադրություն ցույց չտվեց: Արաբները ասպատակեցին ու կողոպտեցին երկիրը: Սմբատ I-ը փակվեց Արշարունիք գավառի Կապույտ բերդում: Թշնամին փորձեց գրավել այն, բայց հաջողություն չունեցավ: Երկրի

ավերումն ու կողոպուտը դադարեցնելու նպատակով, Սմբատը որոշեց անձամբ գնալ Յուսուֆի մոտ և հաշտություն կնքել: Բայց Յուսուֆը ձերբակալեց Հայոց արքային և 914թ. մահապատժի ենթարկեց: Սմբատի դին խաչեցին Դվինի դարպասներից մեկի վրա, որպեսզի սարսափ ներշնչեն հայ բնակչությանը:

Հայաստանի գլխին կախվեց թագավորությունը կորցնելու իրական վտանգ: Այդ պայմաններում հայ ժողովուրդը ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքն ու պետականությունը: Հայոց ազատագրական պայքարը ղեկավարեց Սմբատ I-ի որդին՝ Աշոտ II Երկաթը (914-928թթ.): Նա ազատագրեց Տայքը, Գուգարքը, Շիրակը, արաբներին դուրս քշեց Թիֆլիսից և Աղստևի հովտից: Հայ իշխաններն ու բնակչությունը սկսեցին համախմբվել Աշոտ II-ի շուրջը: Դրան նպաստեց նաև Յուսուֆի անողորձ վերաբերմունքը իր կողմն անցած հայ իշխանների նկատմամբ, որոնց մեծ մասը հեռացավ արաբներից և զենքն ուղղեցին նրանց դեմ: Գագիկ Արծրունին ևս հեռացավ Յուսուֆից: Երկիրը ավելի պառակտելու և թուլացնելու համար Յուսուֆը Հայոց թագավոր հռչակեց Աշոտ Երկաթի հորեղբորորդուն՝ սպարապետ Աշոտին: Սակայն Աշոտ II-ը վճռական միջոցներով սաստեց նրան: Աշոտ II-ը 920-921թթ. մեկնեց Կ. Պոլիս, ուր Կոստանդին VII Ծիրանածին կայսրը հանդիսավոր կերպով նրան ճանաչեց հայոց թագավոր և բյուզանդական օժանդակ ուժերով ճանապարհեց Հայաստան: 921թ. Սևանի ճակատամարտում Աշոտ II-ը հնարամտորեն ջախջախեց Յուսուֆի կողմից Հայաստանի կառավարիչ նշանակված Բեշիրին, որի նահանջող բանակին ճանապարհին նոր հարված հասցրեց Գևորգ Մարզպետունի իշխանը: Դրանից հետո հայկական բանակը երկիրն ամբողջությամբ ազատեց թշնամուց:

Արաբները համոզվեցին, որ զենքի ուժով Հայաստանը չեն կարող ենթարկել և գնացին զիջումների: 922թ. խալիֆը Աշոտ II-ին ուղարկեց թագ և նրան ճանաչեց Հայոց շահնշահ, որով նա գերագահություն էր ստանում Հայաստանի մյուս թագավորների նկատմամբ: Աշոտը վերջնականապես հնազանդեցրեց անհնազանդ իշխաններին և ամրապնդեց Հայոց պետությունը: Ստեղծվեց համեմատաբար խաղաղ ու ապա-

հով ժամանակաշրջան, որը նպաստեց երկրի տնտեսական ու մշակութային կյանքի վերելքին:

21. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Աշոտ Երկաթին հաջորդեց եղբայրը՝ Աբասը (928-953թթ.): Այս շրջանում երկիրն արդեն թևակոխել էր խաղաղության ու բարգավաճման շրջան: Նա արքունիքը Երազգավորսից (Շիրակավան) տեղափոխեց Կարս: Նոր մայրաքաղաքը կառուցապատվեց, աճեց և դարձավ Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը: Կենտրոնաձիգ իշխանության կողմնակից էր նաև Հայոց եկեղեցին: Այդ փաստը հաշվի առնելով, Աբասը կաթողիկոսի նստավայրը տեղափոխեց Բագրատունիների քաղաքական ու տնտեսական կենտրոն: 948թ. Անանիա Մոկացի կաթողիկոսը Աղթամարից տեղափոխվեց Կարս: Աբասի ջանքերով վերջ տրվեց կովկասյան լեռնականների հարձակումներին Վրաստանի ու Աղվանքի վրա, որոնք գտնվում էին Բագրատունիների քաղաքական ազդեցության ոլորտում:

Աբասին հաջորդեց որդին՝ Աշոտ III Ողորմածը (953-977թթ.): Նա երկրի ամրապնդման ու կենտրոնացման համար ավելի վճռական քայլերի դիմեց: Հայոց բանակը վերջ տվեց կովկասյան լեռնականների ասպատակություններին: Մեծ ծավալներ ընդունեցին շինարարական աշխատանքները: Կառուցվեցին վանքեր, հիվանդանոցներ, դպրոցներ: Խոսրովանույշ թագուհին Ձորագետի հովտում կառուցել տվեց Սանահինի (957թ.) ու Հաղպատի (967թ.) վանքերը, որոնք դարձան միջնադարյան Հայաստանի մշակութային խոշոր կենտրոններ: Աշոտ III-ը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում աղքատներին ու անդամալույծներին, նրանց համար բացում էր հիվանդանոցներ ու բարեգործական հաստատություններ, որի համար ստացավ Ողորմած մականունը:

Աշոտ III-ը 961թ. մայրաքաղաքը տեղափոխեց Անի: Այն ուներ անառիկ դիրք, առևտրական բանուկ ճանապարհների վրա էր և կարճ ժամանակում դարձավ ժամանակի ամենագեղեցիկ ու ամենամեծ քաղաքներից մեկը: 963-964թթ. կառուցվեց քաղաքն ամբողջությամբ ընդգրկող պարիսպների առաջին շարքը: Բագրատունիները միջոցներ չէին խնայում

համահայկական մայրաքաղաքը շքեղացնելու համար: Այնտեղ կառուցված պալատները, հյուրանոցները, եկեղեցիները հանդիսացան հայկական ճարտարապետության գլուխգործոցները: Անին դարձավ միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքը:

Երկրի հզորացման հետ միաժամանակ տեղի էր ունենում ավատատիրությանը բնորոշ մասնատվածության գործընթաց, և առաջանում էին նոր թագավորություններ: Դրանցից առաջինը, ինչպես գիտենք, առաջացավ 908թ. Վասպուրականում: Մայրաքաղաքը տեղափոխելուց հետո Կարսի կառավարիչ նշանակվեց արքայի եղբայրը՝ սպարապետ Մուշեղը: 962թ. նա հռչակվեց Վանանդի թագավոր: Աշոտ III-ը ճանաչեց Վանանդի (Կարսի) թագավորությունը՝ պայմանով, որ Մուշեղն ընդունի Հայոց շահնշահի գերիշխանությունը: 973թ. Սյունիքում թագավոր հռչակվեց տեղի Սմբատ իշխանը, որը նույնպես ճանաչեց Աշոտ III-ի գերագահությունը:

974թ. Բյուզանդիայի Հովհաննես Չմշկիկ կայսրը արշավանք կազմակերպեց դեպի արևելք և մտավ Հայաստան: Աշոտ III-ը 80.000-ոց բանակով շարժվեց նրան ընդառաջ: Կայսրը խոհեմաբար հաշտություն առաջարկեց, օժանդակ զորամաս խնդրեց Հայոց թագավորից ու հեռացավ:

Աշոտ III-ին հաջորդեց որդին՝ Սմբատ II-ը (977-990թթ.): Ավելի մեծ թափով շարունակվեց երկրի բարգավաճումն ու շինարարական աշխատանքները: Կառուցվեցին եկեղեցիներ, պալատներ, դպրոցներ, բերդեր, կամուրջներ:

Սակայն սկսեցին հաճախակի դառնալ նաև միջֆեոդալական ընդհարումներն ու արտաքին հարձակումները:

978թ. Տաշիր-Չորագետում (Լոռի) Սմբատ II-ի գերագահությունը ճանաչելու պայմանով թագավոր հռչակվեց եղբայրը՝ Գուրգենը, որը մինչ այդ տեղի կառավարիչն էր:

987թ. Դվինի ամիրան հանկարծակի հարձակվեց Շիրակի վրա և սկզբում որոշ հաջողություններ ունեցավ: Սակայն Սմբատ II-ը ջախջախեց թշնամուն, իսկ Դվինը միացրեց իր թագավորությանը: 987-988թթ. Ատրպատականի Ապլիաճ էմիրը ասպատակեց Վասպուրականը, Նախիջևանը, Արարատյան դաշտը: Սմբատ II-ը միայն մեծ փրկագնով կարողացավ երկիրն ազատել թշնամու ավերածություններից:

Մայրաքաղաք Անիւն այս շրջանուն չորս անգամ մեծացել էր: 989թ. Սմբատ II-ը կառուցեց Անիի պարիսպների երկրորդ շարքը:

Սմբատ II-ին փոխարինեց եղբայրը՝ Գագիկ I-ը (990-1020թթ.), որը փորձեց քաղաքականապես միավորել երկիրը: Նրա կառավարման շրջանուն Բագրատունիների թագավորությունը հասավ հզորության գագաթնակետին: Նա հատուկ ուշադրություն էր դարձնում զինված ուժերի մեծացմանը: Հայոց բանակի թիվը հասցվեց 100.000-ի: Սպարապետ դարձավ տաղանդավոր զորավար Վահրամ Պախլավունին: Հզոր բանակի ստեղծումը հնարավորություն տվեց ընդարձակել Անիի թագավորության սահմանները, սանձահարել կենտրոնախույս ուժերին, հաջողությամբ երկիրը պաշտպանել արտաքին ներխուժումներից: Գագիկը իր պետությանը միացրեց Վայոց ձորի իշխանությունը, Արցախի մեծ մասը, Վասպուրականից խլեց Կոգովիտ և Ծաղկոտն գավառները: Նա կրում էր Շահնշահ հայոց տիտղոսը, նրան էին ենթարկվում Հայաստանի մյուս թագավորները: Վերջիններս առանց շահնշահի թույլտվության չէին կարող գահակալել կամ ինքնուրույն հարաբերություններ ունենալ այլ պետությունների հետ: Գագիկը միջամտում էր նաև Հայոց կաթողիկոսների ընտրությանը:

998թ. Ատրպատականի էմիր Մամլանը հարձակվեց Հայաստանի վրա: Հայ-վրացական միացյալ զորքերը Վահրամ Պախլավունու գլխավորությամբ Ապահունիք գավառի Ծունք գյուղի մոտ ջախջախեցին թշնամուն և վտարեցին երկրից: Դա արաբների վերջին ոտնձգությունն էր մեր երկրի դեմ:

Սանձահարվեց նաև Գանձակի էմիր Փաղլունը, որը ոտնձգություններ էր կատարում Լոռու թագավորության դեմ: Փաղլունը ստիպված էր ճանաչել Գագիկ I-ի գերիշխանությունը և հարկ վճարել: 1001թ. Լոռու թագավոր Դավիթ Անհողինը հրաժարվեց ճանաչել Գագիկ I-ի գերիշխանությունը: Գագիկի զորքերը գրավեցին Գուգարքը, գահընկեց արեցին նրան: Դրանից հետո Դավիթ Անհողինը զղջաց, ներում խնդրեց Գագիկից, ճանաչեց նրա գերագահությունը և ետ ստացավ իր թագավորությունը:

Շարունակվում էր Անի մայրաքաղաքի կառուցապատումը գեղեցիկ շինություններով: Կատրամիղե թագուհու պատվերով 1001թ. նշանավոր ճարտարապետ Տրդատը կա-

ռուցեց ԱՆԻի Կաթողիկե եկեղեցին: Այդ ժամանակ կործանվել էր Զվարթնոցի նշանավոր տաճարը և Գագիկի պատվերով Տրդատը կառուցեց ԱՆԻի Զվարթնոցատիպ Ս. Գրիգոր (Գագ-կաշեն) տաճարը :

Գագիկ I-ի գործունեության ու միջոցառումների շնորհիվ Հայաստանը հզորացավ, հայկական գրեթե բոլոր տարածքները միավորվեցին Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

22. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

Հայաստանի մասնատումը տարբեր թագավորությունների, ներքին հակասությունները և արտաքին ուժերի միջամտությունը թույլ չտվեցին Բագրատունիներին ստեղծելու հզոր և կենսունակ միասնական պետություն: Հայաստանի վերամիավորումն ու հզորացումը Բյուզանդիայի կողմից դիտվում էր արգելակող հանգամանք դեպի արևելք ընդարձակվելու համար: Այդ պատճառով էլ Բյուզանդիան աջակցում էր կենտրոնախույս ուժերին, մեկը մյուսի հետևից գրավում էր հայկական տարածքները:

Բյուզանդիայի առաջին զոհը դարձավ Տարոնի Բագրատունիների իշխանությունը: 966թ. Տարոնի իշխան Աշոտ Բագրատունու մահից հետո բյուզանդացիները զավթեցին այդ երկրամասի մեծ մասը: Տայքի իշխան Դավիթ կյուրոպաղատը զավակ չունեւ և կայսրի պարտադրանքով տիրույթները կտակեց Բյուզանդիային: 1000թ. նրա մահից հետո բյուզանդացիները գրավեցին Տայքը: 1021թ. Վասիլ II-ը Սեմեքե-րիմ Արծրունուն հարկադրեց Վասպուրականի թագավորությունը հանձնել Բյուզանդիային և տեղափոխվել Սեբաստիա: Այսպիսով, Բյուզանդիան զավթեց Հայաստանի արևմտյան և հարավային շրջանները, որից հետո ձգտելու էր նվաճել նաև ԱՆԻի թագավորությունը:

Գագիկ I-ի մահից հետո գահակալական պայքար սկսվեց նրա որդիների միջև: Գահը ժառանգեց ավագ որդին՝ թուլական ու պետական գործերին անընդունակ Հովհաննես-Սմբատը (1020-1041թթ.), որին պաշտպանում էր պալատական վերնախավը, քանի որ թույլ թագավորի դեպքում իրենց

ազատությունը մեծանում էր: Եղբոր դեմ ըմբոստացավ զորավարական ու պետական գործչի ունակություններով օժտված Աշոտը, որին պաշտպանում էր բանակը և մանր ազնվականությունը, որոնց ձեռնառու էր կենտրոնացված հզոր պետությունը: Ի վերջո, սպարապետ Վահրամ Պահլավունու, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի, Կարսի Աբաս, վրաց Գեորգի I թագավորների միջնորդությամբ եղբայրների միջև համաձայնություն կայացավ: Հովհաննես-Սմբատին անցան Անին և շրջակայքը, Աշոտ IV-ին (1020-1040թթ.)՝ գավառները: Փաստորեն, Անիի թագավորությունը բաժանվեց երկու մասի և թուլացավ, իսկ ենթակա թագավորներն ավելի անկախ դարձան: Ըստ պայմանագրի Հովհաննես-Սմբատի մահից հետո ամբողջ թագավորությունն անցնելու էր Աշոտին:

1015թ. վրաց թագավոր Գեորգի I-ը պայքար սկսեց Տայքը գրավելու համար, ուր ապստամբություն էր բռնկվել բյուզանդական տիրապետության դեմ: Վասիլ II-ը ճնշեց ապստամբությունը, ասպատակեց Աբխազիան ու Վրաստանը: Նա միաժամանակ Հովհաննես-Սմբատից պահանջեց իրեն հանձնել Անին: Դա պայմանավորված էր նրանով, որ Հայոց թագավորն աջակցել էր Գեորգիին: Թուլամորթ թագավորը Անին կտակեց Բյուզանդիային և Պետրոս կաթողիկոսի միջոցով 1021թ. դեկտեմբերին կտակն ուղարկեց Տրապիզոն, ուր գտնվում էր կայսրը: Այսպիսով, դավաճան թագավորն ու կաթողիկոսը հայրենիքը վաճառեցին օտարին: Դրանով Անիի թագավորությունը կորցրեց գոյատևման ու զարգացման հեռանկարը:

1041թ. մահացավ Հովհաննես-Սմբատը, իսկ մի քանի ամիս առաջ մահացել էր Աշոտը: Այդ պայմաններում ակտիվացան այն տարրերը, որոնք ձգտում էին Անին հանձնել Բյուզանդիային: Այդ խմբավորումը գլխավորում էին Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Հովհաննես-Սմբատի խնամակալ վեստ Սարգիս Սյունին: Հայոց պետականությունը ամրապնդելու նպատակով, սպարապետ Վահրամ Պահլավունին գահի թեկնածու առաջադրեց Աշոտի 18-ամյա որդուն՝ Գագիկին:

1042թ. Գագիկ II-ը (1042-1045թթ.) օժվեց թագավոր: Անիի կենտրոնական թագավորությունը մի պահ նորից վերականգնեց դիրքերը: Սակայն միջամտեց Բյուզանդիան և խափանեց ոչ միայն երկրի միավորումը, այլև կործանեց հայոց

պետականությունը: Կոստանդին Մոնոմախ կայսրը, տեղեկանալով Յովհաննես-Սմբատի մահվան մասին, պահանջեց Անին հանձնել իրեն և զորք ուղարկեց այն գրավելու: Սպարապետ Վահրամ Պահլավունու և Գագիկ II-ի գլխավորությամբ հայկական 30.000-ոց բանակը Անիի մոտ ջախջախեց բյուզանդական 100.000-ոց բանակին: Մինչև 1044թ. բյուզանդացիները ևս երեք անգամ հարձակվեցին Անիի վրա, բայց ամեն անգամ հայերը պարտության էին մատնում օտարերկրյա զավթիչներին:

Ջենքի ուժով հաջողության չհասնելով, բյուզանդացիները դիմեցին նենգության: Հաշտություն կնքելու պատրվակով կայսրը Գագիկ II-ին հրավիրեց Կ. Պոլիս: Սկզբում Գագիկը մերժեց հրավերը, սակայն Պետրոս Գետադարձի և վեստ Սարգսի հորդորներին տեղի տալով, 1044թ. մեկնեց կայսրի մոտ: Կ. Պոլսում Գագիկին արքայավայել ընդունելություն ցույց տվեցին, ապա առաջարկեցին Անիի թագավորությունը հանձնել Բյուզանդիային և փոխարենը ընդարձակ կալվածքներ ստանալ Մալաթիայում: Գագիկը մերժեց այդ պահանջը, սակայն նրան արգելեցին վերադառնալ հայրենիք: Կայսրը Գագիկին հատկացրեց Կապադովկիայի որոշ շրջաններ՝ Պիզու քաղաքով:

Հայոց արքային ասպարեզից հեռացնելուց հետո, բյուզանդական զորքը 1044թ. աշնանը պաշարեց հայոց մայրաքաղաքը: Վահրամ Պահլավունին այս անգամ ևս պարտության մատնեց թշնամուն: Ի վերջո վեստ Սարգիսն ու կաթողիկոսը համոզեցին իշխաններին, որ պայքարն անօգուտ է, և քաղաքը անհրաժեշտ է հանձնել Բյուզանդիային: 1045թ. բյուզանդական բանակն առանց կռվի գրավեց Անին, որով վերջ տրվեց Բագրատունիների համահայկական պետությանը: Կարսի, Սյունիքի և Լոռու թագավորություններն ունեին միայն տեղական նշանակություն և ի վիճակի չէին ղեկավարելու հայկական տարածքները միասնական պետության մեջ միավորելու գործընթացը:

Հայոց պետականության անկման գլխավոր պատճառը երկրի քաղաքական մասնատվածությունն էր, որը բնորոշ էր զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը թևակոխած երկրներին: Հայաստանում միասնական և կենտրոնացված պետության բացակայությունը թույլ չտվեց արդյունավետորեն

հակահարված տալ օտար զավթիչներին: Անկախ պետականության կորուստը ծանր հետևանքներ ունեցավ մեր երկրի համար, որն անպաշտպան մնալով շուտով ենթարկվեց արևելքից հարձակվող մեկը մյուսից հետամնաց ու արյունարբու ցեղերի ներխուժումներին ու ավերածություններին:

23. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԵՆԵՐԻ ՕՐՈՔ

Հայաստանը IX դարից թևակոխեց զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը: Տասնյակից ավելի ճյուղերի բաժանվեցին նախկին հզոր նախարարական տոհմերը՝ Բագրատունիները, Արծրունիները, Սյունիները: Եթե նախկինում միայն տոհմի նահապետն էր իրավասու տնօրինել նախարարական տան ամբողջ ունեցվածքը, ապա այժմ վիճակը փոխվեց: Ֆեոդալական տոհմի յուրաքանչյուր ընտանիք վերցնում էր իր բաժին կալվածքը և այն տնօրինում ինքնուրույն: Նախկին սեպուհները դառնում են ինքնուրույն ֆեոդալներ և սկսում են կոչվել գահակալ իշխաններ: Նախկին տանուտերը կամ նահապետը սկսում է կոչվել գահերեց իշխան և որևէ իրավասություն չունեն գահակալ իշխանի կալվածքի նկատմամբ: Այս ամենի հետևանքով ֆեոդալական խոշոր տների ներսում առաջացան բազմաթիվ ինքնուրույն ֆեոդալներ՝ իրենց կալվածքներով, ամրոցներով, զորքով:

Իշխաններն իրենց հողերի մեծ մասին տիրում էին ժառանգաբար՝ որպես սեփականատեր և նման կալվածքը կոչվում էր հայրենիք: Նրանց տրամադրության տակ կային նաև պարզևական կամ արքայատուր հողեր, որոնք ստանում էին սյուզերենից (տիրոջից)՝ որևէ ծառայության դիմաց և վասալը այն վաճառելու կամ նվիրելու իրավունք չունեն: Դրանք նրա իրավասության տակ էին մնում այնքան ժամանակ, քանի դեռ կատարում էր վասալական պարտականությունները: Կային նաև արծաթագին կամ գանձագին հողեր, որոնք գնվում էին իշխանի կողմից և վերածվում էին հայրենիքի:

Բագրատունյաց Հայաստանում իշխանության բուրգի գլուխ կանգնած էր թագավորը, որը կրում էր Շահնշահ Հայոց տիտղոսը: Նրանից ցածր կանգնած էին ենթակա թագավորները և գահերեց իշխանները: Վերջիններին նշանակում էր թա-

գավորը, և նրանք պարտավոր էին զորք և հարկ տրամադրել արքային: Գահակալ իշխանները ենթակա էին գահերեց իշխանին և զորք ու հարկ էին տալիս նրան: Գահակալ իշխանների կախվածությունը գահերեցից հիմնականում ոչ թե տնտեսական էր, այլ՝ քաղաքական: Ֆեոդալական աստիճանակարգության ստորին սանդուղքին կանգնած էին մանր ազնվականները՝ ազատները կամ խոստակդարները: Սրանք զինվորական ծառայության դիմաց կալվածք էին ստանում որևէ իշխանից, որից ունեին թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կախվածություն:

Թագավորը երկրի կառավարումը իրականացնում էր արքունիքի միջոցով, ուր կային տարբեր գործակալություններ: Կարևորագույն հարցերը քննարկելու համար գումարվում էր արքայական ատյան, որին մասնակցում էին գահերեց իշխանները, պետական բարձրաստիճան պաշտոնյաները և հոգևորականները: Արքունիքը գավառների կառավարումն իրականացնում էր հատուկ պաշտոնյաների միջոցով, որոնք կոչվում էին գործակալ կամ ձեռնավոր: Դրանք հիմնականում այն իշխաններն էին, որոնք տվյալ գավառի խոշորագույն ավատատերն էին: Գործակալներն ունեին իրենց ստորադաս պաշտոնյաները, որոնք իրականացնում էին հարկերի հավաքումը և կարգավորում էին մյուս հարցերը:

Արքունիքում կարևոր դեր էին կատարում իշխանաց իշխանի, մարզպանություն, դատավարություն և սպարապետություն գործակալությունները: Բարձրագույն պաշտոնները տրվում էին արքայի ազգականներին և մերձավորներին:

Իշխանաց իշխանը լուծում էր առանձին ֆեոդալների միջև ծագած վեճերը, ղեկավարում էր իշխանների հավաքները, պատասխանատու էր տնտեսական կյանքի կարգավորման համար, հավաքում էր հարկերը, նրան էին ենթարկվում երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:

Մարզպանը տնօրինում էր արտաքին հարաբերությունները, պատասխանատու էր այլ երկրների հետ հարաբերությունների համար:

Գլխավոր դատավորի պաշտոնը շարունակում էր տնօրինել կաթողիկոսը, իսկ շրջաններում դատարանների գլուխ կանգնած էին տվյալ թեմի եպիսկոպոսները: Դատավարությունների ժամանակ ղեկավարվում էին եկեղեցական ժողով-

ների մշակած կանոններով ու դարերով ձևավորված սովորույթային իրավունքով:

Սպարապետը ղեկավարում էր երկրի զինված ուժերը: Այդ պաշտոնը հիմնականում տրվում էր արքայի եղբորը կամ թագաժառանգին, իսկ Մհ. վերջից՝ Պահլավունիներին: Բագրատունիների օրոք հզոր բանակի կազմակերպումը կենսական անհրաժեշտություն էր, քանի որ Հայոց պետականության դեմ անընդհատ ոտնձգություններ էին կատարում օտար զավթիչները: Եթե Աշոտ I-ի օրոք հայկական բանակի թիվը 40.000 էր, ապա Գագիկ I-ի օրոք հասավ 100.000-ի: Խաղաղ ժամանակ ավելի փոքրաթիվ բանակ էր պահվում, որն անհրաժեշտ էր կենտրոնախույս իշխաններին սանձահարելու և արտաքին անակնկալ հարձակումներից պաշտպանվելու համար:

Բանակը կազմված էր արքունի և մարզպանական գնդերից: Առաջինը Բագրատունի արքաների զորամասերն էին, երկրորդը՝ ենթակա թագավորների ու իշխանների: Գագիկ I-ի օրոք արքունի զունդը կազմված էր 55.000, մարզպանականը՝ 45.000 զինվորից:

Մշտական բանակը կազմված էր ազատներից, որոնք ծառայության դիմաց հողակտորներ էին ստանում իրենց իշխանից: Պատերազմի ժամանակ քաղաքացիներից ու գյուղացիներից հավաքվում էր նաև աշխարհազոր:

Բագրատունիների պետությունը մինչև Մհ. սկիզբը կախվածության մեջ էր Արաբական խալիֆայությունից, որին հարկ էր վճարում: Մհ. սկզբին թուլացած Հայոց թագավորությունը հայտնվեց Բյուզանդական կայսրության ազդեցության ոլորտում: Բագրատունիների օրոք հայկական թագավորությունը բավական հզոր և միջազգային բարձր հեղինակություն ունեցող պետություն էր: Դրա մասին է վկայում այն, որ Բյուզանդական արքունիքը արաբական խալիֆից ու Եգիպտոսի տիրակալից հետո ամենաբարձր դիրքը վերագրում էր Հայոց թագավորին, որից ավելի ցածր էին դասվում եվրոպական բոլոր տիրակալները:

24. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Թուրքական ցեղերը մինչև XI դ. սկիզբը բնակվում էին Միջին Ասիայում և Չինաստանից հյուսիս ընկած տափաստաններում: Նրանք քոչվորական կյանք վարող խաշնարածներ էին և հաճախ տեղից տեղ էին տեղափոխվում նոր արոտավայրեր գտնելու համար: Նրանց ցեղապետերից Սելջուկը կարողացավ միավորել թուրքերի մեծ մասին, որոնք նրա անունով կոչվեցին սելջուկներ, ստեղծեց հզոր պետություն և ավարառուական արշավանքներ սկսեց հարևան երկրների դեմ: Սելջուկները 1030-ական թվականներին գրավեցին ամբողջ Պարսկաստանը, որտեղից արշավանքներ սկսեցին դեպի Հայաստան:

Անիի Բագրատունիների թագավորությունը կործանելուց հետո Բյուզանդիան ծանրացրեց հարկերը, փորձեց Հայոց եկեղեցին միացնել բյուզանդականին, Հայաստանից հեռացրեց խոշոր իշխաններին ու հայկական զինված ուժերը: Փաստորեն, երկիրն օտար ասպատակիչների առաջ մնացել էր գրեթե անպաշտպան, իսկ Բյուզանդիայի վարած հակահայկական քաղաքականության հետևանքով դժգոհությունները օրեցօր աճում էին: Լոռու, Սյունիքի և Կարսի հայկական թագավորությունները բավարար ուժ չունեին սելջուկներին դիմադրելու համար:

1047թ. սելջուկների 20.000-ոց բանակը Ատրպատականից ներխուժեց Վասպուրական և ասպատակեց մինչև Բասեն ընկած գավառները: Բյուզանդական զորքերը չփորձեցին դիմադրել նրանց և բնակչությանը թողեցին անպաշտպան: Սելջուկները աչքի էին ընկնում դաժանությամբ, չէին խնայում ոչ ոքի և իրենց ճանապարհին թողնում էին միայն մոխրակույտեր ու դիակներ: Նրանք մեծ ավարով ու գերիներով հեռացան Պարսկաստան:

1048թ. սեպտեմբերին սելջուկների 100.000 բանակը նույն ճանապարհով, երկրորդ անգամ արշավեց Հայաստան: Սմբատաբերդ լեռան վրա սելջուկները կոտորեցին տասնյակ հազարավոր մարդկանց: Նրանք ավերեցին ու թալանեցին անպարիսպ Արծն քաղաքը, ուր սրի քաշեցին մոտ 150.000 մարդու: Բյուզանդական կայսրությունը փորձեց կասեցնել

սելջուկների առաջխաղացումը, սակայն Բասենի ճակատամարտում բյուզանդական բանակը ծանր պարտություն կրեց:

Սելջուկները այս անգամ ևս մեծ ավարով հեռացան Պարսկաստան՝ հետևում թողնելով ամայացած երկրամասեր: Նրանք տարան 100.000 գերի և հսկայական ավար:

Բյուզանդիան համոզվեց, որ սխալ էր Հայաստանից խոշոր իշխանների ու ռազմական ուժի դուրսբերումը, քանի որ արևելքից սպառնացող սելջուկյան վտանգի դեմ երկիրը մնացել էր անպաշտպան, իսկ հայերի մոտ ատելություն էր առաջացել կայսրության նկատմամբ: Սելջուկների դեմ պատվար ստեղծելու համար Բյուզանդիան փոխեց իր քաղաքականությունը Հայաստանում: Հարկերը թեթևացվեցին, որոշ հայ իշխանների թույլ տրվեց վերադառնալ հայրենիք, հանդուրժողականություն սկսեցին ցուցաբերել նաև կրոնա-դավանական հարցերում: Նշանավոր իշխան Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն, որը Հյուսիսային Միջագետքի կառավարիչն էր, տրվեց նաև Վասպուրականի կառավարչի պաշտոնը: Այդ ամենի հետևանքով Հայաստանի պաշտպանունակությունը բավական ամրապնդվեց:

1054թ. անձամբ սելջուկների տիրակալ Տուղրիլը 100.000-ոց բանակով ներխուժեց Հայաստան: Այս անգամ թշնամին համառ դիմադրության հանդիպեց: Վանանդի թագավոր Գագիկը հաջողությամբ ետ մղեց թշնամուն Կարսի մատույցներից: Բաբերդի մոտ բյուզանդական զորամասերից մեկը պարտության մատնեց սելջուկներին, իսկ գերիներին ազատեց: Չկարողանալով գրավել Ալմիկ ամրոցը և Կարինը, Տուղրիլը հարձակվեց Մանազկերտի վրա: Չնայած սելջուկների համառ ջանքերին, քաղաքը մնաց անառիկ: Մեկամսյա պաշարումից հետո սելջուկները ստիպված էին ձեռնունայն հեռանալ: Ավերելով ու թալանելով մի շարք անպաշտպան բնակավայրեր՝ մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով Տուղրիլը հեռացավ Հայաստանից:

Սելջուկյան այս արշավանքները, որոնք ավարառության ու հետախուզական բնույթ էին կրում, ծանր հարված հասցրին երկրին: Նրանց ավերածությունները առաջ բերեցին բնակչության զանգվածային արտագաղթ, որից Հայաստանը ավելի թուլացավ և անպաշտպան մնաց սելջուկյան նվաճումների առաջ: Սելջուկ-թուրքերը շուրջ 10 տարի դադարեցրին

խոշոր արշավանքները Հայաստան: Ո՛չ Բյուզանդիան, ո՛չ հայկական թագավորությունները այդ շրջանը չկարողացան օգտագործել Հայաստանի պաշտպանունակությունը բարձրացնելու համար:

1064թ. սելջուկյան սուլթան Ալփ-Ասլանը մեծ բանակով արշավեց և գրավեց Ադվանքը, Արևելյան Վրաստանը, ապա ներխուժեց Հայաստան: Լոռու, Սյունիքի, Կարսի հայ թագավորները հպատակություն հայտնեցին սելջուկներին և պահպանեցին իրենց տիրույթները: Սելջուկները ներխուժեցին Շիրակ և բյուզանդական զորքերի ապիկարության պատճառով գրավեցին Անին: Այսպիսով, 1064թ. սելջուկներին հաջողվեց գրավել Հայաստանի հյուսիսային շրջանները:

1070թ. սելջուկները սկսեցին Հայաստանի հարավային ու արևմտյան գավառների նվաճումը: Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Դիոգենեսը մեծ բանակով եկավ արևելք, որպեսզի կասեցնի սելջուկների առաջխաղացումը: 1071թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիները ջախջախիչ պարտություն կրեցին: Բյուզանդիան ստիպված էր սելջուկներին զիջել Հայաստանը և Մերձավոր Արևելքը: Դրանով Հայաստանը վերջնականապես հայտնվեց սելջուկյան լծի տակ:

Երկրի վարչական կառավարումը, դատավարությունը ու հարկահանությունը անցան սելջուկ պաշտոնյաների ձեռքը: Միայն Լոռիում, Սյունիքում և Հայաստանի հարավային մի շարք գավառներում հայ իշխանները պահպանեցին իրենց գոյությունը և այդ վայրերում վարչա-քաղաքական իշխանությունը դեռևս հայերի ձեռքում էր: Սելջուկները ծանր հարկեր դրեցին բնակչության, հատկապես գյուղացիության վրա, մեծ չափեր ընդունեց արտագաղթը: Սելջուկները խլեցին հայ իշխանների կալվածքները, իսկ տերերին դուրս քշեցին երկրից կամ ոչնչացրին: Այդ հողերը տրվեցին սելջուկ զինվորներին ու պաշտոնյաներին:

Սելջուկյան պետությունը շուտով մասնատվեց տարբեր ամիրայությունների: Արարատյան դաշտը և Շիրակը անցան Շադադյաններին, իսկ Հայաստանի հարավային շրջանները՝ Շահարմեններին: Երկրի մյուս մասերը անցան Գանձակի, Օրդուխյան, Դանիշմանների, Սալդուխյան էմիրություններին: Այդ ամիրայությունների հիմնական բնակչությունը հայերն էին, որոնք ենթարկվում էին բազմատեսակ ճնշումների,

կեղեքումների ու կրոնական հալածանքների: Սելջուկյան տիրապետությունը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար:

25. ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

XII դ. Վրաց թագավորությունը սկսեց հզորանալ: Դա մահմեդական էմիրությունների լծից ազատվելու հույսեր առաջացրեց հայ ժողովրդի մոտ: Հայերը մեծ աջակցություն էին ցույց տալիս վրացական բանակին՝ էմիրությունների դեմ մղվող պայքարում: 1110-1123թթ. Վրաստանին միացվեցին Լոռու թագավորության տարածքները: Վրացական բանակը մի քանի անգամ գրավեց Անին, սակայն երկար պահել չկարողացավ:

XIII դ. անձնական խիզախության ու քաջության շնորհիվ Գուգարքում ու Վրաստանում բարձր դիրք և հեղինակություն ձեռք բերեցին Զաքարյանները: Թամար թագուհու օրոք Սարգիս Զաքարյանը նշանակվեց հայ-վրացական միացյալ բանակի ամիրսպասալար (1185-1187թթ.): Վրաց արքունիքում բարձր դիրք ունեին նաև այլ հայ իշխաններ: Նրանք իրենց ներդրումը կատարեցին Վրաստանի հզորացման գործում, միաժամանակ նպաստեցին հայկական շրջանների ազատագրմանը: Հայ-վրացական զինակցությունը ձեռնտու էր տարածաշրջանի երկու քրիստոնյա ժողովուրդներին, որոնք միացյալ ուժերով կարողացան դիմակայել մահմեդական էմիրությունների ճնշմանը և նրանց դուրս մղել Հայաստանի ու Վրաստանի տարածքի մի մասից:

Հայաստանի ազատագրման գործը մեծ ծավալներ ընդունեց XIII դ. վերջից: Այդ պայքարը ղեկավարում էին Սարգիս Զաքարյանի որդիները: Նրանցից ավագը՝ Զաքարեն 1192թ. նշանակվեց հայ-վրացական բանակի ամիրսպասալար, իսկ կրտսերը՝ Իվանեն՝ արքունի վեզիր, ապա՝ վրաց թագավորության աթաբեկ: Սարգսի եղբայր Վահրամի հետնորդներին էր ժառանգաբար պատկանում իշխանաց իշխանի պաշտոնը:

Այսպիսով, Զաքարյանները ակտիվ մասնակցություն ստանձնեցին վրաց պետության ներքին ու արտաքին կյանքում և ձեռնամուխ եղան հայրենիքի ազատագրմանը: Թամար թագուհին ազատագրված հայկական տարածքների կառավա-

րունը հանձնեց Ձաքարյաններին, իսկ նրանք էլ՝ աչքի ընկնող հայ գորավարներին: Դա ավելի ոգևորեց հայ իշխաններին:

1196թ. Ձաքարյանները Գանձակի էմիրության տիրապետությունից ազատագրեցին Արցախը, Սևանա լճի ավազանը, Սյունիքը, 1198-1204թթ. Շաղաղյաններից վերջնականապես ազատեցին Շիրակը, Արագածոտնը, Արարատյան դաշտը:

Հայաստանի հարավային շրջանների ազատագրումը կապված էր ավելի մեծ դժվարությունների հետ: Շահարմենների, Դանիշմանների, Կարսի, Կարինի էմիրությունները հայտնվել էին Իկոնիայի սելջուկյան և Եգիպտոսի Այուբյան հզոր սուլթանությունների ազդեցության տակ: Հետևաբար, հայ-վրացական զորքերի առաջխաղացումը դեպի հարավ հանդիպեց սուլթանությունների հակազդեցությանը:

1205թ. Բասենի ճակատամարտում Ձաքարյանները ջախջախեցին Իկոնիայի սուլթանին, որով բացվեց ճանապարհը դեպի Հայաստանի խորքերը: Կարինի և Երզնկայի էմիրները հպատակություն հայտնեցին և սկսեցին հարկ վճարել Վրաստանին: 1206-1209թթ. Ձաքարյանները ազատագրեցին Կարսը, Բագրևանդը, Տուրուբերանի հյուսիսային շրջանները, Մանազկերտը, Արճեշը: 1210թ. նրանք պաշարեցին Խլաքը, բայց Իվանեն պատահականորեն գերի ընկավ: Եղբորն ազատելու համար Ձաքարեն ստիպված էր Այուբյանների հետ 30 տարով հաշտություն կնքել: Դրանով դադարեցվեց հարավային Հայաստանի ազատագրման գործը:

1211թ. Ձաքարյանները գրավեցին ամբողջ Ատրպատականը և հարկատու դարձրին:

Այսպիսով, Ձաքարյանները կարողացան ազատագրել Հյուսիսային Հայաստանը՝ Անիի, Կարսի, Լոռու և Սյունիքի նախկին թագավորությունների տարածքը: Դրանով այդ շրջաններում վերականգնվեց հայկական իշխանությունը և հայ ժողովուրդը կարողացավ ազատորեն զարգացնել տնտեսությունն ու մշակույթը:

Ձաքարյանները վրաց Բագրատունիներից որպես ժառանգական սեփականություն ստացան ազատագրած հայկական տարածքները: Նրանք Հայաստանում լիակատար ինքնիշխան էին: Ձաքարյանները վրաց արքունիքին հարկ չէին

վճարում և միայն զորք տրամադրելու պարտականություն ունեին:

Ձաքարե ամիրսպասալարին անցան Լոռու մի մասը, Անիի նախկին թագավորության տարածքը և այլ գավառներ՝ մինչև Բասեն: Կենտրոնը Անին էր: Ձաքարյանների այս ճյուղը կրում էր Բագրատունի թագավորների Յայոց շահնշահ տիտղոսը: Իվանեի տիրույթների մեջ էին Լոռու մի մասը, Այրարատի արևելյան շրջանները, Սևանի ավազանը, Վայոց ձորը, Սյունիքի և Արցախի մի մասը: Կենտրոնը Դվինն էր, ապա՝ Բջին: Ձաքարեի ու Իվանեի հորեղբոր՝ Վահրամի ժառանգներին անցան Տավուշը, Գարդմանը, Փառխոսը, Շամխորը, Ջավախքը: Կենտրոնը Գագ ամրոցն էր:

Ձաքարյանների օրոք հայկական հին իշխանական տները վերականգնեցին սելջուկների օրոք կորցրած կալվածքներն ու իրավունքները, ստեղծվեցին նոր տոհմեր: Դրանք վասալական կախման մեջ էին Ձաքարյանների այս կամ այն ճյուղից: Արագածոտնում իշխում էին Վաչուտյանները, Պահլավունիները տիրույթներ ունեին Շիրակում, Օրբելյանները կալվածքներ ստացան Սյունիքում, Վայոց ձորի արևելքում, Կոտայքում, Խաղբակյանները՝ (Պռոշյանները) Վայոց ձորում, Վարաժնունիքում, Շահապունիքում, Կոտայքում, Այրարատում: Վեդի գետի ակունքներում և Դսեղում իշխում էին Մամիկոնյանները, Խաչենում՝ Յասան-Ջալալյանները, Դոփյաններին անցան Ծարը և Յաթերքը:

Ձաքարյանների օրոք Յայաստանի տնտեսական ու մշակութային կյանքը խոշոր վերելք ապրեց, կատարվեցին մեծամասշտաբ շինարարական աշխատանքներ: Ազատության կարճատև ժամանակաշրջանը բավարար եղավ, որպեսզի բուժվեն օտար նվաճողների հասցրած ծանր վերքերը: Յայ ժողովուրդն իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ ստեղծագործական ու վերականգնողական աշխատանքներ իրականացնելուն: Սելջուկների օրոք ավերված քաղաքները սկսեցին բարգավաճել ու նոր վերելք ապրել: Սակայն այդ շրջանը երկարատև չեղավ, քանի որ շուտով արևելքից նոր նվաճողներ հայտնվեցին: Ձաքարյաններից հետո երկար դարեր բուն Յայաստանում վերացավ պետականությունն ու հայ իշխանական տների մեծ մասը, որը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ մեր ժողովրդի ճակատագրում:

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄՈՆԻՏՈՐԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ձաքարյանները չկարողացան միավորել ամբողջ Հայաստանը: Հարավային գավառները մնացին Եգիպտոսի Այուբյան սուլթանության, իսկ արևմտյան շրջանները՝ Իկոնիայի սուլթանության տիրապետության տակ: Երկրի քաղաքական ու տնտեսական մասնատվածությունը հայ ժողովրդին թույլ չտվեց համախմբել ուժերը և պայքարել օտար զավթիչների դեմ: Այդ վիճակում էր Հայաստանը, երբ սկսվեցին մոնղոլների ավերիչ արշավանքները:

Մոնղոլական վաչկատուն, ռազմատենչ ցեղերը բնակվում էին Սիբիրի և Չինաստանի միջև ընկած տափաստաններում: Նրանց միավորեց ցեղապետերից Չինգիզ խանը, որը 1206թ. Օնոն գետի մոտ տեղի ունեցած մոնղոլ ցեղապետերի մեծ ժողովում՝ ղուռուլքայում հռչակվեց համամոնղոլական խաքան՝ մեծ խան: Դրանով մոնղոլական միացյալ պետության հիմքը դրվեց, որը ստեղծման օրից վարեց նվաճողական քաղաքականություն:

1220-1222թթ. մոնղոլների 20.000-ոց բանակը ներխուժեց Անդրկովկաս: Հայ-վրացական բանակը վրաց թագավոր Գեորգի Լաշայի և աթաբեկ Իվանե Ձաքարյանի գլխավորությամբ մի քանի անգամ դուրս եկավ թշնամու դեմ, բայց պարտվեց:

1225-1230թթ. Անդրկովկասը ենթարկվեց Խորեզմի թագաժառանգ Ջալալեդդինի ավերիչ արշավանքներին: Վերջինիս հետապնդող մոնղոլական զորքերը 1231-1232թթ. ներխուժեցին Հայաստան և նոր ավերածություններ գործեցին: Սակայն այս անգամ ևս նրանք չհաստատվեցին երկրում և հարուստ ավարով հեռացան: Այդ արշավանքները ծանր վնասներ հասցրին երկրին:

1235թ. մոնղոլական ղուռուլքայը որոշեց գրավել Մերձավոր Արևելքը և Ռուսաստանը: Բաթու խանը շարժվեց Ռուսաստան, իսկ Չարմաղանը 30.000 բանակով 1236թ. ներխուժեց Անդրկովկաս: Այս անգամ զորքին հետևում էին ընտանիքներն ու անասունների հոտերը: Երկիրն առանց այդ էլ թուլացել էր մոնղոլների առաջին արշավանքների և Ջալալեդդինի ավերածությունների հետևանքով, ավելի էր խորացել

Ֆեոդալական մասնատվածությունը, իսկ Գեորգի Լաշայի և Իվանե Ջաքարյանի մահից հետո հայ-վրացական պետությունը կորցրել էր նախկին ուժը: Հայ իշխանները ստիպված հնազանդություն հայտնեցին մոնղոլներին և պահպանեցին տիրույթները: 1236թ. մոնղոլները գրավեցին և ավերեցին Անին ու Կարսը: Այսպիսով, հյուսիս-արևելյան Հայաստանը ընկավ մոնղոլական լծի տակ:

1242թ. մոնղոլները սկսեցին Հայաստանի արևմտյան շրջանների նվաճումը: 1243թ. Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ մոնղոլները ջախջախեցին Իկոնիայի սուլթանի բանակին, ապա գրավեցին Երզնկան ու Կեսարիան: 1245թ. մոնղոլները շարժվեցին հարավ և գրավեցին Տուրուբերանը, Վասպուրականը, Աղձնիքը, Հյուսիսային Միջագետքը:

Այսպիսով, 1236-1245թթ. ընթացքում մոնղոլները վերջնականապես գրավեցին ամբողջ Հայաստանը:

Նվաճած երկրներում մոնղոլներն իրականացնում էին զանգվածային կոտորածներ ու գերեվարություններ, ամայացնում էին քաղաքներն ու գյուղերը: Ավարառությունն ու կողոպուտը նրանց եկամտի հիմնական աղբյուրն էր դարձել: Նրանց պետք էին ընդարձակ ամայի տարածություններ՝ իրենց անասուններին արածեցնելու համար: Հայ իշխանները պահպանեցին կալվածքներն ու իրավունքները, բայց պարտավոր էին մասնակցել մոնղոլների արշավանքներին: Ջաքարյանները պարտավոր էին 30.000 զինվոր տրամադրել մոնղոլներին, որոնք նվաճված երկրների զորամասերն օգտագործում էին ճակատամարտի առաջին գծում: Դրա հետևանքով հայկական բանակը մեծ զոհեր էր տալիս: Նվաճողները չափազանց ծանր հարկապահանջությամբ նեղում էին բնակչությանը, իսկ իշխաններից հափշտակում էին այն ամենը ինչ իրենց դուրը գալիս էր: Այդ պատճառով լուրջ դժգոհություններ առաջացան Հայաստանում ու Վրաստանում:

1249թ. Թիֆլիսում վրաց Դավիթ թագավորի գլխավորությամբ հայ և վրացի իշխանները գաղտնի համաձայնության եկան ապստամբելու կեղեքիչների դեմ: Մոնղոլները, տեղեկանալով այդ մասին, ձերբակալեցին վրաց թագավորին և գրեթե բոլոր հայ ու վրացի իշխաններին: Նրանց տանջանքների ենթարկեցին և մեծ փրկագնով բաց թողեցին: Միաժամանակ մոնղոլներն ասպատակեցին այդ իշխանների տիրույթներ-

րը և կոտորեցին բնակչությանը, որպեսզի նրանք երկար ժամանակ ի վիճակի չլինեն ընդվզել:

1254թ. Հայաստանում անցկացվեց նոր աշխարհագիր, որի նպատակն էր սահմանել հարկատվության ու զինապարտության նոր կարգ: Վարչաքաղաքական իրավունքները Հայաստանում կենտրոնացվեցին մոնղոլների ձեռքում: Դրանից հետո հարկերն ավելի ծանրացան, որի հետևանքով Հայաստանը տնտեսությունը սկսեց քայքայվել:

Մոնղոլների ծանր հարկային քաղաքականությունը և կամայականությունները հայերին և վրացիներին մղեցին ապստամբության: 1259-1261թթ. վրաց Դավիթ VII թագավորի գլխավորությամբ գեներ վերցրին հայ և վրացի իշխանները: Նրանք ամրացան լեռնային շրջաններում և հարձակումներ սկսեցին մոնղոլական զորքերի վրա: Սակայն 1261թ. ապստամբությունը ճնշվեց, մահապատժի ենթարկվեցին մի շարք հայ իշխաններ: Պարտության պատճառն այն էր, որ ապստամբությունը համաժողովրդական բնույթ չստացավ, իսկ հայ բնակչության մի ստվար մասը բռնել էր պայքարի պասսիվ ուղին՝ արտագաղթը:

Մոնղոլական տիրապետության շրջանում արհեստագործությունը, գյուղատնտեսությունը, ներքին առևտուրը անկում ապրեցին, նախկին ծաղկուն քաղաքները ամայացան կամ վերածվեցին գյուղերի: Հայերի համար ավելի վատթար պայմաններ ստեղծվեցին, երբ մոնղոլներն ընդունեցին մահմեդականություն և սկսեցին նաև կրոնական հալածանքներ: Այդ ամենի հետևանքով երկրում առաջացել էր անկայուն վիճակ, իսկ քոչվոր ցեղերի անընդմեջ տեղաշարժերն ու հարկային ծանր լուծը կործանարար հետևանքներ ունեցան Հայաստանի համար:

Մոնղոլական տիրապետությունը կասեցրեց Հայաստանի տնտեսական ու մշակութային առաջընթացը, պատճառ դարձավ զանգվածային արտագաղթի, բազմաթիվ քաղաքներ դադարեցին գոյություն ունենալուց:

27. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի և հայկական պետականության պատմության մի հատվածը կերտվել է Հայկական լեռնաշխարհից դուրս: Այն ժամանակ, երբ բուն Հայաստանում կործանվել էր անկախ պետականությունը, իսկ ժողովուրդը օտար զավթիչների անտանելի կամայականությունների ու բռնությունների հետևանքով զանգվածաբար լքում էր հայրենիքը, հայ ժողովուրդը թագավորություն ստեղծեց ու պետականությունը վերագտավ Կիլիկիայում, որն ընկած է Հայաստանից դեպի հարավ-արևմուտք:

Կիլիկիան ձգվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին: Այն աշխարհագրական շատ բարենպաստ դիրքում է գտնվում: Հարավից երկրամասը 500 կմ երկարությամբ եզերում են Միջերկրական ծովի ջրերը, արևմուտքից ու հյուսիսից Փոքր Ասիայից բաժանվում է Տավրոսի լեռնաշղթայով, արևելքում Ամանոսի լեռնաշղթան կամ Սև լեռներն են, որոնք բաժանում են Ասորիքից: Կիլիկիայի բնական սահմանները պաշտպանական ամուր գոտիներ էին: Այն զբաղեցնում է մոտ 40.000կմ² տարածք:

Երկրամասի արևմտյան հատվածը ծածկված է քարքարոտ բլուրներով և կոչվում է Քարուտ Կիլիկիա: Հյուսիս-արևելյան մասը Լեռնային Կիլիկիան է, որը ծածկված է բարձրաբերձ լեռներով: Հարավ-արևելյան մասը Դաշտային Կիլիկիան է, որը հարուստ դաշտավայրային շրջան է, սահմանակից է Միջերկրականին:

Կիլիկիայի խոշոր գետերն են Կալիկադոնոսը (Սելևկիա), Լամոսը, Կյուդոնոսը (Տարսուս-չայ), Սարոսը (Սիհուն), Պիռամոսը (Ջիհուն): Կիլիկիան հարուստ է բուսական ու կենդանական աշխարհով, հանքային հանածոներով (երկաթ, կապար, արծաթ, կրաքար, ծծումբ, արջասպ, բորակ, աղ ևն): Լեռնային շրջանները ծածկված են սաղարթախիտ անտառներով ու ընդարձակ արոտավայրերով: Ծովափնյա շրջաններում կային մի շարք խոշոր նավահանգստային քաղաքներ, որոնք կապող օղակ էին հանդիսանում արևելք-արևմուտք ծովային ու ցամաքային առևտրի համար: Այդ ամենը նպաս-

տում էին երկրամասում գյուղատնտեսության, արհեստագործության ու առևտրի զարգացմանը:

Հնագույն ժամանակներից Կիլիկիայում բնակվել են տարբեր ժողովուրդներ: Միջին դարերում այնտեղ ապրում էին հայեր, հույներ, ասորիներ, հրեաներ: Հայերն այնտեղ բնակություն են հաստատել հին ժամանակներից: Տիգրան Մեծի օրոք Դաշտային Կիլիկիան մտավ Հայկական տերության կազմի մեջ և այնտեղ հաստատվեցին բազմաթիվ հայեր:

IV դ. հռոմեացի պատմիչ Ամիանոս Մարկելիոսը վկայում է, որ Ալեքսանդրետի (Իսոսի) ծոցը կոչվում էր Հայկական ծոց: Իսկ V դ. սկզբին նշանավոր եկեղեցական գործիչ Հովհան Ոսկեբերանը Կիլիկիայից ուղարկած մի նամակում հիշատակում է, որ ինքը բնակվում է հայկական գյուղում, իսկ շրջանի կառավարիչը հայ իշխան է: Դա վկայում է, որ հայերը Կիլիկիայում բավական մեծ թիվ են կազմել դեռևս վաղ միջնադարում: Արաբական ներխուժման ժամանակ Կիլիկիայի բազմաթիվ վայրերում զավթիչներին համառ դիմադրություն էին ցույց տալիս տեղի հայերը:

Բյուզանդիայի վարած Հայաստանը հայաթափելու քաղաքականության արդյունքում Կիլիկիա են զաղթում հազարավոր հայեր: XI դ. Հայաստանում ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմանները հայ բնակչությանը ստիպեցին թողնել հայրենիքը և արտագաղթել այլ երկրներ: Այդ հայերի մեծ մասը հաստատվում էր Կիլիկիայում:

Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հետ հեռացավ ավելի քան 70.000 մարդ, հետագայում Վասպուրականից գաղթածների թիվը հասավ 400.000-ի: Նրանք հաստատվեցին Փոքր Հայքում, Կապադովկիայում ու Կիլիկիայում: Անրի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Գագիկ II-ը հաստատվեց Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիզու քաղաքում: Նրա հետևից հազարավոր ազնվականներ՝ իրենց հպատակներով գաղթեցին դեպի Կապադովկիա և Կիլիկիայի հյուսիսային շրջաններ:

1042թ. Աբլղարիբ Արծրունուն Կոստանդին Մոնոմախ կայսրը նշանակեց Կիլիկիայի մեծ մասի կառավարիչ (1042-1080թթ.): Նա աջակցում էր երկրամասում հայ բնակչության հաստատմանն ու ամրապնդմանը:

Սելջուկյան արշավանքների ժամանակ հայերի հոսքը դեպի Կիլիկիա ավելի մեծացավ: Կարսի Գագիկ Աբասյան թագավորը 1065թ. իր տիրույթները հանձնեց Բյուզանդիային և իր զինվորականության հետ տեղափոխվեց Կիլիկիայի սահմանին գտնվող Ծամնդավի շրջանը: Սելջուկների ճնշման տակ Գանձակի մոտ գտնվող հայրենի տիրույթ Մայրյացջուրը թողնելով 1073թ. իր զորամասով Կիլիկիա մեկնեց Օշին իշխանը: Նա տիրեց Լամբրոն ամրոցին՝ շրջակայքով, որը դարձավ Օշինյանների ժառանգական տիրույթը:

1070-ական թթ. սելջուկները ներխուժեցին Փոքր Ասիա և այնտեղ հաստատված մեծ թվով հայեր ևս տեղափոխվեցին Կիլիկիա:

Այսպիսով, XIդ. վերջին հայերը կազմում էին Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը, հայ իշխանների ձեռքում էր կենտրոնացել տարբեր շրջանների վարչական ու տնտեսական կյանքի կառավարումը, պաշտպանության գործը: Այս ամենը երկրամասում անկախ հայկական իշխանություն հաստատելու համար հիմքեր ստեղծեցին:

28. ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԱՍՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայ իշխան Փիլարտոս Վարաժնունին, որը նշանակվել էր Եփրատի առափնյա շրջանների բյուզանդական զորքերի հրամանատար, փորձ արեց միավորելու Ասորիքի, Կիլիկիայի, Կապադովկիայի հայկական իշխանությունները: Մանազկերտի ճակատամարտից հետո նա հրաժարվեց ենթարկվել կայսրին և նշված տարածքներում ստեղծեց անկախ պետություն, որի կենտրոնը Մարաշ քաղաքն էր: Հայ զինվորությանը համախմբելով՝ Փիլարտոսը կարողացավ որոշ ժամանակով կասեցնել սելջուկների առաջխաղացումը դեպի Հյուսիսային Միջագետք ու Ասորիք: 1086թ. Փիլարտոսը մահացավ, իսկ նրա ստեղծած հայկական մեծ իշխանությունը կործանվեց սելջուկյան գերակշիռ ուժերի հարվածների տակ:

Ասորիքի հյուսիս-արևմտյան և Կիլիկիայի արևելյան շրջաններում նոր անկախ իշխանություն ստեղծեց Գող Վասիլը (1082-1112թթ.), որի կենտրոնը Քեսունն էր: Նա կարողացավ խոչընդոտել սելջուկների կողմից Ասորիքի մի մասի և

Կիլիկիայի նվաճմանը: Վասիլի մահից հետո նրա իշխանությունը ևս կործանվեց:

Ի տարբերություն Փիլարտոսի և Գող Վասիլի իշխանությունների, որոնք կործանվեցին հիմնադիրների մահից հետո, չափազանց կենսունակ հանդիսացավ Ռուբենի ստեղծած իշխանությունը Կիլիկիայում:

Անիի թագավոր Գագիկ II-ի թիկնապահներից Ռուբենը 1080թ. տիրեց Լեռնային Կիլիկիայի մի մասին և ընդարձակեց տիրույթները սելջուկների ու բյուզանդացիների հաշվին: Հայ բնակչությունը համախմբվեց Ռուբենի շուրջը և օգնեց երկրամասը ազատագրելու գործում: Ռուբեն I-ը (1080-1095թթ.) Կիլիկիայում հիմնադրեց հզոր ու կենսունակ իշխանություն, որն իր անունով կոչվեց Ռուբինյան: Այս իշխանությանն էր վիճակված համախմբել Կիլիկիայի հայությանը միասնական պետության մեջ և վերականգնել հայոց թագավորությունը:

Ռուբենին փոխարինեց որդին՝ Կոստանդին I-ը (1095-1100թթ.), որն ավելի ընդարձակեց իշխանության սահմանները: 1098թ. ազատագրվեց Վահկա բերդը, որը դարձավ Ռուբինյան իշխանների նստավայրը: Կոստանդինը գրավեց Դաշտային Կիլիկիայի որոշ շրջաններ: Ռուբինյան իշխանության ընդարձակմանն օգնեցին նաև խաչակրաց արշավանքները: Դրանց հետևանքով Իկոնիայի սուլթանությունը և մյուս մահմեդական իշխանությունները բավական թուլացան:

1095թ. Կլերմոնի եկեղեցական ժողովում Հռոմի Ուրբանոս II պապն անհրաժեշտ համարեց մահմեդականների լծից ազատել քրիստոնյաներին և Երուսաղեմում գտնվող Քրիստոսի գերեզմանը: Իրականում խաչակիրներին հրապուրում էր Արևելքի հարուստ երկրների նվաճման հեռանկարը: Խաչակրաց առաջին արշավանքը կազմակերպվեց 1096-1099թթ.: Խաչակիրները մեծ դժվարությունների գնով անցան Փ.Ասիան և նվաճեցին Կիլիկիայի, Ասորիքի ու Պաղեստինի մի մասը: Նրանք ստեղծեցին Եդեսիայի կոմսությունը, Անտիոքի դքսությունը, Երուսաղեմի թագավորությունը, Տրիպոլիի կոմսությունը: Միջերկրականի արևելյան ափին ստեղծված խաչակրաց պետությունները գոյատևեցին մինչև 1291թ.:

1097թ. խաչակիրների մի մասը հասավ Կիլիկիա: Կոստանդին I-ը մեծ աջակցություն ցույց տվեց նրանց: Դրա դիմաց խաչակիրները նրան օգնեցին ընդարձակել իշխանու-

յան սահմաններն արևելքում: Կոստանդին I-ին փոխարինեց ավագ որդին՝ Թորոս I-ը (1100-1129թթ.): Նա 1104թ. գրավեց Սիս և Անարգաբա քաղաքները: Թորոսը սերտորեն համագործակցում էր Գող Վասիլի և խաչակիրների հետ:

Թորոս I-ին հաջորդեց եղբայրը՝ Լևոն I-ը (1129-1137թթ.), որը ձգտում էր ազատագրել Կիլիկիայի ծովեզրյա շրջանները: Այդ պայքարում հայ իշխանն ընդհարվեց թե՛ Բյուզանդիայի, թե՛ խաչակիրների հետ, որոնք տիրում էին Դաշտային Կիլիկիայի մեծ մասին: Հայկական բանակը բյուզանդացիներից ու խաչակիրներից ազատագրեց Դաշտային Կիլիկիան, և իշխանության սահմանները հասան Միջերկրականին: Լևոնը սելջուկների հաշվին տիրույթներն ընդարձակեց արևելքում և հյուսիս-արևելքում:

1137թ. Հովհաննես Կոմնենոս կայսրը ներխուժեց Կիլիկիա և համառ պայքարից հետո գրավեց այն: Նա Լևոն I-ին երկու որդիների՝ Ռուբենի և Թորոսի հետ գերելարեց Կ. Պոլիս: Դրանով Ռուբինյան իշխանությունը կանգնեց կործանման եզրին, երկիրը ենթարկվեց սելջուկների ու խաչակիրների ասպատակություններին: 1142թ. Լևոն I-ը և Ռուբենը Կ. Պոլսում մահացան, իսկ մյուս որդին՝ Թորոսը, փախավ գերությունից, վերադարձավ Կիլիկիա և կարողացավ վերականգնել Ռուբինյան իշխանությունը:

Թորոս II-ը (1145-1169թթ.) համախմբեց հայկական ուժերին և պայքար սկսեց բյուզանդացիներից երկիրն ազատելու համար: Նրան միացան եղբայրները՝ Ստեփանեն ու Մլեհը: Թորոսը թշնամուց ազատագրեց Լեռնային Կիլիկիան, ապա համագործակցելով խաչակիրների և սելջուկների հետ՝ բյուզանդացիներից ազատագրեց Դաշտային Կիլիկիան: Նա գրավեց Կիլիկիայի ներսում բյուզանդացիներին մնացած կամ նրանց հետ համագործակցող հայ իշխանների ամրոցները: Բյուզանդիան մի շարք պարտություններից հետո ստիպված էր հաշտվել անկախ հայկական իշխանության գոյության փաստի հետ, որը ձգվում էր Կոռիկոսից մինչև Սև լեռներ և միայն Քարուտ Կիլիկիայի արևմտյան շրջաններն էին մնացել օտարների ձեռքում:

Թորոսին հաջորդեց եղբայրը՝ Մլեհը (1169-1175թթ.): Նա փոփոխություններ մտցրեց Կիլիկիայի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ: Եթե նախկինում Ռուբինյանները

Բյուզանդիայի դեմ պայքարում համագործակցում էին քրիստոնյա խաչակիրների հետ, ապա Մլեհը սկսեց գործակցել Հալեպի մահմեդական սուլթանության հետ: Դրա նպատակն էր Կիլիկիայի արևմտյան շրջաններից վտարել բյուզանդացիներին, իսկ արևելյանից՝ խաչակիրներին:

Վերաշինվեց ու բարեկարգվեց Սիսը, որը 1173թ. դարձավ երկրի մայրաքաղաքը: Մլեհը, Հալեպի սուլթանի հետ միասին, դրամ հատեց, որով կարգավորեց երկրի դրամական շրջանառությունը: Մլեհի գործունեության հետևանքով Ռուբինյան իշխանությունն ավելի ամրապնդվեց ու զարգացավ: Նա կենտրոնական իշխանությունը ամրապնդեց, իսկ խոշոր իշխաններին ավելի մեծ կախվածության մեջ դրեց: Դա դժգոհություն էր առաջացնում խոշոր ֆեոդալների մոտ: Հայ հոգևորականներն իրենց հերթին դժգոհ էին Մլեհի համագործակցությունից մահմեդական պետությունների հետ: Այդ ամենը հանգեցրեց դավադրության, և 1175թ. Սիս քաղաքում Մլեհը սպանվեց:

Գահը ժառանգեց Մլեհի եղբայր Ստեփանեի որդին՝ Ռուբեն II-ը (1175-1187թթ.): Նա շարունակեց կենտրոնական իշխանության ամրապնդման և մահմեդական պետությունների հետ համագործակցելու գիծը: Ռուբեն II-ը ազատագրեց բյուզանդացիների ձեռքում մնացած Ադանան ու Տարսոնը:

Այսպիսով, մեկդարյա պայքարը Բյուզանդիայի դեմ ավարտվեց հայերի հաղթանակով, որի ընթացքում Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը ընդարձակվեց ու ամրապնդվեց:

29. ԼԵՎՈՆ II: ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Ռուբենին հաջորդեց եղբայրը՝ Լևոն II-ը (1187-1219թթ.), որը տաղանդավոր զորավար, դիվանագետ և պետական գործիչ էր: Նրա գործունեության շնորհիվ հայկական իշխանությունը բռնեց վերելքի ուղին և հռչակվեց թագավորություն:

XII դ. վերջին քառորդին էական փոփոխություններ էին կատարվել Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում: Եգիպտոսի Այուբյան սուլթանությունը Սալահեդդինի օրոք հասավ մեծ հզորության: Վերջինս 1187թ. գրավեց Երուսաղեմը,

Ասորիքի ու Միջագետքի մեծ մասը: Խաչակրաց իշխանությունները կորցրել էին նախկին հզորությունը և մեծ դժվարությամբ էին դիմակայում եգիպտոսի ու սելջուկների հարվածներին: Խոշոր ուժ էր Իկոնիայի սուլթանությունը, որն ընդարձակվել էր Բյուզանդիայի և հարևան էմիրությունների հաշվին: Բյուզանդիան ամփոփվել էր Մարմարա ու Սև ծովերի միջև և այլևս վտանգավոր չէր հայերի համար: Լևոնը կարողացավ ճիշտ օգտագործել ստեղծված միջազգային պայմանները:

1187թ. Կիլիկիա արշավեց Իկոնիայի բանակը, սակայն Ռավինի ճակատամարտում Լևոնը ջախջախեց թշնամուն: 1188թ. հայկական բանակը պատասխան արշավանք ձեռնարկեց դեպի Իկոնիա և գրավեց սահմանային մի շարք ամրոցներ: Հայկական իշխանության ընդարձակմանը օգնեց խաչակրաց երրորդ արշավանքը (1189-1192թթ.): Այն գլխավորում էին Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսը, Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը և Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II Օգոստոսը:

1190թ. գերմանական ասպետները հյուծված վիճակում հասան Կիլիկիա: Ֆրիդրիխը օգնություն խնդրեց Լևոնից, որի դիմաց խոստացավ թագ տալ նրան և ճանաչել Կիլիկիայի թագավոր: Սակայն Ֆրիդրիխը խեղդվեց Սելևկիա գետում, և Լևոնի թագադրության հարցը հետաձգվեց: Խաչակիրները մի քանի տարի անհաջող մարտեր մղեցին Երուսաղեմը հետ նվաճելու համար: Դրանք որոշ ժամանակով կասեցրին Սալահեդդինի արշավանքը Կիլիկիա: 1191թ. Լևոն II-ը և Ռիչարդ Առյուծասիրտը գրավեցին Կիպրոսը, որի թագը տրվեց Երուսաղեմի գահագուրկ թագավոր Գվիդոն Լուսինյանին: Լևոնը երկրի սահմաններում տիրույթներ տվեց հյուրընկալների և տաճարականների խաչակիր օրդեններին, որպեսզի նրանց օգտագործի օտար ներխուժումների դեմ: Խաչակրաց երրորդ արշավանքի ձախողումից հետո Սալահեդդինի դիրքերը տարածաշրջանում ավելի ամրապնդվեցին: 1193թ. նա արշավեց Կիլիկիա, բայց ճանապարհին մահացավ և հայկական իշխանությունն ազատվեց ավերածություններից:

Լևոնը մեծ կարևորություն էր տալիս Անտիոքի դքսությունը հայկական իշխանությանը ենթարկելու հարցին: 1193թ. Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ը Լևոնին հրավիրեց հանդիպել սահմանագլխին՝ իբր վեճերը լուծելու համար: Նա մտադիր էր

խաբեությամբ ձերբակալել հայ իշխանին: Լևոնը, տեղեկանալով այդ մասին, հանդիպումը նշանակեց Կաստին բերդում և ինքը ձերբակալեց դքսին: 1194թ. Երուսաղեմի թագավորի միջնորդությամբ Լևոնի ու Բոհեմունդի միջև կնքվեց հաշտություն. 1. Անտիոքի դքսությունը ճանաչեց Կիլիկիայի հայկական իշխանության ավագությունը, 2. Կիլիկիային վերադարձվեցին նրանից խլված տարածքներն ու բերդերը, 3. Բոհեմունդի որդին՝ Ռայմոնդը ամուսնացավ Ռուբեն II-ի դուստր Ալիծի հետ, և նրանց որդուն էր անցնելու Անտիոքի գահը:

Այսպիսով, Լևոն II-ի կառավարման առաջին տասնամյակում Կիլիկիան դարձավ բավական հզոր պետություն, որի հետ ստիպված էին հաշվի նստել հարևանները: Ռուբինյան իշխանության տարածքը հարավ-արևելքում հասել էր Ալեքսանդրետի շրջանին, հյուսիս-արևելքում՝ Մարաշին ու Եփրատին, հյուսիսում՝ Յերակիա քաղաքին, արևմուտքում՝ Ադալիա նավահանգստին: Այսպիսով, Լևոնի իշխանության սահմանները դուրս եկան Կիլիկիայի աշխարհագրական սահմաններից: Ռուբինյան իշխանությունը հասել էր հզորության գագաթնակետին և ժամանակն էր պետական ավելի բարձր կարգավիճակ ապահովել նրա համար:

Լևոնին թագ ուղարկելու նպատակով բանակցություններ սկսվեցին Յոննեական սրբազան կայսրության (Գերմանիայի) կայսր Յենրիխ VI-ի հետ: Յոննի պապի միջնորդությամբ 1197թ. Յենրիխը թագ ուղարկեց: Լևոնին թագ ուղարկեց նաև Բյուզանդիայի Ալեքսեյ III կայսրը: 1198թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում Լևոն II-ը թագադրվեց Կիլիկիայի հայոց թագավոր: Այդ քայլը ժամանակակիցների կողմից ընկալվեց որպես հայոց կորսված պետականության վերականգնում: Թագադրման արարողությանը տրվեց հանդիսավոր բնույթ, և տոնախմբությունները շարունակվեցին մի քանի օր:

Լևոն II-ը որոշեց հնազանդեցնել դեռևս անկախ մնացած Լամբրոնի Յեթումյան իշխաններին: 1202թ. Լևոնը Լամբրոնի տեր Յեթումին հրավիրեց Տարսոն, բանտարկեց և գրավեց Լամբրոնը, որը դարձրեց արքունի կալվածք:

Լևոնը համառ պայքար մղեց Անտիոքի դքսությունը Կիլիկիային միացնելու համար: Հայկական զորքը մի քանի անգամ գահը հանձնեց Ռուբեն-Ռայմոնդին՝ Ռայմոնդի և Ալիծի որդուն, որին Լևոնը 1209թ. հայտարարեց նաև Կիլիկիայի գա-

հաժառանգ: Դրանով նա նպատակ ուներ միավորել երկու քրիստոնյա պետությունները: Սակայն Ռուբեն-Ռայմոնդը ապիկար գործիչ դուրս եկավ և չկարողացավ պահել զահը: Հուսախաբված Լևոնը նրան գրկեց նաև Կիլիկիայի գահից և իր ժառանգ հայտարարեց դստերը՝ Ջաբելին:

Լևոնը սահմանների պաշտպանության համար կարևոր լեռնանցքերում կառուցեց ամրություններ և տեղակայեց սահմանապահ զորքեր: Նա ստեղծեց մշտական բանակ և հաստատեց ռազմական ուսուցման որոշակի համակարգ: Լևոնի օրոք կազմակերպվեց ու օրինական տեսք ստացավ արքունիքը: Նա մեծ ուշադրություն էր դարձնում տնտեսական կյանքի զարգացմանը: Կարգի բերեց նավահանգիստները և ապահովեց ծովահենների հարձակումներից, ստեղծեց առևտրական նավատորմ, կանոնավորեց ցամաքային ճանապարհները, հատեց ոսկյա և արծաթյա դրամներ: Արիեստագործության ու առևտրի զարգացմանը նպաստելու համար առևտրական պայմանագրեր ստորագրեց Վենետիկի, Ջենովայի և այլ պետությունների հետ:

Լևոնը ուշադրություն էր դարձնում մշակութային կյանքի զարգացմանը: Բոլոր վանքերին կից բացեց դպրոցներ, գիտության և արվեստի մարդկանց հրավիրում էր արքունիք, պայմաններ ստեղծում նրանց ազատ գործունեության համար: Այս շրջանում ծաղկում ապրեցին մատենագրությունն ու մանրանկարչությունը:

Ժամանակակիցները բարձր են գնահատել Լևոն II-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը, ընդգծել նրա անձնական քաջությունն ու պետական գործչի հեռատեսությունը: Լևոն II Մեծագործը մահացավ 1219թ. մայիսի 2-ին, հետնորդներին թողնելով բարգավաճ ու վերելք ապրող հզոր պետություն:

30. ՀԵԹՈՒՄՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ: ՀԵԹՈՒՄ I

Լևոն II-ի մահից հետո Կիլիկիայում գահակալական պայքար սկսվեց: Լևոնը որդի չուներ և 1217թ. գահաժառանգ նշանակեց կրտսեր դստերը՝ Ջաբելին, որի խնամակալ դարձավ Լամբրոնի տեր Կոստանդին Գունդստաբլը: Կիլիկիայի

գահի համար պայքարում էին հարևան խաչակրաց իշխանությունները: 1222թ. Կոստանդին Գունդստաբլը հրավիրեց խոշոր իշխանների և բարձրաստիճան հոգևորականների ժողով: Որոշվեց Ջաբելին ամուսնացնել Անտիոքի դուքս Բոհեմունդ Միակնանու որդու՝ Ֆիլիպի հետ: Դրանով դաշնակցային հարաբերություններ կհաստատվեին Անտիոքի հետ, իսկ հետագայում հնարավոր կդառնար Կիլիկիային միավորել Անտիոքը: Ֆիլիպը պարտավորվեց հետևել հայկական սովորույթներին, հավատարիմ մնալ հայ եկեղեցու ծեսերին, պահպանել հայ իշխանների իրավունքները:

Սակայն շուտով Ֆիլիպը փորձեց հայ իշխաններին հեռացնել պաշտոններից և նրանց փոխարինել խաչակիրներով, իսկ արքունի գանձերը ուղարկեց Անտիոք: Հայ իշխանները 1224թ. գահազրկեցին Ֆիլիպին և բանտարկեցին:

Իշխանների խորհուրդը երկրի պայլ կարգեց Կոստանդինին: Այսպիսով, նա դարձավ ոչ միայն Ջաբելի, այլև ամբողջ թագավորության խնամակալ և փաստական կառավարիչ: Թագավորական գահը մոտ երկու տարի մնաց թափուր: 1226թ. նոր իշխանաժողով հրավիրվեց: Իշխանները համաձայնեցին Ջաբելին ամուսնացնել Կոստանդինի որդու՝ Հեթումի հետ և վերջինիս հռչակել Հայոց թագավոր:

1226թ. Հեթում I-ը Տարսոն քաղաքում հանդիսավոր պայմաններում հռչակվեց Կիլիկիայի հայոց թագավոր (1226-1269թթ.) և հիմք դրեց Հեթումյան արքայատոհմին: Վերջ գտավ Ռուբինյանների և Հեթումյանների դարավոր պայքարը, քանի որ Հեթումի ու Ջաբելի ամուսնությամբ այդ իշխանական տները միավորվեցին: Հեթում I-ը բարձր պաշտոնները հանձնեց հարազատներին: Կոստանդինը նշանակվեց թագավորահայր և ավագ պարոն, եղբայրներից Սմբատը դարձավ գունդստաբլ, Լևոնը՝ մարաջախտ և իշխանաց իշխան, Օշինը՝ պայլ, Բարսեղը՝ Դրազարկի վանահայր և Սսի արքեպիսկոպոս: Նա փորձեց սիրաշահել նաև մյուս խոշոր իշխաններին: Այսպիսով, վերջ տրվեց հայ իշխանական տների երկպառակություններին և լատինասերների աշխուժացմանը: Կիլիկիայում սկսվեց համեմատաբար երկարատև խաղաղության շրջան, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց երկրի տնտեսական ու մշակութային վերելքի համար:

Յեթում I-ի օրոք Մերձավոր Արևելք ներխուժեցին մոնղոլական ցեղերը: Գրաված երկրները կողոպտելով ու ավերակների վերածելով, մոնղոլները հասան Փ. Ասիա, ուր ընդհարվեցին Իկոնիայի սուլթանության հետ: Կիլիկիայի առջև խնդիր էր դրված օգնել սելջուկներին կամ համագործակցել մոնղոլների հետ: Յեթումը խոհեմություն ունեցավ մերժելու Իկոնիայի սուլթանի օգնության խնդրանքը և բանակցություններ սկսեց մոնղոլների հետ: 1243թ. Կոստանդին թագավորահոր գլխավորությամբ պատվիրակություն մեկնեց մոնղոլ զորավար Բաչուի մոտ: Խաչենի իշխան Չասան-Ջալալի միջնորդությամբ դաշինք կնքվեց: Բաչուի պահանջով Յեթումը պետք է անձամբ մեկներ մոնղոլների մեծ խանի մոտ և կնքեր վերջնական պայմանագիր: 1246թ. Սմբատ Գունդստաբլը մեկնեց մոնղոլների մայրաքաղաք Կարակորում և համաձայնեցրեց Չայոց արքայի այցելության պայմանները: Յեթումի այցելությունը հետաձգվեց, քանի որ Կիլիկիան պատերազմում էր Իկոնիայի հետ, մոնղոլների մոտ գահակալական կռիվներ էին, իսկ 1252թ. մահացավ Ջաբել թագուհին:

1254թ. գարնանը Յեթում I-ը մեկնեց Չայաստան, տեսակցեց նշանավոր հայ իշխանների հետ, ապա մեկնեց Կարակորում: Այստեղ հայոց արքան և մոնղոլների տիրակալ Մանգու խանը դաշինք կնքեցին: Կողմերը պարտավոր էին իրար օգնել պատերազմների ժամանակ, առանց Չայոց թագավորի համաձայնության մոնղոլական զորքերն ու պաշտոնյաները չէին մտնելու Կիլիկիա: Այն տարածքները, որ նախկինում Կիլիկիային էին պատկանել, իսկ հետո գրավել էին ուրիշները, ապա՝ մոնղոլները, վերադարձվելու էին Կիլիկիային: Մոնղոլները թեթևացնելու էին բուն Չայաստանից զանձվող հարկերը, հայկական եկեղեցիները ազատվում էին տուրքերից: Այդ պայմանագիրը ապահովում էր Կիլիկիայի ինքնուրույն գոյությունը, զերծ էր պահում մոնղոլական ներխուժումից, հայ առևտրականները հնարավորություն էին ստանում ազատորեն առևտուր անել մոնղոլական հսկայածավալ կայսրության տարածքում:

1256թ. Յեթումը վերադարձավ Սիս և ստանձնեց երկրի կառավարումը: Չայկական բանակը մի շարք հաջող արշավանքներ կազմակերպեց Իկոնիայի և թուրքմենների դեմ, մասնակցեց մոնղոլների արշավանքին դեպի Ասորիք ու

Պաղեստին: Այդ ամենի շնորհիվ Կիլիկիային միացվեցին Մարաշը, Այնթապը, Զալեայի ու Կապադովկիայի մի շարք գավառներ: Սակայն մոնղոլներին այդպես էլ չհաջողվեց գրավել ամբողջ Ասորիքը, քանի որ Եգիպտոսի սուլթանությունը կասեցրեց նրանց առաջընթացը:

1265թ. մոնղոլների մոտ սկսվեց գահակալական պայքար: Օգտվելով դրանից, Եգիպտացիները արշավեցին Կիլիկիա: Հեթումը մեկնեց մոնղոլներից օգնություն խնդրելու, իսկ բանակի հրամանատարությունը հանձնեց որդիներին՝ Լևոնին ու Թորոսին: 1266թ. Մառիի ճակատամարտում Եգիպտական 30.000-ոց բանակը հաղթեց հայկական 15.000-ոց բանակին: Արքայորդիներից Թորոսը զոհվեց, իսկ Լևոնը գերվեց: Թշնամին ասպատակեց երկիրը, գրավեց ու կողոպտեց Սիսը: Հայերի պարտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 50 իշխաններից միայն 12-ը զորք ուղարկեցին թշնամու դեմ: Հեթում I-ը մինչև 1268թ. երկիրն ամբողջությամբ մաքրեց թշնամիներից: Հաշտություն կնքելու և Լևոնին ազատելու համար Հեթումը Եգիպտոսին զիջեց մի քանի բերդեր: 1268թ. Եգիպտոսի հետ հաշտություն կնքվեց:

1269թ. Հեթում I-ը Տարսուն հրավիրեց հայ իշխաններին, հրաժարվեց գահից և թագադրեց որդուն՝ Լևոն III-ին, իսկ ինքը մտավ վանք, ուր և մահացավ 1270թ.:

31. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

Լևոն III-ի (1269-1289թթ.) օրոք բավական բարդ վիճակ ստեղծվեց Կիլիկիայի համար: Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունները մեկը մյուսի հետևից նվաճվեցին Եգիպտոսի սուլթանության կողմից, իսկ մոնղոլներն այլևս նախկին ուժը չունեին: Կիլիկիան Եգիպտոսի դեմ պայքարում այլևս չէր կարող հույս դնել մոնղոլների վրա և հայացքն ուղղեց դեպի արևմուտք: Լևոն III-ը խաչակրաց արշավանք կազմակերպելու խնդրանքով բազմիցս դիմեց Հռոմի պապին, սակայն դրա միակ հետևանքը եղավ այն, որ Եգիպտոսը ավելի հաճախակի հարձակումներ սկսեց Կիլիկիայի դեմ: Ի վերջո, Եվրոպայից ու մոնղոլներից օգնություն չստանալով, 1285թ. Լևոն III-ը Եգիպտոսի հետ հաշտություն կնքեց:

Լևոն III-ին հաջորդեց որդին՝ Յեթում II-ը (1289-1305թթ.): Եգիպտոսը 1289-1291թթ. գրավեց վերջին խաչակրաց իշխանությունները և արշավանքներ սկսեց Կիլիկիայի դեմ: 1292թ. եգիպտական զորքերը գրավեցին Յոննկա բերդաքաղաքը, գերեցին Չայոց կաթողիկոսին: Դրանից հետո կաթողիկոսի նստավայրը տեղափոխվեց Սիս:

1299թ. մոնղոլական Ղազան խանը արշավանք ձեռնարկեց դեպի Սիրիա: Յեթումը միացավ մոնղոլներին և հետ գրավեց Եգիպտոսի զավթած տարածքները: 1305թ. Եգիպտոսի մամլուքները արշավեցին Կիլիկիա, բայց ծանր պարտություն կրեցին հայկական բանակից և հաշտություն կնքեցին: 1305թ. Յեթումը հրաժարվեց գահից, որը հանձնեց եղբորորդուն՝ Լևոն IV-ին (1305-1307թթ.), իսկ ինքը ստանձնեց թագավորահոր տիտղոսը:

Լևոն IV-ը ևս օգնություն խնդրեց Եվրոպայից, որի դիմաց Յոննի պապը պահանջեց, որ Չայոց եկեղեցին ենթարկվի կաթոլիկականին: 1307թ. Սսի եկեղեցական ժողովը թագավորի ճնշման տակ հավանություն տվեց պապի առաջարկներին: Սակայն դա չիրագործվեց, քանի որ ժողովրդի և հոգևորականության մեծ մասը դեմ էին դրան: Երկրում առաջ եկան երկու իրարամերժ խմբավորումներ՝ ունիթորներ (եկեղեցիների միավորման՝ Ունիայի կողմնակիցներ) և հակաունիթորներ, որով խախտվեց երկրի քաղաքական միասնությունը: Սսի ժողովի հետևանքով ավելի սրվեցին հարաբերությունները հարևան մահմեդական պետությունների հետ: 1307թ. Կիլիկիայում գտնվող մոնղոլական զորքի հրամանատար Փիլարդունը Անարգաբա հրավիրեց Լևոն IV-ին, Յեթում թագավորահորը, 40 իշխանների և սպանեց:

Նոր թագավոր Օշինը (1308-1320թթ.) Ադանայում 1309 և 1316թթ. նոր եկեղեցական ժողովներ հրավիրեց, որոնք վերահաստատեցին Սսի ժողովի որոշումները: Դա բողոքների ու ժողովրդական ցույցերի պատճառ դարձավ: Եկեղեցիների միության կողմնակիցները հույս ունեին, որ դրանով կստանան Արևմուտքի օգնությունը, սակայն պապերը խոստումներից այն կողմ չանցան: Խախտվեց երկրի ներքին միասնությունն ու անդորրը, իսկ հարևան մահմեդական երկրները ավելի թշնամացան: Այսպիսով, եկեղեցիների միության հարցը ոչ միայն օգուտ չտվեց երկրին, այլև ավելի թուլացրեց այն:

Օշինին հաջորդեց որդին՝ Լևոն V-ը (1320-1342թթ.): Նա ևս փորձում էր օգնություն ստանալ Եվրոպայից, որը ավելի սրեց հարաբերությունները հարևանների հետ: 1320-1323թթ. Կիլիկիայի դեմ արշավեցին Եգիպտոսի և նրա դաշնակիցների զորքերը: Թշնամին գրավեց բազմաթիվ քաղաքներ: 1323թ. Կահիրեում բավական ծանր հաշտության պայմանագիր կնքվեց: Կիլիկիան Եգիպտոսին էր վճարելու տարեկան 1.200.000 արծաթ դիրհեմ, Այաս նավահանգստի եկամտի և աղի վաճառքից ստացված հասույթների կեսը:

Այդ պարտությունից ու ծանր պայմանագրից Լևոնը դասեր չքաղեց և շարունակեց դիմել Հռոմի պապին և Ֆրանսիայի թագավորին՝ խաչակրաց արշավանք կազմակերպելու կոչով: Սակայն 1337թ. Եվրոպայում սկսված Հարյուրամյա պատերազմը անհնար դարձրեց նոր խաչակրաց արշավանքի կազմակերպումը: Լևոնի վարած անհեռատես քաղաքականությունը հանգեցրեց 1335-1337թթ. նոր պատերազմին ու պարտությանը: 1337թ. չափազանց ծանր պայմաններով կնքվեց հաշտություն: Եգիպտոսին անցան Սև լեռներից և Զիհան գետից հարավ-արևելք ընկած շրջանները և Այաս նավահանգիստը: Այդ պայմանագրից հետո Կիլիկիայի թագավորությունը սկսեց հետզհետե թուլանալ:

Արքունիքում մեծ ազդեցություն ձեռք բերած լատինական տարրերը անբավարար էին համարում Լևոնի քայլերը եկեղեցիները միավորելու, Արևմուտքի հետ համագործակցելու հարցում և 1342թ. կազմակերպեցին արքայի սպանությունը: Լևոն V-ի մահով Կիլիկիայում վերացավ Հեթումյան արքայատոհմը, որն իշխեց 1226-1342թթ.:

Լևոն V Հեթումյանի սպանությունից հետո 1343թ. լատինական տարրերը գահը հանձնեցին Գվիդոն Լուսինյանին, որը հայկական ծեսով օծվեց Կիլիկիայի թագավոր՝ ստանալով Կոստանդին II անունը: Նա վարում էր ընդգծված արևմտամետ քաղաքականությունը: Դրա հետևանքով թուրքմենները և եգիպտական մամլուքները ասպատակեցին երկիրը: Նա փորձեց հայոց եկեղեցին միացնել կաթոլիկականին և արքունիքում վերացնել հայոց լեզուն: 1344թ. հայ իշխանները Ադանայում սպանեցին Կոստանդինին և 300 խաչակիր ասպետներին:

Գահ բարձրացավ Յեթումյանների ազգական Կոստանդին III-ը (1345-1362թթ.): Նա վերականգնեց Կիլիկիայի մինչև 1337թ. եղած սահմանները: 1361թ. Սսում հրավիրեց նոր եկեղեցական ժողով, որը դատապարտեց եկեղեցիների միության մասին նախորդ ժողովների որոշումները և Յոնի պապերի վարքագիծը: Դրանով վերջնականապես ձախողվեց հայերին կաթոլիկացնելու պապերի փորձերը:

Կոստանդին III-ին փոխարինեց հորեղբոր որդին՝ Կոստանդին IV-ը (1363-1373թթ.): Նա փորձեց բարելավել հարաբերությունները Եգիպտոսի հետ և դեմ էր Եվրոպայի հետ բանակցություններին: Դրանից դժգոհ լատինամետ տարրերը 1373թ. կազմակերպեցին Կոստանդինի սպանությունը և գահին տիրելու հրավիրեցին Կիպրոսում գտնվող Լևոն Լուսինյանին, որը 1374թ. հասավ Սիս և օծվեց թագավոր: Նա օգնության խնդրանքով դիմեց Եվրոպային՝ խոստանալով հայերի դարձնել կաթոլիկ:

1375թ. հունվարին եգիպտացիները պաշարեցին Սիսը: Սննդամթերքի և ռազմամթերքի սպառվելուց հետո Լևոն VI-ը ստիպված էր անձնատուր լինել: 1375թ. ապրիլի 16-ին մանուկները գրավեցին Սիսը, որով կործանվեց Կիլիկիայի հայոց թագավորությունը:

Լևոն VI-ը գերեվարվեց, ապա 1382թ. Կաստիլիայի ու Արագոնի թագավորների միջնորդությամբ ազատվեց ու մեկնեց Եվրոպա: Կաստիլիայի թագավորը Լևոնին հանձնեց Մադրիդ, Անտուխար և Վիլլառեալ քաղաքները: Լևոնը մեկ տասնամյակ շարունակ փորձում էր նոր խաչակրաց արշավանք կազմակերպել և ազատագրել Կիլիկիան, բայց նրա ջանքերն ավարտվեցին անարդյունք: Լևոն Լուսինյանը մահացավ 1393թ. և թաղվեց Փարիզի Սեն Դենի արքայական գերեզմանատանը:

1375թ. Սսի անկումից հետո մոտ կես դար Լեռնային Կիլիկիայում հայերը կարողացան պահպանել ինքնուրույնությունը և ոմանք հռչակվում էին թագավոր: Սակայն նեղվելով մանուկների ու թուրքմենների դեմ մղվող անընդմեջ պատերազմներից, հայ իշխանների մեծ մասը ժամանակի ընթացքում ստիպված էր հեռանալ Եվրոպա:

Կիլիկիայի թագավորությունը կործանվեց, քանի որ հայտնվել էր մահմեդական թշնամի պետությունների օղա-

կում: Արևմուտքից կարամանցի թուրքմենները, հյուսիս-արևելքից թաթարները, հարավ-արևելքից Եգիպտոսի մամլուքները անընդհատ հարձակվում էին երկրի վրա: Հարավում Միջերկրականի ծովահեններն էին խոչնդոտում Կիլիկիայի առևտրին ու հաղորդակցությանը: Նման ծանր վիճակում հայտնված երկրին անհրաժեշտ էր ամբողջությամբ համախմբել ներքին ուժերը և փորձել լեզու գտնել հարևանների հետ: Սակայն հայոց թագավորները, սեփական ուժի վրա հենվելու փոխարեն, հույս դրեցին Արևմուտքի օգնության վրա, որով ավելի գրգռեցին հարևաններին, իսկ եկեղեցիների միության հարցը առաջ քաշելով՝ պառակտեցին Կիլիկիայի ներքին ուժերը: Նման պայմաններում հայոց թագավորությունը, բնականաբար, չէր կարող երկար գոյատևել:

Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը կորցրեց պետականության վերջին բեկորը և դարեր շարունակ մնաց օտար նվաճողների լծի տակ, որը չափազանց բացասական հետևանքներ ունեցավ նրա տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացման համար:

32. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ

Կիլիկիայի պետական կառավարման համակարգի ձևավորման վրա իրենց ազդեցությունն էին թողել հայկական, բյուզանդական, եվրոպական օրենքները, բարքերն ու սովորույթները: Գտնվելով Արևելքի ու Արևմուտքի քաղաքակրթությունների խաչաձևման կենտրոնում, Կիլիկիայում ձևավորվեցին քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային յուրատեսակ հարաբերություններ:

Պետության գլուխ կանգնած էր թագավորը: Նա էր պատերազմ հայտարարում, դաշինք կնքում, օրենքներ հրապարակում, դրամ հատում, կառուցում քաղաքներ ու ամրոցներ: Թագավորից վասալական կախման մեջ էին բերդատեր պարոնները, որոնց թիվը անցնում էր 50-ից: Հայրենատեր բերդատեր պարոնները իրենց ամրոցներին տիրում էին ժառանգաբար, իսկ նրանց կալվածքը կոչվում էր հայրենիք: Ոչ հայրենատեր բերդատեր պարոնները կալվածքը ստանում էին թագավորից՝ ծառայության դիմաց: Նման պարզևական տի-

րույթները թագավորի համաձայնությամբ անցնում էին հորից որդուն, սակայն ցանկացած ժամանակ թագավորը կարող էր այդ կալվածքը հետ վերցնել: Հայրենատեր պարոնի կալվածքը թագավորը կարող էր խլել միայն ծանր հանցանքի դեպքում, այն էլ արքունի դիվանի որոշմամբ: Բերդատեր պարոնները պարտավոր էին պատերազմի ժամանակ զորք տրամադրել թագավորին, հարկ վճարել արքունիքին, մասնակցել արքունի դիվանի նիստերին, վարել որևէ պաշտոն:

Մանր ազնվականները կոչվում էին ծիավորներ և ենթակա էին թագավորին կամ որևէ բերդատեր պարոնի, որից կալվածք էին ստանում: Վասալներին Կիլիկիայում կոչում էին լիճ, իսկ նրանց ծառայությունը սենյորի հանդեպ՝ լճություն:

Գյուղացիների մեծ մասը ճորտացված էին և կոչվում էին պարիկոս: Գյուղացիների մի մասը շարունակում էր անձնապես ազատ մնալ և միայն հարկ էր տալիս ֆեոդալին: Արհեստավորները և առևտրականները անձնապես ազատ էին, բայց զրկված էին քաղաքական իրավունքներից ու համարվում էին անազատներ:

Երկրի կառավարումն իրականացնում էր արքունիքը, ուր կազմավորվեցին մի շարք գործակալություններ և Արքունի կամ Վերին ատյանը: Վերջինս թագավորի խորհրդատու մարմինն էր: Արքունի ատյանի անդամները բերդատեր պարոններն էին, իսկ նիստերը նախագահում էր թագավորը: Այն քննարկում էր երկրի առջև ծառացած կարևորագույն խնդիրները:

Կային բազմաթիվ գործակալություններ, որոնք ղեկավարում էին երկրի կյանքի տարբեր բնագավառներ: Բոլոր պաշտոնները նշանակովի էին և ժառանգական չէին:

1. Խնամակալության գործակալությունը կամ պայլությունը ղեկավարում էր պայլը: Նա թագավորի առաջին խորհրդականն էր, թագաժառանգի կամ անչափահաս թագավորի խնամակալը: Պայլի պաշտոնը տրվում էր ամենաազդեցիկ իշխաններից որևէ մեկին:

2. Սպարապետը կոչվում էր գունդստաբլ, իսկ հեծելազորի հրամանատարը՝ սպասալար: Համբարակային կամ ինտենդանտությունը գործակալությունը ղեկավարում էր մարաջախտը: Նրա խնդիրն էր ռազմական հանդերձանքով և պարենով ապահովել բանակին:

3. Թագադիրը թագադրության ժամանակ թագ էր դնում թագավորի գլխին, արքունի հանդեսների արարողապետն էր, հետևում էր արքունիքում սահմանված կարգի պահպանմանը:

4. Ջանցլերը (ատենադպիր) իրականացնում էր արքունի գրագրությունը, կատարում դեսպանական հանձնարարություններ: Այդ պաշտոնը հիմնականում տրվում էր Սսի արքեպիսկոպոսին:

5. Սեղանապետությունը գլխավորում էր սենեսկալը: Նա էր տնօրինում արքունի եկամուտներն ու ծախսերը, հոգում էր կրի տնտեսական կյանքի մասին, հսկում թագավորական տանը: Սենեսկալին էր ենթարկվում արքունի հանդերձապետը կամ սենեկապետը, որը կոչվում էր ջամբուլայ: Վերջինս պահպանում էր թագավորի զգեստները, դրոշը, գանձը, կազմակերպում էր հանդեսներ:

6. Երկրի ֆինանսները կարգավորում էր մաքսապետություն գործակալությունը, որը ղեկավարում էր պոռոքսիմոսը:

Կիլիկիայում գործում էին երեք կարգի դատարաններ: Արքունի դատարանը կոչվում էր Վերին կամ Մեծ դարպաս: Այն գործում էր Արքունի ատյանին կից և քննարկվում էր խոշոր իշխանների միջև եղած վեճերը, պետական ծանր հանցագործությունները: Երկրորդ աստիճանի դատարանը Սսի արքեպիսկոպոսական ատյանն էր, ուր քննում էին հոգևորականներին վերաբերող հարցերը, այլադավանների միջև ծագած վեճերը: Այն ղեկավարում էր Սսի արքեպիսկոպոսը: Երրորդ կարգի դատարանները Ստորին կամ Փոքր ատյաններն էին, որոնք նաև կոչվում էին բուրջես: Դրանք քննում էին հասարակ քաղաքացիների միջև ծագած վեճերն ու հանցանքները: Դատավորները կոչվում էին դիվանբաշի, ատենակալները՝ դիվնցիք:

Կիլիկիայի հայկական թագավորությունն ուներ բավական կազմակերպված և մարտունակ բանակ, որի թիվը պատերազմների ժամանակ հաճախ հասնում էր 100.000-ի: Հայկական բանակը շատ բաներ ընդօրինակել էր խաչակիրներից: Ազնվականները հրապարակային քննություն էին տալիս ձիավորի՝ ասպետի կոչման արժանանալու համար: Հայ զինվորները հազնվում էին խաչակիրների նման: Սահմանվեց

ռազմական ուսուցում, զինվորական համազգեստ ու աստիճան:

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՎ 16-17-ՐԴ ԴԴ.

XVդ. վերջին Իրանում բավական հզորացել էին Արդեբիլում իշխող Սեֆյան շեյխերը, որոնք համարվում էին իսլամի շիա դավանանքի առաջնորդ: Նրանց կոչում էին ղզլբաշներ կամ սեֆիներ: 1502թ. Սեֆյան Իսմայիլը գրավեց Թավրիզը և հռչակվեց Շահնշահ: Այսպիսով, Շահ Իսմայիլը (1501-1524թթ.) ստեղծեց ընդարձակ ու հզոր Սեֆյան պետությունը, որի մեջ մտան Իրանը, Ատրպատականը, Իրաքը, Հայաստանը, Անդրկովկասը: Այս շրջանում մեծ տարածում ստացավ շիիզմը: Շահ Իսմայիլը բավական լավ էր տրամադրված հայերի նկատմամբ, քանի որ փոքր տարիքում թշնամիներից փրկվելու համար ապաստանել էր Աղթամարում, ապա՝ Ղարաբաղում:

Նույն շրջանում մեծ հզորության հասավ դեռևս 1299թ. ստեղծված Օսմանյան Թուրքիան, որը XVդ. երկրորդ կեսին գրավել էր Հայաստանի արևմտյան մի քանի շրջաններ:

1512թ. պատերազմ սկսվեց Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև: Այն փոփոխակի հաջողություններով շարունակվեց մի քանի տասնամյակ: Դրա գլխավոր թատերաբեմը Հայաստանն էր, որը ոտնակոխ էր լինում ու ավերվում հակառակորդ բանակների կողմից: 1555թ. Ամասիայում ստորագրվեց հաշտության պայմանագիր, որով առաջին անգամ Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Իրանի միջև: Արևմտյան Հայաստանն անցավ թուրքերին, արևելյանը՝ Իրանին:

Թուրքերը 1578թ. վերսկսեցին պատերազմը և գրավեցին ամբողջ Հայաստանը, Անդրկովկասը և Ատրպատականը: Շահ Աբաս I-ը (1587-1629թթ.) հաշվի առնելով երկրի ճգնաժամային վիճակը 1590թ. Կ. Պոլսում կնքեց հաշտություն, որով թուրքերին զիջեց նրանց գրաված բոլոր տարածքները:

Հաշտություն կնքելուց հետո շահ Աբասը ձեռնամուխ եղավ Իրանի հզորության վերականգնմանը: Նա ընկճեց կենտրոնախույս ուժերին, ստեղծեց կենտրոնացված պետա-

կան ապարատ, վերականգնեց քայքայված տնտեսությունը, բանակը վերակառուցեց, զինեց հրետանիով ու մարզեց անգլիացի ռազմական մասնագետների օգնությամբ:

1603թ. թուրք-իրանական պատերազմը վերսկսվեց: Շահ Աբասը գրավեց Թավրիզը, Նախիջևանը, Ագուլիսը, Ջուղան: Տեղի հայ բնակչությունը խանդավառությամբ ընդունեց նրան: Ջուղայի հայերը, որոնք աչքի էին ընկնում միջազգային առևտրում ունեցած խոշոր դերակատարությամբ, ճոխ ընդունելություն կազմակերպեցին շահի համար:

1604թ. ամռանը պարսիկները գրավեցին Երևանը: 1604թ. աշնանը սուլթանը պարսիկների դեմ ուղարկեց խոշոր բանակ: Շահ Աբասը, խուսափելով վճռորոշ ճակատամարտից, որոշեց նահանջել և ամայացնել թուրքերի ճանապարհին գտնվող Կարսից մինչև Նախիջևան ընկած տարածքները, բնակչությանը քշել Պարսկաստան: Բնակչության տեղահանությունն իրականացվեց հապճեպորեն ու դաժան մեթոդներով, բռնագաղթեցրին ավելի քան 300.000 հայերի: Հազարավոր մարդիկ զոհվեցին ճանապարհին կամ խեղդվեցին Արաքսում: Ջուղայի հայերին շահը բնակեցրեց մայրաքաղաք Սպահանի մոտ, ուր ստեղծվեց Նոր Ջուղա ավանը: Հայ արհեստավորներին ու առևտրականներին բնակեցրին Պարսկաստանի քաղաքներում, գյուղացիներին՝ երկրի հյուսիսում ու հարավում՝ շերմապահությունն ու այգեգործությունը զարգացնելու նպատակով:

Պատերազմը փոփոխակի հաջողություններով շարունակվեց մինչև 1639թ.: Այդ ընթացքում ավերվում էր Հայաստանի տարածքը, սպանվում ու գերվում էին հայ բնակիչները: 1639թ. Կասրե Շիրինում Թուրքիան ու Իրանը կնքեցին հաշտության պայմանագիր, որով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց նրանց միջև: Սահմանագիծը հյուսիսում սկսվում էր Ախուրյանի ակունքներից, նրա հոսանքով իջնում Արաքս, այն կտրելով հասնում Հայկական պարին, ապա Մեծ ու Փոքր Մասիսների միջով թեքվում հարավ և ուղիղ գծով իջնում Միջագետք: Այդ բաժանումը պահպանվեց մինչև XIX դ. սկիզբը:

Արևելյան Հայաստանը գրավելուց հետո պարսից շահերը փորձեցին այնտեղ հաստատել կայուն վարչական համակարգ: Ստեղծվեցին մի շարք խանություններ, որոնց գլուխ

կանգնեցին շահի նշանակած խաները: Վերջիններս անսահմանափակ իշխանություն ունեին իրենց տիրույթներում: Արևելյան Հայաստանը մտավ Երևանի, Նախիջևանի, Մակուի, Գանձակի խանությունների և վրաց թագավորության կազմի մեջ: Գեղարքունիքում, Արցախում, Սյունիքում և Ղարադաղում որպես առանձին վարչական միավորներ կազմավորվեցին մի շարք մելիքություններ: Մելիքները հայ իշխանական տների մնացորդներն էին:

Երկրում տիրող սամառձակություններն ու կամայականությունները, ազգային ու կրոնական հալածանքները հայերի համար ստեղծել էին չափազանց ծանր վիճակ, տնտեսական ու մշակութային կյանքը գրեթե կանգ էր առել:

Օսմանյան կայսրությանն անցած Արևմտյան Հայաստանում կազմավորված վարչական միավորները կոչվում էին վիլայեթներ կամ փաշայություններ: XVIIդ. ստեղծվեցին Երզրումի, Վանի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի, Դիարբեքիի վիլայեթները: Փաշայությունը կառավարում էր սուլթանի նշանակած վալին կամ փաշան, որը հանդիսանում էր նաև տվյալ նահանգի զորքերի հրամանատարը: Կիլիկիան գտնվում էր Մարաշի և Ադանայի վիլայեթների կազմում: Հայկական իշխանություններ էին պահպանվել Սասունում, Մոկսում, Շատախում, ճապաղջուրում, Խնուսում, Համշենում, Զեյթունում և այլ վայրերում:

Օսմանյան կայսրությունը հետամնաց ռազմա-ֆեոդալական երկիր էր, ուր ամեն քայլափոխի ոտնահարում էին հայերի իրավունքները: Այդ երկրում խիստ արատավոր էր պաշտոնյաների նշանակման կարգը, որից բխում էին տիրող անօրինականություններն ու բռնությունները: Հայերը համարվում էին իրավագուրկ ռայա, որին ցանկացած մահմեդական կարող էր անպատիժ կերպով սպանել կամ թալանել: Հարկերը հիմնականում հավաքում էին ավելի շատ, քան սահմանված էր: Հայ բնակչության համար պատուհաս էին մանկահավաքները: Թուրքերը քրիստոնյաներից խլում էին առողջ ու գեղեցիկ պատանիներին, կրոնափոխ էին անում և հատուկ ռազմական դպրոցներում վարժեցնելով, նրանցից ստեղծում էին ենիչերիական զորամասեր, որոնք թուրքական բանակի հիմնական հարվածային ուժն էին դառնում: Գեղեցիկ հայ աղջիկներին ու կանանց խլում և տանում էին սուլթանների, փա-

շաների ու բեկերի հարեմները: Սովորական երևույթ էին հայերին բռնի կրոնափոխ անելը կամ կոտորելը, եկեղեցիները մզկիթների վերածելը կամ քանդելը: Օսմանյան կայսրությունում հայ բնակչության համար դժոխային պայմաններ էին ստեղծված, տնտեսական ու մշակութային զարգացման որևէ հնարավորություն չկար:

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՆՔԵՐԸ 16-17-ՐԴ ԴԴ.

Դարեր շարունակ հայ ժողովուրդը կեղեքվում էր օտար նվաճողների կողմից: Այդ ժամը վիճակից դուրս գալու միակ ելքը երկրի ազատագրումն էր: Սակայն միայն սեփական ուժերով ազատագրվելը թվում էր անհնար, քանի որ հայ իշխաններ գրեթե չկային և հայկական ուժերը համախմբված չէին: Միայն լեռնային շրջաններում էին պահպանվել հայկական մանր իշխանություններ՝ Սյունիքում, Արցախում, Գեղարքունիքում, Լոռիում, Ջեթունում, Սասունում, Մոկսում, Շատախում և այլ վայրերում, որոնք հազիվ էին պահպանում իրենց գոյությունը և ի վիճակի չէին գլխավորելու համաժողովրդական պայքարը օտար զավթիչների դեմ: Միաժամանակ, Օսմանյան կայսրությունն ու Սեֆյան Իրանը գտնվում էին իրենց հզորության գագաթնակետին և աշխարհի հզորագույն պետություններից էին:

Հայությանը համախմբող միակ գործոնը Հայ Առաքելական եկեղեցին էր: Հետևաբար, եկեղեցական գործիչներն էին զբաղվում Հայաստանի ազատագրման հարցով: Նրանք այն համոզմանն էին, որ երկրի ազատագրումը կարող է իրականացվել միայն որևէ եվրոպական պետության աջակցությամբ և հայացքներն ուղղեցին դեպի Արևմուտք: Եվրոպական կողմնորոշմանը նպաստում էր միջնադարում տարածված Ներսես Պարթևին վերագրվող գուշակությունը, ըստ որի հայ ժողովուրդը ընկնելու էր անհավատների լծի տակ և ազատվելու էր ֆրանկների կամ ալեմանների օգնությամբ:

Եվրոպայի օգնությամբ Հայաստանն ազատագրելու առաջին նախաձեռնողներից էին Հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Սալմաստեցին և Միքայել Սեբաստացին: Նրանք Հայաստանի ազատագրմանն աջակցելու խնդրանքով մի

քանի պատվիրակություններ ուղարկեցին Եվրոպա, սակայն որևէ արդյունքի չհասան:

XVIIդ. Թուրքիան և Իրանը կորցրել էին նախկին հզորությունը, և հայ գործիչներին թվում էր, թե Հայաստանի ազատագրման համար պայմանները նպաստավոր են:

1645-1669թթ. Կրետե կղզու համար պատերազմում էին Վենետիկը և Օսմանյան կայսրությունը: Վենետիկը, Հռոմի պապերը և Ֆրանսիան ձգտում էին հակաթուրքական պայքարի մեջ ներգրավել Արևելքի քրիստոնյաներին: Հայ, հույն, ասորի գործիչները հույս ունեին, որ քրիստոնյա պետությունների աջակցությունը ստանալով կարող են ազատվել թուրքական լծից և սերտ կապեր էին հաստատել վերոնշյալ երկրների հետ: Սսի հայոց կաթողիկոս Խաչատուր Գաղատիացին կապեր հաստատեց Վենետիկի, Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի և Հռոմի պապերի հետ: Բանակցելու նպատակով Լյուդովիկոսի մոտ մեկնեցին Մահտեսի Մուրադ Բաղիշեցու, Խոջա Առաքելի, Պոլսի նախկին պատրիարք Հովհաննես Թութունջու գլխավորած պատվիրակությունները: Վերջինս մեկնեց նաև Լեհաստան, ապա՝ Եթովպիա: Սակայն Վենետիկը պարտվեց Կրետեի պատերազմում և այլևս հայերին օգնել չէր կարող, իսկ Ֆրանսիան, որի հետ էին արևմտահայերը գլխավորապես կապում իրենց ազատագրման հարցը, զբաղված էր Եվրոպայում իր դիրքերն ամրապնդելով և մտադիր չէր պատերազմ սկսել Օսմանյան կայսրության դեմ:

XVIIդ. երկրորդ կեսին ազատագրական գաղափարները տարածում ստացան նաև արևելահայերի մոտ: Կրետեի պատերազմում Վենետիկի և նրա դաշնակից Ֆրանսիայի պարտությունից հետո, Եվրոպայում հակաթուրքական պայքարը ղեկավարում էր Ավստրիան: 1670-ական թթ. ստեղծվեց հակաթուրքական դաշինք, որի մեջ էին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը, ավելի ուշ՝ Ռուսաստանը: Բնականաբար, այդ երկրների հետ էին հույսեր կապում հայ գործիչները:

Արևելյան Հայաստանի ազատագրման հարցում մեծ ակտիվություն դրսևորեց Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին: Նա դիմեց Հռոմի պապի և Ավստրիայի կայսրի օգնությանը: Նրա կարծիքով հնարավոր էր հեշտությամբ տապալել մահմեդականների լուծը, քանի որ հայերը մեծամասնություն էին կազմում երկրում և քաջ կռվողներ էին:

Եվրոպական օգնությունը անհրաժեշտ էր համարվում միայն հայերին համախմբելու համար:

1670-1671թթ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսը, հետագայում Հակոբ Ջուղայեցին ու Նոր Ջուղայի հայ առևտրականները Հայաստանի ազատագրմանը օգնելու խնդրանքով դիմեցին նաև Ալեքսեյ ցարին, քանի որ Ռուսաստանը արդեն բավական հզորացել էր և նրա սահմանները մոտեցել էին Կովկասին:

1677թ. Էջմիածնում Հակոբ Ջուղայեցին հրավիրեց գաղտնի ժողով: Որոշվեց օգնության համար դիմել Ղռոմի պապին ու եվրոպական պետություններին: Կաթողիկոսի գլխավորությամբ կազմվեց պատվիրակություն, որը նախ մեկնեց Վրաստան, ուր պայմանավորվեցին, որ հայերը դիմեն Եվրոպային, իսկ վրացիները՝ Ռուսաստանին: 1679թ. աշնանը պատվիրակությունը հասավ Կ. Պոլիս: Այնտեղից կաթողիկոսը Ղռոմ ուղարկեց Առաքել Բոպիկ վարդապետին, որպեսզի նախապատրաստի իր հանդիպումը պապի հետ: Հակոբ Ջուղայեցին նամակագրական կապ հաստատեց Լեհաստանի Յան Սոբեսկի թագավորի հետ, որը խոստանում էր աջակցել հայերին: Նախատեսվում էր Լեհաստանում կազմավորել հայկական զորամասեր, որոնք եվրոպական զորքերի հետ ազատագրելու էին Հայաստանը: 1680թ. օգոստոսին Հակոբ Ջուղայեցին Կ. Պոլսում մահացավ, իսկ պատվիրակության անդամները վերադարձան հայրենիք:

Յան Սոբեսկու հետ նամակագրական կապը շարունակեցին Եղիազար Այնթափցի և Նահապետ Եղեսացի կաթողիկոսները: Լեհաստանում կազմավորվեց 5.000-ոց հայկական բանակ, որն ակտիվ մասնակցություն ունեցավ 1683թ. Վիեննայի մոտ թուրքերի դեմ Սոբեսկու տարած փառավոր հաղթանակին: Սակայն Սոբեսկու մահից հետո հայ-լեհական համագործակցության հարցը ձախողվեց:

Արևմուտքի օգնությամբ ազատագրվելու ձգտումները դատապարտված էին անհաջողության, քանի որ Եվրոպան մասնատված էր բազմաթիվ պետությունների ու իշխանությունների, որոնց միջև անընդմեջ ներքին հակասություններ ու պատերազմներ էին ծագում: Հետևաբար, Ղռոմի պապերն ի վիճակի չէին նոր խաչակրաց արշավանք կազմակերպել ու օգնել հայերին: Չնայած դրան, Ղռոմի պապերը սին խոստում-

ներով հույսեր էին առաջացնում հայերի մոտ՝ ձգտելով Հայ Առաքելական եկեղեցին ենթարկել իրենց ազդեցությանը: Եվրոպական երկրների հետ հայերի կապած հույսերը այդպես էլ չարդարացան: Այնուամենայնիվ, չնայած նախկին անհաջողություններին, հայերը փորձում էին գտնել հայրենիքի ազատագրման ուղիներ և հետագայում շարունակեցին բանակցությունները քրիստոնյա երկրների հետ:

35. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ազատագրական գաղափարների տարածման գործում անուրանալի է Իսրայել Օրու դերակատարությունը: Նրա հայրը՝ Մելիք Իսրայելը, Էջմիածնի 1677թ. ժողովի կազմակերպիչներից էր, ընդգրկված էր Հակոբ Ջուղայեցու պատվիրակության մեջ և իր հետ Եվրոպա էր տանում նաև որդուն: Կ. Պոլսում 1680թ. Հակոբ Ջուղայեցին մահացավ, պատվիրակությունը ցրվեց, սակայն Իսրայել Օրին չվերադարձավ հայրենիք: Նա մեկնեց Իտալիա, ապա հաստատվեց Փարիզում, զբաղվում էր առևտրով, մասնակցեց անգլո-ֆրանսիական պատերազմին, որի ժամանակ գերի ընկավ անգլիացիների մոտ: Գերությունից ազատվելուց հետո մեկնեց Գերմանիա, հաստատվեց Ռեյնոսյան Պֆալց իշխանության կենտրոն Դյուսելդորֆ քաղաքում: Այստեղ Օրին ծանոթացավ Պֆալցի կուրֆյուրստ (կայսրընտիր իշխան) Հովհան Վիլհելմին, որին շահագրգռեց Հայաստանի ազատագրության հարցով՝ նրան առաջարկելով դառնալ Հայոց թագավոր: Վիլհելմը տվեց իր համաձայնությունը, բայց պահանջեց, որ հայերի կողմից այդ մասին լինի գրավոր դիմում:

1699թ. Իսրայել Օրին ճանապարհվեց Հայաստան: Նա Կ. Պոլսում հանդիպեց Հայոց պատրիարքի հետ, ապա Կարինի վրայով հասավ Էջմիածին: Նահապետ կաթողիկոսը անբարյացակամորեն ընդունեց նրան: Օրին մեկնեց Սյունիք և իր ծրագրերով ոգևորեց Մելիք Սաֆրազին:

1699թ. ապրիլին Օրու և Մելիք Սաֆրազի նախաձեռնությամբ Անգեղակոթում հրավիրվեց հայ մելիքների ժողով, որտեղ Օրին ներկայացրեց Հովհան Վիլհելմի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ծրագիրը: Մելիքները համաձայնե-

ցին օգնության դիմաց Հովհան Վիլհելմին ճանաչել Հայոց թագավոր: Նրանք նամակներ գրեցին եվրոպական տիրակալներին, Հռոմի պապին, ռուսական ցարին: Մինաս վարդապետ Տիգրանյանին որպես օգնական վերցնելով, Օրին 1699թ. վերադարձավ Դյուսելդորֆ:

Մինչ Հովհան Վիլհելմի հետ հանդիպելը Օրին և Մինաս վարդապետը կազմեցին Հայաստանի ազատագրության ծրագիր: Ըստ դրա, Հայաստանը պետք է ազատագրվեր Եվրոպայում կազմավորված բանակի միջոցով: Պետք է ստեղծվեր եռյակ միություն՝ Ավստրիայի կայսր Լեոպոլդ I-ի, Հովհան Վիլհելմի և Տոսկանայի դուքս Կոզմաս III-ի մասնակցությամբ: Նրանց բանակը պետք է անցներ Ռուսաստանի տարածքով, որն Ավստրիայի հետ ընդգրկված էր հակաթուրքական կոալիցիայի մեջ, ապա Կասպից ծովի վրայով մտներ Անդրկովկաս, որտեղ նրանց էին միանալու ապստամբած հայերն ու վրացիները: Նախատեսվում էր 20-25 օրում ազատագրել ամբողջ Արևելյան Հայաստանը, քանի որ թուլացած Իրանը չէր կարողանա դիմադրել այդ ուժերին: Այս ծրագրում Օրին դիվանագիտական նկատառումներով գերազնահատել էր հայերի ուժերը և թերազնահատել պարսիկներինը: Ապա պետք է ազատագրվեր նաև Արևմտյան Հայաստանը: Վերոնշյալ պետությունները հակաթուրքական կոալիցիայի մեջ էին, և Օրու կարծիքով ծրագիրը կարող էր հեշտությամբ իրականանալ, սակայն 1699թ. Կարլովիցիում Ավստրիան հաշտություն, իսկ Ռուսաստանը զինադադար կնքեցին թուրքերի հետ, որով խնդիրը բարդացավ:

1700թ. Օրին և Մինաս վարդապետը այս ծրագիրը ներկայացրին Հովհան Վիլհելմին, որը տվեց իր համաձայնությունը և նրանց ուղարկեց Վիեննա և Ֆլորենցիա՝ Լեոպոլդ I-ի և Կոզմաս III-ի համաձայնությունը ստանալու համար: Վերջինս տվեց իր համաձայնությունը, իսկ Լեոպոլդը քաղաքական իրադրության պատճառով մերժեց ծրագիրը: Այսպիսով, Օրու ծրագիրը տապալվեց:

Վիեննայում Օրուն հասկացրին, որ նրան կարող է օգնել Ռուսաստանի տիրակալ Պետրոս Մեծը: Ուստի Օրին Մինաս վարդապետի հետ որպես Հովհան Վիլհելմի պատվիրակ մեկնեց Մոսկվա: Նա 1701թ. հանդիպեց ռուսական կանցլեր Գոլովինի, ապա Պետրոս Մեծի հետ: Օրին ներկայացրեց

ազատագրության նոր ծրագիր, որով նախատեսվում էր կազմել 25.000-ոց բանակ, որից 10.000-ը Դերբենդի կիրճով և Կասպից ծովով, իսկ 15.000-ը՝ Դարիալի կիրճով պետք է մտներ Անդրկովկաս: Անդրկովկասում նրանց կմիանային վրացական և հայկական զորքերը: Օրին համոզված էր, որ միայն արևելահայերը կարող էին դուրս բերել ավելի քան 100.000 զինվոր:

1702թ. Օրուն հայտնեցին, որ շվեդների դեմ մղվող Ջյուսիսային պատերազմի ավարտից հետո Պետրոս I-ը վճռել է օգնել հայերին: Պետրոսը որոշեց Իրանում տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով դեսպանություն ուղարկել, որի ղեկավար նշանակեց Իսրայել Օրուն, նրան տալով գնդապետի աստիճան: 1704թ. Օրին ուղևորվեց Դյուսելդորֆ, Յովհան Վիլհելմի միջոցով ձեռք բերեց Պարսից շահին ուղղված Հռոմի պապի նամակը՝ ի պաշտպանություն քրիստոնյաների, ինչպես նաև 20.000 ռուբլու զեմք գնեց ու 1706թ. վերադարձավ Մոսկվա: Նա մտադիր էր գնված զեմքով Աստրախանում հայերից մի զունդ կազմավորել: Օրին վերցրեց նաև Պետրոս I-ի նամակը և 1707թ. հունիսին Կասպից ծովով սկսեց ճանապարհորդությունը:

1708թ. Շամախիում տեղի խանը փորձեց խոչընդոտել Օրուն ուղևորությունը, քանի որ Անդրկովկասում լուրեր էին տարածվել, որ նա հայոց թագավորն է և գալիս է իր երկիրն ազատագրելու: Սակայն պարսիկները չհամարձակվեցին երկար կանգնեցնել Ռուսաստանի ցարի և Հռոմի պապի պատվիրակին: 1709թ. նա հասավ Սպահան, հանդիպեց շահին և նույն թվին վերադարձավ Անդրկովկաս, որտեղ մնաց մինչև 1711թ.: Այստեղ նա մեծ ջանք գործադրեց ռուսական կողմնորոշումը ամրապնդելու, հայկական ուժերը համախմբելու և ապստամբության նախապատրաստելու համար: Կապեր հաստատեց Քանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, Էջմիածնի կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու հետ:

1711թ. Օրին Եսայի Հասան-Ջալալյանի հետ ճանապարհվեց Ռուսաստան, սակայն Աստրախանում հանկարծամահ եղավ: Իսրայել Օրին մեծ դեր կատարեց 17-18-րդ դդ. հայ ազատագրական շարժման պատմության մեջ, նոր փուլի հասցնելով ազատագրական պայքարը: Հայաստանի ազատագրության հարցը զուտ բանակցային ճանապարհից փո-

խաղրեց գործնական հողի վրա, փորձեց համախմբել ու հանդիսանուր ապստամբության նախապատրաստել հայկական ուժերին, գործնական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի հետ: Նրա մահը լուրջ հարված էր հայ ազատագրական պայքարին, քանի որ Օրին իր դիվանագիտական տաղանդով, գործնականությամբ ու անսպառ եռանդով անփոխարինելի գործիչ էր և կարող էր համախմբել հայության ուժերը:

36. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1722-1730 ԹԹ.

XVIII դ. սկզբին Իրանում ստեղծվել էր բավական խառը, անկայուն դրություն, որը ծանր էր անդրադառնում հպատակ երկրների վրա: Սաստկացան հալածանքները հայերի նկատմամբ: Անդրկովկասում մեծ ավերածություններ էին գործում լեզգիները: Լեզգիներից պաշտպանվելու և ազատագրական պայքարի պատրաստվելու նպատակով տարբեր վայրերում կազմավորվեցին հայկական զորամասեր: Այդ զորքը հատկապես մեծ թափով էր ընթանում Ղարաբաղում, ուր զորակայանները կոչվում էին սղնախներ:

1722թ. ապստամբած աֆղանները գրավեցին Իրանի մայրաքաղաք Սպահանը և գլխատեցին Յուսեփ շահին: Ռուսաստանը, օգտվելով Իրանի թուլացումից, ձգտում էր գրավել Կասպից ծովի առափնյա շրջանները: 1722թ. Պետրոս I-ը որոշեց արշավել Իրան: Վրաց Վախթանգ VI թագավորը համաձայնեց միանալ ռուսներին: Վախթանգի հետ համագործակցում էր նաև Գանձասարի կաթողիկոս Եսայի Յասան-Ջալալյանը: 1722թ. սեպտեմբերի 22-ին Գանձակի մոտ գտնվող Չոլակ վայրում միավորվեցին Վախթանգի 30.000-ոց և Եսայի Յասան-Ջալալյանի 10.000-ոց բանակները: Նրանք սպասում էին ռուսական բանակի Շամախի հասնելուն, որպեսզի ընդառաջ գնային և միանային: Սակայն երկու ամիս սպասելուց հետո, նոյեմբերին լուր ստացվեց, որ Պետրոսը դադարեցրել է Կասպիական արշավանքը և վերադարձել Աստրախան: Ցարը դեպի Անդրկովկաս արշավանքը դադարեցրել էր, քանի որ վտանգ առաջացավ բախվել Թուրքիայի հետ: Շվեդների դեմ երկարատև պատերազմը նոր ավարտած Պետրոսը դեռևս պատրաստ չէր բախվելու թուրքերի հետ:

Հայ-վրացական զորքերը ստիպված էին վերադառնալ իրենց տեղերը: Հայկական զորամասը վերադառնալով Ղարաբաղ, հրաժարվեց ճանաչել Իրանի իշխանությունը: Ազատագրական պայքարի կազմակերպիչը և ռզեշնչողը Եսայի Հասան-Ջալալյանն էր: Ղարաբաղի բանակի հրամանատար դարձավ Ավան Յուզբաշին: Որոշ դեպքերում Արցախը մարտադաշտ էր դուրս բերում մի քանի տասնյակ հազար զինվոր: Իրանական խմբերը բազմիցս արշավեցին Ղարաբաղ, բայց չկարողացան ճնշել պայքարը:

1722թ. ապստամբության դրոշ բարձրացրին նաև Սյունիքի հայերը: Ի տարբերություն Արցախի, այստեղ հայ մելիքների ուժերը միավորված չէին և անհրաժեշտ էր մեծ հեղինակություն ունեցող առաջնորդ: Սյունեցիների խնդրանքով Վախթանգ VI-ը Սյունիք ուղարկեց վրաց բանակի հայ զորավարներից Դավիթ Բեկին: 1722թ. աշնանը նա եկավ Սյունիք, համախմբեց հայկական ուժերը և մեկը մյուսի հետևից ազատագրեց Սյունիքի տարածքները: Իրանական խմբերը բազմիցս ներխուժեցին Սյունիք, սակայն ջախջախվեցին: Այսպիսով, Սյունիքում Դավիթ Բեկի գլխավորությամբ ստեղծվեց անկախ հայկական իշխանություն: Նրա նստավայրը Հալիժոռի բերդն էր: Ջորջի սպարապետն էր տաղանդավոր զորավար Մխիթարը: Բանակի թիվը հասնում էր 6-7.000-ի:

Իրանի թուլացումից չհապաղեց օգտվել նաև Թուրքիան, որը ձգտում էր նվաճել ամբողջ Հայաստանը, Անդրկովկասն ու Ատրպատականը: 1724թ. Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր, որով Թուրքիային էին անցնելու Արևելյան Հայաստանը, Անդրկովկասը, Ատրպատականը և պարսկական Իրաքը, իսկ Ռուսաստանին՝ մերձկասպյան շրջանները: Այսպիսով, Ռուսաստանը չեզոքացված էր, իսկ Իրանը՝ գրեթե կազմալուծված, և թուրքերի համար լուրջ խոչընդոտներ չկային այդ տարածքները նվաճելու համար:

1723թ. օսմանյան 40.000-ոց բանակը ներխուժեց Վրաստան և հունիսին առանց դիմադրության գրավեց Թիֆլիսը: Աշնանը թուրքական բանակը հարձակվեց Գանձակի վրա, բայց ծանր պարտություն կրեց վրացական, իրանական և հայկական միացյալ զորքերից:

1724թ. գարնանը թուրքական 40.000-ոց մեկ այլ բանակ ներխուժեց Արևելյան Հայաստան և շարժվեց Երևանի

ուղղությամբ: Թուրքերին համառ դիմադրություն ցույց տվեց Կարբի ավանի հայ բնակչությունը: Նրանք 40 օր դիմադրեցին թշնամուն: Կարբեցիները համաձայնեցին զենքը վայր դնել, միայն այն պայմանով, եթե թուրքերը չմտնեին ավան:

1724թ. հունիսի 7-ին թուրքերը պաշարեցին Երևանը: Պաշտպանության համար ոտքի կանգնեց քաղաքի և շրջակայքի հայ բնակչությունը: Հայ մարտիկների թիվը հասնում էր 10.000-ի: Թուրքերի գրոհները ավարտվում էին անհաջողությամբ: Սեպտեմբերի սկզբին Երևանին մոտեցան Եգիպտոսից ուղարկված զորքերը և Գանձակի ուղղությամբ արշավող թուրքական բանակը: Դրանով պաշարողների թիվը հասավ 70.000-ի: 1724թ. սեպտեմբերի 26-ին թուրքերը գրավեցին քաղաքը և սրի քաշեցին մոտ 10.000 հայերի: Երևանի պաշարման ընթացքում թուրքերը կորցրեցին 20.000 զինվոր:

Երևանի եռամսյա հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ կասեցվեց թուրքական բանակի արագ առաջխաղացումը դեպի Սյունիք ու Արցախ, որը այնտեղի հայկական իշխանություններին հնարավորություն տվեց ավելի լավ պատրաստվել դիմակայելու օսմանցիներին:

Ղարաբաղցիներն ընդհանուր թշնամում հակահարված տալու համար համագործակցեցին նախկին հակառակորդների՝ իրանական խաների հետ: Ռազմա-պաշտպանական դաշինք կնքվեց Գանձակի խանության հետ: 1723թ. աշնանը Գանձակի մոտ թուրքերին պարտության մատնելու գործում խոշոր ներդրում ունեցան Ղարաբաղի զորքերը:

Արցախի ազատագրական ուժերը հույս ունեին, որ շուտով օգնության կգան ռուսական բանակները, քանի որ Պետրոս I-ը, ապա Եկատերինա I կայսրուհին քաջալերում էին հայերի պայքարը և խոստանում օգնության հասնել: Արցախում տեղյակ չէին, որ 1724թ. կնքվել էր ռուս-թուրքական պայմանագիր, որով Ռուսաստանը թուրքերին էր զիջել Անդրկովկասի տիրապետությունը:

1725թ. թուրքական 6.000-ոց զորամասը ներխուժեց Վարանդա, սակայն ամբողջությամբ ոչնչացվեց: 1726թ. Արցախի վրա հարձակվեց թուրքական 40.000-ոց բանակը, որին միացել էին նաև լեզգիները: Այն ևս ավարտվեցին թուրքերի պարտությամբ, որոնք ռազմի դաշտում թողեցին հազարավոր

դիակներ և նահանջեցին Գանձակ: Սակայն հետզհետե դժվարանում էր դիմադրել թուրքական հզոր բանակներին:

1728թ. մահացավ ազատագրական շարժման կարկառուն ներկայացուցիչ Եսայի Հասան-Ջալալյանը: 1729թ. օգոստոսյուն բերելու համար Ռուսաստան մեկնեց Ավան Յուզբաշին և այլևս չվերադարձավ: Այս պայմաններում թուրքերին հաջողվեց գրավել Ղարաբաղի մի մասը:

Պայքարը շարունակեցին միայն Գյուլիստանի ու Ջրաբերդի շրջանները: Ազատագրական մարտերը ղեկավարում էր Մեծ սղնախի հրամանատար Աբրահամ սպարապետը:

1725թ. թուրքական զորքերը հարձակվեցին Սյունիքի վրա, բայց հակահարված ստանալով նահանջեցին: 1726թ. թուրքական 70.000-ոց բանակը ներխուժեց Սյունիք: Շատերը, ահաբեկվելով թուրքերի հզոր ուժից, լքեցին Դավիթ Բեկին և հպատակվեցին թշնամուն: 1727թ. մարտին թուրքերը պաշարեցին Հալիժորը: Մեկշաբաթյա մարտերը ավարտվեցին հայերի փառավոր հաղթանակով: Թուրքական բանակը կորցրեց 13.000 զինվոր, 148 դրոշ և ամբողջ ունեցվածքը: Հալիժորի ճակատամարտը Դավիթ Բեկի ամենախոշոր հաղթանակն էր: Մխիթար Սպարապետը և Տեր Ավետիսը թուրքերին ջախջախիչ պարտության մատնեցին նաև Մեղրիում: Հայկական ուժերը նորից սկսեցին համախմբվել և թուրքերին վտարել հայրենի հողից: Այսպիսով, 1727թ. Սյունիքն ամբողջությամբ ազատագրվեց թուրք զավթիչներից:

Համատեղ ուժերով օսմանցի զավթիչների դեմ պայքարելու նպատակով 1727թ. դաշինք կնքվեց Իրանի շահ Թահմասպ II-ի և Դավիթ Բեկի միջև: Թահմասպը ճանաչեց Սյունիքի հայկական իշխանությունը, իսկ Դավիթ Բեկը ընդունեց Իրանի գերիշխանությունը և նշանակվեց Անդրկովկասի իրանական զորքերի գլխավոր հրամանատար:

1728թ. Դավիթ Բեկը մահացավ և Սյունիքի ազատագրական ուժերի ղեկավար դարձավ Մխիթար Սպարապետը, որը բազմաթիվ հաղթանակներ տարավ թշնամիների դեմ: 1730թ. Օրդուբադի մոտ թուրքերին պարտության մատնելուց հետո, երբ Մխիթարը վերադառնում էր Խնձորեսկ, դավադրաբար սպանվեց: Չնայած օսմանյան զավթիչների բոլոր ճիգերին, նրանց չհաջողվեց ամբողջությամբ իրենց ենթարկել Սյու-

նիքը: Պայքարը շարունակվեց մինչև Նադիր շահի կողմից օսմանյան զորքերի վտարումը Անդրկովկասից:

1722-1730թթ. ազգային-ազատագրական պայքարը մեր պատմության փառավոր էջերից է: Այն ցույց տվեց, որ հայերը կարող են առանց արտաքին օգնության երկարատև դիմադրություն ցույց տալ այնպիսի հզոր պետությունների, ինչպիսիք էին Իրանն ու Թուրքիան: Սակայն այս շրջանում բացահայտվեցին նաև որոշ բացասական երևույթներ. չկարողացան պայքարի միասնական կենտրոն ստեղծել, բոլոր ուժերով համագործակցել և համընդհանուր ապստամբության միջոցով վերջնականապես ազատվել օտարների լծից:

37. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1730-1740-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1730-ական թթ. քաղաքական իրադրությունը Արևելյան Հայաստանում և Իրանում էականորեն փոխվեց: Իրանական պետությունը կարողացավ հաղթահարել երկարատև ճգնաժամը: Աֆղանների և թուրքերի դեմ մղվող պայքարում աչքի ընկավ տաղանդավոր զորավար Նադիր խանը: Նա 1729թ. ջախջախեց աֆղաններին և ազատագրեց Սպահանը: 1732թ. շահ Թահմասպը թուրքերի հետ հաշտություն կնքեց, որով ճանաչեց Անդրկովկասի անցումը Թուրքիային: Դա դժգոհություն առաջացրեց Իրանում, որն օգտագործելով Նադիրը գահընկեց արեց Թահմասպին և իր խնամակալության ներքո շահ հռչակեց նրա նորածին որդուն՝ Աբաս III-ին:

Նադիրը հայտարարեց, որ շարունակելու է պատերազմը թուրքերի դեմ: Այսպիսով, փաստորեն Իրանի տիրակալ դարձավ Նադիր խանը: Նա ջանում էր պահպանել Իրանի ամբողջականությունը և ինքնիշխանությունը, վերականգնել պետական սահմանները: Նրան իր կողմը գրավելու և հակաթուրքական պայքարի ճակատում պահելու համար Ռուսաստանը 1732թ. Իրանի հետ կնքեց պայմանագիր, որով վերադարձնում էր մերձկասպյան շրջանների մի մասը:

1734թ. Նադիր խանը արշավեց Անդրկովկաս: Նա ձգտում էր թուրքերի դեմ օգտագործել հայերի մարտական ուժերը, որոնք դեռևս բավական կենսունակ էին: Այդ նպատակով Նադիրը սիրաշահում էր առավել ազդեցիկ մելիքներին և

հատկապես Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարությամբ: Իրանական առաջնորդը քաջ գիտակցում էր, որ օսմանցիների դեմ վճռական մարտերը տեղի են ունենալու այն տարածքում, որի հիմնական բնակչությունը հայերն են: Միաժամանակ, Նադիրը բարձր էր գնահատում հայ զինվորների մարտական որակները: Դեռևս Իրանի հարավում թուրքերի դեմ մղած կռիվների ընթացքում Նադիրի բանակում ծառայում էին 6 հայ հազարապետներ՝ հայկական զորքերով:

1735թ. Գանձակի պաշարման ժամանակ Նադիրի բանակին միացան Ղարաբաղի, Սյունիքի և այլ վայրերի հայ մելիքներն իրենց զորքերով: Գեղարքունիքում Նադիրը մեծ պատիվներ տվեց Մելիքջան Մելիք-Շահնազարյանցին: Այդ շրջանի հայ իրականության ամենամշանավոր գործիչը Դիզակի մելիք Եգանն էր, որը մեծ հարգանք էր վայելում Նադիրի մոտ: Հայ մելիքներն ամեն կերպ աջակցում էին Նադիրին, ապահովում էին նրա բանակի հանդերձավորումն ու պարենը, որի պատճառը թուրքերի դաժան տիրապետությունից շուտափույթ ազատվելու ձգտումն էր:

Նադիրը այցելեց Էջմիածին, հանդիպեց կաթողիկոս Աբրահամ Կրետացուն, նոր հրովարտակներով վերահաստատեց հայ եկեղեցու և հոգևորականության հնուց եկող իրավունքները, մեծ նվերներ (15կգ ոսկե ջահ, գորգեր քերմանից ևն) տվեց վանքին:

1735թ. հուլիսի 8-ին իրանական զորքերի հետ հայ զինվորները մասնակցեցին Եղվարդի վճռորոշ ճակատամարտին: Չնայած թուրքերի թվական գերակշռությանը, նրանց զորքը գլխովին ջախջախվեց: Օսմանցիների նահանջի ճանապարհները կտրել էին հայկական աշխարհագրայինները: Քասախ գետի կիրճում թուրքական բանակն ամբողջապես ոչնչացվեց իրանական ու հայկական զորքերի կողմից:

Նադիր խանի տարած հաղթանակները չափազանց բարձրացրին նրա հեղինակությունը: Նա այլևս ավելորդ համարեց երկիրը կառավարելու խնդրում ձևականությունների պահպանումը և 1736թ. փետրվարին Մուղանի դաշտում Իրանի բոլոր նշանավոր գործիչների ներկայությամբ հռչակվեց Իրանի շահ (1736-1747թթ.):

1735թ. Գանձակում կնքված ռուս-իրանական համաձայնագրով Ռուսաստանը հրաժարվեց մերձկասպյան բոլոր

շրջաններից, իսկ 1736թ. Երզրումում կնքված հաշտության պայմանագրով թուրքերը հրաժարվեցին Անդրկովկասից:

Այսպիսով, Նադիր շահը վերականգնեց Իրանի ամբողջականությունը և որոշ ժամանակ հաստատվեց խաղաղություն: Նա բավական լավ էր տրամադրված հայ բնակչության և մելիքների հանդեպ: Նադիրը ճանաչեց Երևանի հայ մելիքներ Մելիք-Մկրտումի և Մելիք-Յակոբջանի իրավունքները: Մելիք-Յակոբջանը նշանակվեց Երևանի փողերանոցի կառավարիչ: Նադիրը Երևանի բեկլերբեկ նշանակեց Փիր-Ահմադ խանին, որին հանձնարարեց հոգատար լինել հայ բնակչության նկատմամբ և հաշվի առնել Հայոց կաթողիկոսի, Մելիք-Մկրտումի և Մելիք-Յակոբջանի կարծիքները: Խանի գործողություններից դժգոհ լինելու դեպքում կաթողիկոսը իրավունք ուներ նրան նախազգուշացնել, իսկ եթե խանը շարունակեր իր ուղին, ապա հայրապետը պետք է դիմեր շահին:

Արարատյան երկրի քաղաքար նշանակվեց Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը, որը բեկլերբեկից հետո երկրորդ ազդեցիկ պաշտոնյան էր: Այսպիսով, Արարատյան երկրի ներքին կառավարումը անցավ հայ մելիքների և հոգևորականության ձեռքը:

Նադիրի օրոք ավելի ընդարձակվեց Արցախի հայ մելիքների իշխանությունը: Մելիքությունները ճանաչվեցին Գանձակի բեկլերբեկությունից անկախ և կազմավորվեց ինքնուրույն վարչական միավոր՝ «մահալ-ե խամսե»: Այսպիսով, Ղարաբաղի հինգ մելիքությունները ճանաչվեցին ինքնավար երկիր: Խամսայի սահմանները Գանձակի հարավից ձգվում էին մինչև Արաքս գետը: Ղեկավար նշանակվեց Դիզակի մելիք Եգանը, որի նստավայրը Տող ավանն էր: Մելիք Եգանը, ինչպես Անդրկովկասի մյուս բեկլերբեկերը, ենթարկվում էր սիպահասալար (զորահրամանատար) Իբրահիմին՝ Նադիր շահի եղբորը, որի նստավայրը Թավրիզն էր: Գյուլիստանի մելիքությունում իշխում էին Բեգլարյանները, Ջրաբերդում՝ Իսրայելյանները, Խաչենում՝ Հասան-Ջալալյանները, Վարանդայում՝ Շահնազարյանները, Դիզակում՝ Եգանյանները: Ինչպես տեսնում ենք, Նադիրը հաշվի առավ արցախահայության 15-ամյա պայքարը և ճանաչեց զենքի ուժով ձեռք բերած նրանց ինքնավարության իրավունքը: Հայկական պետության բացակայության պայմաններում, փաստորեն, մելիքությունները

հանդիսանում էին հայկական պետականության տարրերի կրողներ:

Նադիրի օրոք Իրանի տնտեսությունը երկարատև պատերազմների հետևանքով հայտնվել էր չափազանց ծանր վիճակում: Երկրից ծայրահեղ դաժանությամբ հավաքում էին ռազմական հարկերը և պարտույթները: Մի քանի տարի շարունակ Անդրկովկասում մոլեգնում էր սովը: Նադիրը որոշ չափով թեթևացրեց հայ բնակչությունից և հոգևորականությունից գանձվող հարկերը: 1739թ. Նադիրը գրավեց Դելին և թալանեց Մեծ Մողոլների գանձարանը: Նա այնքան մեծ հարստության տիրեց, որ երեք տարի Իրանի ամբողջ բնակչությանն ազատեց հարկերից: Կյանքի վերջին շրջանում Նադիրը դարձել էր կասկածամիտ ու դաժան բռնակալ, կուրացնել սովեց սեփական որդուն, որից հետո հայտնվեց կիսախելագար վիճակում: 1747թ. Նադիրը սպանվեց իր մերձավորների ձեռքով:

38. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

18-րդ դարի երկրորդ կեսին հայ ազատագրական մտքի կարևոր կենտրոն դարձավ հնդկահայ գաղթօջախը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ անգլիական գաղութարարները Հնդկաստանի տնտեսական ու քաղաքական կյանքից հետզհետե դուրս էին մղում դեռևս հնուց այդ երկրում բավական խոշոր դերակատարություն ստանձնած հնդկահայերին: Վերջիններս սկսեցին գիտակցել, որ յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչ կարող է ազատորեն գործել միայն այն դեպքում, եթե իր թիկունքին կանգնած է ազգային պետությունը և բանակը: Նման պայմաններում հնդկահայերը ուշադրությունը սևեռեցին օտարների լծի տակ կեղեքվող հայրենիքին՝ հուսալով, որ կարող են վերականգնել հայոց պետականությունը:

Հնդկահայ ազատագրական մտքի նշանավոր ներկայացուցիչներից էր Հովսեփ Էմինը (Էմին Հովսեփի Էմինյան): Նա ականատեսն էր հնդկահայ բուրժուազիայի անկման և անգլիական փոքրաթիվ, բայց լավ մարզված ու կազմակերպված բանակի կողմից Հնդկաստանի գաղութացմանը: Նա պա-

տանեկան տարիքից ցանկանում էր դառնալ զինվորական և օգտակար լինել հայրենիքին: 1751թ., հոր կամքին հակառակ, էմինը մեկնեց Անգլիա: Մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո 1755թ. էմինն ընդունվեց Վուլվիչի ռազմական ակադեմիա և մասնագիտացավ հրետանային գործի ու ամրաշինության ոլորտներում: Նա կամավոր մասնակցեց Յոթնամյա պատերազմին, որպեսզի ավելի գործնականորեն ծանոթանա ռազմական գործին: Այնտեղ նա աչքի ընկավ իր քաջությամբ:

Դեռևս Լոնդոնում նա հայրենիքի ազատագրման գործի կազմակերպման նպատակով նամակագրական կապեր հաստատեց հնդկահայերի և Եվրոպայում ապրող հայերի հետ: Կարևորելով Վրաստանի դերը՝ նա նամակ ուղարկեց վրաց թագավոր Զերակլ II-ին, ուր առաջ քաշեց հայ-վրացական միացյալ պետություն ստեղծելու գաղափարը, առաջարկեց իր ծառայությունը վրացական զորքերը եվրոպական ռազմական արվեստով մարզելու գործում: Էմինը տեսակցեց Անգլիայի վարչապետ Պիտտի հետ՝ նպատակ ունենալով ճշտել Անգլիայի դիրքորոշումը Հայաստանի ազատագրության հարցում: Սակայն Անգլիան չէր ցանկանում հարաբերությունները վատացնել Թուրքիայի հետ, ուստի վարչապետը մերժեց աջակցել Էմինի ծրագրերին և նրան առաջարկեց ծառայության անցնել անգլիական ռազմական կամ պետական համակարգում: Վարչապետի առաջարկը Էմինը մերժեց, քանի որ նրա հիմնական նպատակը Հայաստանի ազատագրումն էր:

1759թ. Էմինը ուղևորվեց Հայաստան՝ իրավիճակին մոտիկից ծանոթանալու համար: Նա ժողովրդին հորդորում էր պայքարի ելնել բռնության և անիրավության դեմ, թոթափել օտարի լուծը, վերականգնել սեփական ազատությունն ու պետությունը: Սակայն նրա հայացքները Արևմտյան Հայաստանում չարժանացան ջերմ ընդունելության:

1760թ. Էմինը ժամանեց Էջմիածին: Այստեղ ևս արժանացավ անբարյացական վերաբերմունքի: Ծանոթանալով տարածաշրջանի իրավիճակին, Էմինը համոզվեց, որ ազատագրական պայքարի հաջողության համար անհրաժեշտ է Ռուսաստանի աջակցությունը:

1760թ. Էմինը վերադարձավ Անգլիա, Լոնդոնում տեսակցեց ռուսական դեսպան Ա. Գոլիցինի հետ և նրանից ստանալով անձնագիր ու Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաներին ուղղված գրություններ՝ 1761թ. նոյեմբերին ժամանեց Պետերբուրգ։ Նա հանդիպում ունեցավ վարչապետ Կոնստ. Վորոնցովի հետ։ Վարչապետի մոտ Էմինը թողեց դրական տպավորություն, և նա եզրակացրեց, որ Էմինը կարող է օգտակար լինել Կովկասում Ռուսաստանի քաղաքական ձգտումների իրականացմանը։ Հանդիպման մասին վարչապետը տեղեկացրեց Եկատերինա II կայսրուհուն, որը դրական արտահայտվեց Էմինի ծրագրերի մասին։

1762թ. Էմինը, Վորոնցովից ստանալով անհրաժեշտ գրություններ, ուղևորվեց Վրաստան։ Ճանապարհին հայերը նրան ընդունում էին մեծ ոգևորությամբ, Աստրախանում անգամ հայ զինյալների մի խումբ միացավ նրան Հայաստան մեկնելու համար։

1763թ. Էմինը ժամանեց Թիֆլիս, ուր շքեղ ընդունելության արժանացավ։ Էմինը Հերակլ II-ին առաջարկեց եվրոպական բանակների նմանությամբ հայ-վրացական ուժեղ բանակ ստեղծել, ամրապնդել պետությունը, սաստել կենտրոնախույս ուժերին, բացել դպրոցներ, ժողովրդի մեջ տարածել լուսավորություն, հայրենասիրական և ազատագրական գաղափարներ, ապստամբություն բարձրացնել Պարսկաստանի և Թուրքիայի դեմ, ազատագրել հայկական հողերը, Հերակլի գլխավորությամբ ստեղծել հայ-վրացական միացյալ պետություն, ազատագրական պայքարում հենվել Ռուսաստանի վրա։ Չնայած Հերակլը ոգևորվեց Էմինի առաջարկած վրացական պետության ամրապնդման գաղափարներով, սակայն չողջունեց ապստամբության գաղափարը, գտնելով, որ իրենք դեռևս բավարար ուժ չունեն պարսկա-թուրքական տիրապետության դեմ դուրս գալու համար։

Էմինը նամակագրական կապեր հաստատեց Արցախի մելիքների, Փանծասարի կաթողիկոսության, արևմտահայ որոշ գործիչների հետ։ Մշո սբ. Կարապետ վանքի վանահայր Հովման Եպիսկոպոսը, որը սերտ կապերի մեջ էր Վանի, Կ. Պոլսի, Կարինի հայկական շրջանակների հետ, բանագնաց ուղարկեց Թիֆլիս՝ Էմինի մոտ։ Էմինը Մուշ ուղարկեց իր 30 հոգանոց թիկնազորը։ 1764թ. սկզբներին Հովմանը Էմինին

հաղորդեց, որ ինքը կապեր է հաստատել Վանի, Թոխաթի, Կարինի, Կ. Պոլսի և այլ վայրերի մեծանուն հայերի հետ, որոնք հավանություն են տվել նրա ծրագրին: Նա նաև հավատացնում էր, թե Արևմտյան Հայաստանում արդեն հավաքագրվել է 40.000 զորք, զումարներ, ստեղծվել են զենք-զինամթերքի և հանդերձանքի մի շարք գաղտնարաններ:

Սակայն Էմինի գործունեությունը չէր խրախուսում հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին: Նա գտնում էր, որ պետք է խուսափել արկածախնդիր արարքներից, քանի որ հայերը սեփական ուժերով ի վիճակի չէին ազատագրվել պարսկաթուրքական լծից:

Հերակլը որոշ ժամանակ փորձեց օգտագործել Էմինի գիտելիքները հօգուտ Վրաստանի, իսկ 1764թ. ամռանը նրան առաջարկեց հեռանալ Վրաստանից: Էմինը մեկնեց Ռուսաստան, սակայն հիվանդանալու պատճառով որոշ ժամանակ մնաց կովկասյան լեռնականների մոտ և չեչենների խնդրանքով վարժեցրեց նրանց բանակը:

Էմինը մեծ հույսեր էր կապում Խամսայի մելիքությունների հետ, հատկապես վրացական արքունիքի բացասական դիրքից հետո: Մելիքներին հղած նամակներում Էմինը հորդորում էր պայքարի դուրս գալ հայրենիքի ազատագրության համար: Սակայն մելիքությունները այլևս չունեին նախկին հզորությունը և չէին կարող անհրաժեշտ աջակցությունը ցույց տալ Էմինին իր ծրագրերը իրագործելու համար: 1766թ. վերջին Հովսեփ Էմինը ժամանեց Գետաշեն և տեսակցեց Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի ու Գյուլիստանի մելիք Հովսեփի հետ: Նրա այդ և այլ հանդիպումներ պարզեցին, որ մելիքները չեն կարող հենարան դառնալ Հայաստանի ազատագրության իր ծրագրին:

Էմինը որոշեց մեկնել Ռուսաստան: Սակայն թուրքական ներխուժման վտանգի առաջ կանգնած Հերակլը կրկին նրան հրավիրեց Վրաստան: Էմինը հույս էր փայփայում, որ կարելի կլինի իրականացնել իր ծրագիրը: Սակայն թուրքական վտանգը անցնելուց հետո Հերակլը կրկին փոխեց վերաբերմունքը, և Էմինը 1768թ. հեռանում է Հնդկաստան:

Անցկուն հայրենասերը 1773թ. Մադրասում անդամակցեց Շահամիր Շահամիրյանի ստեղծած ազատագրական խմբակին: Այստեղ Մ. Բադրամյանի հետ հանդիպումներից մե-

կի ժամանակ էմինը նկատել է, որ հայ ժողովուրդը պետք է իր ազատությունը կերտի սեփական ուժերով, այլ ոչ թե սպասի ուրիշների օգնությամբ: Հովսեփի էմինի գործունեությունը հայ ազատագրական պայքարի կարևոր և յուրօրինակ դրսևորումներից էր, երբ ազատագրման հիմնական միջոց դիտվում էր համախմբվելը և սեփական ուժերին ապավինելը:

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1760-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

18-րդ դարի 60-80-ական թթ. հայ ազատագրական մտքի կենտրոններ շարունակում էին մնալ գաղթավայրերը: Մեծ ակտիվություն դրսևորեցին հատկապես հնդկահայ և ռուսահայ գաղթավայրերը:

Հնդկահայերը լուրջ քայլերի դիմեցին հայ ազատագրական պայքարի կազմակերպման, շարժման գաղափարական մշակման ուղղությամբ: Դա գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հայ վաճառականները, չդիմանալով անգլիացիների ոչ հավասար պայմաններում ընթացող մրցակցությանը և հալածանքներին, դուրս էին մղվում հնդկական շուկաներից: Այս ամենը բերեց նրան, որ հնդկահայերը սկսեցին մտորել պատմական հայրենիքի ազատագրման ուղիների և անկախ պետականություն ստեղծելու մասին:

1771թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում ստեղծվեց հայ իրականության մեջ առաջին քաղաքական խմբակը: Դրա ղեկավար կորիզը կազմում էին հարուստ ակնավաճառ Շահամիր Շահամիրյանը, նրա որդիները՝ Հակոբը և Եղիազարը, դարաբաղցի քահանա Մովսես Բաղդամյանը, հարուստ առևտրական Գրիգոր Խոջաջանյանը, Հովսեփի էմինը: Շ. Շահամիրյանը Հայաստանի ազատագրության հարցի շուրջ ակտիվ նամակագրություն հաստատեց Արցախի մելիքների, Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսների, վրաց Հերակլ II թագավորի և այլոց հետ: Շ. Շահամիրյանը գտնում էր, որ Հայաստանը պետք է ազատագրվի համահայկական ապստամբության միջոցով, որը ղեկավարելու էին Ս. Էջմիածինն ու Արցախի մելիքները: Նա մեծ տեղ էր հատկացնում հայ-վրացական համագործակցությանը և Ռուսաստանի օժանդակությանը:

Խմբակի անդամները իրենց գործունեության ընթացքում մեծ տեղ էին հատկացնում ազատագրական գաղափարների քարոզմանն ու տարածմանը: Այդ նպատակով 1772թ. Մադրասում հիմնեցին հայկական տպարան, որտեղ տպագրվեցին մի շարք աշխատություններ, որոնց նպատակն էր ազատագրական գաղափարների տարածումը: Այնտեղ տպագրվեց Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գիրքը, ուր շարադրված էին խմբակի անդամների հայացքները Հայաստանի ազատագրման վերաբերյալ: Երիտասարդության ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու և հայրենասիրական զգացումներ արթնացնելու համար «Նոր տետրակում» ներկայացված էին հայոց պատմության հերոսական դրվագները: «Նոր տետրակը» քարոզում էր, որ ազատություն պետք է ձեռք բերել սեփական ուժերով և զինված պայքարի միջոցով, իսկ օտարների աջակցության վրա հույս դնելը ուղղակի մոլորություն է, հայ ժողովրդի տառապանքներին վերջ դնել հնարավոր է միայն սեփական պետություն ունենալու դեպքում, որտեղ պետք է հաստատվեին հանրապետական կարգեր: Կարևոր տեղ էր հատկացվում ժողովրդի շրջանում լուսավորության և գիտության տարածմանը:

Մադրասի խմբակի մյուս կարևոր հրատարակությունը «Որոգայթ փառաց» գիրքն էր, որի հեղինակը Շ. Շահամիրյանն է: Այն իրենից ներկայացնում էր Հայաստանի ապագա հանրապետության 521 հոդվածից կազմված սահմանադրության նախագիծը: Այդտեղ մերժվում էին միապետական կարգերը և կառավարման լավագույն ձև էր հռչակվում հանրապետությունը, որտեղ իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները պետք է լինեին ընտրովի:

18-րդ դարի երկրորդ կեսին ռուսահայ գաղթավայրերում ևս ակտիվորեն քննարկվում էին Հայաստանի ազատագրության տարբեր ծրագրեր: Նրանց ոգևորում էր այն հանգամանքը, որ Ռուսաստանը ակտիվ քաղաքականություն էր սկսել Կովկասում, լուրեր էին տարածվում ռուսների դեպի Անդրկովկաս իրականացվելիք արշավանքի մասին:

1769թ. Աստրախանի մեծահարուստ գործարանատեր Մովսես Սարաֆյանը ռուսահայ մի շարք գործիչների՝ Յովհաննես Լազարյանի, Գրիգոր Կամպանյանի գիտությամբ,

կազմեց և կայսրուհի Եկատերինա II-ին ներկայացրեց Հայաստանի ազատագրության մի ծրագիր: Այն նախատեսում էր, որ Ռուսաստանը և Վրաստանը պետք է պատերազմ սկսեին Թուրքիայի դեմ: Ռազմական գործողություններին գործուն մասնակցություն էին ունենալու Արցախի մելիքները, ինչպես նաև այլ վայրերի հայերից կազմված կամավորական ջոկատներ: Ազատագրված Հայաստանում նախատեսվում էր Ռուսաստանի հովանավորությամբ վերականգնել թագավորությունը, իսկ Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար թագավոր: Հայերը անհրաժեշտության դեպքում զորք էին տրամադրելու Ռուսաստանին, իսկ վերջինս Հայաստանը պաշտպանելու էր այլ պետությունների ոտնձգություններից: Մովսես Սարաֆյանի ծրագիրը չիրագործվեց, սակայն կարևոր նշանակություն ունեցավ ազատագրական հետագա ծրագրերի կազմման համար:

1780-ական թթ. սկզբներին Ռուսաստանը գործնական քայլերի դիմեց Անդրկովկասը գրավելու համար: Ռուսական կառավարությունը հասկանում էր, որ հայերը նպաստավոր դեր կարող են ունենալ այդ քաղաքականության ճանապարհին: Ուստի արշավանքը կազմակերպելու, դրանում հայերի դերակատարությունը հստակեցնելու և ոգևորելու համար 1780թ. Պետերբուրգում հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցեցին իշխան Գ. Պոտյոմկինը, զորավար Ա. Սուվորովը, որը պետք է գլխավորեր նախատեսվող արշավանքը, Հովհաննես Լազարյանը, Հովսեփ արք. Արղությանը: Քննարկվեց հայոց պետականության վերականգնման հնարավորությունը: Այդ արշավանքը նախատեսվում էր իրականացնել 1783թ., սակայն տարբեր պատճառներով ռուսական արշավանքը հետաձգվեց: Այդ շրջանում է, որ հայ գործիչները մշակեցին և ռուսական կառավարությանը ներկայացրին Հայաստանի ազատագրության և հայ-ռուսական դաշնագրի երկու նախագիծ:

Առաջին նախագիծը 1783թ. ռուսական կառավարությանը ներկայացրեց Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայտնի է «Հյուսիսային ծրագիր» անունով: Ըստ դրա, ռուսական զորքերի օգնությամբ ազատագրված Հայաստանում վերականգնվելու էր հայկական թագավորությունը: Հայոց թագավորի թեկնածուին պետք է առաջադրեր ռուսական կայս-

րուհին: Հայոց թագավորը պետք է օծվեր Ս. Էջմիածնում, դավաներ հայոց կրոնը և երկիրը կառավարեր հայկական օրենքներով: Հայոց թագավորությունը ունենալու էր զինանշան, դրոշ և սեփական դրամ: Երկրի մայրաքաղաք դառալու էր Վաղաշապատը կամ Անին: Վերականգնվելու էին իշխանական տների ժառանգական իրավունքները: Հայաստանը Ռուսաստանին վճարելու էր հարկ և անհրաժեշտության դեպքում տրամադրելու էր զորք: Նախագծում խոսվում էր հայ-ռուսական հավիտենական բարեկամության մասին:

Այդ նույն շրջանում Շ. Շահամիրյանը կազմեց Հայաստանի ազատագրության «Հարավային ծրագիրը»: Ըստ դրա ռուսական զորքերի կողմից Հայաստանը ազատագրելուց հետո երկրում ստեղծվելու էր պառլամենտական հանրապետություն: Երկրի օրենսդիր մարմինը կոչվելու էր «Հայոց տուն», իսկ գործադիրը՝ «Նախարարությունը», որի գլուխ պետք է կանգներ ազգությամբ և դավանանքով հայ նախարարը: Հայաստանը անհրաժեշտության դեպքում Ռուսաստանին տրամադրելու էր զորք, իսկ ռուսական 6.000-ոց զորքը 20 տարի ժամանակով մնալու էր Հայաստանում, որի ծախսերը հոգալու էր հայկական կողմը: Հայաստանը Ռուսաստանին վճարելու էր խորհրդանշական չափի հարկ: Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելու էր բարեկամական անխախտ պայմանագիր: Իսկ Երկու երկրների միջև վեճերի ծագման դեպքում դիմելու էին երրորդ պետության միջամտությանը, որի որոշումը պարտադիր էր լինելու երկու կողմի համար:

Փաստորեն, «Հյուսիսային ծրագրով» Հայաստանում վերականգնվելու էին միապետական կարգերը և երկիրը կախման մեջ էր գտնվելու Ռուսաստանից, իսկ «Հարավային ծրագրով» Հայաստանում ստեղծվելու էր պառլամենտական հանրապետություն և կախվածությունը Ռուսաստանից կրելու էր ձևական բնույթ: Պետք է նշել, որ «Հարավային ծրագիրը» իր բնույթով ավելի առաջադիմական էր, սակայն «Հյուսիսային ծրագիրը» իրականություն դառնալու ավելի մեծ հնարավորություններ ուներ, քանի որ այն համապատասխանում էր ժամանակի ոգուն ու պատմական պայմաններին: Հայ-ռուսական դաշնագրի երկու նախագծերն էլ ներկայացվեցին ցարական արքունիքին, սակայն դրանցից ոչ մեկն էլ կյանքի չկոչվեց: Ռուսաստանը չէր պատրաստվում որևէ պայմանագիր

կնքել գոյություն չունեցող պետության հետ և գործում էր ելնելով միմիայն իր իրական շահերից:

40. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

19-րդ դարի սկզբին տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնք բախտորոշ դարձան Անդրկովկասի ժողովուրդների, և հատկապես հայերի համար: Անդրկովկասում հաստատվելու համար Ռուսաստանը դիմեց բավական վճռական քայլերի, որոնք հանգեցրին Պարսկաստանի և Թուրքիայի հետ մի շարք պատերազմների: Հայերը ամենագործուն աջակցություն էին ցույց տալիս ռուսներին, որպեսզի ազատվեն պարսկա-թուրքական դաժան լծից: Ռուսաստանը Անդրկովկասում հաստատվելու իր գլխավոր հենարաններից մեկն էր համարում հայ բնակչությանը, քանի որ գրեթե մեկ դար հայերը իրենց ազատագրության հույսը կապում էին ռուսական բանակների առաջխաղացման հետ, մտածելով, որ Ռուսաստանի օգնությամբ կվերականգնեն հայոց պետականությունը: Ցարական իշխանությունները փորձում էին հայերի մոտ վառ պահել այդ հույսերը, սակայն խուսափում էին որևէ խոստում տալուց, քանի որ մտադիր չէին ռուս զինվորների արյունով նվաճված տարածքներում պետություն ստեղծել հայերի համար:

1801թ. Արևելյան Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Դրանով Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև մի շարք հայկական շրջաններ՝ Լոռին, Փամբակը, Ղազախը, Շամշադինը:

Չնայած Վրաստանը միացվեց խաղաղ ճանապարհով, սակայն դա չափազանց սրեց իրադրությունը երկրամասում: Ռուսաստանը ստիպված էր ավելի քան քառորդ դար պայքարել ամբողջ Անդրկովկասը գրավելու համար: Հակասությունների սրումը ի վերջո հանգեցրեց պատերազմի:

1804-1813թթ. տեղի ունեցավ ռուս-պարսկական պատերազմ, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: 1813թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով Արևելյան Անդրկովկասը, Դաղստանը,

Արևելյան Վրաստանը, Գանձակը, Ղարաբաղը, Ջանգեզուրը և Շիրակը անցան Ռուսաստանին:

1806-1812թթ. տեղի ունեցավ նաև ռուս-թուրքական պատերազմ: Դրա արդյունքում բազմաթիվ հայկական շրջաններ ավերվեցին, սակայն Բուխարեստում ստորագրված հաշտության պայմանագրով որևէ հայկական տարածք Ռուսաստանին չմիացվեց:

Գյուլիստանի հաշտությունից հետո Ռուսաստանի և Պարսկաստանի հարաբերությունները մնացին լարված, քանի որ ռուսները ցանկանում էին գրավել նաև Երևանի ու Նախիջևանի խանությունները, իսկ պարսիկները ձգտում էին վերադարձնել կորցրած տարածքները: Պարսիկներին ռազմական ու դիվանագիտական աջակցություն էին ցույց տալիս և Ռուսաստանի դեմ էին գրգռում Անգլիան ու Ֆրանսիան:

Դա հանգեցրեց 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին: Չնայած սկզբնական շրջանում պարսիկները որոշակի հաջողությունների հասան, քանի որ ռուսների թիկունքում ապստամբեցին մահմեդականները և որոշ վրացական շրջաններ, սակայն հայ բնակչության աջակցությամբ ռուսական բանակն ի վերջո ջախջախեց հակառակորդին:

1827թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքերը գրավեցին Արևելյան Հայաստանի ամենահզոր ամրությունը՝ Երևանի բերդը: Այս իրադարձությունները իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպում:

1828թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրով Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանը դարձավ Արաքս գետը: Ռուսաստանին անցան Երևանի և Նախիջևանի խանությունները, Օրդուբադի շրջանը: Ցանկացողներին թույլատրվեց Պարսկաստանից գաղթել ռուսական տարածքներ: Մոտ 45.000 հայեր գաղթեցին դեպի Ռուսաստանին անցած տարածքները: Այս գաղթը կարևոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխման գործում, քանի որ հայերի թիվը մշտական բռնագաղթերի ու կոտորածների հետևանքով զգալիորեն նվազել էր Արարատյան դաշտում:

1828-1829թթ. տեղի ունեցավ ռուս-թուրքական հերթական պատերազմը: Հայերը այս պատերազմում ևս ռուսներին

ցույց տվեցին նյութական, ռազմական և բարոյական մեծ աջակցություն: 1829թ. սեպտեմբերի 2-ին ստորագրված Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով Ռուսաստանին անցան Ախալքալաքն ու Ախալցխան: Միաժամանակ կազմակերպվեց արևմտահայերի ներգաղթ դեպի Արևելյան Հայաստան: Ավելի քան 70.000 արևմտահայեր էրզրումից, Կարսից, Բայազետից վերաբնակվեցին Ախալքալաքում, Ախալցխայում, Շիրակում և Սևանի ավազանում:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմական կարևոր և դրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Հայաստանի մի մասն ազատագրվեց մի քանի դար տևած պարսկա-թուրքական դաժան տիրապետությունից, որի ընթացքում հայ բնակչությունը անընդմեջ ենթակա էր պատերազմների արհավիրքներին, մասնակի ու զանգվածային կոտորածների կամ գերեվարությունների, մահմեդական տիրակալների կամայականություններին: Այժմ հայ ժողովրդի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին խաղաղ ստեղծագործական աշխատանքի, տնտեսական ու մշակութային առաջընթացի համար, վերացավ մեր ժողովրդի գլխին մշտապես կախված ֆիզիկական ոչնչացման վտանգը: Ռուսաստանը, լինելով ավելի զարգացած, կայուն օրենքներ ու վարչաձև ունեցող երկիր, գործունեության մեծ հնարավորություններ էր ապահովում աշխատասեր ու ընդունակ հայերի համար:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հայ ժողովուրդը ամենագործուն աջակցություն ցույց տվեց ռուսական զորքերին: Կազմակերպվեցին բազմաթիվ կամավորական ջոկատներ, որոնք աչքի ընկան խիզախությամբ, բարձր մարտունակությամբ, տեղանքի իմացությամբ և հերոսական մասնակցություն ունեցան հայրենիքի ազատագրման գործում: Հայերը նաև նյութական և բարոյական աջակցություն ցույց տվեցին ռուսներին: Հայերի ակտիվ մասնակցությունը այդ պատերազմներին ազգային-ազատագրական պայքարի յուրօրինակ դրսևորում էր, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հայկական շրջանակները հավատում էին, որ պատերազմից հետո Ռուսաստանի հովանու ներքո վերականգնվելու է հայկական թագավորությունը կամ ինքնավարություն է շնորհվելու Հայաստանին:

41. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830-1860-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արևելյան Հայաստանի գրավումից անմիջապես հետո ռուսական կառավարական շրջաններին և հայ գործիչներին զբաղեցնում էր այդ երկրամասերի կարգավիճակի հարցը:

Այս շրջանում ցարական կառավարությունը քննարկում էր Արևելյան Հայաստանում 80.000 մալոռուս կազակների բնակեցնելու հարցը, որպեսզի ապահովեն սահմանների անվտանգությունը, յուրացնեն նոր տարածքները և ավելի ամրապնդեն Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում:

Այդ նախագծի իրականացումը փոփոխություններ կնտցներ երկրամասի ժողովրդագրական պատկերի մեջ՝ ի վնաս հայերի: Ի հակադրություն դրա հայ գործիչներից Խաչատուր Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրեց մի նախագիծ, որով նախատեսվում էր վերականգնել հայկական թագավորությունը Ռուսական կայսրության կազմում: Հայոց թագավորությունը ընդգրկելու էր ռուսական տիրապետության տակ գտնվող բոլոր հայկական պատմական տարածքները՝ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Շաքիի և Շամախիի մարզերը:

Զնայած ցարական իշխանությունները նպատակ չունեին բավարարելու հայ ժողովրդի ազգային բաղձանքները, այնուամենայնիվ նրանք ստիպված էին որոշակի զիջումների գնալ, որպեսզի ավելի չխորացնեն դժգոհությունը Անդրկովկասում միակ հավատարիմ ժողովրդի մեջ: Նման պայմաններում ռուսական կառավարությունը ստիպված էր հրաժարվել իր ծրագրերից և փնտրել կառավարման այնպիսի համակարգ, որը որոշ չափով կհամապատասխաներ հայկական ակնկալություններին և դեմ չէր լինի ցարիզմի հեռահար քաղաքական նպատակներին:

1828թ. մարտի 21-ին կայսր Նիկոլայ I-ի հրամանագրով ստեղծվեց Հայկական մարզը, որի մեջ մտան Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանին անցած Երևանի, Նախիջևանի խանությունները, Օրդուբադի գավառը: Նրանից դուրս թողնվեցին արևելահայկական մյուս տարածքները՝ Լոռին,

Փամբակը, Ղազախը, Շամշադինը, Շիրակը, Ղարաբաղը, Գանձակը, Զանգեզուրը:

Նորաստեղծ մարզը կառավարելու էր մարզային վարչությունը, որի պետ նշանակվեց գեներալ Ա. Ճավճավաձեն: Մարզային վարչության մեջ մտնում էին երկու ռուս զինվորական, հայ և մահմեդական մեկական ներկայացուցիչ: 1830-1838թթ. Հայկական մարզի պետն էր գեներալ Բ. Բեհբուլունը, որը զգալի աշխատանք կատարեց մարզում ռուսական օրենքների հաստատման ուղղությամբ: Հայկական մարզի ստեղծումը, փաստորեն, մասնակի զիջում էր հայ ժողովրդի ազգային պետականության վերականգնման ձգտումներին և նրա ստեղծումը ժամանակավոր բնույթ էր կրում:

Ցարիզմին մտահոգում էր Անդրկովկասում միասնական վարչակարգ հաստատելու և ընդհանուր օրենքներով երկրամասը կառավարելու հարցը: 1840թ. Անդրկովկասը բաժանվեց երկու վարչական միավորների՝ Վրացա-իմերեթական նահանգ՝ Թիֆլիս կենտրոնով և Կասպիական մարզ՝ Շամախի կենտրոնով:

Վրացա-իմերեթական նահանգի մեջ մտան Թիֆլիսի, Թելավի, Գորիի, Բելոկանի, Քութայիսի, Գուրիայի, Ելիզավետպոլի, Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի գավառները, իսկ Կասպիական մարզի գավառներն էին՝ Շիրվանը, Ղարաբաղը, Շաքին, Բաքուն, Թալիշը, Դերբենդը և Ղուբան: Այսպիսով, 12-ամյա գոյությունից հետո Հայկական մարզը վերացվեց:

Այս վարչական բաժանումից հետո ցարիզմը տարբեր օրինագծերի միջոցով փորձում էր Անդրկովկասում ամրապնդել իր իշխանությունը և երկրամասում ստեղծել տեղական առանձնահատկություններից զուրկ ռուսական վարչակարգ:

1846թ. Անդրկովկասը ենթարկվեց նոր վարչական բաժանման: Ստեղծվեցին չորս նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի: Միայն 1849թ. կազմավորվեց Երևանի նահանգը, որի մեջ ընդգրկվեց նախկին Հայկական մարզի տարածքը:

Արևելյան Հայաստանը գրավելուց հետո ցարական կառավարությունը ուշադրությունը սևեռեց նաև Հայ Առաքելական եկեղեցու վրա: Եկեղեցին վճռորոշ դերակատարություն ուներ հայ ժողովրդի կյանքում: Ռուսաստանը լավ էր հաս-

կանում, որ եկեղեցին մեծ դեր կարող էր խաղալ իր արտաքին քաղաքական ծրագրերում, մանավանդ, որ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի հետաքրքրությունների շրջանակում էր գտնվում: Այդ առումով ռուսական կառավարական շրջանակները լավ էին հասկանում, որ անհրաժեշտ է, թեկուզ առերևույթ, հայոց եկեղեցին պահպանի նախկին դիրքը, միաժամանակ գտնվելով կառավարության համար ընդունելի շրջանակներում: Այդ նկատի առնելով ցարիզը ձեռնամուխ եղավ հայոց եկեղեցու ներքին կյանքի կարգավորման և Ռուսաստանում նրա տեղի, դերի ու նշանակության որոշմանը:

Թիֆլիսում ստեղծվեց գաղտնի հանձնաժողով, որը պետք է հայոց եկեղեցու ներքին կյանքը սահմանող կանոնադրություն մշակեր: Այդ հանձնաժողովի ներկայացրած նախագծի հիման վրա 1836թ. մարտի 11-ին Նիկոլայ I-ը ստորագրեց «Պոլոժենիե» անունով հայտնի կանոնադրությունը:

Այն սահմանում էր հայ եկեղեցու կազմակերպական կառուցվածքը, ըստ որի հայ եկեղեցու գլուխ շարունակում էր մնալ կաթողիկոսը, որն ընտրվում էր համազգային ընդհանուր ժողովում: Սակայն ժողովը պետք է ընտրեր երկու թեկնածու և ներկայացներ ցարին, որն իր հայեցողությամբ կաթողիկոսական աթոռին պետք է հաստատեր նրանցից մեկին: Ռուսաստանից դուրս ապրող հայերի հետ կաթողիկոսը կապ պահպանելու էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության միջոցով: Կաթողիկոսի իշխանությունը սահմանափակում էր Սինոդը, որը կիսանկախ էր և գտնվում էր կառավարության նշանակած պրոկուրորի հսկողության տակ: Փաստորեն, հայ եկեղեցին գրեթե ամբողջությամբ դրվում էր կառավարության հսկողության տակ, սակայն նրանից չէր ստանում նյութական որևէ օժանդակություն: «Պոլոժենիեն» հայ եկեղեցու դավանանքը հռչակում էր ազատ, իսկ հոգևորականները ազատվում էին հարկ ու տուրքից: Եկեղեցին կարող էր բացել հայկական դպրոցներ՝ ծխական, թեմական և այլն: Նախատեսվում էր Էջմիածնում ստեղծել հոգևոր ճեմարան: Փաստորեն, հայ ժողովրդի լուսավորության գործը թողնվում էր եկեղեցու տնօրինության տակ:

«Պոլոժենիեն» դժգոհությամբ ընդունվեց հայ եկեղեցու, ժողովրդական զանգվածների և արևմտահայության կողմից, քանի որ այն դիտվում էր որպես հայ եկեղեցու դարերով

սրբագործված իրավունքներն ու ազգային ավանդույթները սահմանափակող օրենք:

Ցարիզմի գաղութային քաղաքականության բնորոշ գծերից էր Արևելյան Հայաստանի բնակեցումը Ռուսաստանից բերված աղանդավորներով, որոնք բնակեցվեցին Թիֆլիս-Ալեքսանդրապոլ ճանապարհին, Սևանի ավազանում և այլ վայրերում: Այդ ռուսաբնակ գյուղերը զբաղեցնում էին լավագույն հողատարածքները և կառավարության տված արտոնությունների շնորհիվ շատ արագ բարգավաճեցին: Այս ամենը լուրջ դժգոհություններ էր առաջացնում տեղական բնակչության մոտ:

Անդրկովկասում իր հենարանն ամրապնդելու նպատակով ցարական կառավարությունն ուժեղացրեց հողատեր-կալվածատերերի դիրքերը: Դրան էր ուղղված 1846թ. դեկտեմբերի 6-ի օրենքը, որով Անդրկովկասի խաները, բեկերը և մելիքները ճանաչվեցին հողի ժառանգական սեփականատերեր:

Սակայն, պետք է նշել, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին նպաստեց երկրի զարգացմանը, թեև այն դեռևս հետամնաց ագրարային երկիր էր և բնակչության 90 տոկոսը գյուղացիներ էին: Չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը արևելահայությունը Ռուսական կայսրության կազմում զարգացման և անվտանգության ավելի իրական երաշխիքներ ստացավ, որը նպաստեց երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի բնականոն զարգացմանը:

42. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830-1860-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

19-րդ դարի 30-60-ական թվականներին Արևմտյան Հայաստանի շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Արևմտյան Հայաստանը հիմնականում ընդգրկված էր Էրզրումի, Կարսի, Վանի, Դիարբեքիի և Սեբաստիայի վիլայեթների (նահանգների) մեջ:

Օսմանյան թուրքիան հետամնաց երկիր էր, որի համար այս շրջանում ստեղծվել էր խիստ ճգնաժամային կացություն: Գնալով ուժեղանում էին կենտրոնախույս ուժերը, շատ փաշայություններ գտնվում էին կիսանկախ վիճակում, երկրի սոցիալ-տնտեսական վիճակից դժգոհ էին հասարակության գրեթե բոլոր խավերը, լայն թափով տարծվում էին ազգային-ազատագրական շարժումները: Երկիրը կանգնել էր բարենորոգումների հրամայական պահանջի առջև, որը կփրկեր կայսրությունը կործանումից:

Երկրում բարենորոգումներ անցկացնելու առաջին փորձը կատարեց սուլթան Մահմուդ II-ը, որը 1826թ. վերացրեց երկրի համար պատուհաս դարձած ենիչերիական զորամասերը և ստեղծեց նոր տիպի բանակ, որը պետք է նպաստեր երկրի կենտրոնացմանը և սուլթանի իշխանության ամրապնդմանը: Սակայն «Թանզիմաթի» (ռեֆորմների) դարաշրջանը թուրքիայում սկսվեց սուլթան Աբդուլ Մեջիդի օրոք: 1839թ. Մոյենբերի 3-ին նա ստորագրեց ռեֆորմների ծրագիր, որը կոչվեց Գյուլխանեի Հաթթը-շերիֆ: Այն հռչակում էր առանց խտրականության բոլոր հպատակների կյանքի, պատվի և գույքի ապահովություն, հարկերի ու տուրքերի հավասար բաշխում, բոլոր հպատակների հավասարություն օրենքի առաջ, քրիստոնյաներին թույլատրվում էր ծառայել բանակում, հանցագործություն հռչակվեց թուրքիայում խոր արմատներ ունեցող կաշառակերությունը:

Սակայն թանզիմաթի հռչակած հավասարությունները կրում էին ձևական բնույթ և այն գրեթե ոչինչ չփոխեց գոյություն ունեցող դրության մեջ: Շարունակում էր պահպանվել ջիզիեն (գլխահարկ), որը ստորացուցիչ էր ոչ մահմեդականների համար, իսկ պաշտոնների նշանակում էին միայն մահմեդականների: Թանզիմաթը մահմեդական բնակչության կողմից կատաղի դիմադրության հանդիպեց, որը հաճախ վերածվում էր քրիստոնյաների ջարդերի:

1853թ. բռնկվեց ռուս-թուրքական հերթական պատերազմը, որը հայտնի է Արևելյան կամ Ղրիմի պատերազմ անունով, քանի որ ռազմական գլխավոր գործողությունները ծավալվել էին Ղրիմի թերակղզում: Այս անգամ ևս հայերը աջակցեցին ռուսական բանակին: Կովկասյան ճակատում ռուսներն ունեին 20.000 զինվոր, որոնց միացան հայ և վրացի 10.000

կամավորներ: Ռուսական Կովկասյան բանակի հայազգի հրամանատար Բ. Բեհբուքովը 1853թ. նոյեմբերի 19-ին Բաշկադիքլարի ճակատամարտում 10.000-ոց զորքով ջախջախեց թուրքական 36.000-ոց բանակին: 1854թ. հուլիսի 24-ին Բեհբուքովը Կարսից ոչ հեռու գտնվող Քյուրուկդարայում 18.000 զինվորներով ջախջախեց թուրքերի 60.000-ոց բանակին: 1855թ. նոյեմբերի 16-ին ռուսները գրավեցին Կարսը, որի համար մղվող մարտերում աչքի ընկավ գնդապետ Մ. Լորիս-Մելիքովը: Սև ծովում մղված մարտերում աչքի ընկավ հայազգի փոխծովակալ Լ. Սերեբրյակովը:

Չնայած Կովկասյան ճակատում ունեցած հաջողություններին, Ռուսաստանը պարտվեց Ղրիմում, քանի որ 1854թ. Թուրքիային միացան Անգլիան ու Ֆրանսիան, իսկ 1855թ.՝ Սարդինիան: 1856թ. մարտի 18-ին Փարիզում ստորագրված հաշտության պայմանագրով Ռուսաստանը վերադարձրեց Արևմտյան Հայաստանում գրաված բոլոր տարածքները:

Պատերազմից հետո, բնականաբար, թուրքերը ավելի մեծ անվստահություն սկսեցին ցուցաբերել ռուսներին ուրախությամբ ընդունող և աջակցող հայերի հանդեպ:

Թուրքիայում թանգիմաթի երկրորդ փուլը սկսվեց 1856թ. փետրվարի 18-ին հռչակված հրովարտակով, որը կոչվեց Հաթթը-հումայուն: Այն հիմնականում պայմանավորված էր Ղրիմի պատերազմից հետո ստեղծված իրողություններով և եվրոպական տերությունների ճնշմամբ: Այս անգամ ևս հռչակվում էր բոլոր դավանանքի հպատակների հավասարությունը օրենքի առաջ, անձի և գույքի ապահովություն: Քրիստոնյա ազգերը հոգևոր խորհուրդներ ընտրելու իրավունք էին ստանում, նրանք մահմեդականների հետ հավասար իրավունք էին ստանում նշանակվելու տարբեր պաշտոնների և սովորելու քաղաքացիական ու ռազմական վարժարաններում: Թանգիմաթի այս փուլում հռչակված օրենքները ևս մնացին թղթի վրա և իրական կյանքում չկիրառվեցին, քանի որ դժգոհություն առաջ բերեց մահմեդականների և կառավարող վերնախավի մոտ:

Այսպիսով, չնայած հռչակած բարեփոխումներին, Թուրքիան շարունակում էր մնալ հետամնաց, ագրարային երկիր, որտեղ չէր ապահովված քրիստոնյաների կյանքը և գույքը: Այդ իրավագուրկ վիճակը և հարստահարությունները

առավել ցայտուն կերպով դրսևորվում էին կայսրության ծայրամասերում և հատկապես Արևմտյան Հայաստանում, ուր տեղի ու տնօրեն էին կիսանկախ քուրդ բեկերը:

Թանգիմաթյան շրջանի ռեֆորմները լայն արձագանք ունեցան արևմտահայերի մոտ: 1830-40-ական թթ. արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր: Մինչ այդ Կ.Պոլսի հայոց պատրիարքը և ամիրայական դասը, փաստորեն, լիիշխան տնօրինում էին Ազգային գործերը: Սակայն Կ.Պոլսի հայ արհեստավորները և մանր առևտրականները ևս ձգտում էին մասնակից դառնալ Ազգային գործերի կառավարմանը և լուրջ պայքար էին սկսել ամիրայական դասի և պատրիարքի ունեցած մենատիրության դեմ: Կրքերը բորբոքվում են, երբ սուլթանը քրիստոնյա համայնքներին թույլատրում է ստեղծել իրենց ներքին գործերը կարգավորող կանոնադրություններ:

1853թ. ստեղծվում է հանձնաժողով, որը պետք է կազմեր հայ համայնքի ներքին կյանքը կարգավորող կանոնադրություն: Հանձնաժողովի մեջ ընդգրկվեցին եվրոպական կրթություն ստացած և ժամանակի առաջադեմ գաղափարներով տոգորված մտավորականներ Գրիգոր Օտյանը, Սերվիշենը (Սերովբե Վիչենյան), Նիկողոս Պալյանը, Նահապետ Ռուսինյանը, Մկրտիչ և Գրիգոր Աղաթոնները, Կարապետ Ութունճյանը:

Կանոնադրությունը կազմվեց բելգիական սահմանադրության մանուսկրամբ և ներծծված էր ֆրանսիական հեղափոխության ոգով: Ն.Ռուսինյանի առաջարկով այն կոչվեց Ազգային սահմանադրություն, և 1857թ. ներկայացվեց Կ.Պոլսի Հայոց Ազգային ժողովի քննարկմանը: Պատրիարքն ու ամիրաները պահանջեցին էական փոփոխություններ մտցնել ներկայացված կանոնադրության մեջ, որը սահմանափակում էր իրենց իրավունքները: Պայքարը հետզհետե թեժացավ, տեղի ունեցան բողոքի ցույցեր: Որոշ փոփոխություններից հետո 1860թ. մայիսի 24-ին պատրիարքը հաստատեց Ազգային սահմանադրությունը:

1863թ. մարտի 17-ին Ազգային սահմանադրությունը վավերացրեց սուլթանական կառավարությունը, սակայն մինչ այդ կատարելով լուրջ փոփոխություններ ու կրճատումներ: Նախկին 150 հոդվածների փոխարեն մնացել էր 99 հոդված,

ընդլայնվել էր պատրիարքի իրավունքները և բոլոր էական ազգային խնդիրների լուծումը կախված էր մնում սուլթանի և Բարձր Դռան քնահաճույքից:

Ըստ դրա, ստեղծվում էին կրոնական և քաղաքական ժողովներ, որոնցից կազմվում էր Գերագույն ժողովը, որը հանդիսանում էր օրենսդիր մարմին: Գործադիր մարմին էր դառնում Ազգային կենտրոնական վարչությունը: Հիմնվում էին նաև տնտեսական, դատական, ուսումնական, թաղային խորհուրդներ: Ընտրելու իրավունք ունեին 25, իսկ ընտրվելու 30 տարին բոլորած անձինք: Ընտրությունները գաղտնի էին և կատարվելու էին հինգ տարին մեկ:

Օսմանյան կայսրությունում ստեղծված պայմաններում Ազգային սահմանադրությունը չէր կարող լուրջ երաշխիք լինել հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Սակայն Ազգային սահմանադրությունը և սահմանադրական շարժումը առաջադիմական երևույթ էր, որի արդյունքում պատրիարքն ու ամիրայական դասը, փաստորեն, զրկվեցին ազգային գործերի միանձնյա կառավարումից: Ազգային սահմանադրությունը որպես արևմտահայերի ներքին կյանքը կարգավորող կանոնադրություն, պարբերաբար արգելվելով թուրքական կառավարության կողմից, իր գոյությունը պահպանեց մինչև 1915թ. Մեծ եղեռնը: Այն այսօր էլ, հարմարացվելով ժամանակի ոգուն, գործադրվում է հայկական Սփյուռքի որոշ համայնքներում:

43. ՁԵՅԹՈՒՆԻ 1862 Թ. ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի կեսերին Օսմանյան թուրքիայում շարունակում էին իրենց կիսանկախ դրությունը պահպանել մի քանի հայկական շրջաններ: Դրանցից ամենահայտնին Լեռնային Կիլիկիայում, Մարաշի վիլայեթում գտնվող Ձեյթունն էր, որն ուներ մոտ 35.000 բնակչություն: Չնայած թուրքական իշխանությունների գործադրած բոլոր ջանքերին, այն պահպանում էր իր կիսանկախ վիճակը: Նրանք միայն չնչին հարկ էին վճարում թուրքերին և հաճախ հրաժարվում էին նաև դրանից: Ձեյթունը ղեկավարվում էր չորս հայկական իշխանական տների կողմից՝ Շովրոյան, Սուրենյան, Յաղուբյան, Ենիտունյան (Նորաշխարհյան):

Թուրքական կառավարությունը բազմիցս փորձել էր ընկճել Ձեյթունը, սակայն ամեն անգամ պարտություն էր կրել և հեռացել: Ձախողվել էր նաև 1860թ. փորձը, երբ Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշան մեծ բանակով արշավեց գեյթունցիների դեմ: Ջերմուկի դաշտում գեյթունցիները թուրքերին մատնեցին ջախջախիչ պարտության:

Մարաշի նոր կառավարիչ Ազիզ փաշան ևս որոշեց գրավել Ձեյթունը: Նա սկզբում փորձեց կրոնական հողի վրա հայերի նկատմամբ ատելություն սերմանել շրջակա մահմեդական ցեղերի մոտ, նրանց դրդեց հարձակումներ կատարել Ձեյթուն գավառի հայկական գյուղերի վրա: Սակայն գեյթունցիներն արժանի հակահարված տվեցին այդ ավազակային հարձակումներին:

1862թ. հուլիսին Ազիզ փաշան 10.000-ոց բանակով շարժվեց Ձեյթունի վրա: Այս բանակին միացավ մեծ թվով մահմեդական բաշիբոզուկների խաժամուժը, որով թշնամու բանակի թիվը հասավ 40.000-ի: Նրանց խոստացել էին տալ կոտորված գեյթունցիների ունեցվածքը:

1862թ. հուլիսի 27-ին թուրքերը սկսեցին հարձակումը: Ազիզ փաշան, թալանելով, ավերելով և հրո ճարակ դարձնելով իր ճանապարհին գտնվող հայկական գյուղերը, մոտեցավ Ձեյթունին, որտեղ հավաքվել էին նաև շրջակա գյուղերի բնակիչները:

Ձեյթունցիները պատրաստվեցին վճռական ճակատամարտի: Սուրբ Աստվածածին վանքում գումարվեց ժողով: Ձեյթունցիներն ունեին միայն 7.000 ռազմիկներ, որոնք Մկրտիչ Յաղուբյանի, Ղազարոս Շովրոյանի, Նազարեթ Սուրենյանի և Ասատուր Ենիտունյանի գլխավորությամբ որոշեցին մինչև վերջ պայքարել թուրք հրոսակների դեմ: Ամրացվեցին բոլոր կարևոր բարձունքներն ու դիրքերը, և պատրաստվեցին պաշտպանության՝ պատրաստ մեռնելու, սակայն չնահանջելու հաստատ վճռականությամբ: Կռվին պետք է մասնակցեին նաև կանայք և աղջիկները, որոնք ժայռերի վրայից պետք է քարեր նետեին թշնամու վրա, իսկ պարտության դեպքում նետվեին գետը:

Վճռական բախումը տեղի ունեցավ 1862թ. օգոստոսի 2-ին: Ապավինելով Ձեյթունի լեռներին ու ձորերին՝ գեյթունցիները հետ մղեցին թշնամու բոլոր գրոհները՝ նրան հասց-

նելով ծանր հարված: Թշնամու գերակշիռ ուժերին ջախջախելու համար զեյթունցիները ցուցաբերեցին պատերազմական հմտություններ: Մի անգամ զեյթունցի քաջերի մոտ 500 հոգանոց խումբը կռվի բռնվեց թշնամու հետ, ապա նախապես կազմած ծրագրի համաձայն, դիմեց կեղծ փախուստի: Երբ ոգևորված թուրքերը հետապնդեցին հայկական ուժերին և մտան Ձեյթունի ծորը, նախապես բարձունքներում դիրքեր գրաված հայերը քարեր գլորեցին և հրացանային կրակ բացեցին նրանց վրա: Տալով մոտ 750 սպանված՝ թշնամին փախուստի դիմեց: Ձեյթունցիներն այդ վայրը անվանեցին «Կոտորածի ծոր»:

Ի վերջո, Ազիզ փաշան, տալով 2.000 սպանված և ռազմադաշտում թողնելով երկու թնդանոթ, հեռացավ Ձեյթունից: Ձեյթունցիներից զոհվեց 77 մարտիկ: Ձոհվածների մեջ էր նաև երիտասարդ Մարկոս Թաշճյանը, որն իր կյանքի գնով կարողացավ մտնել թուրքական բանակատեղի և սպանել թուրք թնդանոթաձիգին:

Թուրքական կառավարությունը Ազիզ փաշայի փոխարեն Սարաշի նոր կառավարիչ նշանակեց Աշիր փաշային՝ նրան հանձնարարելով նոր արշավանք ձեռնարկել Ձեյթունի վրա: Բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելիս դաժանություններով աչքի ընկած Աշիրը շրջափակեց Ձեյթունը՝ պահանջելով վերադարձնել ռազմավարը և վճարել հարկերը: Հաշվի առնելով թշնամու քանակական գերակշռությունը և երկարատև կռիվ մղելու անհնարինությունը՝ զեյթունցիները որոշեցին հաշտություն կնքել:

Ձեյթունցիները քահանայի միջոցով ուղարկեցին հարկի և ռազմավարի մի մասը: Այնուհետև Աշիրի մոտ ուղարկվեց 40 ծերունիներից կազմված մի պատվիրակություն բանակցությունների համար, քանի որ տևական շրջափակումը կարող էր սովամահության մատնել զեյթունցիներին: Բացի այդ, գործին միջամտեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքը և ֆրանսիական դեսպանը: Վերջինիս Ձեյթունի պատվիրակները հայտնեցին, որ ֆրանսիական օգնության դիմաց զեյթունցիները կընդունեն կաթոլիկություն: Թուրքական կառավարությունն իր հերթին փորձեց հարցը կարգավորել փոխգիշմամբ, որպեսզի Ձեյթունը չընկնի Ֆրանսիայի ազդեցության տակ:

Երկարատև բանակցություններից հետո կնքված համաձայնությամբ զեյթունցիները պարտավորվեցին վճարել զինվորական հարկ, առաջին անգամ Ձեյթուն էր մտցվելու թուրքական զորախումբ, կառուցվելու էր զորանոց, Ձեյթունում նշանակվելու էր թուրք կառավարիչ: Միաժամանակ, թուրքական կողմը վերացրեց Ձեյթունի պաշարումը, հրաժարվեց նոր արշավանքներ կազմակերպելուց, ճանաչեց ներքին հարցերում Ձեյթունի ինքնուրույնությունը: Փաստորեն, զեյթունցիները որոշ չափով զրկվեցին նախկին կիսանկախ դրությունից:

Ձեյթունի իրադարձությունները լիովին մերկացրին թուրքական թանգիմաթի էությունը: Վերացան պատրանքները, թե դրությունը Օսմանյան կայսրությունում կարող է փոխվել և երկրում կարող է հաստատվել իրավահավասարություն տարբեր կրոնական համայնքների միջև:

Ձեյթունի հերոսամարտը լայն արձագանք գտավ հայ իրականության մեջ: Մամուլում ներկայացվեցին Օսմանյան Թուրքիայում ազգահալած քաղաքականության դրսևորումները: Մեծ ժողովրդականություն ստացավ հայ նշանավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանի Ձեյթունին նվիրված բանաստեղծությունը: Ձեյթունի հերոսամարտը խթանեց ազգային ինքնագիտակցության հուժկու զարթոնքին և նախակարապետը եղավ արևմտահայության ազգային-ազատագրական զինված պայքարի համար:

44. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների վերելքը և Մերձավոր Արևելքում միջազգային հակասությունների սրումը 1877-1878թթ. հանգեցրին հերթական ռուս-թուրքական պատերազմի: Ռուսաստանը հանդես եկավ բալկանյան քրիստոնյա ժողովուրդների պաշտպանությամբ, որպեսզի ուժեղացնի իր ազդեցությունը Բալկաններում և Սև ծովի ավազանում:

1876թ. դեկտեմբերին Ռուսաստանի նախաձեռնությամբ Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանները սուլթանին ներկայացրին մի նախագիծ, որով Բուլղարիային, Բոսնիային

ու Զերցոգովինային տրվելու էր ինքնավարություն: Սակայն սուլթանը հրաժարվեց ընդունել այդ նախագիծը:

Դա պատրվակ դարձնելով՝ Ռուսաստանը 1877թ. ապրիլի 12-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային: Ռուսական բանակը Բալկաններում ջախջախեց թուրքերին, 1878թ. հունվարի 8-ին գրավեց Ադրիանապոլիսը և շարժվեց Կ. Պոլսի ուղղությամբ: Կովկասյան ճակատում նույնպես հաջողությունը ռուսների կողմն էր: Նրանք գրավեցին Բայազետը, Արդահանը, Կարսը, Էրզրումը և ազատագրեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը: Նման պայմաններում սուլթանը ստիպված էր զինադադար խնդրել:

Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակը գլխավորում էին մի շարք հայ զենքերալներ՝ Միքայել Լորիս-Մելիքովը, Գրիգոր Լորիս-Մելիքովը, Արշակ Տեր-Ղուկասովը, Հովհաննես Լազարևը, Բեհբութ Շելկովնիկովը, Հակոբ Ալխազովը, Ստեփան Քիչմիշևը: Այս իրողությունն արևմտահայերի կողմից ընկալվում էր որպես ռուսահայերի կողմից ուղարկված օգնություն: Ռուսական զենքի փայլուն հաղթանակներն արևմտահայերի գիտակցության մեջ ամրապնդեցին այն գաղափարը, որ Ռուսաստանի օգնությամբ կարող են ազատագրվել թուրքական լծից: Այդ էր պատճառը, որ արևմտահայերը ռուսական բանակին ցույց տվեցին ռազմական, նյութական ու բարոյական մեծ աջակցություն: Թուրքական բռնապետությունից ազատագրվելու հույսով՝ ռուսական բանակին էին միացել ավելի քան 40.000 հայ կամավորներ:

Ցավոք, դեպքերը զարգացան ոչ հայ ժողովրդի օգտին, իսկ պատերազմից հետո արևմտահայերի համար սկիզբ առավ աղետալի ժամանակաշրջան: Հայ ժողովրդի ազատագրության ճանապարհին հայտնվեց անհաղթահարելի խոչընդոտ՝ մեծ տերությունների հակասությունները (հատկապես անգլո-ռուսական): Անգլիան չէր կարող թույլ տալ Հայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից, քանի որ դրանով վերջինիս առջև կբացվեին Մերձավոր Արևելք և Հնդկաստան տանող ճանապարհները: Ուստի Անգլիան ամեն ինչ արեց, որպեսզի Ռուսաստանը հրաժարվի Հայաստանում գրաված տարածքներից:

1878թ. փետրվարի 19-ին Սան Ստեֆանոյում, հայ մեծահարուստ Հովհ. Տատյան բեյի ապարանքում հաշտության

պայմանագիր կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Դրանով Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան անկախացան և ընդարձակեցին տարածքները: Բուլղարիան, Բոսնիան և Հերցեգովինան ստացան ինքնավարություն: Ռուսաստանին անցան Հարավային Բեսարաբիան, Բաթումը, Արդահանը, Կարսը, Բայազետը և Ալաշկերտը: Հայկական մյուս տարածքները վերադարձվեցին Թուրքիային:

Պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիային մնացած հայկական նահանգներում իրականացվելու էին որոշ բարենորոգումներ: «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը Հայաստանի նրանց կողմից գրաված և Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բ. Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ, ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»: Ըստ 25-րդ հոդվածի, ռուսական զորքը դուրս էր բերվելու 6 ամսում, եթե իրագործվեին այդ բարենորոգումները:

Պետք է նշել, որ Հայաստանի վերաբերյալ պայմանագրի կետերը չգոհացրին հայ քաղաքական շրջաններին, որոնք հույս ունեին ինքնավարություն ձեռք բերել: Սակայն Սան Ստեֆանոյի պայմանագրի մեջ ակնկալված ինքնավարության մասին անգամ խոսք չկար:

Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի ճնշման տակ որոշվեց Բեռլինում հրավիրել միջազգային կոնֆերանս՝ վերանայելու ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը:

Արևմտահայերի շահերը պաշտպանելու նպատակով եվրոպա ուղարկվեց հայկական պատվիրակություն՝ Տարոնի արքեպիսկոպոս Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ, որին անդամակցեցին Պեշկեպաշի արքեպիսկոպոս Խորեն Նարբեյը (Գալֆայան), Մինաս Չերազը և Ստեփան Փափազյանը: Հայ պատվիրակները եղան Հռոմում, Փարիզում, Լոնդոնում, Պետերբուրգում: Նրանք տերությունների ներկայացուցիչներից խնդրեցին ինքնավարություն շնորհել Հայաստանին, սակայն խոստումներն այնքան էլ հուսադրող չէին: Հետաքրքիր է նշել, որ Փարիզում Մ. Խրիմյանը հանդիպեց եգիպտահայ նշանա-

վոր պետական գործիչ Նուբար փաշային, որը խորհուրդ չտվեց լայն ինքնավարություն պահանջել, քանի որ տերությունները դրան չէին համաձայնի: Նա առաջարկեց ավելի համեստ ծրագրով հանդես գալ, բարեփոխումներ պահանջել հարկային, դատական և ոստիկանական համակարգերում, քանի որ արդար կարգերի դեպքում հայերը բոլոր բնագավառներում առաջ կանցնեին թուրքերից և կկարողանային կարճ ժամանակում հասնել իրական անկախության: Նուբարը խոստացավ անձամբ միջնորդել Բեռլինի վեհաժողովում և կարգավորել այդ խնդիրները: Նուբարի ծրագրին հավանություն տվեց նաև մեկ այլ հայազգի դիվանագետ՝ Մելքոն խանը, որը Փարիզում Իրանի դեսպանն էր, իսկ Բեռլինի կոնֆերանսում գլխավորում էր իրանական պատվիրակությունը: Չնայած Մ. Խրիմյանը հավանություն տվեց այդ ծրագրին, սակայն պատրիարք Ն. Վարժապետյանը կտրականապես մերժեց և կարգադրեց Բեռլինում պահանջել լայն ինքնավարություն:

1878թ. հունիսի 1-ից հուլիսի 1-ը տեղի ունեցավ Բեռլինի վեհաժողովը: Հայ պատվիրակներին թույլ չտրվեց մասնակցել նիստերին: Տերությունները Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը հայերի համար աննպաստ ձևով շրջեցին և Բեռլինի պայմանագրում դարձրին 61-րդ: Այն ձևակերպվեց հետևյալ կերպ. «Բ.Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ մարզերում իրագործել տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ, ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Բ. Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»:

Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն խոսք չկար «Հայաստան» երկրի մասին, այլ միայն հիշատակվում է «հայաբնակ մարզեր» հասկացությունը, որտեղ կատարվելիք անորոշ բարենորոգումների կատարման վերահսկողությունը դրվում էր եվրոպական մեծ տերությունների վրա, որոնք տարբեր շահեր ու նկատառումներ ունեին այս հարցում: Ի սկզբանե պարզ էր, որ 61-րդ հոդվածը ստեղծված էր քողարկելու հայ ժողովրդի արդարացի պահանջների մերժումը: Այսպիսով, հայերը ստիպված էին հրաժարվել ոչ միայն ինքնավարության գաղափարից, այլ նաև համակերպվել Արևմտյան

Հայաստանում բարենորոգումների անորոշ ու կասկածելի հեռանկարով: Բեռլինի պայմանագրով Թուրքիային վերադարձվեցին նաև Բայազետն ու Ալաշկերտը:

Հայ ժողովրդի ճակատագրում նոր ժամանակաշրջան սկսվեց, երբ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի միջոցով Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Այն ասպարեզ իջեցվեց արևմտահայությանը օգնելու պատրվակով, սակայն ոչ միայն որևէ բարելավում չմտցրեց նրանց կյանքում, այլ ավելի վատթարացրեց վիճակը և դարձավ այն գլխավոր պատճառներից մեկը, որը հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը:

Հայկական հարցի սկզբնավորման փուլում հայ գործիչները հույս ունեին եվրոպական մեծ պետությունների օգնությամբ մեղմել թուրքական լուծը, ստանալ ինքնավարություն: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ ինքնավարություն ձեռք են բերում այն ազգերը, որոնք դրա համար արյուն են թափում, իսկ օտարի հույսին մնացողները միայն տուժում են: Մեծ տերությունները (Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա), որոնք վերահսկելու էին Բեռլինի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրականացումը, ունեին տարբեր շահեր և Հայկական հարցի մասին հիշում էին միայն այն ժամանակ, երբ պետք էր Թուրքիայի վրա ճնշում գործադրել և զիջումներ կորզել: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը զիջումներ կատարելով և չեզոքացնելով տերություններին, սկսեց իրականացնել արևմտահայերի պարբերական ու զանգվածային ջարդեր, որպեսզի լուծի Հայկական հարցը՝ ոչնչացնելով հայերին:

45. ՀԱՅ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19-րդ դարի 70-80-ական թթ. վերելք ապրեց հայ ազգային-ազատագրական շարժումը: Դա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ թուրքական կառավարության հռչակած թանգիմաթյան ռեֆորմները չէին տվել սպասված արդյունքը և Թուրքիայում շարունակում էին չլուծված մնալ ազգային հիմնախնդիրները: Շարժման վերելքին

նպաստեց նաև բալկանյան ժողովուրդների ընթուստացումը թուրքական բռնապետության դեմ:

Հայ ազգային ազատագրական շարժման մեջ աստիճանաբար հասունանում է զինված պայքարի միջոցով ազատագրվելու գաղափարը: Արդեն 1870-ական թվականների սկզբներից Արևմտյան Հայաստանում սկսում են ձևավորվել ազատագրական խմբակներ ու կազմակերպություններ, որոնք իրենց առջև նպատակ էին դրել տարածել ազատագրական գաղափարները ժողովրդի մեջ և զինված պայքարի դուրս գալ թուրքական տիրապետության դեմ:

1872թ. սկզբներին Վանում հիմնադրվեց «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպությունը, որի նպատակն էր ազատել հայ ժողովրդին թուրքական լծից: Կազմակերպությունը միասնության կոչ էր անում և պահանջում էր պայքարել մինչև արյան վերջին կաթիլը: Նրանց կարգախոսն էր «Մահ կամ ազատություն»: Կազմակերպությունը պատվիրակություններ ուղարկեց Ռուսաստան օգնության խնդրանքով: Սակայն այն երկար կյանք չունեցավ և շուտով լուծարվեց:

Ռուս-թուրքական պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո հայ ազգային-ազատագրական շարժումը նոր վերելք ապրեց: 1878թ. Վանում հիմնադրվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը, որի նպատակն էր զենքի միջոցով պաշտպանել հայրենակիցների անվտանգությունը: «Սև խաչի» անդամների համար անգամ պատրաստվել էր զինվորական հագուստ, ինչպես նաև գործում էր «Ձիմակիր» անվամբ մի խումբ, որը զբաղվում էր ապագա աշխարհագորարայինների զինավարժությամբ:

Վանում և Վասպուրականում ազատագրական պայքարի բուռն վերելքը կապված էր Մկրտիչ Խրիմյանի և Մկրտիչ Փորթուգալյանի համարձակ և անձնվեր գործունեությամբ, որով փորձում էին բարձրացնել հայ ժողովրդի ազատագրական ոգին:

1881թ. Կարինում Խաչատուր Կերեկցյանի կողմից հիմնվեց «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը: Հրապարակայնորեն այն կոչվում էր «Երկրագործական ընկերություն»: Կազմակերպությունը ղեկավարում էր հինգ հոգանոց խորհուրդը, նպատակն էր՝ նախ ինքնապաշտպանության կազմակերպումը, ապա նաև՝ ժողովրդի քաղաքական ազա-

տագրումը: Կազմակերպության կառուցվածքը տասնապետության համակարգն էր, երբ մի տասնյակում ընդգրկված անդամները առնչություն չունեին մյուս տասնյակի հետ և չէին ճանաչում կազմակերպության ղեկավարներին: Կազմակերպության անդամները գրավոր երդում էին տալիս: «Պաշտպան հայրենյացը» ուներ նաև իրեն պատկանող գաղտնի զինագործական արհեստանոց: Այս կազմակերպության անդամները փորձում են կապեր հաստատել Վանի, Արևելյան Հայաստանի համախոհների հետ, ինչպես նաև քրդերի հետ՝ համատեղ պայքար սկսելու նպատակով: 1882թ. «Պաշտպան հայրենյացը» հայտնաբերվեց ոստիկանության կողմից: Նրա շատ անդամներ ձերբակալվեցին: Շուրջ 40 մարդ դատապարտվեց 5-15 տարվա ազատազրկման: Դատավարությունը հայերի մոտ մեծ արծագանք ունեցավ: Շուտով սուլթանը նրանց ներում է չճշորհում: Կերեկցյանը կրկին վերադառնում է Կարին և ծավալում իր գործունեությունը: «Պաշտպան հայրենյացը» արևմտահայ իրականության մեջ ստեղծված ամենազանգվածային և ժողովրդական կազմակերպությունն էր:

Ազգային ազատագրական կազմակերպություններ ստեղծվում էին նաև արևելահայերի շրջանում: Արևելահայ առաջին ազատագրական կազմակերպությունները 1869թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի) ուսուցիչ Արսեն Կրիտյանի կողմից հիմնադրված «Բարենպատակ ընկերությունը» և 1874թ. Ղարաքիլիսայում (Վանաձոր) հիմնադրված «Հայրենիքի սիրո գրասենյակն» էին: Նրանց նպատակն էր զենքի ուժով ազատագրել հայրենիքը, իսկ գործունեությունը ուղղված էր և ցարական և թուրքական բռնապետությունների դեմ: 1875թ. այս երկու կազմակերպությունները հայտնաբերվեցին ցարական ոստիկանության կողմից և նրանց գործունեությունը արգելվեց:

1880-ական թթ. սկզբին սկսվեց արևելահայ գործիչների, այսպես կոչված, «ազատության զինվորների» անցումը Երկիր (Արևմտյան Հայաստան), նաև կամավորական խմբերի ստեղծումը՝ արևմտահայերին զինված օգնություն ցույց տալու համար: Ռուսաստանում սովորող շատ հայ ուսանողներ թողնում էին ուսումը, մեկնում Տուլա զինագործություն սովորելու համար, հետագայում Երկիր անցնելու նպատակով: Երկիր անցնող առաջին երիտասարդ հայրենասերներից էին Լա-

զարյան ճեմարանի ուսանողներ Վարդան Գուլշյանը և Հովհաննես Ագրիպասյանը, որոնք 1889թ. իրենց ընկերների հետ երկիր անցնելու ճանապարհին բախվեցին թուրքական ոստիկանության հետ և զոհվեցին: Նրանք հայ ազատագրական զինված պայքարի առաջին զոհերն էին:

1881-1886թթ. Մոսկվայի հայ ուսանողների կողմից ձևավորվեց «Հայրենասերների միությունը», որը հրատարակում էր «Ազատության ավետաբեր» թերթը: «Հայրենասերների միությունը» կապեր էր հաստատել Երևանում գործող մեկ այլ գաղտնի խմբակի հետ, որը կոչվում էր «Հայասեր-ազգասեր»: Այս կազմակերպության գործունեությունը ուղղված էր ցարական գաղութային քաղաքականության դեմ: Նրա անդամները ազգային ոգին բարձրացնելու համար ժողովրդի մեջ տարածում էին հայ թագավորների, զորավարների նկարները:

Թիֆլիսում մեծ հեղինակություն էր վայելում դեռևս ռուս-թուրքական պատերազմի տարիներին ստեղծված Գրիգոր Արծրունու խմբակը, որի գլխավոր դեմքը Րաֆֆին էր: Խմբակը կապեր էր հաստատել արևմտահայ և արևելահայ շատ կազմակերպությունների հետ և նպատակ էր հետապնդում Ռուսաստանի աջակցությամբ և զինված ապստամբության միջոցով ազատագրել Արևմտյան Հայաստանը: Արծրունու խմբակը մեծ ազդեցություն էր ձեռք բերել արևելահայերի շրջանում: Խմբակի գործունեությունը դադարեցվեց 1884թ.:

1882-1886թթ. Թիֆլիսում գործում էր նարոդնիկական ինտերնացիոնալ կազմակերպությունից անջատված առաջին հայկական նարոդնիկական կազմակերպությունը, որի կազմում էին Ներսես Աբեյանը և մի շարք այլ հայրենասեր երիտասարդներ: Խմբակը հրատարակում էր «Դրոշակ» լրագիրը և նյութական օգնություն էր կազմակերպում երկիր մեկնողների համար:

Այսպիսով, 1860-80-ական թթ. արևմտահայ և արևելահայ իրականության մեջ առաջացած ազատագրական խմբակները և կազմակերպությունները ոչ միայն գաղափարական ու մարտավարական նոր փուլի հասցրին հայ ազգային-ազատագրական պայքարը, այլև հետագայում նախապայման հանդիսացան հայ ազգային կուսակցությունների ստեղծման համար:

46. ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ

1880-ական թթ. կեսերից ազգային-ազատագրական պայքարի ասպարեզ մտան հայ ազգային-քաղաքական կուսակցությունները և իրենց ձեռքը վերցրին ազատագրական շարժման ղեկավարությունը:

1885թ. Վանում Մ. Ավետիսյանի (Թերլեմեզյան) գլխավորությամբ ստեղծվեց Արմենական կուսակցությունը: Այն իր անունը ստացավ Ֆրանսիայի Մարսել քաղաքում հրատարակվող «Արմենիա» թերթի անունից, որովհետև հետևում էր նրա քարոզած գաղափարներին: Արմենականները խնդիր դրեցին ընդհանուր ապստամբության միջոցով հասնել արևմտահայության ինքնավարությանը: Նրանց կարծիքով միայն ընդհանուր ապստամբության միջոցով կարելի էր հասնել հաջողության, որի համար անհրաժեշտ էին նկատում բարձրացնել ժողովրդի գիտակցականը, զինակրթել նրան, զինվորական խմբեր ստեղծել, զենք կուտակել և այլն: Արմենականները մերժում էին ֆիդայական կռիվները, փոքրիկ ապստամբությունները, ահաբեկչությունը՝ դրանք համարելով վնասակար ազատագրական ուժերի համար: Արմենականները սկսեցին զենք ներկրել Արևմտյան Հայաստան: Այնուամենայնիվ, արևմտահայության ծանր վիճակը նրանց երբեմն դրդում էր թուրք ու քուրդ ոճրագործների նկատմամբ դիմել պատժիչ քայլերի:

1887թ. ժնկում Ավետիս Նազարբեկյանը (Նազարբեկ), Մարո Վարդանյանը (Նազարբեկյան), Ռուբեն Խանազատը և ուրիշներ հիմնադրեցին Հնչակյան կուսակցությունը (1909թ. ստացավ Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան անունը): Կուսակցությունը իր ծրագրում թուրքական լուծը համարելով քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման արգելք, գտնում էր, որ հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը մեկընդմիջտ պետք է բաժանել թուրքական կայսրության ճակատագրից և ձեռք բերել ազգային անկախություն: Նպատակին հասնելու միակ միջոց էր ճանաչվում ընդհանուր ապստամբությունը: Առաջադրելով ընդհանուր ապստամբությանը նախապատրաստվելու գաղափարը՝ Հնչակյան կուսակցությունը գործունեության միջոցներ էր ընտրում ահաբեկչու-

յունը, ֆիդայական խմբերի ստեղծումը, կուսակցության գաղափարների քարոզչությունը և հեղափոխական կազմակերպությունների ստեղծումը: Կուսակցությունը գտնում էր, որ արևմտահայության անկախությանը չի կարելի հասնել արտաքին ուժերի միջոցով, այլ դա կարելի է կատարել միայն ներսից: Հնչակյանները նկատում էին, որ եվրոպական տերությունների միջամտությանը սպասելու և ձեռքերը ծալելու դեպքում հայ ժողովուրդն ավելի մեծ դժբախտությունների կմատնվի: 1890-ական թթ. առաջին կեսին այն համդիսանում էր ազատագրական շարժման առաջամարտիկը:

1890թ. ամռանը Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Ռոստոմի (Ստեփան Զորյան) և այլոց գլխավորությամբ ստեղծվեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը (ՀՀԴ): 1892թ. ընդունված կուսակցության առաջին ծրագիրը նպատակ էր դնում ապստամբության միջոցով Արևմտահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն: Նկատելի է, որ ՀՀԴ-ն Արևմտյան Հայաստանի լիակատար ազատագրության, անկախության պահանջ էր առաջադրում: Խոսքը գնում էր Արևմտյան Հայաստանի քաղաքական-դեմոկրատական ինքնավարության մասին: Դա ամենևին չի նշանակում, թե Դաշնակցությունը մերժում էր անկախության գաղափարը: Պարզապես նա ցուցաբերում էր իրատեսական մոտեցում հայ ժողովրդի դրության գնահատման հարցում և չէր առաջադրում անկախության հարցն այն պատճառով, որպեսզի հայկական տարածքներում ապրող մահմեդականության հոծ զանգվածներին չզրգռեր հայության դեմ: Դաշնակցությունը խնդիր էր դնում գաղափարապես, ռազմականապես և կազմակերպորեն զորեղանալ, ինչպես նաև զինված պայքար մղել թուրքական կառավարության և ամեն կարգի հարստահարիչների դեմ, պաշտպանել ժողովրդին ավազակային հարձակումներից: ՀՀԴ-ն թուրքական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի նպատակահարմար և հիմնական ձև էր ճանաչում ֆիդայական-պարտիզանական պատերազմը: Արևմտյան Հայաստանում նրա տարածումից հետո հնարավոր էր համարվում նաև ընդհանուր ապստամբությունը: ՀՀԴ-ն օտարի վրա հույս դնելը համարում էր անիրական և առաջ էր քաշում սեփական ուժերով հայության իրավունքների,

կյանքի, ընտանիքի և պատվի պաշտպանության անհրաժեշտությունը: 1890-ական թթ. երկրորդ կեսից Դաշնակցությունը դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման առաջատար, ամենաազդեցիկ ուժը:

Ազգային կուսակցությունները իրենց գոյության առաջին օրերից, հատկապես Արևմտյան Հայաստանում, ծավալեցին ակտիվ կազմակերպական, քարոզչական ու զինական գործունեություն: Հնչակյան կուսակցությունը 1890թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում, որտեղ գտնվում էր հայոց մայր եկեղեցին և առաջնորդարանը, կազմակերպեցին խոշոր ցույց՝ նպատակ ունենալով Հայկական հարցի վրա հրավիրել եվրոպական տերությունների ուշադրությունը և հասնել բարենորոգումների գործադրմանը: Հնչակյանները ղեկավար մասնակցություն ունեցան Սասունի 1894թ. և Զեյթունի 1895-1896թթ. ապստամբություններին: Արմենական կուսակցությունը գլխավորեց Վանի 1896թ. հունիսյան ինքնապաշտպանությունը՝ նպատակ ունենալով փրկել տեղի հայությանը Արևմտահայաստանում մոլեգնող հայկական ջարդերի ալիքից: Դաշնակցությունը, ի պատասխան թուրքական բռնապետության կողմից արևմտահայության ջարդերի, 1896թ. օգոստոսի 14-ին 26 հոգանոց խմբով գրավեց Կ. Պոլսի Օսմանյան բանկը, 1897թ. հուլիսի 25-ին իրականացրեց Խանասորի պատժիչ արշավանքը քրդական մազրիկ ցեղի դեմ, որը կոտորել էր Վանի 1896թ. հերոսամարտի դադարեցումից հետո Պարսկաստան հեռացող հիմնականում անզեն հարյուրավոր հայ երիտասարդների: Արևմտահայությանը պաշտպանելու նպատակով Դաշնակցությունը Արևմտյան Հայաստան ուղարկեց բազմաթիվ արշավախմբեր և զինատար խմբեր:

Ցավալիորեն, մեկ ընդհանուր նպատակ հետապնդող հայ ազգային կուսակցությունները չկարողացան մի կողմ թողնել նեղ կուսակցական տարածայնությունները, միավորել իրենց ուժերն ընդդեմ թուրքական բռնապետության, որը կմեծացներ հաջողության հասնելու հավանականությունը:

47. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՅԱԼԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ 19-ՐԴ Դ. ՎԵՐՋԵՐԻՆ

Ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը, փաստորեն, ոչինչ չտվեց արևմտահայությանը: Ռուսաստանի նկատմամբ հայերի ընդգծված համակրանքը, բնականաբար, չվրիպեց թուրքերի ուշադրությունից: Վերջիններս շտապեցին հայերից վրեժ լուծել, թե՛ այդ համակրանքի, թե՛ պատերազմում կրած պարտության համար: Հարյուրամյակներ շարունակ արևմտահայերի մարդկային, ազգային ու կրոնական իրավունքների նսեմացման, կողոպուտի ու մասնակի ջարդերի միջոցով հայոց հայրենիքի հայազրկմանն ու սեփականացմանը ձգտող թուրքական բռնապետությունը իր հայաջինջ քաղաքականությունը բարձրացրեց նոր մակարդակի: Թուրքական իշխանություններն առավել մեծ չափերով սկսեցին մահմեդականների մոտ ատելություն բորբոքել հայերի նկատմամբ:

1879թ. Թուրքիայի մեծ վեզիր Զյամիլ փաշան սուլթան Աբդուլ Համիդին գրում էր. «այդ հայ կոչված ազգը պետք է վերացնենք, անհետացնենք, ճզմենք: ...Դա հեշտ պատերազմ կլինի այնպիսի մի ազգի դեմ, որը ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան: ... Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա եվրոպան Տաճկական Ասիայում կրոնակից փնտրի ու չգտնի, մեզ հանգիստ կթողնի, և այն ժամանակ մենք կզբաղվենք ներքին գործերով ու բարենորոգումներով»:

Այսպիսով, թուրքական իշխանությունների մոտ առաջ եկավ Հայկական հարցը սրով լուծելու՝ արևմտահայությանը բնաջնջելու մտայնությունը: Թուրքերը տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական ճնշումների միջոցով խթանում էին հայերի արտագաղթը, պարբերաբար կրկնվող կոտորածներով փոքրացնում հայերի թիվը, մեծացնում մահմեդականների թիվը Հայաստանում:

Հայ ժողովրդի գլխին պատուհաս էին խաշնարած և զինված քրդերի չղադարող հարստահարումներն ու բռնազրավումները: Դեռևս սելջուկների ժամանակներից տարբեր քրդական ցեղեր հաստատվել էին Հայաստանում՝ մեծ արտոնություններ ձեռք բերելով օսմանյան սուլթաններից: Նրանք խլում էին հայերի գյուղերն ու հողերը, իսկ շատ

վայրերում հայ գյուղացիներին դրել էին ճորտական կախման մեջ: Պետության անմիջական ջանքերով քրդերը դարձան հայերի ամենաոխսերիմ թշնամիները: Համիդն իր հովանու ներքո վերցրեց քրդական ավագանուն, որն էլ ձեռնամուխ եղավ հայերի թալանին, ապա՝ կոտորածներին: Քրդական հարստահարությունները մեծ չափեր ընդունեցին հատկապես 1890-ական թվականներից: Նրանց ավելի ոգևորելու և սիրաշահելու համար Համիդն առավել ռազմատենչ քուրդ ցեղապետերին տալիս էր բարձր պատիվներ, շքանշաններ ու նվերներ, իսկ 1891թ. ստեղծեց, հիմնականում քրդերից կազմված ոչ կանոնավոր հեծելազորային կազմավորումներ՝ համիդիե գնդերը:

Հայերի նկատմամբ բռնությունների ծավալմանը նպաստեց անկախացած բալկանյան երկրներից մահմեդականների (մուհաջիրներ) զանգվածային գաղթը դեպի ասիական Թուրքիա: Սուլթանը նրանց հուսքն ուղղեց դեպի Արևմտյան Հայաստան: Կովկասում Շամիլի գլխավորած ապստամբության ճնշումից հետո մոտ կես միլիոն կովկասցի մահմեդական լեռնականներ, որոնք հայտնի էին չերքեզներ ընդհանուր անունով, գաղթեցին Թուրքիա: Նրանց գրեթե կեսը հաստատվեց հայկական նահանգներում: 1878-1904թթ. Արևմտյան Հայաստանում բնակեցվեցին 850.000 մուհաջիրներ ու չերքեզներ: Մահմեդականների ներգաղթը փոխեց Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական վիճակը, սակայն չկարողացավ հայերին դարձնել փոքրամասնություն:

Հայաստան ներգաղթած մահմեդականներին իշխանությունները տվեցին զենք, իսկ ապրուստի միջոցներ չհատկացրին, և նրանք պետք է կամ սովամահ լինեին կամ ապրեին հայերին թալանելու և կոտորելու միջոցով: Դրա հետևանքով սպանվեցին հազարավոր հայեր, հարյուրավոր գյուղեր անցան այդ զինված հրոսակների ձեռքը: Ներգաղթած մահմեդականները հայերից գրավեցին նրանց բնակավայրերը, տիրացան լավագույն վարելահողերին, անշարժ և շարժական գույքին: Այն վայրերում, ուր ուռք էին դնում չերքեզները, անպակաս էին ամենավայրենի բռնությունները, թալանը, սպանությունները: Չերքեզներն ու քրդերը թուրքական իշխանությունների ձեռքին գործիք էին՝ հայաջինջ քաղաքականություն իրականացնելու համար:

Միաժամանակ կայսրության օրեցօր վատթարացող վիճակի հետևանքով ծայր առնող սոցիալական հուզումները, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումները կանխելու համար սուլթանական կառավարությունը սկսեց թշնամություն սերմանել մահմեդականների և քրիստոնյաների միջև՝ բորբոքելով հետամնաց մահմեդականների կրոնական մոլեռանդությունը: Քանի որ ազատագրական շարժումները հիմնականում ընդգրկել էին քրիստոնյա ժողովուրդներին, ապա սուլթանի մեջ խորացավ այն համոզումը, որ կայսրության ամբողջականությունը կարելի էր պահպանել մահմեդականների վրա հենվելով և քրիստոնյաներին ճնշելով:

Սուլթան Աբդուլ Յամիդը կայսրության պաշտոնական գաղափարախոսություն հռչակեց պանիսլամիզմը: Այն պետք է հենք ստեղծեր կայսրության սահմանների ընդարձակման և ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար: Ըստ այդ գաղափարախոսության, իսլամը բոլոր մահմեդականների վերազգային և վերդասակարգային ընդհանրության ձևն է, իսկ պատմության մեջ եղած բոլոր պետական ու քաղաքական կազմավորումներից ամենակատարյալը մահմեդական կրոնապետության սկզբունքներով ստեղծված օսմանյան պետությունն էր՝ սուլթան-խալիֆի գլխավորությամբ: Հետևաբար աշխարհի բոլոր մահմեդականները պետք է միավորվեին համաշխարհային իսլամական պետության մեջ՝ սուլթանի գլխավորությամբ, որի ձեռքում էր կենտրոնացվելու հոգևոր և աշխարհիկ իշխանությունը: Պանիսլամիզմի միջոցով թուրքերը ձգտում էին կայսրության մահմեդականներին հեռու պահել անկախանալու գաղափարից, միաժամանակ իրենց տիրապետությունը տարածել մահմեդականներով բնակեցված անծայրածիր տարածքներում:

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը դարձավ հայկական կոտորածների իրականացման գլխավոր գործոններից մեկը, քանի որ դեպի արևելք ընդարձակվելու և մահմեդական մյուս ժողովուրդներին միանալու համար անհրաժեշտ էր վերացնել «հայկական սեպը»: Միաժամանակ մահմեդական մոլեռանդությամբ վարակված հետադիմական պաշտոնյաներն ու ամբոխը արագորեն էին արձագանքում քրիստոնյա հայերին բնաջնջելու սուլթանի հրահանգներին:

Արևմտյան Հայաստանում ամեն օր տեղի էին ունենում անպատիժ սպանություններ, բռնություններ, թալան: Հայերի համար ստեղծվել էին դժոխային պայմաններ, որոնք ստիպում էին արտագաղթել, կոտորվել կամ էլ զենքով պաշտպանել սեփական կյանքն ու արժանապատվությունը:

48. ՖԻՂԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ

XIXդ. երկրորդ կեսից հայ ազգային-ազատագրական շարժման բնորոշ կողմերից մեկը դարձավ ֆիղայական-հայդուկային պայքարը: Հայ ազատագրական միտքը, որը դարեր շարունակ ազգային ձգտումների իրագործումը կապել էր արտաքին ուժերի հետ, Բեռլինի կոնգրեսում հանդիպելով «մարդասեր» հորջորջվող արևմտյան մեծ տերությունների քար անտարբերությանը հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, հանգեց այն եզրակացության, որ Հայկական հարցը կարելի է լուծել միայն զենքի ուժով: Հայերի ազատագրական պայքարի համար ոգեշնչման առարկա էր Օսմանյան կայսրության որոշ քրիստոնյա ժողովուրդների (հույներ, ռումինացիներ, սերբեր և այլն) ազգային-ազատագրական պայքարը և մեծ պետությունների միջամտությունների շնորհիվ նրանց անկախացումը:

Մկրտիչ Խրիմյանի «Երկաթե շերեփի» գաղափարը հետզհետե տիրապետող դարձավ հայ ազատագրական մտքի մեջ: Ֆիղայական շարժումը պայմանավորված էր նաև հայ ժողովրդի ազգային, գրական-մշակութային զարթոնքով: Հայ ժողովրդի մտածողության և տրամադրությունների մեջ արմատական փոփոխություններ առաջացրեցին Խ.Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը, Մ.Խրիմյանի գրություններն ու քարոզները, Մ.Նալբանդյանի, Ռ.Պատկանյանի, Դ.Ալիշանի, Րաֆֆու, Ծերենցի և այլոց հայրենասիրական ստեղծագործությունները:

Թուրքական բռնապետության դեմ սկսվեց հայ ժողովրդի ազատագրական շարժման նոր՝ զինված պայքարի փուլը: Այլ ուղի չկար, քանի որ նախկին կրավորական, սեփական ծանր դրությանը հարմարվելու հաշտվողական պահվածքը, կամ արտաքին ուժերի օգնությանը սպասելու ուղեգիծը տանում էին դեպի ոչնչացում:

Սակայն ստեղծված պայմաններում անհնար էր համընդհանուր ապստամբություն կազմակերպելը, և հայ ժողովուրդը որդեգրեց ֆիդայական կամ հայդուկային պայքարի ուղին: Այսպիսով, հայ ազատագրական պայքարը հիմնականում ստացավ ֆիդայական կռիվների կերպարանք: Ֆիդային թուրքական բռնակալության դեմ պայքարող ժողովրդական վրիժառուն էր, որը տուն և ընտանիք թողած նվիրաբերվել էր հայրենիքի ազատագրության սրբազան գործին: Նա իր մեջ մարմնավորում էր ազգի կռվող ոգին, արիությունը, վեհամծնությունը և անկոտրում կամքը:

Ֆիդայիները փոքր խմբեր կազմած զինված պայքար էին մղում թուրք և քուրդ հարստահարիչների դեմ, վրեժխնդիր էին լինում նրանց կատարած բռնությունների համար, փորձում էին պաշտպանել հայ գյուղացիների շահերը: Նրանք պատսպարվում էին լեռներում ու անտառներում և իշխանությունների անընդմեջ հետապնդումների պատճառով անընդհատ փոխում էին իրենց թաքստոցը: Ֆիդայիները մեծ հեղինակություն ունեին և վայելում էին հայ բնակչության սերն ու համակրանքը:

Ֆիդայական շարժումը առաջ եկավ տարերայնորեն՝ մահմեդական կեղեքիչների անտանելի հարստահարությունների ու բռնությունների հետևանքով: Արևմտյան Հայաստանում՝ սեփական հայրենիքում հայը փաստորեն հողագուրկ, իրավագուրկ, արհամարհված և կեղեքվող տարր էր մահմեդականների լծի տակ: Օսմանյան կայսրությունում ուժեղ էր պետական գաղափարախոսության վերածվող հայատյացությունը: Պետականորեն քաջալերվող կեղեքման, հարստահարման և թալանի քաղաքականության հետևանքով հայ գյուղացիության թշվառությունը հետզհետե ավելի էր մեծանում: Այդ ամենի հետևանքով աննախադեպ չափեր ընդունեց գաղթը:

Չնայած տիրող հուսահատ վիճակին, որոշ համարձակ և հայրենասեր անհատներ որոշեցին զենքի միջոցով պաշտպանել սեփական իրավունքներն ու արժանապատվությունը, որով սկզբնավորվեց ֆիդայական-հայդուկային շարժումը: Այդ պայքարը սկզբնական շրջանում տարերային, անկազմակերպ բնույթ էր կրում, անհատ ֆիդայիներն ու խմբերը գործում էին առանձին-առանձին, սակայն կուսակցությունների ասպարեզ

իջնելուց հետո շարժումը ձեռք բերեց կազմակերպված քաղաքական պայքարի բնույթ:

Ֆիդային երդվում էր ամբողջությամբ նվիրվել սեփական ժողովրդի պաշտպանության և հայրենիքի ազատագրության սրբազան գործին: Նա չուներ տուն և ունեցվածք, արգելվում էր ամուսնանալ, աննկատ տեղաշարժվելու նպատակով արգելվում էր ձի ունենալ: Նրանք փաստորեն անմնացորդ նվիրվում էին ազատագրական պայքարին:

Ֆիդայական շարժումը հետզհետե ծավալվեց ու մեծ թափ ստացավ: Հայ ժողովրդի լավագույն զավակները նվիրվեցին հայրենիքի ազատագրության և սեփական ժողովրդի պաշտպանության վեհ գործին: Երզնկայում ու Սեբաստիայում աչքի ընկան Գալուստ Արխանյանի (Մնձուրի Առյուծ), Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի Քեռի), Հովհաննես Մինասյանի (Մինասօղլու), Դանիել Չավուշի հայդուկային խմբերը: Ակտիվ գործունեություն ծավալեցին Արամ Աչքբաշյանը ու Ժիրայրը (Մարտիրոս Պոյաճյան): Կեսարիա-Սեբաստիա հատվածում գործում էին մեծ և փոքր «Զելլո»ներ կոչվող հայդուկային խմբերը: Վասպուրականում, հատկապես Շատախում, աչքի ընկան Զաթոն ու Շերոն:

Ֆիդայական շարժման ամենանշանավոր կենտրոնները դարձան Սասունը և Տարոնը, ուր գործում էին Մարգար վարժապետը (Ամիրյան), Արաբոն (Ստեփանոս Մխիթարյան), Գևորգ Չավուշը (Ղազարյան), Աղբյուր Սերոբը (Վարդանյան), Սպաղանց Մակարը (Տոնոյան), Հրայր Դժոխքը (Արմենակ Ղազարյան), Անդրանիկը (Օզանյան) և այլ հայրենամուտ գործիչներ: Արևելյան Հայաստանում ևս ստեղծվեցին հայդուկային խմբեր և անցան Արևմտյան Հայաստան: Նրանցից աչքի ընկան Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան), Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) և ուրիշներ:

Զինված պայքար ծավալելու համար ամենաառաջնահերթը ժողովրդին զինելն էր: Օսմանյան կայսրությունում հայերն իրավունք չունեին զենք ունենալ, և բնականաբար չափազանց դժվար խնդիր էր զենք հայթայթելն ու հայ բնակչությանը հասցնելը: Անդրկովկասում ու Պարսկաստանում կազմակերպվում էին զինատար խմբեր, որոնք մեծ դժվարություններ հաղթահարելով անցնում էին արևմտյան

հայաստան (Երկիր): Կարսը, Երևանը, Սալմաստը, Ուրմիան վերածվեցին կարևոր հենակետերի: Հատկապես կարևոր հենակետ դարձավ թուրք-պարսկական սահմանի մոտ գտնվող Ս.Թադեի (Դերիկի) վանքը: 1891թ. Թավրիզում Դաշնակցությունը հիմնեց «Խարիսխ» զինագործական արհեստանոցը: Սակայն ազատագրական պայքարը ղեկավարող կուսակցությունների նյութական անմխիթար վիճակի և զինատար ուղիների դժվարանցանելիության հետևանքով չլուծվեց արևմտահայությանը բավարար չափով զինելու հարցը: Դա չափազանց բացասական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ընթացքի վրա:

Հայ ազատագրական շարժման ղեկավարների կարծիքով ֆիդայական պայքարը բարենպաստ պայմանների դեպքում վերաճելու էր համընդհանուր ապստամբության, որը պետք է հարկադրեր մեծ տերություններին ճնշում գործադրել սուլթանի վրա՝ լուծելու Հայկական հարցը:

Ֆիդայիների գործողությունների հետևանքով բազմաթիվ թուրք և քուրդ հարստահարիչներ ստիպված էին լինում չափավորել բռնությունները: Սակայն շարժումը ուներ նաև բացասական հետևանքներ, քանի որ թուրքական զորքերը ֆիդայիներին հետապնդելու պատրվակով ներխուժում և ավերում էին հայկական գյուղերը: Այդ բռնությունները իրենց հերթին ծնում էին նոր ֆիդայիներ, որոնք փոխարինում էին նահատակներին:

Պետք է նշել, որ ֆիդայական պայքարը չհասավ իր հետապնդած գլխավոր նպատակին՝ ժողովրդի ազատագրմանը թուրքական բռնապետությունից, քանի որ մանր կռիվներով անհնար էր հաղթանակի հասնել հզոր կայսրության դեմ: Համընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ էին նյութական հսկայական միջոցներ, որից զուրկ էր հայ ազատագրական շարժումը, քանի որ հայ մեծահարուստներից շատերը դեմ էին հեղափոխական պայքարին և որևէ կերպ չաջակցեցին ազատագրական պայքարին:

Այնուամենայնիվ, ֆիդայական-հայդուկային պայքարը հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերից է, որի բովով անցած սերունդը ի վերջո Հայաստանի անկախ պետականության կերտողն ու ապավենը հանդիսացավ:

49. ՍԱՍՈՒՆԻ 1894 Թ. ԱՊՍԱՍԱԲՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Թուրքերի ու քրդերի կատարած անօրինականությունների, բռնությունների, թալանի ու հարստահարումների հետևանքը եղավ Սասունի 1894թ. ապստամբությունը: Սասունը Արևմտյան Հայաստանի լեռնային գավառներից էր, մտնում էր Բիթլիսի վիլայեթի մեջ: Սասունցիները հարկ էին վճարում թե՛ օսմանյան կառավարությանը, թե՛ քուրդ ցեղապետերին:

Այդ ճնշումների հետևանքով արդեն 1880-ական թթ. ազատատենչ և զենք կրելու սովոր ըմբոստ լեռնականները պայքարի մեջ մտան քուրդ ու թուրք հարստահարիչների դեմ: Այստեղ ծնունդ առավ ֆիդայական շարժումը: Ազատատենչ և ազատագրական պայքարի հարուստ ավանդույթներ ունեցող Սասունում պարարտ հող կար ազատագրական գաղափարների քարոզչության համար և ազգային կուսակցություններն իրենց ուշադրությունը սևեռեցին այս երկրամասի վրա: 1891-1893թթ. Սասունում լայն քարոզչություն ծավալեց հնչակյան գործիչ Միհրան Տամատյանը: Նրա ձեռքակալունից հետո կազմակերպչական աշխատանքները շարունակեցին Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան), Հրայրը (Արմենակ Ղազարյան), Գևորգ Զավուշը (Ղազարյան), Շենիկի իշխան Գրգոն (Գրիգոր Մոսեյան) և ուրիշներ: Նրանք կոչ էին անում գլուխ չխոնարհել օտար հարստահարիչների առաջ, չվճարել ծանր հարկերը և զենքով պաշտպանել սեփական իրավունքներն ու արժանապատվությունը:

Այդ գաղափարները ոգևորությամբ ընդունվեցին սասունցիների կողմից, որոնք հրաժարվեցին ուժերից վեր հարկեր տալ թուրքերին ու քրդերին: Սուլթանը փորձեց քրդերի միջոցով հնազանդեցնել ըմբոստ սասունցիներին, մանավանդ որ դրանով ավելի կսրեր հայ-քրդական հակասություններն ու թշնամությունը: Քրդերը 1891-1894թթ. մի քանի անգամ արշավեցին Սասունի վրա, սակայն պարտություն կրեցին: Այդ ամբողջ ընթացքում Սասունը շրջափակված էր թուրքական բանակի և քրդական զորքերի կողմից և ամբողջովին կտրված էր արտաքին աշխարհից:

Ի վերջո, հանգզվելով, որ քրդերն ի վիճակի չեն պարտության մատնել հայերին, թուրքական կառավարությունը որոշեց կանոնավոր բանակի ուժերով ճնշել սասունցիներին: Նախատեսվում էր Անդրկովկասից մեծ քանակությամբ զենք ու մարտիկներ օգնության ուղարկել Սասունին, սակայն ակնկալված օգնությունն այդպես էլ տեղ չհասավ:

Սասունի դեմ ուղարկվեց Ջեքի փաշայի՝ թնդանոթներով ու նորագույն հրացաններով զինված 10.000-ոց կանոնավոր բանակը, որին միացան մի քանի տասնյակ հազար քրդեր: Հայերն ունեին մոտ 2.000 կռվողներ, որոնք զինված էին կայծքարե հին հրացաններով և սրերով: Ինքնապաշտպանության դեկավարն էր Մեծն Մուրադը: Ջեքի փաշան պահանջեց միանգամից վճարել 7 տարվա հարկերը, սակայն սասունցիները կտրականապես մերժեցին:

1894թ. հուլիսի 27-ին թշնամին մի քանի ուղղություններով հարձակման անցավ, բայց արժանի հակահարված ստացավ: Թուրքական ու քրդական ուժերը մոտ երկու շաբաթ բոլոր կողմերից հարձակվում էին Սասունի վրա, բայց հայերը բազմիցս պարտության մատնեցին հակառակորդի գերակշիռ զորքերին: Սակայն ուժերը խիստ անհավասար էին, վերջանում էր հայերի զինամթերքն ու պարենը: Հայկական ուժերը մարտերով նահանջեցին դեպի Անդոկի, Քեփի ու Տավլորիկի բարձունքները: Օգոստոսի 24-ին ապստամբությունը ճնշվեց: Դեկավարների մի մասը զոհվեց, իսկ Մուրադը և Գևորգ Չավուշը ձերբակալվեցին: Շատ կանայք թշնամու ձեռքը չընկնելու համար ժայռերից ցած նետվեցին: Սասունի լեռներում ու անտառներում կոտորածները շարունակվեցին մինչև հոկտեմբեր: Թուրքերը անասելի բռնություններ իրականացրին, կոտորեցին 10.000-ից ավելի մարդ, հրդեհեցին ու թալանեցին շուրջ 40 գյուղ:

Այսպիսով, որևէ տեղից օգնություն չստանալով, Սասունը պարտվեց: Այնտեղ սկսված ապստամբությունը համահայկականի վերաճելու հույսերը չարդարացան: Կոտորածները հուզեցին համայն հայությանը, բարձրացված բողոքներն ու դիմումները միջազգային արձագանք ունեցան: Մեծ ճանաչում ունեցող բազմաթիվ առաջադեմ մտավորականներ պահանջեցին միջամտել Թուրքիայի ներքին գործերին և վերջ տալ սուլթանի ջարդարարական քաղաքականությանը:

Մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանները 1895թ. հունվարին հանձնախումբ ուղարկեցին Սասուն, կատարվածը տեղում ուսումնասիրելու համար: Հետաքննիչ հանձնախումբը, փաստերն ուսումնասիրելով, եկավ այն եզրակացության, որ Սասունի հայ բնակչության նկատմամբ կատարվել է եղեռնագործություն: Սասունի դեպքերի տպավորության տակ Կ. Պոլսում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները սուլթան Աբդուլ Համիդից պահանջեցին Հայաստանում իրականացնել բարենորոգումներ, որոնց գործադրումը Թուրքիան պարտավորվել էր Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածով:

1895թ. մայիսի 11-ին անգլիական, ռուսական, ֆրանսիական դեսպանները սուլթանին ներկայացրին բարենորոգումների ծրագիր: Ըստ դրա, անհրաժեշտ էր Արևմտյան Հայաստանի 6 նահանգներում (Էրզրում, Սեբաստիա, Բիթլիս, Վան, Խարբերդ և Դիարբեքիր) ամրապնդել կենտրոնական իշխանությունը, բարելավել կառավարման համակարգը, դատական ու հարկային գործը, ապահովել հասարակական կյանքի զարգացումը, կարգավորել արտադրության ու տնտեսության զարգացումը, քրիստոնյաներին պաշտպանել քրդերի կանայականություններից: Նահանգապետերը նշանակվելու էին բարեխիղճ պաշտոնյաներից, առանց կրոնի խտրության՝ 5 տարի ժամկետով: Մեծ տերությունների հովանավորությամբ Բ. Դռանը կից ստեղծվելու էր վերահսկող մշտական հանձնաժողով, որը հետևելու էր բարենորոգումների գործադրմանը: Բոլոր քաղաքացիական ու ոստիկանական պաշտոնները պետք է հավասարապես բաշխվեին քրիստոնյաների ու մահմեդականների միջև: Խաղաղ ժամանակ համիդիե զնդերը զինաթափվելու և պահեստի հեծելազորի էին վերածվելու: Բարենորոգումների ենթակա էր նաև հայաշատ Կիլիկիան: Ծրագրի գործադրությունը վերահսկելու էր սուլթանի կողմից ընտրված և տերությունների հավանությանն արժանացած բարձր կոմիսարը:

Սկզբում սուլթանը կտրականապես հրաժարվեց ընդունել բարենորոգումների մայիսյան ծրագիրը, իսկ Կ. Պոլսի դեսպաններին դիտողություն արեց, որ խառնվում են կայսրության ներքին գործերին: Սակայն, տերությունների ճնշման տակ սուլթանը խոստացավ որոշ փոփոխություններ կատարե-

լուց հետո ընդունել այդ ծրագիրը, բայց տարբեր պատրվակներով ձգձգում էր դրա իրականացումը:

Ստեղծված սպասողական, լարված վիճակում հասունացավ բողոքի ցույց կազմակերպելու գաղափարը: Տերությունների ուշադրությունը գրավելու և նրանց աջակցությամբ Մայիսյան բարենորոգումների ծրագիրն իրագործելու ակնկալիքով, 1895թ. սեպտեմբերի 18-ին հնչակյանները խաղաղ ցույց կազմակերպեցին Կ. Պոլսում, որի մասին նախապես տեղեկացրել էին թուրքական իշխանություններին ու տերությունների դեսպանատներին՝ ոստիկանների զինված միջամտությունը կանխելու համար: Սոտ 4.000 ցուցարարներ Կ.Պոլսի հայոց Մայր եկեղեցուց շարժվեցին դեպի կառավարության նստավայր՝ Բաբ Ալի, որպեսզի կառավարությանը հանձնեն մայիսյան բարենորոգումների ծրագիրն ընդունելու պահանջով դիմումը: Սակայն թուրք ոստիկաններն ու զինվորները փակեցին ցուցարարների ճանապարհը և կրակ բացեցին նրանց վրա, որից հետո հայկական ջարդեր սկսվեցին մայրաքաղաքում: Դրան զոհ գնացին 2.700 մարդ:

Ամենուրեք ծավալվող համընդհանուր զայրույթն ու դիվանագիտական ճնշումը թուլացնելու նպատակով Աբդուլ Համիդը ստիպված էր 1895թ. հոկտեմբերի 18-ին վավերացնել բարենորոգումների նախագիծը՝ դրանում կատարելով էական փոփոխություններ: Բարձր կոմիսար նշանակվեց Շաքիր փաշան, որը մեկնեց Հայաստան, իբր թե բարենորոգումները կենսագործելու:

Սակայն դա միայն ձևականություն էր, քանի որ սուլթանը ոչ միայն բարենորոգումներ կատարելու ցանկություն չուներ, այլև մտադիր էր Հայկական հարցը լուծել՝ հայերին բնաջնջելով: Հետևաբար, բարենորոգումների պահանջին ի պատասխան Աբդուլ Համիդը կազմակերպեց հայերի զանգվածային կոտորածներ:

50. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1894-1896 ԹԹ.: ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Մեծ տերությունների կողմից Հայկական հարցի անընդհատ շահարկումը և նրանց միջև եղած հակասությունների պատճառով չլուծվելը, հայ ազգային-ազատագրական

պայքարի վերելքը սուլթան Աբդուլ Համիդին համոզեցին, որ անհրաժեշտ է դիմել կտրուկ միջոցների: Նա որոշեց Հայկական հարցը փակելու համար կազմակերպել զանգվածային կոտորածներ և ամբողջությամբ բնաջնջել Օսմանյան կայսրության հայ բնակչությանը: Այդ մասին թուրք պետական գործիչները բարձրաձայնում էին վաղուց: Նման ոճրագործության իրականացման համար Թուրքիայում կային բարենպաստ պայմաններ: Այդ դիվային ծրագրի գործադրման համար սուլթանն օգտագործեց քրդերի, թուրքերի ու մահմեդական այլ ցեղերի կրոնական մոլեռանդությունն ու թալանչիական բնազդները: Դրան նպաստում էր մահմեդականների մոտ դարերի ընթացքում ձևավորված այն մտայնությունը, որ իրավունք ունեն անպատիժ ձևով սպանել ու թալանել հայերին, իսկ համոզմունքը գործունեության անհրաժեշտ հիմքն է: Հետամնաց ամբոխներին գրգռելու գործին լծվեց պետական մեքենան և մահմեդական հոգևորականությունը:

Այդ ոճրագործությունը նախապատրաստելով՝ թուրքական իշխանությունները վստահ էին, որ զերծ կմանան մեծ տերությունների միջամտությունից:

Ինչպես տեսանք, 1894թ. թուրքերը կոտորածներ կազմակերպեցին Սասունում, իսկ 1895թ. սեպտեմբերին՝ մայրաքաղաք Կ. Պոլսում՝ մեծ տերությունների ներկայացուցիչների աչքի առաջ: Այդ առթիվ առաջադեմ շատ գործիչներ դատապարտեցին արյունոտ սուլթանին, իսկ տերությունների դեսպանները ձևականորեն բողոքի մոտաներ հղեցին: Այնուամենայնիվ, դա չխանգարեց, որպեսզի սուլթանը նոր կոտորածներ կազմակերպի կայսրության հայաբնակ վայրերում:

1895թ. սեպտեմբերին հայկական ջարդեր տեղի ունեցան Բաբերդում ու Տրապիզոնում, հոկտեմբերին՝ Դերջանում, Երզնկայում, Բիթլիսում, Ուրֆայում, Շապին Գարահիսարում, Կարինում, Խարբերդում, նոյեմբերին՝ Դիարբեքիրում, Սեբաստիայում, 1896թ.՝ Վանում, Կ. Պոլսում և այլ վայրերում: Կոտորածներն ընթանում էին կազմակերպված և նախապես մշակված ծրագրով: Դրանք տեղի էին ունենում ամենաբարբարոս ձևերով, առանց սեռի ու տարիքի խտրության: Կոտորածները երևան հանեցին թուրքերի բնավորության արյունարբու, ամենաստոր, բարբարոսական կողմերը: Հրազեն կիրառվում էր հազվադեպ, ջարդերն իրականացվում էին սառը զենքերով:

Շատ վայրերում մահմեդական ամբոխին այդ նպատակով բաժանել էին մետաղյա մահակներ: Սպանությունները կատարվում էին չափազանց դաժան, ամենազազրելի ու անմարդկային եղանակներով, որպիսիք երբևէ հայտնի են եղել մարդկությանը: Անգեն հայ բնակչությունն ի վիճակի չէր դիմադրելու զինված մահմեդականներին ու թուրք զինվորներին: Անակնկալի գալով, հայերը հիմնականում չկարողացան դիմել ինքնապաշտպանության: Ջարդերից փրկված շատ հայեր զրկվեցին իրենց անշարժ ու շարժական գույքից: Մեծ ծավալներ ընդունեց արտագաղթը:

1894-1896թթ. կոտորածները թուրքական իշխանությունների կողմից իրագործված արևմտահայերի առաջին զանգվածային ցեղասպանությունն էր: Սպանվեց 300.000 հայ, նույնքան էլ արտագաղթեց Եվրոպայի, Աֆրիկայի ու Ամերիկայի տարբեր երկրներ: Մոտ 200.000 հայեր ստիպված էին ընդունել մահմեդականություն: Անօթևան և առանց ապրուստի միջոցի մնացին 500.000 մարդ: Թալանվեցին գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը, դրանցից շատերը ավերվեցին կամ մզկիթի վերածվեցին:

Փաստորեն, դրանով Հայոց ցեղասպանության գործընթացը նոր փուլ մտավ: Այս ցեղասպանական գործողության հետևանքով հայերի թիվն իրենց պատմական հայրենիքում բավական նվազեց, իսկ սուլթանի կազմակերպած մահմեդականների ներգաղթի հետևանքով վերջիններիս թիվն աճեց, որով փոփոխություն կրեց Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Չնայած դրան, հայերը դեռ շարունակում էին հարաբերական մեծամասնություն կազմել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակչության մեջ:

1894-1896թթ. հայկական կոտորածները դատապարտեցին աշխարհի առաջադեմ բազմաթիվ գործիչներ: Նրանք թուրքերի հայաջինջ քաղաքականությունը որակեցին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն և իրենց կառավարություններից պահանջեցին միջոցներ ձեռնարկել դրանք դադարեցնելու համար: Ֆրանսիական մամուլը Համիդին տվեց «արյունոտ սուլթան» մականունը:

Սակայն մտավորականության և տառապյալ հայության ձայնը անլսելի էր սեփական հաշվարկներն ունեցող մեծ տերություններին: Սուլթանը հայաջինջ ծրագրերն իրակա-

նացնելիս հաշվի էր առել մեծ պետությունների հակասությունները և վստահ էր, որ նրանք չեն միջամտի: Վերջիններիս համար Հայկական հարցը լոկ պատրվակ էր՝ միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին: Նրանց երկակի խաղը որոշ զիջումներ կորզելու համար էր, որից հետո մոռանում էին հայերին: Այդպես եղավ նաև 1894-1896թթ. ջարդերի ընթացքում: Հայկական հարցի լուծման խնդրում հետևողական էր միայն Թուրքիան, որի նպատակն էր այն լուծել՝ արևմտահայությանը բնաջնջելու միջոցով:

Անգլիայի կառավարող շրջանները հայտարարեցին, որ եթե չբռնեն թուրքերի ձեռքը, կխայտառակվեն ամբողջ աշխարհի առջև: Անգլիան պահանջեց դադարեցնել հայկական կոտորածները, նաև հանդես եկավ Թուրքիան մեծ տերությունների միջև բաժանելու առաջարկով: Սակայն Ռուսաստանը հայտարարեց, որ կպաշտպանի Թուրքիային: Սուլթանն իր հերթին որոշ զիջումներ կատարեց Անգլիային, և վարչապետ Սուլթերին հայտարարեց, որ հայկական գործերում սկսված «բարելավման» հետևանքով հրաժարվում է Օսմանյան կայսրությունը բաժանելու մտքից:

Այս շրջանում բավական բացասական էր Ռուսաստանի դերակատարությունը: Ցարական կառավարությունը գտնում էր, որ արևմտահայերի ազատագրական շարժումները վարակիչ ազդեցություն կունենան Անդրկովկասի համար և պաշտպանում էր սուլթանի հակահայկական քաղաքականությունը, հանդես էր գալիս Թուրքիայի ամբողջականության պահպանման օգտին: Փաստորեն, ցարական կառավարությունը թիկունք կանգնեց Թուրքիային, որը, մեր կարծիքով, չէր բխում Ռուսաստանի շահերից և իրավացիորեն քննադատվեց ռուս մտավորականության կողմից:

Ֆրանսիան ամենամեծ ներդրումներն էր կատարել Օսմանյան կայսրությունում, հետևաբար շահագրգռված էր նրա ամբողջականության պահպանմամբ, ինչպես նաև չէր ուզում դեմ գնալ իր դաշնակից Ռուսաստանին:

Գերմանիան որևէ քայլի չդիմեց արյունոտ սուլթանի ձեռքը բռնելու հարցում, քանի որ ձգտում էր մերձենալ Թուրքիային և այնտեղ ամրապնդել իր դիրքերը:

Այսպիսով, տերությունները, ելնելով որոշակի շահերից, չբռնեցին արյունարբու սուլթանի ձեռքը, որն էլ դրանից

ոգևորվելով իրականացրեց հայերի առաջին զանգվածային ցեղասպանությունը: Դրանում իրենց մեղքի բաժինն ունեցան բոլոր տերությունները:

Ցավոք, հետագայում հայ գործիչները դասեր չքաղեցին այդ իրադարձություններից և շարունակում էին հայ ժողովրդի ճակատագիրը որոշելու հարցում հույս դնել այս կամ այն պետության վրա: Այստեղ, կարծում ենք, տեղին է հիշել մեծ վիպասան Րաֆֆու մարգարեական խոսքերը. «Դժբախտ է այն ազգը և միշտ դժբախտ կմնա, որ օտարի օգնության կարոտ կլինի»:

51. 1895-1896 թթ. ՀԵՐՈՍԱՍԱՐՏԵՐԸ

Ամեն մի ժողովրդի գոյությունը մեծապես կախված է պաշտպանվելու, արտաքին հարվածներից դիմակայելու նրա ընդունակությունից: Համիդյան կոտորածների առաջին օրերին արևմտահայերը հանկարծակիի եկան: Սակայն որոշ վայրերում հայերը կարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ ջարդարարներին:

Հատկապես աչքի ընկավ Ձեյթունը, որը հայկական ազատագրական պայքարի նշանավոր կենտրոններից էր: Հայկական կոտորածներին ի պատասխան, 1895թ. հոկտեմբերին զեյթունցիներն ապստամբության դրոշ բարձրացրին: Ղեկավարներն էին հնչակյան գործիչ Աղասին (Կարապետ Թուրսարգիսյան) և Ենիտունյան (Նորաշխարհյան) իշխանական տոհմի նշանավոր ներկայացուցիչ Նազարեթ Չաուշը: Ապստամբները գրավեցին Ձեյթունի կառավարչատունն ու զորանոցը, գերեցին բոլոր թուրք պաշտոնյաներին, իսկ 700 թուրք ասկյարների անցկացրին սրի տակով: Նրանց ձեռքն անցավ մեծաքանակ զենք ու զինամթերք: Ջորանոցի վրա բարձրացրին կարմիր դրոշ, որի վրա գրված էր՝ «Ձեյթունի անկախ իշխանություն»: Ստեղծվեց ժամանակավոր հեղափոխական կառավարություն՝ Աղասու գլխավորությամբ:

Սուլթանական կառավարությունը նրանց դեմ ուղարկեց Մուստաֆա Ռեմզի փաշայի բանակը՝ Մարաշից և Ալի բեյի բանակը՝ Ադանայից: Թուրքական 30.000-ոց կանոնավոր բանակին միացան նույնքան անկանոն զորամասեր: Նրանց տրամադրության տակ կար հրետանի: Այդ հսկայական ուժե-

րին դիմադրում էին 6.000 զեյթունցի կռվողներ: Թուրքերը բազմիցս փորձեցին գրավել Ձեյթունը, բայց ամեն անգամ պարտության մատնվեցին: Սուլթանը Ռեմզի փաշայի փոխարեն հրամանատար նշանակեց Հալեպի էդիեմ փաշային, սակայն դրանից վիճակը չփոխվեց, և զեյթունցիները շարունակեցին հերոսաբար պաշտպանվել: Ռազմական գործողությունների ընթացքում թուրքերը կորցրին 20.000 զինվոր, զեյթունցիները՝ 3.500 կռվող:

Ձեյթունի դեպքերի վրա սկսեցին ուշադրություն դարձնել եվրոպական մեծ տերությունները, որոնց միջամտության հետևանքով Աբդուլ Համիդը ստիպված էր դադարեցնել ռազմական գործողությունները: Թուրքերը ստիպված էին բանակցություններ սկսել հերոս լեռնականների հետ: Փոխադարձ զիջումներով, 1896թ. հունվարի 30-ին *Հալեպում* կնքվեց համաձայնագիր: Ըստ դրա, ապստամբներին ընդհանուր ներում չնորիվեց: Հնչակյան գործիչները պետության ծախսով մեկնելու էին արտասահման, փախստականներն անարգել վերադառնալու էին իրենց բնակավայրերը: Ձեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ, իսկ թուրքական բանակն այնտեղից հեռանալու էր, մնալու էր միայն մեկ զորամաս: Չեղյալ հայտարարվեցին նախորդ տարիներից մնացած բոլոր հարկային պարտքերը, իսկ հարկերը կրճատվեցին: Ապստամբները վերադարձնելու էին բռնագրաված զենքերը: Համաձայնագրի գործադրումը վերահսկելու էին մեծ տերությունների հյուպատոսները: Այդ նպատակով Մարաշում տերությունները բացելու էին հյուպատոսարաններ:

Մեծ տերությունների ճնշման տակ թուրքական իշխանությունները ստիպված եղան կատարել համաձայնագրով ստանձնած պարտավորությունները: Ձեյթունում կառավարիչ նշանակվեց ազգությամբ հույն Յուվանսկին:

Ինչպես տեսնում ենք, հերոսական պայքարի միջոցով զեյթունցիները չենթարկվեցին կոտորածների և նույնիսկ որոշ զիջումներ կորզեցին Օսմանյան կայսրությունից: 1895թ. Ձեյթունի ապստամբությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից էր, որը ցույց տվեց, որ հայերն էլ գիտեն կռվել ու հաղթել:

1895թ. հոկտեմբերի 16-ին մահմեդական ամբոխը և ոստիկանությունը հարձակվեցին Ուրֆայի հայկական թաղա-

մասի վրա: Գրեթե երկու ամիս քաղաքի հայ բնակչությունը հերոսաբար դիմադրեց թուրք ջարդարարներին: Գավառապետը, տեսնելով հայերի համառ դիմադրությունը, որոշեց նենգության դիմել: Նա թուրք զինվորներ ուղարկեց՝ հայերին մահմեդական ամբոխից պաշտպանելու պատրվակով, իսկ հայերից հավաքեց զենքերը: 1895թ. դեկտեմբերի վերջին, զորքի աջակցությամբ, թուրքերը հարձակվեցին հայկական թաղամասի վրա և կազմակերպեցին կոտորած, որն ընդհատումներով շարունակվեց մինչև հունվարի 16-ը: Այդ ոճրագործությանը զոհ գնացին մոտ 10.000 հայեր:

Մալաթիայում 1895թ. հոկտեմբերից իշխանությունները սկսեցին զինել թուրքերին ու քրդերին՝ նախապատրաստելով կոտորածների: Նոյեմբերի 4-ին կառավարիչ Ալի Ռիզա փաշան իր մոտ հրավիրեց քաղաքի նշանավոր հայերին, պահանջեց դավանափոխ լինել և մերժում ստանալուց հետո սպանեց: Դրանից հետո մահմեդական ամբոխը, ոստիկանությունը և զինվորները հարձակվեցին հայկական թաղամասերի վրա: Եղիշե քահանա Խաչատրյանի գլխավորությամբ հայերը դիմեցին ինքնապաշտպանության և փախուստի մատնեցին ջարդարարներին: Սակայն ուժերն անհավասար էին: Ի վերջո, թշնամին կարողացավ կոտրել ինքնապաշտպանությունը և նոյեմբերի 4-9-ը տեղի ունեցած կոտորածին զոհ գնաց 3.000 մարդ:

1896թ. հունիսի 3-ին թուրք հրոսակները Վանում սկսեցին հայկական ջարդեր: Մահմեդական բնակչությանը զենք բաժանվեց, և մոլլաները մզկիթներում սկսեցին հայերին կոտորելու կոչեր անել: Քաղաք եկան նաև տարբեր քուրդ ու թուրք ավազակախմբեր: Առաջին օրը, հանկարծակիի գալով, հայերը բազմաթիվ զոհեր տվեցին, սակայն հաջորդ օրը կարողացան արժանի հակահարված տալ թշնամուն: Հայկական բոլոր կուսակցությունները, մի կողմ դնելով իրենց տարածայնությունները, միավորեցին ուժերը: Արմենական կուսակցության հիմնադիր Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ ստեղծվեց ինքնապաշտպանության խորհուրդ, որի մեջ մտան դաշնակցական Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան) և հնչակյան Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան): Հայերը հետ մղեցին թուրքերի բոլոր գրոհները, չնայած վերջինները զինված էին թնդանոթներով և նորագույն հրացաններով:

Վանի կուսակալը, տեսնելով, որ զենքի ուժով չեն կարողանում հաջողության հասնել, առաջարկեց դադարեցնել դիմադրությունը, հաշտություն կնքել, իսկ կռվողներին՝ անարգել հեռանալ Պարսկաստան: Հայերը մերժեցին նրա առաջարկը՝ լավ իմանալով թուրքերի խոսքի արժեքը: Սակայն հարցին միջամտեց Անգլիայի հյուպատոսը, որի խորհրդով հայերն ընդունեցին թուրքական առաջարկը, մանավաղ, որ սպառնում էր զինամթերքը:

Հունիսի 8-ին մոտ 1.000 հայեր Մ. Ավետիսյանի գլխավորությամբ դուրս եկան քաղաքից և շարժվեցին դեպի պարսկական սահմանը: Սակայն Ս.Բարդուղիմեոս վանքի մոտ նրանց վրա հարձակվեցին թուրք-քրդական ուժերը և գրեթե բոլորին ոչնչացրին: Փրկվեցին մոտ երեք տասնյակ հայեր: Դրանից հետո թշնամին Վանում և Վասպուրականի մյուս բնակավայրերում կոտորածներ կազմակերպեց, վանքերում ոչնչացրին հազարավոր արժեքավոր ձեռագրեր: Վանի նահանգում սպանվեց ավելի քան 20.000 հայ:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև Չարսանջակում, Մուշում, Մարզվանում, Շատախում: Բայց գրեթե ամենուրեք գերակշիռ ուժերի դեմ պայքարում հիմնականում անզեն հայերն ի վերջո պարտվում էին, քանի որ անհնար էր կռվել կազմակերպված բանակ ունեցող պետության դեմ: Այնուամենայնիվ, բոլոր այն վայրերում, ուր հայերը դիմեցին ինքնապաշտպանության, ավելի քիչ զոհեր եղան, քան այնտեղ, ուր հանձնվել էին թուրքերի ողորմածությանը:

Այս իրադարձությունները եկան ամրապնդելու այն համոզումը, որ հայերը բռնություններից ու կոտորածներից կարող են ազատվել միայն զինվելու և պայքարելու շնորհիվ:

52. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՈՒՎԸ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ 1904 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սուլթանական կառավարությունը միշտ ուշադրության կենտրոնում էր պահում հայ ազատագրական շարժման օջախ համարվող Սասունը: Թուրքերը փորձում էին ամբողջությամբ հայաթափել այդ երկրամասը, ճնշել ֆիդայական շարժումները: Թուրքերն ու քրդերը ավելի սաստկացրին հա-

լածանքները, ամեն օր տեղի էին ունենում սպանություններ, բռնագրավում էին հայերի գույքն ու հողը, ապրելու համար անբարենպաստ պայմաններ ստեղծում: Այս պայմաններում հայի առջև երկու ճանապարհ էր մնում՝ կամ կոտորվել ու արտագաղթել կամ զենքով պաշտպանել սեփական կյանքը, գույքը, արժանապատվությունը և սեփական հայրենիքում ապրելու իրավունքը:

Ժողովրդի պաշտպանության գործը հիմնականում ծանրացել էր փոքրաթիվ ֆիդայիների ուսերին: Աղբյուր Սերոբի դավադիր սպանությունից (1899թ.) հետո ֆիդայական շարժման ղեկավարությունը Սասունում ստանձնեցին Անդրանիկը և Գևորգ Չաուշը: Նրանք տեսնում էին ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, հոգեկան ընկճվածությունը: Սասունցիների մարտական ոգին բարձրացնելու նպատակով ֆիդայիները Հակոբ Կոտոյանի առաջարկով որոշեցին ամրանալ Մուշ քաղաքի մոտ գտնվող Ս. Առաքելոց վանքում և երկարատև դիմադրություն ցույց տալ թուրքական բանակին: Դրանով ցանկանում էին ցույց տալ հայերի մարտական որակները, բարձրացնել ժողովրդի ոգին և մեծ տերություններին հիշեցնել խոստացված բարենորոգումների մասին:

1901թ. նոյեմբերի 3-ին Անդրանիկի ու Գևորգ Չաուշի գլխավորությամբ մոտ 40 ֆիդայիներ ամրացան Առաքելոց վանքում, որը անմիջապես պաշարվեց թուրքական մեծաթիվ ուժերի կողմից: Չնայած թվական բազմակի գերազանցությանը, թուրքերի բոլոր գրոհներն ավարտվեցին պարտությամբ: Վանքի կռվի լուրը մեծ արձագանք ունեցավ Եվրոպայում և անհանգստացրեց սուլթանական կառավարությանը: Թուրքերը ստիպված էին բանակցություններ սկսել Անդրանիկի հետ: Նա պահանջեց իրականացնել Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, զինաթափել քուրդ ավազակներին, վերադարձնել հայերից ապօրինաբար գրավված հողերն ու գյուղերը, հարկերը հավաքել հայ գյուղացիների միջոցով, ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին: Կատարվեց միայն վերջին պահանջը և ազատվեցին Մուշում բանտարկված մոտ երեք տասնյակ հայեր:

Մարտերը շարունակվեցին մինչև նոյեմբերի վերջերը: Այդ ընթացքում թուրքական զորքը մեծ կորուստներ ունեցավ նաև ցրտից ու համաճարակներից: Սակայն ֆիդայիները

վանքում երկար չէին կարող մնալ, քանի որ սպառվում էր պարենը և զինամթերքը: Նոյեմբերի 27-ին նրանք աննկատ հեռացան բոլոր կողմերից պաշարված վանքից: Առաքելոց վանքի կռիվը մեծ արձագանք ունեցավ, այն բարձրացրեց ֆիդայիների հեղինակությունը և հայ բնակչության ոգին:

Սասունը վերջնականապես հնազանդեցնելու և հայաթափելու նպատակով թուրքերը 1902թ.-ից նրա շուրջը տեղակայեցին բազմաթիվ զորամասեր ու քրդական ուժեր: Փաստորեն երկրամասը հայտնվեց շրջափակման մեջ: Հայկական կուսակցությունները ջանում էին դրսից զենք ներմուծել, սակայն դա մեծ դժվարությունների հետ էր կապված: Ռուս սահմանապահները, թուրքերն ու քրդերը ուշադիր պահպանում էին սահմանները, և հայկական զինատար ու մարտական խմբերի միայն փոքր մասն էր կարողանում հասնել նպատակակետին: Միայն Թորգոմի 23 հեծյալներից կազմված «Մորիկ» խումբն էր, որ Կարսից 1903թ. ամռանը, մեծ դժվարություններ հաղթահարելով, անվնաս հասավ Սասուն: Դա բավական բարձրացրեց սասունցիների տրամադրությունն ու մարտական ոգին:

1903թ. վերջին Սասունում կազմվեց Ձինվորական խորհուրդ, որի ղեկավար ընտրվեց Անդրանիկը: Թուրքերը Սասունի ուղղությամբ կենտրոնացրին մոտ 10.000-ոց կանոնավոր բանակ և հազարավոր քրդերի: Թուրքական բանակի հրամանատարն էր 1894թ. Սասունի ապստամբությունը ճնշած Ջեքի փաշան: Թշնամուն դիմագրավելու էին մոտ 200 ֆիդայիներ և 1000 զինված սասունցիներ:

1904թ. մարտի վերջին թուրքերն անցան հարձակման: Անդրանիկի, Գևորգ Չավուշի, Հրայրի, Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ սասունցիները հերոսական դիմադրություն ցույց տվեցին: Ապրիլի 13-ին Շենիկի պաշտպանական մարտերում հերոսաբար զոհվեց հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ Հրայրը: Չնայած հայերի համառ դիմադրությանը, թուրքերը քայլ առ քայլ առաջանում էին: Դրան նպաստում էր հայերի զենքի ու զինամթերքի պակասը: Ապրիլի 20-23-ը մղված մարտերի արդյունքում թշնամին գրավեց ապստամբների կենտրոն Գելիեգուզան գյուղը, ապա՝ Տավրիկը: Մոտ 120 զինյալներով Սեբաստացի Մուրադը մարտերով ճանապարհի բացեց և անզեն բնակչության մի

մասին ու վիրավորներին տեղափոխեց Մշո դաշտ, ապա որոշ քանակությամբ զինամթերք հայթայթելով վերադարձավ Սասուն: Մայիսի սկզբին թշնամին գրավեց Սասունը և կոտորեց մոտ 8.000 մարդ: Ֆիդայիներն ու սասունցի մարտիկների մի մասն ամրացավ լեռներում ու անտառներում և շարունակեց պայքարը:

Կենդանի մնացած սասունցիներին կառավարությունը մտադիր էր բնակեցնել Մշո դաշտում, սակայն նրանք սպառնացին կրկին ապստամբել, իսկ տերությունները միջամտեցին, և սուլթանը ստիպված էր հրաժարվել Սասունն ամբողջությամբ հայաթափելու քաղաքականությունից:

Սասունի կոտորածները մեծ արձագանք գտան ողջ աշխարհում: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները դատապարտեցին այդ ոճիրը, և նրանց ջանքերի շնորհիվ ջարդերի ալիքը չտարածվեց այլ վայրերում, իսկ Սասունը չբնակեցվեց քրդերով: Ռուսաստանը շարունակում էր վարել ոչ - հայանպաստ քաղաքականություն և մինչև Սասունի դեպքերը մերժել էր Անգլիայի ու Ֆրանսիայի առաջարկը, որպեսզի ճնշում գործադրեն սուլթանի վրա՝ հայկական ջարդերից խուսափելու համար: Իսկ Գերմանիան ու Ավստրո-Յունգարիան անտարբեր մնացին Սասունի ողբերգական դեպքերի հանդեպ:

Փաստորեն, հերոս լեռնականների զինված դիմադրության շնորհիվ ձախողվեց Սասունը հայաթափելու սուլթանական կառավարության ծրագիրը:

53. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Արևելյան Հայաստանը XXդ. սկզբին շարունակում էր մնալ Ռուսաստանի տիրապետության տակ: Ցարական իշխանությունները Անդրկովկասում վարում էին գաղութային քաղաքականություն: Սակայն, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, այստեղ հայերի գլխին կախված չէր ֆիզիկական բնաջնջման վտանգը, կային տնտեսական ու մշակութային առաջընթացի բավարար պայմաններ: Այսպիսով, արևելահայությունը, հաղթահարելով եղած խոչընդոտները, բռնել էր վերելքի ուղին: Անդրկովկասի գրեթե բոլոր խոշոր քաղաքներում հայերը կազմում էին մեծամասնություն, հայ

բուրժուազիայի ձեռքում էր կենտրոնացվել երկրամասի տնտեսության, այդ թվում նավթարդյունաբերության, մի խոշոր մասը, գրեթե բոլոր արհեստավորները հայեր էին: Տնտեսական զարգացմանը զուգահեռ առաջադիմում էր կրթական-լուսավորական ու մշակութային կյանքը:

Հայ ժողովրդի այդ բուռն վերելքը որոշ ցարական պաշտոնյաների կողմից դիտվում էր որպես երկրամասի ռուսացման ծրագրերին խոչընդոտող հանգամանք և ապագայում հայկական անջատողական ձգտումներին խթանող գործոն: Հայերի տնտեսական ու մշակութային վերելքին նախանձով էին վերաբերվում նաև հարևան վրացիներն ու մահմեդականները:

Հակահայկական դիրքորոշմամբ աչքի էր ընկնում Կովկասի կառավարչապետ Գոլիցինը (1896-1904թթ.): Կառավարության նիստում նա նույնիսկ առաջ քաշեց հայերին Սիբիր արքայապետի գաղափարը: Նա պատճառաբանում էր, որ բոլոր հայերը հեղափոխականներ ու անջատողականներ են: Գոլիցինը որոշեց առաջին հարվածը հասցնել հայերի հոգևոր, կրթական ու մշակութային հաստատություններին, որպեսզի ավելի հեշտությամբ խեղի հայ ժողովրդի ազգային դիմագիծը, ապա իրագործի ավելի հեռուն գնացող նպատակները: Նախկինում ցարական իշխանությունները մի քանի անգամ փորձել էին փակել հայկական դպրոցները և հայ մանուկներին հեռու պահել ազգային կրթությունից ու մտածելակերպից: Սակայն հանդիպելով հայ բնակչության միահամուռ ընդդիմությանը, իշխանությունները ստիպված էին եղել վերաբացել հայկական դպրոցները: Գոլիցինը որոշեց հարվածել Հայ Առաքելական եկեղեցու տնտեսական կարողությանը, որպեսզի թուլացնի հայ հոգևոր կենտրոնի դիրքերը և փակի հայկական դպրոցները, որոնք գլխավորապես պահվում էին եկեղեցու միջոցներով:

1903թ. հունիսի 12-ին կայսր Նիկոլայ II-ը, Գոլիցինի առաջարկով, հրամանագիր ստորագրեց, որով բռնագրավվելու էին Հայ Առաքելական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Այդ ապօրինի որոշումը հանդիպեց ամբողջ հայ ժողովրդի և հոգևորականության բուռն ընդդիմությանը:

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հրաժարվեց ենթարկվել այդ հրամանագրին և բոլոր հոգևորական-

ներին արգելեց սեփական կամքով եկեղեցու ունեցվածքը հանձնել ցարական պաշտոնյաներին: Անդրկովկասի բոլոր հայաշատ վայրերում տեղի ունեցան խռչող ցույցեր ու բողոքի գործողություններ, որոնք հաճախ վերածվում էին զինված ընդհարման ուստիականության ու զինվորների հետ: Հակացարական ելույթները գլխավորում էին Հ.Հ.Դաշնակցություն և Ս.Դ.Հնչակյան կուսակցությունները:

Ամենուրեք իշխանությունները միայն զինված ուժ կիրառելու միջոցով էին կարողանում բռնագրավել եկեղեցու ունեցվածքը: Հայության շահերի պաշտպանության գործը հիմնականում ղեկավարում էր Դաշնակցությունը, որի վրիժառուները պատժեցին հայերի նկատմամբ բռնություններ գործադրած ցարական պաշտոնյաների մեծ մասին: Հնչակյանները մահափորձ կազմակերպեցին անձամբ Գոլիցինի դեմ, որը ծանր վիրավորվեց և հեռացվեց պաշտոնից:

Իշխանությունների համար շատ անսպասելի էր հայերի կողմից նման համառ ու կազմակերպված համաժողովրդական դիմադրությունը: Հաշվի առնելով հայ ժողովրդի օրեցօր աճող զայրույթն ու դժգոհությունը, ինչպես նաև սկսված ռուսական առաջին հեղափոխությունը, ցարական իշխանությունները ստիպված էին տեղի տալ: 1905թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը նոր հրամանագիր ստորագրեց, որով հայոց եկեղեցուն վերադարձվեց նրա ամբողջ ունեցվածքը: Այսպիսով, սեփական ազգային շահերը պաշտպանելուն ուղղված հայության պայքարը հզոր կայսրության դեմ ավարտվեց հաղթանակով:

1905թ. սկսվեց ռուսական առաջին հեղափոխությունը: Ռուսաստանի ժողովուրդներին հեղափոխական շարժումներից հեռու պահելու նպատակով ցարական իշխանությունները դիմում էին ամենատարբեր միջոցների, այդ թվում ազգամիջյան ընդհարումներ կազմակերպելուն: Անդրկովկասում իշխանությունները հրահրեցին հայ-թաթարական (ադրբեջանական) բախումներ: Դա առաջին հերթին ուղղված էր զարգացած ու կրթված հայերի դեմ, որոնք առավել շատ էին հակված սոցիալական ու ժողովրդավարական բարելավումներ տեսնելուն: Միաժամանակ հետամնաց մահմեդական ամբոխին հեշտ էր գրգռել հարձակվելու խաղաղ աշխատանքով զբաղված և ոչինչ չկասկածող հայերի վրա:

1905թ. փետրվարի 6-9-ը Բաքվում տեղի ունեցան առաջին ընդհարումները, որոնց նախաձեռնողը Բաքվի նահանգապետ Նակաշիձեն էր: Ձինված մահմեդականները հարձակվեցին հայերի և նրանց տների վրա, սկսեցին կողոպտել, բռնաբարել, սպանել խաղաղ հայ բնակչությանը: Ոստիկանությունը և զորքը մնացին կողմնակի դիտողի դերում: Հայերը սկզբում անակնկալի եկան և մեծ կորուստներ ունեցան: Շուտով Նիկոլ Դումանի գլխավորությամբ Դաշնակցության ջոկատները արժանի հակահարված տվեցին թուրք ջարդարարներին, որոնք հսկայական զոհեր տալով հաշտություն խնդրեցին: Դաշնակցության որոշումով Դրոն (Դրաստամատ Կանայան) և Մարտիրոս Չարուխյանը սպանեցին ջարդերի նախաձեռնող Նակաշիձեն:

Սակայն Բաքվով ընդհարումները չսահմանափակվեցին և տարածվեցին Անդրկովկասի այն բոլոր բնակավայրերում, ուր հայերն ու թաթարները ապրում էին կողք կողքի: Արյունահեղ մարտեր տեղի ունեցան Բաքվի, Գանձակի, Երևանի, Թիֆլիսի նահանգներում: Ինքնապաշտպանության կազմակերպման գործում աչքի ընկան դաշնակցական նշանավոր գործիչներ Նիկոլ Դումանը, Խանասորի Վարդանը, Արմեն Գարոն, Սեբաստացի Մուրադը, Կայծակ Առաքելը և ուրիշներ:

Ամենուրեք առաջինը հարձակվում էին թաթարները, սակայն գրեթե միշտ հաղթում էին փոքրաթիվ, բայց կազմակերպված ու մարտունակ հայկական ջոկատները: Ընդհարումների ժամանակ Դաշնակցությունը ապացուցեց իր կազմակերպվածությունը, մարտունակությունը և հայության շահերին սպառնացող վտանգի դեպքում արագ արձագանքելու ընդունակությունը: Միաժամանակ աղբյուրացիների նախնիները կրկին ապացուցեցին թուրքական ցեղի արյունարբու բնազդները: Ընդհարումները շարունակվեցին մինչև 1906թ. աշուն և իշխանությունների միջամտությամբ դադարեցվեցին, երբ հեղափոխական շարժումները Ռուսաստանում արդեն ճնշված էին և ցարական պաշտոնյաները այլևս կարիք չունեին ապակայունացնելու իրադրությունը: Իրավիճակի կայունացմանը նպաստեցին նաև առաջավոր մտավորականների՝ Հովհաննես Թումանյանի, Մաքսիմ Գորկու, Սաբիրի կողմից հնչեցված հանդարտեցման կոչերը:

Եթե նախկինում հայերն իրենց ապահով էին զգում ռուսական կայսրության մեջ, ապա այդ ընդհարումները ցույց տվեցին, որ ոչ մի օտար տիրապետություն չի կարող լիարժեքորեն ապահովել հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը:

Եկեղեցական գույքի համար պայքարը և 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումները ցարական պաշտոնյաներին ու հարևան ժողովուրդներին ապացուցեցին, որ հայերը կազմակերպված, բարձր մարտունակություն ունեցող, սեփական շահերը պաշտպանելու ընդունակ ժողովուրդ են և անհրաժեշտ է հարգանքով վերաբերվել նրան:

54. ԵՐԻՏՅՈՒՐՔԵՐԻ 1908 Թ. ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ:

ՕՍՄԱՆԻՉՄ ԵՎ ՊԱՆՏՈՒՐՔԻՉՄ

Սուլթան Աբդուլ Համիդի օրոք Օսմանյան կայսրությունը հայտնվեց կործանման եզրին: Հսկայական չափերի հասավ արտաքին պարտքը, լայն ծավալներ ընդունեցին ազգային-ազատագրական շարժումները, երկրի վրա մեծ ազդեցություն ունեին տերությունների դեսպանները, որոնք տարբեր պատրվակներով անընդհատ միջամտում էին կայսրության ներքին գործերին, սուլթանի հետադեմ ֆեոդալական վարչակարգը արգելակում էր երկրի առաջընթացին:

Այդ ամենը դժգոհություն էր առաջացնում թուրքական բարձրացող բուրժուազիայի շրջանում, որոնք հայտնի էին երիտթուրքեր անունով: Նրանք ստեղծել էին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: Սուլթանական վարչակազմը համատեղ ուժերով տապալելու համար 1907թ. դեկտեմբերին Փարիզում համաձայնություն կնքեցին երիտթուրքերը, Հ. Յ. Դաշնակցությունը, հրեական, արաբական և մակեդոնական կազմակերպությունները:

1908թ. հուլիսին Մակեդոնիայում Նիազի և Էմվեր բեյերի գլխավորությամբ ապստամբեց բանակը և իրականացրեց պետական հեղաշրջում: Օսմանյան կայսրությունում հաստատվեց սահմանադրական միապետություն: Համիդի իրավունքները սահմանափակվեցին, իշխանության լծակներն անցան երիտթուրքերին: Նրանք խոստանում էին հավասար պայմաններ ստեղծել կայսրության բոլոր ժողովուրդների համար, բարելավել նրանց վիճակը: Հայերը խանդավառությամբ ըն-

դունեցին երիտթուրքերի խոստումները, սակայն շուտով խորը հիասթափություն ապրեցին:

Իշխանության գալով՝ երիտթուրքերը որդեգրեցին օսմանիզմի գաղափարախոսությունը: Նրանք ցանկանում էին կայսրության բոլոր ժողովուրդներին ձուլել մեկ՝ օսմանյան ազգի մեջ: Հայտարարեցին, որ Օսմանյան կայսրության բոլոր հպատակներն օսմանցիներ են և պետության առաջ հավասար են՝ առանց կրոնական ու ազգային խտրականության: Նրանք հայտարարում էին, թե իբր այդպիսով ժամանակի ընթացքում կստեղծվի միասնական լեզու և մշակույթ: Միասնական լեզվի տակ, անշուշտ, նրանք հասկանում էին թուրքերենը: Մինչդեռ օսմանիզմի քաղաքականության իրական նպատակն էր ձուլել մյուս ազգերին թուրքերի հետ, վերջ տալ ազգային-ազատագրական շարժումներին և ամրապնդել կայսրությունը: Սակայն այդ քաղաքականությունն ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Կայսրության ոչ միայն քրիստոնյա ժողովուրդները, այլև մահմեդական արաբներն ունեին ազգային բարձր ինքնագիտակցություն և նրանց ձուլումը բնականաբար հանդիպեց լուրջ ընդդիմության:

Օսմանիզմը բացասաբար ընդունեցին նաև թուրքերն ու մյուս մահմեդականները, քանի որ դրանով վերանում էր նրանց նախկին արտոնյալ վիճակը, իսկ ոչ մահմեդական ռայաները հավասարվում էին իրենց, ինչը հակասում էր շարիաթի օրենքներին:

Անհաջողության մատնվելով օսմանիզմի քաղաքականության հարցում՝ երիտթուրքերը որդեգրեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Այն ծնունդ էր առել Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդների մոտ, որոնց նպատակն էր ազատագրվել օտար տիրապետությունից, թուրքական ժողովուրդներին համախմբել միասնական պետության մեջ, որը ձգվելու էր Բալկաններից մինչև Սիբիր ու Չինաստան: Այդ իդեալն իրականացվելու էր միակ անկախ թուրքական պետության՝ Օսմանյան կայսրության աջակցությամբ և գլխավորությամբ: Պանթուրքիզմի գաղափարախոսները առաջարկում էին թուրքալեզու բոլոր ժողովուրդների ընդհանուր և պարտադիր լեզու դարձնել Պոլսի թուրքերենը, քարոզել թուրքերի փառավոր անցյալն ու մշակույթը:

Օսմանյան կայսրության մեջ թուրքերը քրիստոնյա ժողովուրդներից հետ էին մնում ոչ միայն սոցիալ-տնտեսական ու մշակութային, այլև ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, ազգային գաղափարների զարգացման մակարդակով: Բավական ժամանակ պահանջվեց թուրքերի մեջ ազգային «եսը» ձևավորելու համար: Պանթուրքիզմը ռասիստական, շովինիստական գաղափարախոսություն էր: Այն փորձում էր ապացուցել, որ թուրքական էթնոսը բարձր է կանգնած մյուս ժողովուրդներից և ստեղծված է իշխելու համար: Պանթուրքիստները նշում էին, որ Ասիայի և Յուլսիսային Աֆրիկայի բոլոր առաջնորդները սերում են թուրքական, իսկ եվրոպական երկրների ղեկավարները գերմանական ռասաներից: Մարդկային քաղաքակրթության բոլոր նվաճումները վերագրում էին թուրքական էթնոսին: Սեփական ռասայի գովերգումը ինքնանպատակ չէր, այն հիմքեր էր նախապատրաստում հետագա անհեթեթ հավակնությունների համար:

Պանթուրքիզմն իրականացվելու էր երեք փուլով. թուրքիզմ, օղուզականություն, թուրանիզմ. Առաջին փուլում թուրքացվելու էր Օսմանյան կայսրությունը (այն, փաստորեն, նախատեսում էր ոչնչացնել արևմտահայությանը), երկրորդ փուլում միավորվելու էին օղուզ թուրքերը (օսմանյան թուրքերը, Յուլսիսային Պարսկաստանի ու Անդրկովկասի թուրքալեզու մահմեդականները) և թուրքմենները: Այս փուլում կամ ամբողջությամբ ոչնչացվելու էին նաև արևելահայերը կամ նրանց մի մասը և Արևելյան Հայաստանից գրավվելու էին նվազագույնը Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Ջանգեզուրը և Ղարաբաղը, որպեսզի կապ ստեղծվեր Ադրբեջանի հետ: Վերջին փուլում միավորվելու էին բոլոր թուրքալեզու ժողովուրդները:

1910-1911թթ. Սալոնիկում տեղի ունեցած ընդհանուր ժողովների ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը որդեգրեց պանթուրքիզմի քաղաքականությունը: Կայսրության մահմեդական ժողովուրդները պետք է թուրքացվեին, իսկ քրիստոնյաները՝ ոչնչացվեին: Ապա թուրքիային էին միացվելու Իրանական Ադրբեջանը, Կովկասը, Ղրիմը, Թաթարստանը, Միջին Ասիան, Սիբիրը, Թուրքմենստանը, Մանջուրիան, և ստեղծվելու էր մեծ Թուրանը:

Երիտթուրքերը նշում էին, որ եթե սուլթանները նախկինում ձուլած կամ ոչնչացրած լինեին հպատակ ժողովուրդներին, ապա կայսրությունը չէր բռնի քայքայման ուղին: Պանթուրքիզմի ծրագրի իրականացման ճանապարհին էր գտնվում Հայաստանը, և հայ ժողովուրդը դարձավ դրա առաջին զոհը: Իշխանությունները թուրք բնակչության մեջ սկսեցին հրահրել ամենավայրենի շովինիզմ ու հայատյացություն, կոչ էին անում քանի դեռ ուշ չէ թուրքացնել Անատոլիան, իսկ հայերին ոչնչացնել: Այսպիսով, պանթուրքիզմի ազգայնական, ռասիստական, ծավալապաշտական գաղափարախոսությունը իր սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի դեմ և հանդիսացավ Մեծ եղեռնի գլխավոր գործոններից մեկը:

55. ԿԻԼԻԿԻԱՅԻ 1909 Թ. ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Կիլիկիան ընդգրկված էր Ադանայի և Հալեպի վիլայեթների մեջ: Այստեղ բնակվում էին մոտ 400.000 հայեր, որոնք կազմում էին բնակչության մեծամասնությունը: Հայերի ձեռքում էր կենտրոնացված երկրամասի առևտրի, արհեստագործության ու գյուղատնտեսության զգալի մասը:

1909թ. Կիլիկիայում տեղի ունեցան հայկական զանգվածային կոտորածներ: Դա ցեղասպանություն իրականացնելու երիտթուրքերի առաջին փորձն էր: Այն նպատակ ուներ հայաթափել Կիլիկիան, որը համիդյան ջարդերի ժամանակ խուսափել էր զանգվածային ջարդերից, և հայերն այնտեղ կազմում էին մեծամասնություն: Այսպիսով, թուրքերը ձգտում էին թալանել հայերի ունեցվածքը, զգալիորեն պակասեցնել հայերի թիվը և կանխել հնարավոր ազգային ելույթները:

1909թ. ապրիլի 1-ին Ադանայում իշխանությունների նախաձեռնությամբ սկսվեցին հայկական կոտորածներ: Քաղաքի երեք հայկական թաղամասերում շուտով կազմակերպվեց ինքնապաշտպանություն՝ Կարապետ Լաչինյանի գլխավորությամբ: Մեծաթիվ և լավ զինված հրոսակներին դիմադրում էին 173 զինված հայեր: Մահմեդական խուժանի բոլոր գրոհները արժանի հակահարված ստացան և ավարտվեցին անհաջողությամբ: Ի վերջո, համոզվելով, որ ինքնապաշտպանության դիմած հայերին զենքի ուժով չեն կարող հաղթել,

թուրքական իշխանությունները որոշեցին գնալ խորամանկության: Նրանց միջամտությամբ եռօրյա ջարդերն ու ինքնապաշտպանությունն ավարտվեցին: Իշխանությունները խաբեությանը հավաքեցին հայերի մոտ եղած զենքերը, իսկ ապրիլի 12-ին իշխանությունների նախաձեռնությամբ Ադանայում նոր կոտորած կազմակերպվեց, որին զոհ գնաց 18.000 հայ:

Ջարդերի ալիքը տարածվեց Կիլիկիայի նաև մյուս բնակավայրերում և խլեց մոտ 30.000 հայի կյանք: Ջարդերը կատարվեցին անենադաժան մեթոդներով, չէին խնայում նաև կանանց ու երեխաներին: Կոտորածներից ու թալանից հետո տեղի հայերը հայտնվեցին չափազանց ծանր կացության մեջ: Հայերի միայն նյութական կորուստը կազմեց 20 միլիոն թուրքական լիրա:

Հաշվի առնելով 1895-1896թթ. համիդյան կոտորածների դառը փորձը, Կիլիկիայի հայ բնակչությունը գրեթե ամենուրեք դիմեց ինքնապաշտպանության և հիմնականում փրկվեց ոչնչացումից:

Շեյխ Մուրադ գյուղի հայերը, լսելով Ադանայում սկսված կոտորածի մասին, դիմեցին ինքնապաշտպանության: Ապրիլի 2-5-ը նրանք համառ դիմադրություն ցույց տվեցին թուրք ջարդարարներին: Ձինամթերքի սպառվելուց հետո, ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը նրանք բարեհաջող հեռացան և ապաստանեցին Ադանայում:

Ջարդարարներին համառ դիմադրություն ցույց տվեցին Դյորթ Յուլի (Չոք Մարզվան) հայերը: Այն գտնվում էր Միջերկրական ծովի մոտ, ուներ 4850 հայ բնակիչ: Այդտեղ ապաստանեցին նաև շրջակա ավերված գյուղերի բազմաթիվ հայեր: Ապրիլի 3-ից թուրքերը բազմիցս փորձեցին գրավել գյուղը, բայց ամեն անգամ մեծ զոհեր տալով՝ փախուստի էին դիմում: Տասնօրյա ինքնապաշտպանությունը ավարտվեց Ալեքսանդրետի անգլիական հյուպատոսի միջամտությամբ, որից օգնություն էին խնդրել Դյորթ Յուլի հայերը: Այսպիսով, զենքի միջոցով նրանք փրկվեցին թուրքական յաթաղանից:

Հերոսական էր Հաճն քաղաքի 12-օրյա ինքնապաշտպանությունը: Ապրիլի 4-15-ը Ներսես վարդապետ Դանիելյանի գլխավորությամբ հաճնցիները հետ մղեցին թուրքական մեծաթիվ ուժերին: Ի վերջո, Մերսինի անգլիական հյու-

պատուսի միջնորդությամբ քաղաքի պաշարումը վերացվեց և տեղի հայերին բնաջնջելու ծրագիրը ձախողվեց:

Ապրիլի 2-6-ը Սիս քաղաքի հայերը հետ մղեցին թուրքերի գրոհները, որոնք ստիպված էին ձեռնունայն հեռանալ: Ինքնապաշտպանության ոգեշնչման ու կազմակերպման գործում կարևոր դեր ունեցավ Կիլիկիայի հայոց կաթողիկոս Սահակ Բ Խապայանը:

Այդ իրադարձությունների ժամանակ զեյթունցիները որոշեցին նախահարձակ լինել և օգնել Հաճնին կամ Սիսին, բայց Կիլիկիայի կաթողիկոսի հորդորով մարտական գործողությունների չդիմեցին:

Այսպիսով, գրեթե բոլոր վայրերում, որտեղ հայերը դիմեցին ինքնապաշտպանության, փրկվեցին թուրքական յաթաղանից: Նախորդ տարիների դառը փորձից հետո, Կիլիկիայի հայերը զենք վերցրին և կարողացան ձախողել տեղի մոտ կես միլիոն հայերին ոչնչացնելու հին ու նոր թուրքերի հայասպանական քաղաքականությունը:

Երիտթուրքերը փորձեցին Կիլիկիայի կոտորածների ողջ մեղքը բարդել Համիդի և նրա կողմնակիցների վրա: Մարտի 31-ին Համիդը փորձել էր պետական հեղաշրջում իրականացնել, սակայն անհաջողության էր մատնվել և գահազրկվել: Ոճրագործության մեղավորներին հայտնաբերելու և վնասների չափը ճշտելու համար Կիլիկիա ուղարկվեց խորհրդարանական պատվիրակություն, որի հետաքննությունից պարզ դարձավ, որ այն ծրագրվել և իրականացվել է իշխանությունների հրահանգով ու վերահսկողությամբ: Այդ ոճրագործության համար որևէ թուրք պաշտոնյա չպատժվեց, իսկ նահանգապետը նույնիսկ կառավարական պարգևի արժանացավ:

Փաստորեն, Հայկական հարցը լուծելու գործում երիտթուրքերը որդեգրել էին Աբդուլ Համիդի քաղաքականությունը: Նրանց որդեգրած թե՛ օսմանիզմի, թե՛ պանթուրքիզմի քաղաքականությունը նախատեսում էր հայերի ծուլումն ու ոչնչացումը: Կիլիկիայի կոտորածները նախերգն էին այն մեծ ոճրի, որ իրականացրին երիտթուրքերը 1915-1916թթ.:

56. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹԹ.

Երիտթուրքերի օրոք արևմտահայերի վիճակը չբարելավվեց և կրկին ջարդերի սպառնալիքը կախվեց նրանց գլխին: Չնայած Պոլսի հայոց պատրիարքարանի և օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների դիմում-բողոքներին, թուրքական իշխանությունները խոստումներից այն կողմ չանցան և որևէ նախաձեռնություն չցուցաբերեցին հայերի դրությունը բարելավելու ուղղությամբ:

Հայ քաղաքական գործիչները, այս պայմաններից ելնելով, որոշեցին մեծ տերություններին հիշեցնել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և 1895թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի մասին և պահանջել դրանց գործադրումը: Դրա համար առիթ հանդիսացավ 1912թ. հոկտեմբերին սկսված Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը, որի հետևանքով Արևելյան հարցը կրկին դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա:

1912թ. հոկտեմբերին Թիֆլիսում տեղի ունեցավ Ռուսական կայսրության հայաշատ վայրերի ներկայացուցիչների համագումար, որը դիմեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, որպեսզի նրա միջնորդությամբ ռուսական կառավարությունը պահանջի Արևմտյան Հայաստանում բարենորոգումների գործադրումը: Նույն հարցով կաթողիկոսին դիմեց նաև Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունին: Համագումարն ընտրեց Ազգային բյուրո, որը հետապնդելու էր Հայկական հարցի արդարացի լուծման գործընթացին: Դեկտեմբերին նմանատիպ մարմին ստեղծվեց նաև Կ. Պոլսում՝ Ապահովության խորհուրդը:

Գևորգ Ե-ը հայկական նահանգներում բարենորոգումներ կատարելու հարցը բարձրացնելու խնդրանքով դիմեց Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին և կայսր Նիկոլայ II-ին: Միաժամանակ, կաթողիկոսը նոյեմբերի 10-ին եզիպտահայ նշանավոր գործիչ Պողոս Նուբար փաշային լիազորեց կազմել Ազգային պատվիրակություն և Հայկական հարցը բարձրացնել Եվրոպական տերությունների առջև: Ազգային պատվիրակության մեջ ընդգրկվեցին Եվրոպայի հայոց թեմի առաջնորդ Գևորգ Եպիսկոպոս Ութունյանը, արևելագետ,

Եգիպտոսի պետական համալսարանի ռեկտոր Յաղուբ Արթին փաշան, իրավաբան Հարություն Մոստիշյանը, ճանաչված հասարակական գործիչ Մինաս Չերազը:

Հայկական հարցի վերաբացումից և տերությունների հնարավոր միջամտության հեռանկարից անհանգստացած՝ 1912թ. դեկտեմբերին թուրքական կառավարությունը մի ծրագիր առաջ քաշեց, ըստ որի բարենորոգումներ էին իրականացվելու հայկական 6 վիլայեթներից 4-ում (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր), սակայն ոչ մի երաշխիք չկար, որ դրանք կիրականացվեն: Դա էր պատճառը, որ հայ գործիչները թերահավատորեն մոտեցան այդ նախաձեռնությանը: 1913թ. հունվարին Էնվերը պետական հեղաշրջում իրականացրեց և նոր կառավարությունը կտրականապես հրաժարվեց որևէ բարենորոգում կատարել Հայաստանում:

4. Պոլսի Ապահովության խորհուրդը և Ազգային պատվիրակությունը կազմեցին բարենորոգումների ծրագիր, ըստ որի հայկական 6 վիլայեթները միավորվելու էին մեկ նահանգի մեջ, որից դուրս էին թողնվելու մահմեդականներով բնակեցված ծայրամասերը, բոլոր պաշտոնները հավասարապես բաշխվելու էին հայերի և մահմեդականների միջև, նշանակվելու էր եվրոպացի գեներալ-նահանգապետ, որին էին ենթարկվելու զինված ուժերն ու ոստիկանությունը, նա էր նշանակվելու բոլոր պաշտոնյաներին, հայերը ծառայելու էին երկրամասի տարածքում, քրդերը զինաթափվելու էին, հայերին էին վերադարձվելու բռնագրավված հողերը, պաշտոնական լեզու էին լինելու թուրքերենը, հայերենը և քրդերենը:

Ազգային պատվիրակությունը ակտիվ բանակցություններ սկսեց եվրոպական կառավարությունների հետ, ինչպես նաև քայլեր ձեռնարկեց Եվրոպայի հասարակական կարծիքը հոգուտ հայկական բարենորոգումների տրամադրելու ուղղությամբ: Պ. Նուբարը Հայկական հարցը Եվրոպային ներկայացնում էր ոչ թե հայերի նկատմամբ խղճահարություն առաջացնելու տեսանկյունից, ինչպես դարեր շարունակ վարվել էին հայ գործիչները, այլ փորձում էր Հայաստանում բարենորոգումների գործադրման շահավետությունը ցույց տալ եվրոպացիներին: Իսկ հակառակ պարագայում սպառնում էր, որ հայերն այլևս չեն հանդուրժի տիրող վիճակը և ապստամբություն կբարձրացնեն, որի արդյունքում Ռուսաս-

տանը կարող էր գրավել Արևմտյան Հայաստանը: Դա բավական արդյունավետ եղավ:

Այս անգամ Հայկական հարցի պաշտպանությամբ հանդես եկավ Ռուսաստանը, որի նախաձեռնությամբ 1913թ. հունիսին, Կ. Պոլսում տերությունների դեսպանները քննարկեցին հայկական բարենորոգումների ռուսական նախագիծը, որի հիմքում դրված էր հայկական տարբերակը: Սակայն այդ ծրագրին դեմ արտահայտվեց Գերմանիան, որին աջակցում էին Ավստրո-Հունգարիան և Իտալիան: Ռուսաստանին, քիչ թե շատ, աջակցում էին Ֆրանսիան և Անգլիան:

Պ. Նուբարի ջանքերով 1913թ. սեպտեմբերին Ռուսաստանը և Գերմանիան համաձայնության եկան և թուրքիային առաջարկեցին բարենորոգումների միասնական ծրագիր: Թուրքական իշխանությունները տարբեր պատրվակներով սկսեցին ձգձգել այդ նախագծի ընդունումը, և Հայկական հարցը կրկին կանգնեց ձախողման շեմին: Պ. Նուբարի նախաձեռնության ու ջանքերի շնորհիվ եվրոպական տերությունները սկսեցին տնտեսական ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ պահանջելով բարենորոգումներ կատարել Արևմտյան Հայաստանում: Տնտեսական և դիվանագիտական հատկապես մեծ ճնշում էր գործադրում Ռուսաստանը:

Այդ ամենի շնորհիվ, 1914թ. հունվարի 26-ին ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ: Համաձայնագրով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու նահանգների. մեկի կազմում էին Վանը, Բիթլիսը, Խարբերդը, Դիարբեքիը, մյուսում՝ Էրզրումը, Սեբաստիան և Տրապիզոնը: Վերջին վիլայեթի ընդգրկումով արհեստականորեն ստեղծվելու էր մահմեդականների մեծամասնություն: Նահանգները ղեկավարելու էին եվրոպացի գեներալ-նահանգապետերը, որոնց թեկնածությունն առաջարկելու էին տերությունները, իսկ սուլթանը հաստատելու էր: Սուլթանը նշանակելու էր բարձր պաշտոնյաներին, իսկ մյուսներին՝ նահանգապետը: Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներում պաշտոնները բաշխվելու էին հավասարության հիմունքներով, իսկ մյուսներում՝ ըստ մահմեդականների և քրիստոնյաների տոկոսային հարաբերակցության: Հայերը իրավունք էին ստանում գեներ կրել, իսկ համիդիե գնդերը վերածվելու էին պահեստի հեծելազորի: Յուրաքանչյուր ազգի կրթության

համար հատկացվելու էր այնքան գումար, որքան այդ նպատակով հարկ կմուծեին: Նահանգապետներն էին լուծելու հողային վեճերը:

Չնայած համաձայնագիրը շատ բաներով թերի էր, սակայն հայերին տալիս էր քիչ թե շատ առաջընթացի և զարգացման հնարավորություն: Դա կարող էր քաղաքացու տարրական իրավունքներ ապահովել արևմտահայության համար, նպաստել նրանց տնտեսական, քաղաքական ու մշակութային առաջընթացին:

Գեներալ-նահանգապետեր ընտրվեցին հոլանդացի Լ. Վեստենենկը և նորվեգացի Ն. Յոֆը: Առաջինի նստավայրն էր լինելու Էրզրումը, երկրորդինը՝ Վանը: Սակայն նահանգապետները դեռ չէին անցել իրենց պարտականությունների կատարմանը, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և երիտթուրքերը, մի կողմ դնելով բարենորոգումների ծրագիրը, որոշեցին Չայկական հարցը լուծել՝ ամբողջությամբ բնաջնջելով հայ ժողովրդին:

57. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

20-րդ դարի սկզբին միջազգային իրադրությունը չափազանց լարված էր: Մեծ տերությունները բաժանվել էին երկու ռազմաքաղաքական խմբավորումների և ձգտում էին պատերազմի միջոցով վերաբաժանել աշխարհը: Դա հանգեցրեց նրան, որ 1914թ. օգոստոսի 1-ին բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Խմբավորումներից մեկը Անտանտն (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) էր, մյուսը՝ Զառյակ միությունը (Գերմանիա, Ավստրո-Յունգարիա, Թուրքիա, Բուլղարիա): Հայաստանում բախվում էին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Թուրքիայի շահերը: Ռուսաստանը ցանկանում էր գրավել Արևմտյան Հայաստանը, իսկ Ֆրանսիան՝ Կիլիկիան: Թուրքիան ձգտում էր Արևելյան Հայաստանի վրայով դուրս գալ դեպի Կովկաս, Միջին Ասիա և իրականացնել պանթուրքիզմի ծրագիրը:

Ռուսաստանը Կովկասյան ճակատում կենտրոնացրել էր 200.000 զինվոր, իսկ թուրքերը՝ 300.000: Այստեղ ռազմական գործողությունները սկսվեցին 1914թ. նոյեմբերին:

Թուրքերի Կովկասյան բանակը ղեկավարում էր ռազմական նախարար Էնվերը, որը հուլյս ուներ թվական գերակշռության շնորհիվ արագ հաղթանակի հասնել: Սակայն 1914թ. դեկտեմբերի 9-ից 1915թ. հունվարի 5-ը տեղի ունեցած Սարիղամիշի ճակատամարտում թուրքական բանակը ջախջախիչ պարտություն կրեց: Էնվերը հազիվ փրկվեց գերվելուց՝ հայ զինվոր Հովհաննես Չաուշի օգնությամբ:

Այդ հաղթանակի շնորհիվ կանխվեց թուրքական բանակի ներխուժումը Կովկաս: 1915թ. ապրիլի 18-ին տեղի ունեցավ Դիլմանի ճակատամարտը: Գեներալ Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ ռուսական բանակը և Անդրանիկի կամավորական զույգը փայլուն հաղթանակ տարան թուրքական մեծաթիվ բանակի նկատմամբ: Այնուհետև ռուսական զորքերը, հայկական կամավորական ջոկատների ակտիվ մասնակցությամբ, 1915-1916թթ. ազատագրեցին Արևմտյան Հայաստանի զգալի մասը՝ Վանը, Մուշը, Բիթլիսը, Էրզրումը: 1916թ. աշնանից ռազմաճակատում հարաբերական անդորր հաստատվեց, որը շարունակվեց մինչև 1918թ. հունվար:

Պատերազմի սկսվելուց հետո ռուսական բանակ զորակոչվեցին 200.000 արևելահայեր, իսկ թուրքական բանակ՝ մոտ 300.000 արևմտահայեր: Մոտ 50.000 հայեր զորակոչվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների բանակներ:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի առաջարկով Արևելյան Հայաստանում կազմավորվեցին նաև կամավորական զնդեր, որոնցում ընդգրկվեցին արևմտահայեր և գաղութահայեր: Կամավորագրվելու և Արևմտյան Հայաստանը թուրքական բռնապետությունից ազատագրելու ցանկություն հայտնեցին մի քանի տասնյակ հազար հայեր, սակայն ռուսական իշխանությունները սահմանափակվեցին մոտ 10.000 կամավորներով: Նրանց ոգևորում էր այն հանգամանքը, որ ռուսները որոշ խոստումներ էին տվել պատերազմից հետո Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու մասին: Հայկական կամավորական զնդեր կազմավորվելու առաջարկով հանդես եկան նաև թուրքերը, սակայն հայ գործիչները կտրականապես մերժեցին դա:

Կամավորական առաջին զնդի հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանը, երկրորդին՝ Դրոն (Դրաստամատ Կանայան), երրորդին՝ Համազասպ Արվանձտյանը, չոր-

որորդինը՝ Քեռին (Արշակ Գավաճյան), հինգերորդինը՝ Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), վեցերորդինը՝ Արշակ Ջանփոլադյանը, հետո՝ Գրիգոր Ավշարյանը, ապա՝ Հայկ Բժշկյանը (Գայ), յոթերորդինը՝ Հովսեփ Արղությանը: 1915թ. ապրիլին Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի որոշմամբ II, III, IV, V ջոկատները միավորվեցին և ստեղծվեց Արարատյան գունդը, որի հրամանատար դարձավ Վարդանը: Հայ կամավորներն ամենաակտիվ մասնակցությունն ունեցան Արևմտյան Հայաստանի ազատագրմանը, աչքի ընկան քաջությամբ ու բարձր մարտունակությամբ: Նրանք խոշոր դերակատարություն ունեցան հայության եղեռնից փրկված բեկորներին, հատկապես մանուկներին, հավաքելու, թուրքերի ու քրդերի գերությունից փրկելու գործում:

1916թ. սկզբին կամավորական ջոկատները վերակազմավորվեցին և ընդգրկվեցին ռուսական բանակի կազմի մեջ: Դա պայմանավորված էր նրանով, որ Ռուսաստանը մտադրություն չունեւ ինքնավարություն տալ Արևմտյան Հայաստանին, իսկ հայկական ազգային զորամասերը կարող էին հայկական պահանջատիրության համար լուրջ գործոն հանդիսանալ:

Հայերի մարտական ուժն օգտագործել փորձեցին նաև ֆրանսիացիները, որոնք ձգտում էին գրավել Կիլիկիան: Մերձավոր Արևելքում Ֆրանսիան միայն փոքրաթիվ զորամասեր ուներ և վախենում էր, որ եթե Կիլիկիան ու Սիրիան գրավվեն անգլիական զորքերի կողմից, ապա դժվար կլինեւ իրավունքներ ներկայացնել այդ երկրամասերի նկատմամբ: Այդ պատճառով ֆրանսիական իշխանությունները որոշեցին Կիպրոսում կազմավորել հայկական կամավորական զորամաս, որը կռվելու էր Ֆրանսիայի դրոշի ներքո և ֆրանսիացի սպաների հրամանատարությամբ: 1916թ. հոկտեմբերին ֆրանսիական կառավարությունը համաձայնություն կայացրեց Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի հետ՝ Հայկական լեգեոն կազմավորելու հարցի շուրջ: Հայ կամավորների աջակցության դիմաց Ֆրանսիան խոստանում էր ինքնավարություն տալ Կիլիկիային: 1917թ. մուսալեռցիներից, եգիպտահայերից, հայ ռազմագերիներից, ԱՄՆ-ից և այլ վայրերից եկած կամավորներից Կիպրոսում կազմավորվեց Հայկական լեգեոնը: Չնայած կամավորագրվել

ցանկացող հայերի թիվը մի քանի տասնյակ հազար էր, սակայն ֆրանսիացիները զինվորագրեցին միայն 4.000-ին: Ֆրանսիան ևս մտադիր չէր հայերին ինքնավարություն տալ և զգուշանում էր ավելի մեծաթիվ հայկական բանակ կազմավորելուց: Լեգեոնը աչքի ընկավ 1918թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած Արարայի ճակատամարտում, որից հետո թուրքերը Պաղեստինյան ճակատում այլևս դիմադրություն չկարողացան ցույց տալ: Հայկական լեգեոնը մասնակցեց Պաղեստինի, Լիբանանի, Սիրիայի և Կիլիկիայի ազատագրմանը: Նրա պաշտպանության տակ ավելի քան 150.000 հայեր վերադարձան Կիլիկիա և վերականգնեցին ավերված օջախները: Սակայն Ֆրանսիան հետզհետե նվազեցրեց հայ լեգեոներների թիվը, իսկ 1920թ. լեգեոնը կազմալուծեց:

Այսպիսով՝ մեծ տերությունները կարիքի պահին փորձում էին հենվել հայ զինվորական ուժի աջակցության վրա՝ խոստանալով բավարարել հայ ժողովրդի արդարացի պահանջները, սակայն հետագայում ամենատարբեր պատրվակներով հրաժարվում էին կատարել խոստումները:

58. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԸ

Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքերն իրականացրին արևմտահայերի բնաջնջման անմարդկային ծրագիրը: Դա Թուրքիայի մի քանի տասնամյակ վարած հայասպան քաղաքականության շարունակությունն էր՝ ավելի մեծ ծավալներով ու ավարտուն տեսքով: Հայկական ցեղասպանությունը Թուրքիայի պետական քաղաքականության հիմքում էր դրվել տնտեսական և քաղաքական նկատառումներով: Ըստ թուրքերի, հայերը սեպի պես խրվել էին մահմեդական աշխարհում, ունեին ռուսական կողմնորոշում, խանգարում էին պանիսլամական ու պանթուրքական ծրագրերի իրականացմանը: Կարևոր դեր էր խաղում նաև Հայկական հարցի միջազգայնացումը, որը հնարավորություն էր ընձեռում մեծ տերություններին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Միաժամանակ թուրքերը խանդով էին նայում ձեռներեց, գործունյա և աշխատասեր հայ ժողովրդի հաջողություններին տնտեսության ու մշակույթի ասպարեզներում: Գիտակցելով իրենց ան-

լիարժեքությունը՝ թուրքերը ցանկանում էին ջարդերի միջոցով ազատվել հայերի մրցակցությունից տնտեսության մեջ, տիրել նրանց ունեցվածքին:

Թուրքական կառավարությունը ցեղասպանությունն իրականացնելու համար մշակեց գաղտնի ծրագիր: Առաջին փուլում պետք է ոչնչացնեին թուրքական բանակ զորակոչված հայ զինվորներին և զինաթափեին հայ բնակչությանը, ապա՝ ձերբակալեին, աքսորեին և ոչնչացնեին հայ մտավորականությանը, աչքի ընկնող գործիչներին, վերջին փուլում կազմակերպելու էին բոլոր հայերի բռնագաղթը դեպի Միջագետքի անապատներ և անխնա բնաջնջեին: Հայերի կոտորածի համար օգտագործվեցին բանակը, ոստիկանությունը, քրդերը, չերքեզները, բանտերից այդ նպատակով արձակված մարդասպանները, մահմեդական խուժանը: Այսպիսով, ցեղասպանության հստակ ծրագիր էր մշակվել, մնում էր գործի դնել այդ հրեշավոր մեխանիզմը:

Ընդհանուր տեղահանությունն ու կոտորածները սկսելուց առաջ երիտթուրքերը որոշեցին ոչնչացնել հայ զինվորներին ու մտավորականությանը, որպեսզի առանց կռվող ու ղեկավարող ուժի մնացած բնակչությանը զրկեին դիմադրություն ցույց տալու հնարավորությունից:

Պատերազմը սկսվելուն պես թուրքական բանակ զորակոչվեց շուրջ 300.000 հայ: 1915թ. սկզբներին հայ զինվորներին սկսեցին զինաթափել: Նրանց փոքր խմբերով զորամասերից դուրս տանելով՝ զնդակահարում էին: Հայ զինվորներին օգտագործում էին նաև աշխատանքային գումարտակներում: Աշխատանքներն ավարտելուց հետո այդ զինվորներին նույնպես սպանում էին: Այդ ամենը կատարվեց խիստ գաղտնիության պայմաններում, և հայ զինվորները հանկարծակիի գալով՝ հիմնականում չկարողացան դիմել ինքնապաշտպանության: Հայերի կռվող ուժի կազմակերպված ոչնչացումը թուրք ջարդարարներին հնարավորություն տվեց առանց մեծ դժվարության ցեղասպանության ենթարկել անպաշտպան մնացած հայ բնակչությանը:

Մեծ Եղեռնի երկրորդ խոշոր գործողությունը արևմտահայ հասարակական-քաղաքական, հոգևոր, մտավորական գործիչների ձերբակալությունը, աքսորը և ոչնչացումն էր: Դրանով թուրքերը ցանկանում էին հայերին զրկել կազմակեր-

պող, առաջնորդող ուժից: Ամենախոշոր հարվածը հասցվեց պոլսահայությանը, ուր կենտրոնացած էր արևմտահայ մտավորականության սերուցքը: Նախօրոք կազմված ցուցակների համաձայն, 1915թ. ապրիլի 24-ին միայն Կ.Պոլսում ձերբակալվեցին ավելի քան 650 հայ մտավորականներ՝ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, մանկավարժներ, բժիշկներ, հոգևորականներ, հրապարակախոսներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Ձերբակալվածներին ուղարկեցին Անատոլիայի խորքերը, ուր մեծ մասը դաժանաբար սպանվեց: Ծանր հարված հասցվեց հայ եկեղեցուն ու հոգևորականությանը: Թուրքերն ավերեցին, հրկիզեցին ու կողոպտեցին հայկական 2.150 եկեղեցիներ ու վանքեր, կոտորեցին մոտ 4.000 հոգևորականների:

Եղեռնի երրորդ և ամենազարհուրելի գործողությունը հայ բնակչության զանգվածային տեղահանությունն ու կոտորածն էր: Նրանց աքսորում էին դեպի Սիրիայի անապատները՝ հատկապես Ռաս-ուլ-Այն ու Դեր-Ջոր, ուր կազմակերպվեցին զանգվածային ջարդեր: Արևմտահայերի բռնի տեղահանությունն ու ջարդը հիմնականում տեղի ունեցավ 1915թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին և ընդգրկեց կայսրության ամբողջ տարածքը: Մի քանի ամիսների ընթացքում Օսմանյան կայսրության գրեթե ամբողջ հայ բնակչությունը դաժանաբար ոչնչացվեց:

Ցավոք, հայկական կուսակցություններն ու կազմակերպությունները, հասարակական-քաղաքական գործիչները ժամանակին չկարողացան ճիշտ ընկալել ու կանխատեսել թուրքերի ծրագրած ոճրի ահավորությունը, որի հետևանքով ի վիճակի չեղան ժողովրդին կողմնորոշելու ինքնապաշտպանության: Եթե հայ բնակչությունն ամենուրեք փորձեր գեներով պաշտպանվել, ապա թուրքերը չէին հասնի իրենց հրեշավոր նպատակին՝ արևմտահայության բնաջնջմանը:

Կոտորածներն իրենց անմարդկային դաժանությամբ ու վայրագությամբ գերազանցեցին ինչպես մինչ այդ, այնպես էլ հետագայում համաշխարհային պատմությանը հայտնի բոլոր մեթոդները: Մի ամբողջ ժողովրդի ոչ թե ոչնչացրին, այլ՝ հոշոտեցին ու տանջամահ արեցին: Հայոց ցեղասպանությունը թուրքերի վայրի և արյունարբու բարոյական նկարագրի ամենավառ արտահայտությունն էր:

Ընդհանուր առմամբ 1915-1916 թթ. ոչնչացվեց ավելի քան մեկուկես միլիոն արևմտահայ, որոնցից 800.000-ը կոտորվեց դեռ ճանապարհին, իսկ մնացածը բնաջնջվեց արաբական անապատներում: Փրկվեցին միայն քչերը, այն էլ արաբների բարյացակամության շնորհիվ: Մահմեդականացվեցին ավելի քան 200.000 հայ կանայք, աղջիկներ ու մանուկներ: Փաստորեն, ամբողջությամբ հայաթափվեց մեր հայրենիքի մեծագույն մասը: Շուրջ մեկ միլիոն արևմտահայեր, ավերակ հայրենի օջախները լքելով, գաղթականի ցուպ վերցրին և ստիպված եղան դեգերել օտար ափերում: Ամենուրեք նրանց հետապնդում էին սովն ու համաճարակները: Փախստականներից միայն քչերին հաջողվեց դուրս գալ այդ ծանր մղձավանջից, այն էլ տարիներ անց:

Օսմանյան կայսրության 66 քաղաքներ ու 2.500 գյուղեր ամբողջությամբ հայազրկվեցին: Հայաթափված երկրամասերի մի մասն անմիջապես բնակեցվեց մահմեդականներով, իսկ մեծ մասը մնաց ավերակ ու ամառի: Մեծ վնաս հասցվեց բազմադարյան հայ պատմամշակութային արժեքներին: Հայերի կողմից հայրենի հողում հազարամյակներ շարունակ ստեղծված արժեքները ամիսների ընթացքում դարձան բարբարոսության զոհ: Ամենասարսափելին հայրենիքի կորուստն էր: Դարեր շարունակ հայ ժողովուրդը վերապրել էր բազմաթիվ թշնամիների բերած արհավիրքները, սակայն շարունակել էր գոյատևել իր հայրենի հողի վրա, իսկ Մեծ Եղեռնի հետևանքով պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի 90 տոկոսը հայաթափվեց և զրկվեց իր բնիկ տերերից:

Ընդհանուր առմամբ, 1890-ական թվականներին սկսված, 1915թ. իր գագաթնակետին հասած և մինչև 1922թ. շարունակված թուրքերի իրականացրած ցեղասպանությանը զոհ գնաց 2,5-3 մլն հայ:

Ցեղասպանությունների պատմության մեջ Հայոց ցեղասպանությունն առաջինն էր և ամենամեծերից: Այն իրականացվեց չափազանց դաժանորեն ու նպատակաուղղված ձևով, որի ընթացքում թուրքերը լուծեցին պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական մի շարք ռասիստական, շովինիստական նպատակներ: Ցեղասպանությունը հազարամյակների պատմության ընթացքում հայ ժողովրդի կրած ամենածանր և ամենաաղետաբեր հարվածն էր: Այն մարդկային, տարածքա-

յին, ռազմաքաղաքական, մշակութային, բարոյական զարհուրելի կորուստ էր, որի դասերը երբեք չպետք է մոռանանք:

59. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 1915 Թ.

Հայոց ցեղասպանությունն իր բնույթով ու ծավալներով անսպասելի էր արևմտահայության համար, որի հետևանքով նրանք անակնկալի եկան, և թուրքերը հիմնականում դիմադրության չհանդիպեցին: Այնուամենայնիվ որոշ վայրերում հայերը կարողացան կազմակերպել ինքնապաշտպանություն, որի շնորհիվ հազարավոր մարդիկ փրկվեցին ոչնչացումից:

Հաջող ինքնապաշտպանություն կազմակերպեցին Վան քաղաքի հայերը: Նրանք կենտրոնացած էին Այգեստան և Քաղաքամեջ թաղամասերում, որոնց միջև գտնվում էր թուրքական թաղամասը: Ինքնապաշտպանության նախաձեռնողը, ոգին ու ընդհանուր ղեկավարն էր դաշնակցական նշանավոր գործիչ Արամ Մանուկյանը: Հայերն ունեին մոտ 1.500 հրացան և ատրճանակ: Վանի նահանգապետ Ջևդեթը հայկական թաղամասերի դեմ կենտրոնացրել էր 12.000 զինվոր, որոնց միացավ թուրք ու քուրդ խուժանը: Այգեստանում Ձինվորական մարմնի ղեկավար դարձավ Արմենակ Եկարյանը, իսկ Քաղաքամեջում՝ Հայկակ Կոստյանը: Մարտերը սկսվեցին 1915թ. ապրիլի 7-ին: Թուրքերը, չնայած թնդանոթների աջակցությանը, այդպես էլ չկարողացան գրավել հայկական դիրքերը: Վանեցիները հաջող հակազդրոհներ կազմակերպեցին և այրեցին կառավարական մի շարք հաստատություններ ու զորանոցներ: Մայիսի 3-ին թուրքական զորքերը հեռացան քաղաքից, իսկ երկու օրից Վան հասան հայ կամավորական ջոկատները, ապա՝ ռուսական բանակը:

Հաղթական ավարտով ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Վանի նահանգի մի շարք գավառներում ևս՝ Շատախում (ապրիլ 1-մայիս 14), Գավաշում (ապրիլ 3-մայիս 11), Փեսանդաշտում (ապրիլ 14-մայիս 10) և բազմաթիվ այլ վայրերում: Հերոսական պայքարի շնորհիվ մոտ 150.000-200.000 վասպուրականցիներ ազատվեցին թուրքական յաթաղանից: Ստեղծվեց Վանի հայկական նահանգապետությունը:

1915թ. մարտից մինչև օգոստոսի վերջը թուրքերը կազմակերպված դիմադրության հանդիպեցին հայոց արծվաբույն Սասունում: Ռուբեն Տեր-Մինասյանի գլխավորությամբ Սասունի և շրջակայքի մոտ 50.000 հայերը հերոսաբար կռվեցին թուրքական 30.000-ոց կանոնավոր բանակի և հազարավոր քուրդ հրոսակների դեմ: Զինամթերքի և պարենի սպառվելուց հետո, օգոստոսին հայերը դադարեցրին կազմակերպված դիմադրությունը և պայքարը շարունակեցին անտառներում ու լեռներում: 1916թ. հունվարին ռուսական բանակը մտավ Մուշ, և մոտ 15.000 սասունցիներ փրկվեցին անխուսափելի թվացող ոչնչացումից:

1915թ. հուլիսի 20-23-ը տեղի ունեցավ Մուշ քաղաքի գոյամարտը: Մշեցիները նշանավոր հայդուկ Հաջի Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ որոշեցին դիմադրել թուրք ջարդարարներին կամ զոհվել հերոսաբար: Թուրքերը, ի վերջո, ճնշեցին ինքնապաշտպանությունը և սրի քաշեցին քաղաքի ամբողջ հայ բնակչությանը: Միայն քչերը կարողացան ճեղքել թշնամու օղակը և բարձրանալ Սասուն: Հ. Կոտոյանը մինչև վերջ կռվելուց հետո, վերջին գնդակով ինքնասպան եղավ:

1915թ. հունիսի 3-ին սկսվեց Շապին Գարահիսարի հերոսամարտը: Քաղաքի հայ բնակչությունը, ստանալով տեղահանության հրամանը, որոշեց դիմել ինքնապաշտպանության: Ղուկաս Տեովլեթյանի գլխավորությամբ նրանք ամրացան քաղաքի մոտ գտնվող ավերակ ամրոցում: Թուրքական զորքերը բազմիցս փորձեցին ճնշել հայերի դիմադրությունը, սակայն թշնամու բոլոր փորձերն ավարտվում էին անհաջողությամբ: Պարենի, զինամթերքի և ջրի սպառվելուց հետո ինքնապաշտպանությունը դարձավ անհնար: Գարահիսարցիների մի մասը որոշեց հանձնվել, իսկ մի մասը հունիսի 29-ին մեծ զոհերի գնով ճեղքեց թշնամու պաշարման օղակը և հեռացավ լեռները, ուր բավական երկար ժամանակ շարունակեցին պայքարը: Բերդում մնացածներին թուրքերը սրի քաշեցին:

Հայերի ինքնապաշտպանության նշանավոր դրվագներից էր Մուսա լեռան հերոսամարտը: Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին էր Սուեշիա գավառը, ուր կային 6 հայկական գյուղեր: 1915թ. հուլիսին այստեղի հայերը տեղահանության հրաման ստացան: Նրանցից մոտ 2.000-ը որոշեցին ենթարկվել գաղթելու պահանջին, իսկ ավելի քան 4.000 մարդ

որոշեց բարձրանալ մոտակա Մուսա լեռը և դիմադրել թուրք ջարդարարներին: Հուլիսի 31-ին սուետիահայերը բարձրացան Մուսա լեռը: Ինքնապաշտպանության ղեկավարն էր Եսայի Յաղուբյանը: Թուրքերը մի քանի անգամ գրոհեցին հայկական դիրքերի վրա, բայց մեծ կորուստներ տալով՝ նահանջեցին: Սեպտեմբերի 5-ին Մուսա լեռանը մոտեցավ ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը: Մուսալեռցիները նավապետից խնդրեցին զենք ու պարեն տրամադրել և պատրաստ էին երկարատև դիմադրություն ցույց տալ թշնամուն: Նրանք մեծ դժկամությամբ համաձայնեցին հեռանալ հայրենի եզերքից: Սեպտեմբերի 12-ին ֆրանսիական և անգլիական ռազմանավերով 4.083 մուսալեռցիներ տեղափոխվեցին Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաքը:

1915թ. սեպտեմբերի 29-ին սկսվեց Ուրֆայի հերոսամարտը: Մկրտիչ Յոթնեղբայրյանի ղեկավարությամբ հայերը կառուցում են բարիկադներ և հետ մղում թուրքերի գրոհները: Թշնամին թնդանոթներով գրեթե ամբողջությամբ ավերեց հայկական թաղամասը և հոկտեմբերի 23-ին գրավեց այն: 35.000 ուրֆացիներից կենդանի մնաց 5.000-ը, որոնց աքսորեցին Դեր Ջոր:

Ինքնապաշտպանության դիմեցին նաև Յոզղատի, Խնուսի մի շարք հայկական գյուղեր, Ձեթունի մոտ գտնվող Ֆընտըճագ գյուղաքաղաքը: Այդ դիմադրության փորձերը հիմնականում ճնշվեցին, բայց դրանց շնորհիվ բազմաթիվ հայեր կարողացան փրկվել կոտորածներից:

Ինչպես տեսնում ենք, արևմտահայերը շատ դեպքերում գերադասեցին զենքը ձեռքին պատվավոր մահ ընդունել, քան առանց պայքարի հանձնվել թուրքերի ողորմածությանը: Դրա շնորհիվ հազարավոր հայեր փրկվեցին Եղեռնի գողգոթայով անցնելու փորձությունից: Նույնիսկ այն վայրերում, ուր ինքնապաշտպանությունը ճնշվել էր, ավելի շատ հայեր փրկվեցին, քան այնտեղ, ուր ընդհանրապես զենքի չդիմեցին: Արևմտահայերի մղած հերոսամարտերը ապացուցեցին, որ թուրք Եղեռնագործներից փրկվելու միակ ուղին նրանց դեմ համախմբված զինված պայքար մղելն էր:

60. ԵՂԵՌՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՂԱՏԱՍՏԱՆԸ

1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարով Թուրքիան ճանաչվեց պարտված պետություն: Օրակարգի հարց դարձավ երիտթուրք ոճրագործներին պատժելը, որոնցից շատերը, կանխազգալով վտանգը, փախել էին արտասահման:

Թուրքական նոր կառավարությունը որոշում կայացրեց Օսմանյան կայսրությանը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին:

Կազմվում է հետաքննիչ հանձնախումբ, որը սկսում է հավաքել արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական հրահանգներ և հրամաններ, ինչպես նաև ականատեսների վկայություններ: Դրանց հիման վրա ձերբակալվում են բազմաթիվ երիտթուրք ոճրագործներ, սակայն հայկական կոտորածների հիմնական կազմակերպիչները հասցրել էին փախուստի դիմել և ծախված ապրել Եվրոպայում:

1919 թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդի (1918-1922) հատուկ հրամանագրով երիտթուրքական կուսակցության պարագլուխներն ու նախարարները հանձնվում են Կ. Պոլսի ռազմական արտակարգ դատարանին: 1919 թ. ապրիլին Կ. Պոլսում սկսվում է երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարությունը, որը ձգձգվում է մինչև 1920թ. հունվար:

1919թ. ապրիլի 8-ին դատարանը մահվան դատապարտեց Յոզղաթի ջարդերի կազմակերպիչ Քենալ բեյին, որը կախաղան բարձրացվեց: Դա թուրքական դատարանի կողմից մահվան դատապարտված միակ ոճրագործն էր, որը մահապատժի ենթարկվեց թուրքերի կողմից:

Դատարանը հեռակա կարգով մահվան դատապարտեց ներքին գործերի նախարար, ապա մեծ վեզիր Թալեթ փաշային, ռազմական նախարար Էնվեր փաշային, ծովային նախարար Ջենալ փաշային, Թեշքիլաթը մահսուսեի նախագահ

Բեհաեդդին Շաքիրին, կրթության նախարար, Թեշքիլաթը մահսուսեի անդամ դոկտոր Նազըմ բեյին, Տրապիզոնի նահանգապետ Ջենալ Ազմի բեյին և նրա գործակից Նայիլ բեյին: Տասնյակ ցեղասպաններ ստացան տարբեր պատժաչափեր:

Մեղադրական եզրակացություններում բերված փաստաթղթերը վկայում էին, որ արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, այլ եղել են կանխամտածված և իրականացվել են երիտթուրքերի կուսակցության և կառավարության նախաձեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով:

Դատավարության ընթացքում հարյուրից ավելի երիտթուրք ոճրագործների անգլիական իշխանությունները աքսորեցին Մալթա կղզի: Դրանց մի մասը հետագայում փոխանակվեց թուրքական գերության մեջ գտնվող անգլիացի զինվորների հետ, մյուս մասն էլ կամաց-կամաց ազատ արձակվեց: Նրանցից շատերը հետագայում դարձան Մուստաֆա Քեմալի գործընկերները:

Ինչպես տեսանք, երիտթուրք ղեկավարներին ներկայացվել էր երկու մեղադրանք. Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և հայ ժողովրդի բնաջնջումը: Դա փաստորեն երիտթուրքական պետական մարմինների իրականացրած հրեշավոր ոճրագործության պաշտոնական ճանաչումն էր հենց թուրքական իշխանությունների կողմից: Այսպիսով, առաջինը թուրքական պետական իշխանություններն ու դատարանն էին, որ ընդունեցին հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության փաստը և դատապարտեցին այն իրականացնողներին:

Ցավոք, այժմյան թուրքական իշխանությունների հիշողությունը բավական թույլ է, որպեսզի հիշեն իրենց նախնիների իրականացրած ոճիրը և այն դատապարտած թուրքական դատարանի որոշումները:

Ինչպես տեսանք, թուրքական դատարանի կողմից երիտթուրք ոճրագործների մի մասը հեռակա կարգով մահվան դատապարտվեց, սակայն նրանք գտնվում էին երկրի սահմաններից դուրս: Թուրքական իշխանությունները, բնա-

կանաբար, այնքան էլ չահագրգռված չէին այդ հանցագործներին հայտնաբերելու և դատարանի վճիռներն ի կատար ածելու հարցով:

Այս պայմաններում էր, որ երիտթուրք հանցագործներին պատժելու գործը ստանձնեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: 1919 թ. սեպտեմբերի 27-ին Երևանում իր աշխատանքները սկսեց Հ.Յ.Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովը, որը տևեց մինչև հոկտեմբերի վերջը:

Համագումարի օրակարգում էր նաև Մեծ Եղեռնի գլխավոր հանցագործներին պատժելու հարցը: Ժողովը որոշեց անպատիժ չթողնել հայ ժողովրդի դահիճներին: Կազմվեց այդ գործն իրականացնող Պատասխանատու մարմին՝ նշանավոր հրապարակախոս Շահան Նաթալու և ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Գարեգին Փաստրմաճյանի (Արմեն Գարոյի) ղեկավարությամբ: Գործողությունը հունական դիցաբանության վրիժառության աստվածուհու անունով կոչվեց «Նեմեսիս» և իրականացվելու էր խիստ գաղտնիության պայմաններում:

Բավական դժվար գործ էր հայտնաբերել աշխարհի տարբեր անկյուններում կեղծ անունների տակ ծախված երիտթուրք ոճրագործներին, սակայն այդ խնդիրը լուծվեց ամենայն բարեխղճությամբ և կարճ ժամկետներում:

Թալեաթի ոչնչացումը հանձնարարվեց Սողոմոն Թեխլերյանին: Շահան Նաթալու պահանջով ոճրագործին սպանելուց հետո հայ վրիժառուն չպիտի փախչեր, որպեսզի տեղի ունենար դատավարություն, որին տրվելու էր քաղաքական բնույթ և բարձրացվելու էր ցեղասպանության ու թուրքիային բռնակցված հայկական տարածքների հարցը:

1921թ. մարտի 15-ին Ս. Թեխլերյանն օրը ցերեկով Բեռլինում սպանեց գլխավոր եղեռնագործ Թալեաթին և կանավոր հանձնվեց ոստիկանությանը: 1921թ. հուլիսի 2-3-ը տեղի ունեցավ դատավարություն, որը վարում էր Բեռլինի նահանգային դատարանը: Հրավիրվել էին բազմաթիվ վկաներ: Դատի ժամանակ հայ վրիժառուն հանդես եկավ ամբողջ հայ ժողովրդի անունից, նկարագրեց զարհուրելի ոճիրը, մեղադրեց հանցագործներին և հայտարարեց, որ լուծել է իր նահատակված ժողովրդի արդար վրեժը: Գերմանական դատարանը, հակառակ որոշակի շրջանների ճիգերին, արդարացրեց Սողոմոն

Թեհլերյանին՝ անպարտ ճանաչելով նրան Թալեաթի սպանության համար: Փաստորեն, դա նույնպես երիտթուրքերի հրեշավոր ոճրագործությունը հաստատող ու դատապարտող իրողություն էր:

1921թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանը սպանեց Թուրքիայի 1913-1917թթ. վարչապետ Սայիդ Հալիմ փաշային:

1922թ. ապրիլի 17-ին, Բեռլինում Արամ Երկանյանը սպանեց Հատուկ կազմակերպության նախագահ Բեհաեդդին Շաքիրին, իսկ Արշավիր Շիրակյանը՝ Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյին:

1922 թ. հուլիսի 25-ին Պետրոս Տեր-Պողոսյանը, Ստեփան Ծաղիկյանը և Արտաշես Գևորգյանը Թիֆլիսում գնդակահարեցին իթթիհատական եռապետության անդամ Ջեմալ փաշային:

1922թ. օգոստոսի 4-ին Միջին Ասիայում կարմիր զորահրամանատար Հակոբ Մելքունյանի ջոկատի հետ ընդհարման ժամանակ սպանվեց էնվեր փաշան:

Հայ վրիժառուների արդար դատաստանից չխուսափեցին նաև նուսավաթական Ադրբեջանի վարչապետ Ֆաթալի խան Խոյսկին, որին սպանեց Արամ Երկանյանը՝ 1920թ. հունիսի 19-ին Թիֆլիսում և ներքին գործերի նախարար Բեհբուդ խան Ջիվանշիրը, որին սպանեց Միսաք Թոռլաքյանը 1921թ. հուլիսի 19-ին Կ.Պոլսում: Նրանք մեղավոր էին 1918թ. սեպտեմբերին Բաքվում և 1920թ. մարտին Շուշիում կազմակերպված հայկական ջարդերի համար: Մ. Թոռլաքյանը ձերբակալվեց, սակայն Կ. Պոլսի ռազմական դատարանի կողմից ազատ արձակվեց:

Հայ վրիժառուները պատժեցին նաև ազգությամբ հայ դավաճաններին, որոնց մատնությամբ էր թուրքական ոստիկանությունը ձերբակալել հայ մտավորականներին:

Այդ ահաբեկչական գործողությունների շնորհիվ պատժվեցին Եդեռնի գլխավոր մեղսակիցները, որի միջոցով որոշ չափով իրականացվեց արդարադատությունը:

61. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1917 Թ. ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանի առանց այն էլ թույլ տնտեսությունը հայտնվեց ճգնաժամի մեջ, կրկին սրվեցին սոցիալական, ազգային և մյուս հիմնախնդիրները, որոնք լուծում չէին ստացել ռուսական առաջին հեղափոխության տարիներին: Այդ ամենը հանգեցրեց 1917թ. փետրվարյան հեղափոխությանը: Ռուսաստանում միապետությունը տապալվեց և անցում կատարվեց դեպի ժողովրդավարական ուղի: Իշխանությունն անցավ ժամանակավոր կառավարությանը, որը պետք է կառավարեր մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը, ուր որոշվելու էր երկրի պետական կառուցվածքի ձևը, լուծում էին տրվելու մյուս կարևոր հիմնահարցերին:

1917թ. մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասի հատուկ կոմիտեն (ռուսերեն հապավումով՝ Օզակոմ), որին անցավ երկրամասի գործադիր իշխանությունը՝ լուծարված Կովկասի փոխարքայության փոխարեն:

Ժամանակավոր կառավարությունը, ի տարբերություն ցարական իշխանությունների, վարում էր ընդգծված հայա-նպաստ քաղաքականություն:

1917թ. ապրիլի 26-ին ժամանակավոր կառավարությունը հրամանագիր հրապարակեց, որով Արևմտյան Հայաստանի գրաված շրջանների կառավարումը վերցնում էր կովկասյան իշխանությունների ու բանակի հրամանատարությունից և ենթարկում անմիջապես կենտրոնական կառավարությանը: Հայաստանի գերագույն կոմիսար նշանակվեց գեներալ Պ.Ավերյանովը, իսկ նրա քաղաքացիական գծով տեղակալ՝ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Հակոբ Զավրիյանը: Արևմտյան Հայաստանը բաժանվեց 3 շրջանների՝ Էրզրումի, Վանի, Խնուսի: Հայ գաղթականներին թույլատրվեց վերադառնալ հայրենիք, գրեթե բոլոր պաշտոնները տրվեցին հայերին, կազմավորվեցին հայկական ոստիկանական ջոկատներ: Այդ քայլերը պայմաններ էին ստեղծում պատերազմից հետո Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու համար:

Միաժամանակ քննարկվում էր Անդրկովկասում նոր վարչական բաժանում կատարելու հարցը, որով նահանգները կազմվելու էին ըստ ազգային տարածքների: Նախատեսվում էր, որ Արևելյան Հայաստանը ևս որոշակի ինքնավարություն էր ստանալու Ռուսաստանի կազմում:

1917թ. մայիսին Երևանում կայացած արևմտահայերի I համագումարն ընտրեց Արևմտահայ ազգային խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Կոմսը (Վահան Փափագյան), իսկ սեպտեմբերին Թիֆլիսում արևելահայերի համագումարն ընտրեց Արևելահայ ազգային խորհուրդ, որի նախագահ դարձավ Ավետիս Ահարոնյանը: Այդ խորհուրդները իրենց վրա վերցրին հայության երկու հատվածների կառավարման գործառույթները:

1917թ. հոկտեմբերի 25-ին Վ.Լենինի գլխավորությամբ բոլշևիկյան (հետագայում՝ կոմունիստական) կուսակցությունը հեղաշրջում կատարեց, տապալեց ժամանակավոր կառավարությանը և Ռուսաստանում հաստատեց խորհրդային կարգեր: Երկրում միահեծան իշխելու, մյուս կուսակցություններին ու այլախոհներին հալածելու բոլշևիկների քաղաքականությունը Ռուսաստանում հանգեցրեց քաղաքացիական պատերազմի, որը շարունակվեց մի քանի տարի:

Հոկտեմբերյան հեղաշրջման լուրը բացասաբար ընդունվեց Անդրկովկասում: Այն խոր անհանգստություն պատճառեց հատկապես հայությանը: Բանն այն է, որ բոլշևիկների որդեգրած պատերազմին անհապաղ, առանց տարածքային գրավումների վերջ տալու և հաշտություն կնքելու քաղաքականությունը ենթադրում էր ռուսական զորքերի հեռացում նաև արևմտահայկական տարածքներից: Դա նշանակում էր Արևմտյան Հայաստանի կորուստ և այնտեղ վերադարձած արևմտահայ բեկորների նոր ջարդեր:

Բոլշևիկների նկատմամբ անվստահությամբ լցված Անդրկովկասի քաղաքական ուժերը ձեռնամուխ եղան երկրամասային նոր իշխանության ստեղծմանը: Ռուսաստանից փաստացիորեն անջատված Անդրկովկասում նոյեմբերի 15-ին ստեղծվեց Անդրկովկասի կոմիսարիատը, որը կազմվեց անդրկովկասյան երեք հիմնական ազգերի՝ հայերի, վրացիների և կովկասյան թուրքերի (1918թ. մայիսից՝ ադրբեջանցիներ) ներկայացուցիչներից: Կոմիսարիատը չճանաչեց բոլշևիկյան

իշխանությունը և անտեսելով Անդրկովկասի համար ստեղծված ծանր ռազմա-քաղաքական իրադրությունը՝ որդեգրեց Ռուսաստանից անջատվելու ուղի:

Կովկասյան հրամանատարության և Թուրքիայի միջև 1917թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքվեց զինադադար, որով նախատեսվում էր անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները և զորքերի տեղաշարժերը թիկունքից առաջավոր գիծ:

Բոլշևիկները հայտարարեցին ազգային հարցերը արդարացի սկզբունքներով լուծելու պատրաստականության մասին, Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարության և ազատ ինքնորոշման իրավունքի օգտին՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն ձեռք բերելը: 1917թ. դեկտեմբերի 29-ին խորհրդային կառավարությունն ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Դրանով ճանաչում էին արևմտահայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն: Դեկրետը նախատեսում էր ռուսական զորքերի անհապաղ դուրսբերում և հայկական ժողովրդական միլիցիայի ստեղծում, հայ գաղթականների անարգել վերադարձ հայրենիք, ժողովրդական կառավարության կազմակերպում:

«Թուրքահայաստանի մասին» դեկրետը ուներ պատմաքաղաքական մեծ նշանակություն, քանզի միջազգային մասշտաբով առաջին անգամ ճանաչվում էր արևմտահայության լիակատար ինքնորոշման իրավունքը, բարձրացվում էր Արևմտյան Հայաստանին անկախություն տալու հարցը: Սակայն դեկրետը մնաց թղթի վրա, քանի որ ռուսական 300.000-ոց բանակի հապշտապ դուրսբերումը թուրքերին հնարավորություն տվեց կրկին գրավել Հայաստանը: Անկասկած ցեղասպանություն վերապրած հայության համար գործնականում անհնար էր կարճ ժամանակում ստեղծել ռուսական հզոր բանակին փոխարինող ուժ:

1917թ. նոյեմբերին ռուսական բանակի հրամանատարության որոշմամբ Արևմտյան ճակատում կռվող հայ զինվորների մեծ մասը պետք է տեղափոխվեր Կովկասյան ճակատ, ուր գեներալ Թ. Նազարբեկյանի գլխավորությամբ ստեղծվելու էր 65.000-ոց Հայկական կորպուս: Արևմտահայ ազգային խորհրդին թույլատրվեց կազմավորել 35.000 երկրապահ

դիվիզիա, որի հրամանատար նշանակվեց Անդրանիկը՝ ստանալով գեներալի կոչում: Այսպիսով՝ որոշակի քայլեր ձեռնարկվեցին 100.000-ոց հայկական բանակ ստեղծելու համար, որն ի վիճակի կլիներ պաշտպանելու Կովկասյան ռազմաճակատը: Դա նաև իրական հնարավորություն կտար պատերազմից հետո ինքնավար կամ անկախ հայկական պետություն ստեղծելու համար: Սակայն Ռուսաստանում սկսված քաղաքացիական պատերազմը թույլ չտվեց հայրենիք վերադառնալ մյուս ճակատներում մարտնչող հայ զինվորներին, և այստեղ չկազմավորվեց նախատեսվող 100.000-ոց հայկական բանակը: Հետևաբար, խորհրդային իշխանության հայանապաստ հայտարարությունները գործնականում անիրագործելի էին, իսկ ռուսական բանակի հեռացումը հայությանը կանգնեցրեց նոր ցեղասպանության վտանգի առաջ: Ցավոք, հայ քաղաքական ու ռազմական կառույցները չկարողացան տնօրինել ռազմաճակատից հեռացող ռուսական բանակների թողած անհամար զենք-զինամթերքը, որը, կարճ ժամանակ անց, մեծամասամբ ընկավ թուրքերի ձեռքը:

62. 1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ

1918թ. սկզբներից բավական բարդ և ծանր իրավիճակ ստեղծվեց հայ ժողովրդի համար: Օգտվելով ռուսական բանակի հեռացումից՝ 1918թ. հունվարի 30-ին թուրքական 50.000-ոց բանակը հարձակման անցավ Կովկասյան ճակատում:

Հաղթահարելով հայկական ուժերի հերոսական դիմադրությունը՝ թուրքական զորքերը գրավեցին Երզնկան, Բաբերդը, Մամախաթունը: Փետրվարի 28-ին տասնօրյա համառ կռիվներից հետո ընկավ Արևմտյան Հայաստանի գլխավոր հենակետը՝ Երզրումը, որի պաշտպանությունը ստանձնել էր Անդրանիկը: Չնայած ազգային հերոսի գործադրած գերբնական ճիգերին, չհաջողվեց Երզրումի մոտ կանգնեցնել թուրքական զերակշիռ ուժերին: Մարտի 22-ին տասնօրյա դիմադրությունից հետո հայկական զորքերը թողեցին Վանը: Այդպիսով ամբողջ Արևմտյան Հայաստանն ընկավ թուրքերի ձեռքը,

որոնք նոր ոճիրներ գործեցին հեռանալ չհասցրած հայ բնակչության նկատմամբ: Հետապնդելով փոքրաթիվ հայկական ուժերին՝ թուրքական զորքերը շարժվեցին դեպի Արևելյան Հայաստան:

Միջազգային գործընթացները ևս զարգանում էին ի վնաս հայ ժողովրդի: 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային զիջեց ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև՝ Կարսը, Բաթումը, Արդահանը:

Թուրքիայի ճնշման տակ 1918թ. ապրիլի 22-ին Անդրկովկասը հռչակվեց անկախ հանրապետություն և վարչապետ դարձավ Ա. Չխենկելին: Նախարարական 13 աթոռներից հայերին տրվեցին չորսը: Նախարարական առանցքային պաշտոնները, այն է՝ ներքին գործերի և ռազմական, գտնվում էին վրացիների ձեռքում: Վրաց գործիչների խարդավանքների հետևանքով ապրիլի 25-ին Կարսը առանց կռվի հանձնվեց թուրքերին: Շարունակելով առաջխաղացումը՝ թուրքական զորքերը դիրքավորվեցին Ախուրյանի աջ ափին՝ ավարտելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց տրված տարածքների զավթումը: Սակայն թուրքերը չբավարարվեցին դրանով:

1918թ. մայիսի 11-ին Բաթումում սկսված հաշտության բանակցություններում թուրքերը Անդրկովկասի պատվիրակներից պահանջեցին իրենց հանձնել Երևանի նահանգի զգալի մասը, Ախալքալաքի, Ախալցխայի գավառները: Մինչև անդրկովկասյան պատվիրակները փորձում էին ընդդիմանալ այդ նախագծին, թուրքական բանակը 1918թ. մայիսի 15-ին, խախտելով զինադադարը, վերսկսեց ռազմական գործողությունները, գրավեց Ալեքսանդրապոլը (Գյումրի) և շարժվեց Երևանի ուղղությամբ: Մայիսի 21-ին թշնամին գրավեց Երևանից 30 կմ հեռու գտնվող Սարդարապատը:

Թուրքական ներխուժման ահավոր վտանգն անմիջականորեն կախվեց էջմիածնի և Երևանի վրա: Ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը:

Երևանի նահանգում տիրում էր ծանր կացություն. առկա էր պարենի, դեղորայքի, վառելիքի սուր պակաս: Երկիրը շրջապատված էր թշնամական օղակով. մի կողմից թուրքական բանակն էր, մյուս կողմից՝ ցանկացած պահի նրան աջակցելու պատրաստ կովկասյան թուրքերը (այժմ՝

ադրբեջանցիներ): Չկար ամենից կարևորը՝ հավատը սեփական ուժերի և հաջողության նկատմամբ:

Բախտորոշ այդ պահին քաջություն և կամք դրսևորեց ազատագրական շարժման նշանավոր գործիչ, 1915թ. Վանի ապրիլյան հերոսամարտի կազմակերպիչ, 1917թ. դեկտեմբերից ի վեր Արևելյան Հայաստանի նշանակալի մասը զբաղեցնող Երևանի նահանգի ղեկավար Արամ Մանուկյանը: Մայիսի 19-ին նա Երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Մ. Սիլիկյանին հանձնարարեց վերջ տալ հետագա նահանջին և Արարատյան դաշտում թշնամուն հակահարված տալ: Մ. Սիլիկյանը Սարդարապատի ուղղությամբ գործող զորքերի հրամանատար նշանակեց Դանիել Բեկ-Փիրունյանին, Բաշ Ապարանում՝ Դրոյին:

Մայիսի 19-ի երեկոյան գումարված Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը թշնամուն հանձնելու, Նոր Բայազետի լեռները նահանջելու և այնտեղից դիմադրական մարտեր մղելու մասին: Հերթական անգամ Ա. Մանուկյանն ամենայն վճռականությամբ բացառեց անձնատվությունը՝ նշելով. «Երևանը չենք դատարկելու, և պետք է կռվենք, դիմադրենք թշնամուն մինչև մեր վերջին կաթիլ արյունը, մինչև վերջին զնդակը»:

Ուղղաճակատն ուժեղացնելու նպատակով Ա. Մանուկյանը հրահանգեց առանց բացառության ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին, խստագույնս արգելեց քաղաքից հեռանալը: Կամանց և երեխաներին հանձնարարվեց տներից փանփուշտ հավաքել և ջուր հասցնել ճակատում գտնվող զինվորներին:

Սարդարապատի մոտ տեղի ունենալիք ճակատամարտի ելքի տեսակետից անչափ կարևոր էր Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի բարոյական աջակցությունը, որը կտրականապես հրաժարվեց էջմիածնից հեռանալ անվտանգ վայր:

Արամ Մանուկյանի ու նրա գործակիցների եռանդուն և հետևողական քայլերը տվեցին ցանկալի արդյունք. մարտական ոգին, համաժողովրդական միասնությունը ձևավորված էր: Ոգևորությամբ համակված ժողովրդական զանգվածները թե՛ Երևանից և թե՛ գավառներից, կամավորական խմբեր կազմած, մեկնում էին ռազմաճակատ:

Թշնամուն վճռական հակահարված հասցնելը դժվարին գործ էր: Մոտ 7.000 զինվորներ ունեցող հայկական զորքը Սարդարապատում պետք է հաղթահարեր մոտ 9.000 կանոնավոր զինվորներ, 3.000 քուրդ հեծյալներ ունեցող և լավ զինված հակառակորդին:

Այնուամենայնիվ, 1918թ. մայիսի 22-ին հայկական զորքերը Սարդարապատի ճակատում անցան հարձակման և երկօրյա մարտերի ընթացքում թշնամուց ազատագրեցին մի քանի գյուղեր ու Սարդարապատ կայարանը: Թուրքական զորքերը, տալով 500 սպանված ու վիրավոր, նահանջեցին և ամրացան Արաքս կայարանում և նրա մոտակա բարձունքներում: Մայիսի 27-ին հայկական զորքն անցավ նոր գրոհի: Դանիել Բեկ-Փիրունյանի, գնդապետ Կ. Հասան-Փաշայանի հրամանատարությամբ գործող կանոնավոր զորամասերը և Պանդուխտի պարտիզանական գունդը ուժգին հարձակմամբ թուրքերին մատնեցին ծանր պարտության: Մինչև մայիսի 29-ը տևած հարձակողական գործողությունների արդյունքում թշնամուց ազատագրվեցին տասնյակ բնակավայրեր: Ջախջախված թուրքերը նահանջեցին Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Սարդարապատի հաղթանակը ոգևորիչ ազդեցություն գործեց Բաշ Ապարանի ճակատում գործող հայկական ուժերի վրա: Բացի այդ, Սարդարապատի ճակատամարտում բեկումն մտցնելուց հետո գեներալ Սիլիկյանը օգնական ուժեր ուղարկեց Դրոյին: Մայիսի 24-29-ը տեղի ունեցած մարտերում Դրոյի գլխավորությամբ գործող զորամասերը ջախջախեցին թուրքերին, ազատագրեցին Բաշ Ապարանը: Թուրքերը մայիսի 29-ին հեռացան նաև Համամլուից: Երևանը շրջափակելու թուրքերի փորձը անբողջապես վերացվեց:

Հայկական զորքի հաջողությունը Սարդարապատում ոգևորություն առաջացրեց նաև Ղարաքիլիսայում (Վանաձոր): Արդյունքը եղավ այն, որ մայիսի 25-28-ը 7.000-ոց հայկական բանակային և աշխարհագորային ջոկատները հերոսական ճակատամարտ տվեցին թուրքական 10.000-ոց բանակին: Այստեղ աչքի ընկան Դարպաս գյուղի քահանա Տեր Կոմիտաս Սարգսյանը, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսեսյանը, Գարեգին Նժդեհը, գեներալ Համազյանը, գնդապետներ Բեյ-Մամիկոնյանը, Սամարցյանը:

Թեև արյունահեղ մարտերն ավարտվեցին հայերի պարտությամբ, սակայն թշնամուն հասցվեց ծանր հարված, որը նրա վրա գործեց զսպող ազդեցություն: Բաթունում գտնվող թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան այդ կապակցությամբ նշել է. «Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ... Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել»:

Մայիսյան հերոսամարտերը բացառիկ նշանակություն ունեցան հայության համար: Դրանք փրկեցին հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից, բարձրացրին նրա բարոյական ու մարտական կոթովը, հերթական անգամ հաստատեցին, որ հավաքական պայքարի դեպքում անկարելի է ընկճել մեր ժողովրդին և հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը:

Մայիսի 26-ին վրացիները հռչակեցին Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը կովկասյան թաթարների ներկայացուցիչները հայտարարեցին իրենց պետության ստեղծման մասին՝ նրան տալով Ադրբեջան անունը: Դրանով լուծարվեց Անդրկովկասի հանրապետությունը:

1918թ. մայիսի 28-ին Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը հայտարարեց Հայաստանի անկախությունը: Փաստորեն վերականգնվեց հարյուրամյակներ առաջ կործանված հայկական պետականությունը և ստեղծվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Դա մեծ նվաճում էր դարավոր թշնամու դեմ երկարատև պայքար մղող հայ ժողովրդի համար: ՀՀ ստեղծման գործում ունեցած մեծագույն ներդրման համար Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադիր անվանը:

1918թ. հունիսի 4-ին Բաթունում Հայաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Այն անչափ ծանր էր հայ ժողովրդի համար, քանի որ Հայաստանը սահմանափակվում էր ընդամենը 12.000 կմ² տարածքով: Նույնիսկ նման սահմանափակ տարածքով անկախ պետականության վերականգնումը, որը հնարավոր դարձավ միայն մայիսյան հերոսամարտերի շնորհիվ, զգալի ձեռքբերում էր: Թուրքերը ստիպված էին համակերպվել Հայաստանի անկախության հետ:

Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին հաղորդում էր. «... թեև փոքրիկ և աղքատ, բայց Ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր զորքերի անձնագոհությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիները և թուրքերը Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի միջև, հայերին ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Պետք է ենթադրել, որ մեր զորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել և Հայաստանը»:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ ընտրեց Հովհաննես Քաջազնունուն և նրան հանձնարարեց կազմել կառավարություն:

Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ դարձավ Հովհաննես Քաջազնունին: Իշխանությունն անցավ Հայ հեղափոխական դաշնակցությանը, որը ազատագրական պայքարում ցուցաբերած մեծ ակտիվության շնորհիվ դարձել էր հայ իրականության մեջ ամենահեղինակավոր կուսակցությունը: Կառավարություն առաջ դրված էին չափազանց բարդ խնդիրներ՝ պաշտպանել երկիրը թուրքերի նոր հարձակումից, պատսպարել մոտ 300.000 գաղթականներին, կասեցնել տնտեսության հետագա քայքայումը, ստեղծել պետական կառավարման մարմիններ, միջոցներ ձեռնարկել սովի և համաճարակների առաջն առնելու համար:

Պետք է նշել, որ չնայած անհաղթահարելի թվացող դժվարություններին Հայաստանի Հանրապետությունը կարողացավ լուծել տնտեսական, սոցիալական, քաղաքական, կառավարման ժողովրդավարական համակարգի հաստատման խնդիրները, իսկ երկրի տարածքը մի քանի ամիս անց՝ Թուրքիայի պարտության հետևանքով, դարձավ մոտ 70.000 կմ²: Այդ ամենը իրականացվեց շնորհիվ իշխանության գլուխ կանգնած այն գործիչների ջանքերի, որոնք անցել էին ազատագրական պայքարի բովով և իրենց ամենագլխավոր նպատակը հայկական պետության ամրապնդումը և հայ ժողովրդի անվտանգությունն ու բարեկեցությունը ապահովելն էր:

63. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

Հայոց նորանկախ պետությունը գտնվում էր չափազանց ծանր կացության մեջ: Նա զրկվել էր բերրի հողերից, շրջապատված էր ռխերիմ թշնամիներով, զուրկ էր արտաքին աշխարհի հետ կանոնավոր հաղորդակցության ճանապարհներից, իր ներսում ուներ մեծ թվով անօթևան և ապրուստի տարրական միջոցներից զուրկ փախստականներ: Պատերազմի հետևանքով կազմալուծվել էր տնտեսությունը, զգացվում էր բնակարանների, պարենամթերքի և դեղորայքի սուր պակաս, մոլեգնում էին համաճարակային հիվանդությունները:

Մինչ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը և ՀՀ կառավարության անդամները Թիֆլիսից կտեղափոխվեին Երևան, Արամ Մանուկյանը և Երևանի Հայոց Ազգային խորհուրդը վճռեցին տեղ կանգնել երկրին: Արամ Մանուկյանի գլխավորությամբ 1918թ. հունիսի կեսերին ստեղծվեց նորանկախ Հայաստանի ժամանակավոր կառավարություն՝ Երևանի Ազգային խորհրդի վարչությունը: Այն գործեց մինչև հուլիսի 19-ը՝ ՀՀ անդրանիկ կառավարության Երևան ժամանելը: Արամ Մանուկյանի ղեկավարությամբ հսկայական աշխատանք կատարվեց նորաստեղծ երկրի ներքին կյանքի կայունացման, անվտանգության ապահովման և պետականության հիմքերի ստեղծման ու ամրապնդման ուղղությամբ: Պետության հիմնադրման և ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի համար Արամ մանուկյանին իրավամբ համարում են հանրապետության հիմնադիր:

1918թ. հուլիսի 24-ին հրապարակվեց ՀՀ անդրանիկ կառավարության կազմը. վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Ա. Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ. Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հ. Հախվերդյան:

1918թ. օգոստոսի 1-ին իր աշխատանքը սկսեց երկրի օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը: Այն կազմավորվեց եռապատկելով Թիֆլիսի և Երևանի Հայոց Ազգային խորհուրդների կազմը, նրա մեջ ընդգրկելով անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների՝ ռուս, եզդի,

մահմեդական, ներկայացուցիչների: Այն ուներ 46 անդամ: Հայաստանի խորհուրդը գործեց մինչև 1919թ. ապրիլի վերջը: 1919թ. հունիսի 21-23-ը Հայաստանում կայացան առաջին խորհրդարանական ընտրությունները: 80 տեղերից 72-ը ստացավ ՀՀԴ-ն, 4-ը՝ էսեռները, 3-ը՝ թաթարները, 1-ը՝ անկուսակցական: Նորընտիր խորհրդարանն իր աշխատանքը սկսեց 1919թ. օգոստոսի 1-ին և գործեց մինչև ՀՀ անկումը:

Ցավոք, հայ ազգային-քաղաքական ուժերի մի մասը սկզբնապես բացասական և կրավորական դիրք ընդունեց ՀՀ նկատմամբ: Այդ վերաբերմունքը սկսեց փոխվել 1918թ. աշնանից, երբ ՀՀ սահմանները սկսեցին ընդարձակվել: Այդ ուժերի մի մասի մոտ ցանկություն առաջացավ իրենց մասնակցությունը բերել պետության կառավարման և պետականաշինության գործին: Դա կարևոր հանգամանք էր հայոց պետականության ամրապնդման համար: 1918թ. նոյեմբերին ՀՀԴ-ն և Հայ ժողովրդական կուսակցությունը կազմեցին կռալիցիոն կառավարություն: Ցավալիորեն մինչև ՀՀ անկումն այդպես էլ չստեղծվեց միասնություն արևելահայ և արևմտահայ քաղաքական շրջանակների միջև, որը մեծապես խանգարեց ՀՀ ամրապնդմանը և Հայկական հարցի դրական լուծմանը:

1918թ. հուլիսին Հայաստանի ազգային դրոշ ընդունվեց եռագույնը (կարմիր, կապույտ, ծիրանագույն): 1920թ. հուլիսին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ զինանշանը, որը հեղինակել էին Ալեքսանդր Թամանյանը և Հակոբ Կոջոյանը: Օրհներգ ընդունվեց Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիք» երգը, որի երաժշտության հեղինակն է Բարսեղ Կանաչյանը:

ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան երկրում օրինականության հաստատմանը, պարենային ճգնաժամի մեղմացմանը, համաճարակային հիվանդությունների վերացմանը, 300.000 փախստականների և 50.000 որբերի խնամքին, կրթական գործի բարելավմանը և այլ խնդիրների լուծմանը: Պարենային ծանր կացությունը մեղմելու, նաև պետության զանձարանը լցնելու համար պետական մենաշնորհ հաստատվեց հացի, գետնախնձորի, բամբակի, խմիչքների, աղի, կարտոֆիլի նկատմամբ: Քայլեր կատարվեցին դրսից պարենամթերք ներկրելու ուղղությամբ: Այնուամենայնիվ դրությունը մնում էր ծանր: Շուտով պարենային ճգնաժամին

գումարվեցին համաճարակային հիվանդությունները: 1918թ. աշնանից մինչև 1919թ զարուն սովի և համաճարակների հետևանքով մահացավ մոտ 150.000 մարդ:

Երկրի ծանր դրությունը 1919թ. փետրվարին Հայաստանի խորհրդին ստիպեց դիմել Եվրոպայի և ԱՄՆ-ի օգնությանը: ԱՄՆ գործուղվեց վարչապետ Հ. Քաջազունին: ՀՀ-ին հատկացվեց օգնություն, որը նկատելիորեն մեղմեց պարենային ճգնաժամը: Պետք է ասել, որ այդ օգնության հատկացման համար առաջադրվել էին որոշակի նախապայմաններ: Մեծ գումարներ հատկացվեցին փախստականներին և որբերին օգնելու համար:

Ամրապնդվեց հայկական զինուժը: 1920թ. աշնանը հայկական բանակն ուներ 40.000 զինվոր: Բանակի մարտունակությանը մեծապես խանգարում էր դասալքությունը: Թերևս դրա պատճառը պետականության գաղափարի թուլությունն էր զինվորների մոտ:

1920թ. մարտին ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարանը:

Որոշակի աշխուժություն ապրեց երկրի տնտեսական կյանքը: Գործում էին կոնյակի և ծխախոտի մի շարք գործարաններ, Ալավերդու և Ջանգեզուրի պղնձահանքերը, բազմաթիվ ջուլհականոցներ և այլն: Սղոցարաններ կառուցվեցին Դիլիջանում և Սարիղամիշում: Պետականացվեց Շուստովի կոնյակի գործարանը, Կողբի և Կաղզվանի աղահանքերը, Օլթիի ածխահանքերը: Տնտեսության կառավարման և զարգացման համար կարևոր էր ազգային դրամի ընդունումը 1920թ. ապրիլին:

ՀՀ առջև ծառացած կարևորագույն խնդիրներից էր մոտ կես միլիոնի հասնող թաթարների և քրդերի հակապետական խռովությունների սանձահարումը, քանի որ դրանք սպառնում էին ՀՀ գոյությանը: 1918թ. հունվարից ի վեր թաթարական ավազակախմբերը հարձակվում էին հայկական բնակավայրերի, հաղորդակցության ճանապարհների վրա, ավերում երկաթգծերն ու երկաթուղային կայարանները, կամուրջները, թալանում և կոտորում հայ բնակչությանը: Դրանք նոր թափ ստացան ՀՀ ստեղծումից, և հատկապես Մուղրոսի զինադադարից հետո, երբ պարտված Թուրքիան իր զորքերը հեռացրեց Կովկասից: Թուրքիան տարածաշրջանում իր ազ-

դեցությունը պահպանելու նպատակով գաղտնի խրախուսում էր այնտեղ թաթարների ազգային-վարչական կազմավորումների ստեղծումը: ՀՀ տարածքում ստեղծվեցին մոտ 20 մեծ ու փոքր, գրեթե անկախ մահմեդական իշխանություններ: 1919թ. հուլիսին Հայաստանում բռնկվեց թուրք-թաթարական ընդհանուր խռովություն, որի համար Թուրքիան և Ադրբեջանը ջանք չէին խնայել: ՀՀ-ն թեև մեծ դժվարությամբ, բայց կարողացավ միջև 1920թ. աշուն ճնշել այդ խռովությունը:

ՀՀ ներքին դրության ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային հեղինակությանը մեծ հարված հասցրեց 1920թ. մայիսին բոլշևիկների կազմակերպած ապստամբությունը: ՀՀ գոյության ամբողջ ընթացքում հայ իրականության գլխավոր քաղաքական ուժերը ձեռնպահ մնացին հակապետական ձեռնարկներից՝ հստակ գիտակցելով, որ թշնամիներով օղակված երկրին անհրաժեշտ է հասարակական-քաղաքական կայունություն: Սկզբնապես ՀՀ նկատմամբ լոյալ կեցվածք էին ընդունել նաև բոլշևիկները: Սակայն դեպի Անդրկովկաս Խորհրդային Ռուսաստանի առաջանալուց և 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո հայ բոլշևիկները որոշեցին օգտվել ծանր պայմաններում ապրող հայ ազգաբնակչության դժգոհություններից, ինչպես նաև թաթարների անջատական ձգտումներից և զենքի ուժով գրավել իշխանությունը:

1920թ. մայիսի 1-ին Երևանում և մի շարք այլ քաղաքներում տեղի ունեցան հակակառավարական ցույցեր: Բոլշևիկները, որոնց կողմն անցավ «Վարդան զորավար» զրահագնացքը Սարգիս Մուսայելյանի գլխավորությամբ, ստեղծեցին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե, որը Ալեքսանդրապոլում հռչակեց խորհրդային իշխանություն, ազդարարեց դաշնակցական կառավարության տապալումը և Հայաստանի խորհրդայնացումը:

Բոլշևիկյան ապստամբությունը սպառնում էր ՀՀ գոյությանը: Ձեռնարկվեցին արտակարգ քայլեր իրավիճակը կայունացնելու համար: 1920թ. մայիսի 5-ին խորհրդարանի արտակարգ նիստում հրաժարական տվեց Ա. Խատիսյանի կառավարությունը: Ընտրվեց նոր կառավարություն Համազասպ Օհանջանյանի գլխավորությամբ: Այն բաղկացած էր ՀՀԴ բյուրոյի անդամներից և այդ պատճառով կոչվեց Բյուրո-

կառավարություն: Այնուհետև խորհրդարանը իր լիազորությունները մեկ ամսով փոխանցեց կառավարությանը: Երկրում հայտարարվեց արտակարգ դրություն: Ամենայն հայոց կաթողիկոսը, կուսակցությունները իրենց աջակցությունը հայտնեցին կառավարությանը և անկախ պետականությանը: Ապստամբությունը ճնշելու համար ստեղծվեց հատուկ զորամաս Սեպուհի գլխավորությամբ: Մայիսի 13-ին զորամասը մոտեցավ Ալեքսանդրապոլին և վերջնագիր ներկայացրեց ապստամբներին: Վերջիններիս ղեկավարները, քննարկելով վերջնագիրը, որոշեցին չդիմադրել և բռնեցին փախուստի ճանապարհը, իսկ կառավարական ուժերը մայիսի 14-ին մտան քաղաք և վերականգնեցին օրինական իշխանությունը:

Խռովության ղեկավարներից Ս. Մուսայելյանը և ուրիշներ արտակարգ դատարանների որոշումներով գնդակահարվեցին, իսկ կոմունիստական կուսակցության գործունեությունը ՅՅ-ում արգելվեց: Մայիսյան ապստամբությունը լուրջ հարված հասցրեց ՅՅ ներքին կայունությանը՝ թաթարներին մղելով նոր խռովությունների:

Կարևոր իրադարձություններից էր Միացյալ և Անկախ Հայաստանի մասին ՅՅ կառավարության 1919թ. մայիսի 28-ի հայտարարությունը: Դրանով ՅՅ կառավարությունը հռչակում էր Անդրկովկասի և Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող հայկական հողերի միավորման և անկախության մասին, հայտարարում, որ Միացյալ Հայաստանի պետական ձևը ժողովրդավարական հանրապետությունն է, և որ ինքը հանդիսանում է Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սակայն այդ քայլը հարուցեց արևմտահայերի և որոշ արևելահայ քաղաքական ուժերի դժգոհությունը: Արևմտահայ գործիչների մեծ մասի համար ՅՅ-ն ընդամենը Արարատյան հանրապետություն էր, իսկ իսկական Հայաստանը՝ Արևմտյան Հայաստանն էր, որի շահերի արտահայտիչը կարող էին լինել միայն արևմտահայերը:

ՅՅ կրթամշակութային կյանքում կարևորագույն տեղ է զբաղեցնում համալսարանի հիմնումը: 1919թ. մայիսի 16-ին որոշում կայացվեց համալսարան բացելու մասին, իսկ բացումը կատարվեց 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում: Սկզբնապես այն ուներ միայն պատմա-լեզվաբանական ֆակուլտետ, որտեղ դասախոսում էր 8 դասախոս և ուսանում

290 ուսանող: Հաջորդ ուստարում այն փոխադրվեց Երևան: 1920-1921թթ. ուս. տարում այն ունենալու էր նաև իրավաբանական և ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետներ: Նոյեմբերին որոշում ընդունվեց նաև բժշկական ֆակուլտետ բացելու մասին: 1919թ. նոյեմբերին բացվեց Ղարաքիլիսայի ժողովրդական համալսարանը, որտեղ դասընթացներ էին կարդացվում հասարակական-քաղաքական և առողջապահական թեմաներով:

Ծրագրվում էր 1920թ. աշնանը Երևանում բացել կոնսերվատորիա, Կարսում՝ ռազմական գիմնազիա և այլն: Երևան իրավիրվեցին երաժշտագետներ Ալեքսանդր Սպենդիարյանը, Ռոմանոս Մելիքյանը և ուրիշներ:

ՀՀ իշխանությունները նշանակալի գումարներ հատկացրին գիտական ու գեղարվեստական երկերի թարգմանության, աշխատությունների հրատարակության համար: Բացվեցին մեծ թվով դպրոցներ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Դրվեց նաև գրադարանային և թանգարանային հաստատությունների հիմքը:

Ստեղծվեց Հնությունների պաշտպանության կոմիտե, որը անմիջապես ձեռնամուխ եղավ Անիի ավերակների ուսումնասիրությանը՝ Թ. Թորամանյանի գլխավորությամբ: 1920թ. հուլիսին կազմակերպվեց գիտական արշավախումբ՝ Հայաստանի հնագիտական քարտեզ կազմելու նպատակով, չափագրվեցին մեծ թվով հուշարձաններ, հայտնաբերվեցին նոր հուշարձաններ և արձանագրություններ: Հավաքված նյութերը պետք է կենտրոնացվեին Երևանի պետական թանգարանում: 1919թ. մայիսին նկարիչներ Գ. Բաշինջադյանի, Մ. Սարյանի և այլոց մասնակցությամբ Երևանում բացվեց հայ արվեստագետների առաջին ցուցահանդեսը: Այստեղ կառավարության կողմից պետական թանգարանի համար ձեռք բերված կտավները հիմք դարձան Պետական պատկերասրահի համար:

64. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Նորաստեղծ Հայաստանի արտաքին դրությունը խիստ ծանր էր: ՀՀ կառավարությունը արտաքին քաղաքականության ասպարեզում որդեգրել էր զգուշավոր քաղաքական

նություն: Ընդհուպ մինչև Թուրքիայի կապիտուլյացիան ԶՅ-ն աշխատեց հավատարիմ մնալ Բաթումի պայմանագրին:

ԶՅ արտաքին դրությունը սկսեց բարելավվել համաշխարհային պատերազմի ավարտից հետո: ԶՅ-ն հարաբերություններ հաստատեց եվրոպական երկրների, առաջին հերթին հաղթող տերությունների հետ: Հայաստանում իրենց դիվանագիտական ներկայացուցչությունները բացեցին Պարսկաստանը, Վրաստանը, Ադրբեջանը: Հայաստանն էլ այս երկրներում ուներ իր դեսպանները: Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Հարավային Ռուսաստանի կառավարությունը ԶՅ-ում ունեին իրենց մշտական ներկայացուցիչները: Մի փոքր ուշ ԶՅ-ն իր ներկայացուցչությունները կամ հյուպատոսարանները ունեցավ այդ երկրներում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Գերմանիայում, Շվեյցարիայում, ճապոնիայում, Եգիպտոսում, Եթովպիայում: 1920թ. հունվարին Անտանտի Գերագույն խորհուրդը փաստացիորեն ճանաչեց Հայաստանի անկախությունը: Ցավոք, հնարավոր չեղավ բարիդրացիական հարաբերություններ հաստատել խորհրդային Ռուսաստանի հետ:

Թեև ԶՅ կառավարությունն ամեն ջանք գործադրեց հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար, սակայն այդ ձգտումը չընդունվեց հարևանների կողմից: Փաստորեն, ընդհուպ մինչև կործանումը ԶՅ-ն բարիդրացիական հարաբերություններ ուներ հարևաններից միայն Պարսկաստանի հետ: Սահմանային-տարածքային խնդիրների և քաղաքական հակադիր կողմնորոշումների, ինչպես նաև պատմական-քաղաքական իրողությունների պատճառով ԶՅ-ը սուր հակասություններ ուներ Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ:

ԶՅ հարաբերությունները հարթ չէին Վրաստանի հետ: Պատճառը վերջինիս տարածքային նկրտումներն էին պատմական հայկական տարածքների նկատմամբ: Անդրկովկասից թուրքական զորքերի հեռանալուց հետո՝ 1918թ. դեկտեմբերին Վրաստանը գրավեց Ախալքալաքը և Լոռին: 1918թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց հայ-վրացական պատերազմը: Հայկական բանակը Դրոյի գլխավորությամբ կարճ ժամանակում Վրաստանին հասցրեց ծանր հարված: Դեկտեմբերի 23-ին հայկական զորքերն ամրացան Սադախլուում: Դրանից հետո Վրաստանի մայրաքաղաք տանող ճանապարհը մնացել

եր գրեթե անպաշտպան, սակայն Անգլիայի և Ֆրանսիայի միջամտությունը, կանխեց հայկական զորքերի առաջխաղացումը: 1918թ. դեկտեմբերի 28-ին կողմերի միջև կնքվեց համաձայնագիր գինադադարի մասին: Ստորագրված ժամանակավոր համաձայնագրով Լոռիում ստեղծվում էր «Չեզոք գոտի»՝ անգլիական զորքերի հսկողությամբ և անգլիացի նահանգապետի ղեկավարությամբ, որն ուներ հայ և վրացի օգնականներ: Իսկ Ախալքալաքը, չնայած ՀՀ բողոքներին, ժամանակավորապես տրվեց Վրաստանին:

Ադրբեջանի հետ հարաբերությունները ևս սրված էին՝ կապված Արցախի, Նախիջևանի, Ջանգեզուրի և այլ հայկական տարածքների նկատմամբ Ադրբեջանի ունեցած հավակնությունների հետ: Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի տարածքային նկրտումներին սկզբնապես աջակցում էր Թուրքիան, ապա նրան փոխարինած Անգլիան: Հենց Անգլիայի միջամտությամբ կանխվեց Անդրանիկի զորամասի առաջխաղացումը դեպի Շուշի, որը կարող էր վճռական դեր խաղալ Արցախի հետագա ճակատագրի որոշման հարցում: Ավելին, Անգլիայի թողտվությամբ և համաձայնությամբ 1919թ. հունվարին Ադրբեջանը Արցախի և Ջանգեզուրի նահանգապետ նշանակեց Խոսրով բեկ Սուլթանովին: Սակայն, որքան էլ Ադրբեջանը ջանաց Անգլիայի հովանավորությամբ իրեն ենթարկել Արցախը և Ջանգեզուրը հաջողության չհասավ:

ՀՀ արտաքին դրությունն ավելի բարդացավ 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, երբ Ռուսաստանը ազդարարեց իր վերադարձը տարածաշրջան և թիկունք կանգնեց նորահռչակ խորհրդային Ադրբեջանին՝ պաշտպանելով ՀՀ նկատմամբ նրա ունեցած տարածքային պահանջները: Ցավոք, ՀՀ իշխանությունները այդ պատմական պահին ճիշտ չկողմնորոշվեցին ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման հարցում, միանշանակորեն ապավինեցին Արևմուտքին և չկարողացան երկիրը հեռու պահել ավելորդ փորձություններից:

ՀՀ կառավարությանը և ամբողջ հայ ժողովրդին հուզող առաջնահերթ խնդիրներից էր Արևմտյան Հայաստանի տարածքների հարցը: 1919թ. հունվարին Փարիզում սկսված հաշտության վեհաժողովին ներկայացվեց հայկական պա-

հանջների հուշագիր: Ըստ դրա, հայկական պետության մեջ էին մտնելու Արևելյան, Արևմտյան Հայաստանները և Կիլիկիան: Այսպիսով՝ ստեղծվելու էր «ծովից ծով» Հայաստանը: Այդ նախագիծը ներկայացրել էին ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը և արևմտահայերի շահերը ներկայացնող Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը: Այդ ծրագրին արտաքուստ հավանություն էին տվել Անգլիան և ԱՄՆ-ը:

Սակայն հետագա իրադարձությունները, հատկապես Թուրքիայում սկսված քեմալական շարժումը և ԱՄՆ Սենատի կողմից Հայաստանի մանդատի մերժումը, անհնար դարձրին «ծովից ծով» Հայաստան ստեղծելու նախագիծը: 1920թ. ապրիլին Սան Ռեմոյի կոնֆերանսում մեծ տերությունների ղեկավարները քննարկեցին Հայկական հարցը և եկան այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետությանը կարող էր միացվել միայն Արևմտյան Հայաստանի մի մասը: Սան Ռեմոյում որոշվեցին այն սահմանները, որոնք արտացոլվեցին Սևրի պայմանագրում:

1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում համաշխարհային պատերազմում հաղթած երկրների և սուլթանական Թուրքիայի ներկայացուցիչների միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Նրանով Հայաստանը Թուրքիայի կողմից ճանաչվում էր իբրև ազատ և անկախ պետություն: Հայաստանին էին անցնում Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգները: ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին էր թողնվում Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագծման գործը, որը կատարվեց 1920թ. նոյեմբերի 22-ին: Հիշյալ նահանգներում Հայաստանը ստանում էր 90.000 կմ² տարածք՝ դեպի Սև ծով ելքով: Հայաստանի տարածքը դառնում էր ավելի քան 160.000 կմ²:

Սակայն Սևրի պայմանագրին վիճակված չէր իրականություն դառնալ և այն մնաց թղթի վրա: Անհրաժեշտ էր վերագրավել Արևմտյան Հայաստանի տարածքները, որոնք անցել էին ռազմա-քաղաքական լուրջ գործոնի վերածված քեմալականների հսկողության տակ: Իսկ քեմալականները չէլյալ հայտարարեցին Սևրի պայմանագիրը՝ շեշտելով, որ անգամ մի թիզ հող չեն զիջելու հայերին: Մեծ տերությունները մտադիր չէին զոհողությունների գնալ Սևրի պայմանագրի

իրագործման համար: Իսկ հայ ժողովուրդը ի զորու չեղավ սեփական ուժերով գործնականացնել այն:

Սևրի պայմանագիրն ունի բարոյական և իրավական մեծ նշանակություն հայ ժողովրդի համար, քանզի նրանով աշխարհի հզոր երկրները և նրանց փոքր դաշնակիցները Թուրքիայի հետ ճանաչում էին հայ ժողովրդի իրավունքները իր պատմական հայրենիքի մեծագույն մասի նկատմամբ, ճանաչում էին Միացյալ Հայաստան ունենալու հայության իրավունքը:

65. 1920 Թ. ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուրքիան չէր կարող հաշտվել Սևրի հաշտության պայմանագրի հետ, քանզի հավակնություններ ուներ պատմական հայկական տարածքների նկատմամբ: Արդյունքում, 1920թ. սեպտեմբերի 23-ին սկսվեց հայ-թուրքական պատերազմը: ՀՀ վրա հարձակված թուրքական բանակի հարվածային ուժը Քյազիմ Կարաբեքիրի 15-րդ կորպուսն էր, որն ուներ 30 հազար զինվոր:

Թվական, զինական և վարչական-կազմակերպչական գերազանցություն ունեցող թուրքերը համառ կռիվներից հետո սեպտեմբերի 29-ին գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը, 30-ին՝ Մերդենեկը:

ՀՀ կառավարությունը դիմեց բացառիկ քայլերի, սեպտեմբերի 30-ին երկիրը հայտարարվեց ռազմական դրության մեջ, զենքի կանչվեցին մինչև 35 տարեկանները, զինվորական նախարարությանը ենթարկվեցին երկաթուղին, տրանսպորտային միջոցները, ռադիոկայանները, ռազմաճակատ և սահմանամերձ շրջաններ ուղարկվեցին պետական մի շարք զործիչներ: Հայ քաղաքական ուժերը, ի բացառություն բոլշևիկների, կանգնեցին կառավարության կողքին: Պետք է նշել, որ ժողովրդի մեծ մասը չգիտակցեց պահի պատմական կարևորությունը և ոտքի չկանգնեց հայրենիքի պաշտպանության համար: Պատերազմի առաջին օրերին ՀՀ կառավարությունը օգնության խնդրանքով դիմեց եվրոպական երկրներին, սակայն՝ անօգուտ:

Հոկտեմբերի 20-ին թուրքերը հարձակման անցան Սուրմալուի ճակատում և գրավեցին մի շարք տարածքներ:

Սակայն հաջորդ օրը հայկական ուժերը հակահարձակման անցան և վերագրավեցին կորցրած տարածքները: Հոկտեմբերի 24-ին թշնամին հարձակման անցավ Իգդիրի և Մարգարայի ուղղությամբ: Արյունահեղ, զոհառատ մարտերը տևեցին երեք օր: Վերջապես հոկտեմբերի 26-ին Սուրմալուի ճակատում Դրոյի գլխավորությամբ հայկական զորքերը անցան հակահարձակման և թշնամուն հարկադրեցին փախուստի դիմել: Այդ մարտերում իր համարձակությամբ ու ռազմագիտական հնարքներով աչքի ընկավ Կուռ թարխանյանը:

Կարսի ճակատում պատկերն այլ էր, այստեղ զորքերը ոչ միայն վատ էին կազմակերպված, այլև զինվորականների միջև հարաբերությունները լավ չէին: Հոկտեմբերի 30-ին թշնամին գրավեց Կարսը՝ գերելով մոտ 3.000 զինվորների և զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան անձանց: Երեք օր անընդմեջ թուրքերը Կարսում զբաղված էին իրենց հատուկ վայրագություններով, որոնց զոհ գնացին մոտ 6000 հայեր: Այստեղ հայերի պարտության պատճառների մեջ դեր ունեցավ նաև այն, որ ի տարբերություն թուրքական զորքի հրամանատար Կարաբեքիրի, որն անձամբ էր տեղում գլխավորում ռազմական գործողությունները, հայկական զորքի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը գտնվում էր Երևանում, իսկ Մ. Սիլիկյանը՝ Կարսից 70 կմ հեռու՝ Ալեքսանդրապոլում: Իհարկե դա զցում էր հայկական զորքի բարոյական և մարտական ոգին:

Թշնամին շարունակեց ընդհանուր հարձակումը՝ փորձելով դուրս գալ Ախուրյան և գրավել Ալեքսանդրապոլը: Հայկական զորքի պարտությունը ակնհայտ էր, և անհրաժեշտ էր զինադադար կնքել: Նոյեմբերի 18-ին կնքվեց զինադադարի համաձայնագիր, որի պայմանները խիստ ծանր էին ՀՀ համար: Թուրքերի հետ Ալեքսանդրապոլում հաշտության պայմանագիր կնքելու նպատակով կազմվեց պատվիրակություն Ալ. Խատիսյանի գլխավորությամբ: ՀՀ-ը խնդրեց այսպես կոչված դաշնակից տերությունների ներկայացուցիչների օգնությունը, սակայն մերժում ստացավ:

1920թ. նոյեմբերի 23-ին Հ. Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց և կազմվեց նորը՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ:

Նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսվեցին հայ-թուրքական հաշտության բանակցություններ, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, այն բանից հետո, երբ Հայաստանն արդեն խորհրդայնացել էր, իսկ ՀՀ կառավարությունը հրաժարվել էր իշխանությունից: Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային էր անցնում 1914թ. դրությամբ Արևելյան Հայաստանի մեջ մտնող ավելի քան 20.000 կմ² տարածք՝ Կարսը, Սարիղամիշը, Կաղզվանը, Արդահանը, Օլթին, Սուրմալուի գավառը: Փաստորեն հայ-թուրքական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերի հունով: Իսկ Նախիջևանի, Շարուրի, Շահթախթի շրջանները ժամանակավորապես հանձնվում էին Թուրքիային, մինչև որ այնտեղ կանցկացվեր հանրաքվե, որին Հայաստանը չպետք է մասնակցեր: Փաստորեն դրանք ևս կցվում էին Թուրքիային: ՀՀ կառավարությունը համաձայնվում էր չեղյալ համարել Սևրի պայմանագիրը, պետական կառավարումից հեռացնել իմպերիալիստական նպատակներ հետապնդողներին, այսինքն՝ ՀՀ ընդարձակմանը ձգտող գործիչներին:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը որևէ իրավական ուժ չուներ, որովհետև այն ստորագրող ՀՀ պատվիրակությունը այլևս կորցրել էր իր լիազորությունները, քանի որ Հայաստանի Առաջին Հանրապետությունը այլևս գոյություն չուներ, իսկ խորհրդային Հայաստանի իշխանությունները դեռևս պատվիրակություն չէին ուղարկել:

Այսպիսով, հայ-թուրքական պատերազմում Հայաստանը ջախջախիչ պարտություն կրեց, որի հետևանքով ոչ միայն չիրականացվեց Սևրի պայմանագիրը, այլ նաև Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր տարածքների զգալի մասը և անկախությունը:

66. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄԸ

1920թ. սերտ հարաբերություններ էին հաստատվել խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև: Դա պայմանավորված էր Անտանտի տերությունների դեմ պայքարի ընդհանուր շահերով: Այդ հարաբերությունների շրջանակում Ռուսաստանը ձեռնամուխ եղավ Անդրկովկասում իր երբեմնի ազդեցությունը վերականգնելուն: 1920թ.

ապրիլին խորհրդային զորքերը մտան Ադրբեջան և այնտեղ հաստատեցին խորհրդային կարգեր: Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը թողնվեց հարմար պահի:

1920թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցավ Արևելքի ժողովուրդների համագումար, որտեղ հարց բարձրացվեց Ռուսաստանի ու Թուրքիայի մեջտեղից վերացնել հայկական սեպը: Այստեղ խոսք գնաց այն մասին, որ թուրքական բանակը հարձակվի Հայաստանի վրա, իսկ ռուսական բանակը հայերին պաշտպանելու պատրվակով մտնի Հայաստան և խորհրդայնացնի այն:

Ելնելով այն հանգամանքից, որ հայ-թուրքական պատերազմում Հայաստանը պարտվում էր՝ 1920թ. հոկտեմբերի 14-ին խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը որոշում ընդունեց Հայաստանը խորհրդայնացնելու մասին:

Հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի ծանր պարտություններից հետո՝ 1920թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակը և Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որի նախագահն էր բոլշևիկ Սարգիս Կասյանը, մտան Իջևան, որտեղ հայտարարեցին դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին: Նրանց հրապարակած հայտարարության մեջ համոզմունք էր հայտնվում, որ խորհրդային Ռուսաստանի օգնությամբ կվերականգնվի երկրի քայքայված տնտեսությունը և կկառուցվի նոր կյանք:

ՀՀ կառավարությունը հարկադրված բանակցություններ սկսեց խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ: 1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց համաձայնագիր: Դրանով Հայաստանը հռչակվում էր խորհրդային սոցիալիստական հանրապետություն, իշխանությունը անցնում էր ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտեին: Ռուսաստանն ընդունում էր, որ ՀԽՍՀ անբաժան մասն են կազմում Երևանի նահանգը, Կարսի մարզի մի մասը, Ջանգեզուրի գավառը, Ղազախ գավառի մի մասը, Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանին էին պատկանում մինչև 1920թ. հոկտեմբերի 23-ը: Հայկական բանակի հրամկազմը և Հայաստանի քաղաքական ուժերի անդամները չպետք է ենթարկվեին հետապնդումների: Խորհրդային Ռուսաստանը պետք է ռազմական ուժեր կենտրոնացներ ՀԽՍՀ

անկախությունը պաշտպանելու համար: Համաձայնագիրը ստորագրելուց հետո ՀՀ կառավարությունը հեռանում էր իշխանությունից, որը մինչև Հայիեդկոմի ժամանումը անցնելու էր զինվորական հրամանատարությանը՝ ի դեմս Դրոյի, իսկ նրան կից ՌԽՖՍՀ-ի կողմից կոմիսար էր նշանակվում Օ. Սիլինը: Համաձայնություն ձեռք բերվեց նաև այն մասին, որ իշխանությունը Դրոյին և Սիլինին հանձնվի դեկտեմբերի 2-ի գիշերվա ժամը 12-ին:

Երևանի համաձայնագրից հետո ՀՀ կառավարությունը ստորագրեց իշխանությունից հրաժարվելու և այն զինվորական հրամանատար Դրոյին հանձնելու մասին ակտ:

1920թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն մտավ Երևան և ձեռնամուխ եղավ նոյեմբերի 29-ի դեկլարացիայի կենսագործմանը:

Հայիեդկոմի դեկրետով ամբողջ հանրապետությունում ստեղծվեցին գավառային, շրջանային և գյուղական հեղկոմներ: Դրանք իշխանության նշանակովի, ժամանակավոր մարմիններ էին, որոնք ունեին օրենսդիր և գործադիր իրավասություններ և գործելու էին մինչև խորհուրդների ընտրությունները: Ինչպես խորհրդային Ռուսաստանում, Հայաստանում ևս պետության կենսագործունեությունը ղեկավարելու նպատակով ստեղծվեցին ժողովրդական կոմիսարիատներ և ժողովրդական տնտեսության խորհուրդ: Հայաստանի Ռազմիեդկոմի անդամները կոչվեցին ժողովրդական կոմիսարներ՝ բաժանելով կառավարման ֆունկցիաները՝ ներքին գործերի, հողագործության, լուսավորության, արտաքին հարաբերությունների և այլն:

Հայիեդկոմի կողմից վերացվեցին ինչպես պետական կառավարման նախկին մարմինները, այնպես էլ դատարանները: Վերջիններիս փոխարեն ստեղծվեցին ժողովրդական դատարաններ և հեղափոխական տրիբունալներ: Հատուկ դեկրետով վերացվեցին նաև դասային տարբերությունները, տիտղոսները (բեգ, խան, իշխան) և կոչումները (ազնվական, կալվածատեր, վաճառական): Հայկական բանակը վերակազմավորվեց խորհրդային Հայաստանի կարմիր բանակի:

1920թ. դեկտեմբերի 6-ին ստեղծվեց Հակահեղափոխության դեմ պայքարի արտակարգ հանձնաժողովը՝ հակահեղափոխության, շահադիտության (սպեկուլյացիայի) և հան-

ցագործության դեմ պայքարելու համար: Այն դարձավ խորհրդային իշխանության ամուր հենարանը:

Առանձին դեկրետներով ազգայնացվեցին հողը, ընդերքը, անտառները, ջրերը, մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, մասնավոր բանկերը:

Խորհրդային պետականության հաստատմանը զուգընթաց կազմավորվեցին Հայաստանի կոմունիստական (Բոլշևիկյան) կուսակցության կազմակերպությունները: 1921թ. սկզբին կոմկուսն ուներ 5.300 անդամ և թեկնածու: ՀԿ(Բ)Կ Կենտկոմն էր կազմակերպում և ղեկավարում խորհրդային իշխանության հաստատման գործընթացը: Հայաստանում աստիճանաբար հաստատվում էր կոմկուսի մենատիրությունը:

1921թ. դեկտեմբերից 1922թ. հունվար ընկած ժամանակահատվածում Հայաստանում տեղի ունեցան խորհուրդների ընտրություններ: Ժողովրդի ակտիվ մասնակցության պայմաններում ընտրվեցին 9 գավառային, 39 գավառակային և մոտ 900 գյուղական խորհուրդներ:

1922թ. հունվարի 30-ին Երևանում իր աշխատանքը սկսեց Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը: Համագումարն ընդունեց Հայաստանի առաջին սահմանադրությունը, որն աննշան փոփոխություններով կրկնում էր Ռուսաստանի սահմանադրությունը: Այնուամենայնիվ, այն նշանակալի իրողություն էր մեր ժողովրդի համար, քանզի նա մի կողմից հայոց պատմության ընթացքում գործողության մեջ դրված առաջին սահմանադրությունն էր, մյուս կողմից՝ նպաստեց Հայաստանի երկրորդ Հանրապետության հիմքերի հաստատմանը:

Սահմանադրության համաձայն Հայաստանում ամբողջ իշխանությունը պատկանում էր բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների խորհուրդներին: Հողը, ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիները, գործարանները հայտարարվում էին սոցիալիստական սեփականություն: Հռչակվում էր բոլոր ազգերի իրավահավասարություն: Եկեղեցին անջատվում էր պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց: Աշխատավորների համար սահմանվում էր ծրի կրթություն:

67. 1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց այսպես կոչված ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ բանակի 1.000-ից ավելի սպաներ, այդ թվում Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը և ուրիշներ, որոնց ոտքով քշեցին Ալավերդի՝ ճանապարհին նրանցից ոմանց սպանելով, բոլորին ծաղր ու ծանակի ենթարկելով: Ապա ձերբակալվածներին ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: 1921թ. փետրվարին Դիլիջանի շրջանում գնդակահարվեցին Սարդարապատի ճակատամարտի մեծ թվով հերոսներ, այդ թվում՝ Դանիել բեկ Փիրումյանը: Նրա եղբայր Պողոս բեկ Փիրումյանը, չդիմանալով կտտանքներին ու նվաստացումներին, ինքնասպանություն գործեց:

Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը: Բանակի կարիքները բավարարելու համար բնակչությունից բռնագրավվում էին պարենային և այլ ապրանքներ: Հացահատիկը բռնագրավվում էր նույնիսկ չքավոր գյուղացիներից:

Ժողովրդի համբերությունը լցվում էր: Արդյունքում փետրվարի 13-ին սկսվեց ապստամբություն, որի ազդանշանը տվեցին Արագածի ստորոտում վերաբնակված սասունցիները: Մինչև փետրվարի 17-ը ապստամբները գրավեցին Աշտարակը, Էջմիածինը, Բաշ-Գառնին, Ախտան (Հրազդան) և այլ բնակավայրեր: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը Կոռո թարխանյանի և Բաշգառնեցի Մարտիրոսի գլխավորությամբ մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղանաբլու (Արտաշատ): Բանտերից ազատվեցին Հ. Քաջագնունին, Լևոն Շանթը, Ն. Աղբալյանը և 100-որ այլ պետական գործիչներ ու մտավորականներ:

Երևանի գրավումից անմիջապես հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե», որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում՝ կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգա-

դրությունները: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

Փետրվարի 18-ի իրադարձության մասին Կոմիտեն հաղորդեց Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակությանը, մեծ պետությունների կառավարություններին՝ Փարիզ, Լոնդոն, Յոն, Ազգերի լիգա և այլն, սակայն այդ բոլորը մնաց անպատասխան: Հաղորդագիր ուղարկվեց նաև Վրաստան, որտեղ, ՀՀ խորհրդայնացումից հետո, հայերի նկատմամբ սկսվել էին բռնություններ: Փետրվարի 21-ին Վրաստանը պատասխանեց Հայաստանին, որից հետո վերականգնվեց Հայաստանի դեսպանատունը Թիֆլիսում, կասեցվեցին բռնությունները: Սակայն փետրվարի 25-ին Վրաստանը խորհրդայնացվեց: Ի դեպ, Վրաստանի խորհրդայնացումից հետո նրա կողմից գրավված Լոռու «Չեզոք գոտին» վերամիավորվեց Հայաստանին:

Մեծ պետությունները որևէ օգնություն ցույց չտվեցին Հայաստանին: Բոլորի համար պարզ էր, որ խորհրդային իշխանության վերականգնումը միայն ժամանակի խնդիր էր: Պատերազմում Թուրքիայից ջախջախիչ պարտություն կրած և տարածքների գրեթե կեսը կորցրած փոքր Հայաստանը չէր կարող երկար ժամանակ դիմադրել խորհրդային բանակին:

Անկախության ամբողջ ընթացքում արյունահեղ մարտեր էին մղվում կարմիր բանակի դեմ: Արդեն փետրվարի 27-ին բոլշևիկները փորձեցին ընդիմառորդ հարձակմամբ գրավել Երևանը, սակայն մարտի 1-ին ստիպված էին նահանջել: Երկշաբաթյա դադարից հետո բոլշևիկյան զորամասերը անցան նոր հարձակման և մարտի 16-ին գրավեցին Ղամարլուն: Սակայն հաջորդ օրը անցնելով հակահարձակման հայկական զորամասերը մարտի 20-ին ազատագրեցին այն՝ բոլշևիկներից խլելով 2 թնդանոթ, 2 գնդացիր և այլն: Որքան էլ դիմադրությունը հերոսական էր, սակայն ուժերն անհավասար էին: Մարտի 25-ին սկսվեց բոլշևիկների հուժկու հարձակումը բոլոր ուղղություններով: Նրանք գրավեցին Ապարանը, Կոտայքը և, աստիճանաբար առաջանալով, ապրիլի 2-ին մտան Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: Քաղաքը բոլշևիկներին հանձնելու համար ստեղծվել

էր հանձնախումբ, որի մեջ ընդգրկվել էին Պարսից հյուպատոսը, ամերիկացի բժիշկ Լոշերը և Յ. Թումանյանը: «Հայրենիքի փրկության կոմիտեն», զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Դարալագյազ գծով բռնեցին դեպի Ջանգեզուր նահանգի ճանապարհը: Ջանգեզուրում նրանք միացան Գ. Նժդեհի ուժերին, իսկ հուլիսին նրա հետ անցան Պարսկաստան:

Ապստամբության պատճառները քննարկվեցին Հայաստանի բուլշևիկյան իշխանությունների կողմից, և որոշվեց ավելի մեղմ ու հանդուրժողական մոտեցում ցուցաբերել բնակչության նկատմամբ:

Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն վերականգնվեց ժողկոմիտրիի, որի նախագահ նշանակվեց ականավոր պետական և կուսակցական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը:

68. ԱՐՑԱԽԸ ԵՎ ՋԱՆԳԵԶՈՒՐԸ 1918-1921 ԹԹ.

Անդրկովկասի անկախ հանրապետությունների հռչակումից հետո Ադրբեջանը հավակնություններ ներկայացրեց հայկական պատմական տարածքներ հանդիսացող Ղարաբաղի (Արցախ), Նախիջևանի և Ջանգեզուրի նկատմամբ: Եթե Բաթումի պայմանագրով կաշկանդված Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն չուներ դրանք հայտարարել իր տարածքները և ձեռնպահ էր մնում բացահայտ ու ակտիվ միջամտությունից, ապա տեղի հայությունը իր ամբողջ ուժով ծառացավ Ադրբեջանի զավթողական ծրագրերի դեմ:

1918թ. հուլիսի 22-26-ը Շուշիում գումարված Ղարաբաղի հայության առաջին համագումարը մերժեց Ադրբեջանին ենթարկվելու պահանջը, Լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր և ընտրեց Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդ: Ղարաբաղի հայության համագումարները, որոնք ընդհանուր առմամբ գումարվեցին 10 անգամ մինչև 1920թ. մայիսի վերջը, ներկայացնում էին տեղի հայության կամքը, քանի որ նրան մասնակցում էին մեկական պատգամավորներ յուրաքանչյուր բնակավայրից:

1918թ. օգոստոսին Բաքվի վրա արշավող թուրքական բանակի հրամանատարությունը Ղարաբաղից գրավոր պա-

հանջեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Սակայն, սեպտեմբերին գումարված Ղարաբաղի հայության 2-րդ և 3-րդ համագումարները մերժեցին այդ պահանջը: Հիշենք, որ այդ ժամանակ Բաքուն արդեն գրավվել էր թուրք-թաթարական ուժերի կողմից, որով Ղարաբաղի կացությունը էլ ավելի էր ծանրացել: Այն հայտնվել էր շրջափակման մեջ: Ղարաբաղի հայությունը ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության կազմակերպման և ստեղծեց 3.000-ի հասնող զինված ուժեր:

1918թ. նոյեմբերին ղարաբաղցիների խնդրանքով Անդրանիկը շարժվեց դեպի Շուշի: Սակայն անգլիացիների պահանջով, որոնք թուրքերի հեռանալուց հետո Անդրկովկասում ունեին մեծ կշիռ, նա վերադարձավ Ջանգեզուր:

1919թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում հրավիրված ղարաբաղահայության 7-րդ համագումարը անգլիացիների պահանջով և Ադրբեջանի ռազմական սպառնալիքի ներքո որոշեց ժամանակավորապես՝ մինչև Փարիզի կոնֆերանսում հարցի վերջնական վճռումը, ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Սակայն դրանից հետո էլ չդադարեցին Ադրբեջանի ոտնձգությունները Ղարաբաղի նկատմամբ, չնայած այն բանին, որ 1919թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանը և Ադրբեջանը ստորագրել էին ռազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագիր: Ավելին, 1919թ. նոյեմբերին Ադրբեջանի պարտությունը Ջանգեզուրում նրան ստիպեց միառժամանակ ձեռնպահ մնալ Ջանգեզուրի նվաճման պլանից, և նա իր ողջ ուժերն ուղղեց Ղարաբաղի վրա: Ղարաբաղի սահմանին կենտրոնացնելով իր բանակի մեծ մասը՝ 1919թ. դեկտեմբերի 25-ին Ադրբեջանը անցավ հարձակման Ղարաբաղի վրա, իսկ 1920թ. փետրվարի 19-ին Շուշիի Ազգային խորհրդից պահանջեց Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի անբաժանելի մաս:

1920թ. փետրվարի 28-ից մարտի 5-ը Վարանդայի Շոշ գյուղում գումարված Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը մերժեց Ադրբեջանին ենթարկվելու պահանջը:

1920թ. մարտին Ադրբեջանը ղարաբաղցիներից պահանջեց զինաթափվել: Մարտի 22-ից ադրբեջանական զորքերը լայնածավալ հարձակման անցան Ղարաբաղի վրա՝ 300 կիլոմետրանոց ճակատով: Մարտի 23-ի գիշերը ղարաբաղահայությունը ընդհանուր ապստամբություն

բարձրացրեց զավթիչների դեմ: Սակայն ուժերը խիստ անհավասար էին և Ադրբեջանական զորքերը գրավեցին Շուշիի հայկական մասը, հրդեհեցին այն՝ կոտորելով մոտ 10 հազար հայ: Սահմանային շրջաններից ծանր կացություն էր ստեղծվել հատկապես Ասկերանում, որտեղ 1920թ. ապրիլի 3-ին ճեղքելով ճակատը թշնամին ուղղություն վերցրեց դեպի Շուշի: Կռվի ընթացքում Դալի Ղազարը կրակեց մինչև վերջին փամփուշտը, ապա գերի չընկնելու համար վերջ տվեց իր կյանքին:

Ղարաբաղի համար այդ ծայրահեղորեն բարդ և ճակատագրական պահին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց օգնության հասնել նրան: 1920թ. ապրիլի 13-ին Ջանգեզուրից Ղարաբաղ մտավ մի կողմից Դրոն՝ հայկական բանակի զորամասով, որն իր ձեռքը վերցրեց իշխանությունը, մյուս կողմից՝ Նժդեհը՝ Ջանգեզուրի ինքնապաշտպանական ուժերով: Նրանք ընդունվեցին մեծ ջերմությամբ: Կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն:

1920թ. ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում գումարված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը չեղյալ համարեց 7-րդ համագումարի կողմից Ադրբեջանի կառավարության հետ կնքած ժամանակավոր համաձայնագիրը և հռչակեց Լեռնային Ղարաբաղի միացումը ՀՀ-ին, որպես նրա անբաժան մաս: Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը որոշեց պաշտոնապես ընդունել ՀՀ պետական խորհրդանիշները, դրանը, և ենթարկվել Ջանգեզուրի նահանգապետությանը:

Սակայն շուտով ՀՀ և Ղարաբաղի գլխին կուտակվեցին նոր ամպեր՝ կապված 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացման հետ: Խորհրդային Ադրբեջանը և նրան աջակցող Կարմիր բանակը նոր պահանջներ ներկայացրին ՀՀ-ին: Նրանք ՀՀ կառավարությունից պահանջեցին հայկական զորքերը, որոնք օգնության էին հասել Ղարաբաղի հայությանը, հանել նրա տարածքից՝ սպառնալով պատերազմով: Մայիսի 25-ին հայկական զորքերը հեռացան Ղարաբաղից: Հաջորդ օրը՝ մայիսի 26-ին հրավիրված Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային: Դրանով, փաստորեն, ականայից, սկիզբ

դրվեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու պրոցեսին:

1920թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի Հեղկոմը մի կողմից Հայաստանի խորհրդայնացումը, մյուս կողմից՝ Ձանգեզուրի գրավումը հեշտացնելու նպատակով հռչակեց դեկլարացիա Լեռնային Ղարաբաղը, Ձանգեզուրը և Նախիջևանը խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու մասին:

Սակայն հետագայում Ադրբեջանի ղեկավարները հետ կանգնեցին իրենց որոշումից և քաղաքական պայքար սկսեցին հայկական Ղարաբաղին տիրելու համար:

Քանի դեռ կար անկախ Ձանգեզուրը՝ բուլշևիկյան կողմը չէր խոսում Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու մասին: Ավելին, 1921թ. հունիսի 3-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը միաձայն որոշեց Հայաստանի դեկլարացիայում նշել, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Հայաստանին: Դա թելադրված էր Ձանգեզուրը խորհրդայնացնելու ժամանակ հայերի բուռն հակազդեցությունը չառաջացնելու Կովկասյան բյուրոյի ձգտմամբ: Ինչևէ, խորհրդային Հայաստանի կառավարությունը, հենվելով Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիայի և երկկողմ համաձայնության վրա, հունիսի 12-ին հրապարակեց մի հռչակագիր, որով Լեռնային Ղարաբաղը հռչակվում էր Հայաստանի անբաժան մաս: Ա. Մռավյանը նշանակվեց Ղարաբաղի արտակարգ կոմիսար, որին Ղարաբաղում ընդունեցին մեծ ուրախությամբ:

1921թ. հունիսի վերջին, երբ Ձանգեզուրը գրավվեց բուլշևիկների կողմից, փոխվեց վերաբերմունքը Ղարաբաղի հարցում: 1921թ. հունիսի 27-ին Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ քաղբյուրոն և կառավարությունը միացյալ նիստում որոշեցին Ղարաբաղը խլել Հայաստանից՝ վկայակոչելով տնտեսական գործոնը:

1921թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարվեց Կովկասյան բյուրոյի նիստ, որի նպատակն էր լուծել Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև առկա տարածքային վեճերը: Լոռիի, Ախալքալաքի, Ձաքաթալայի, Ձանգեզուրի հետ քննվեց նաև Ղարաբաղի հարցը: Հուլիսի 4-ի նիստում, որին մասնակցում էին նաև Օրջոնիկիձեն, Կիրովը, Ալ. Մյասնիկյանը, Նարիմանովը, որոշվեց Լեռնային Ղարաբաղը մտցնել ՀԽՍՀ մեջ: Սակայն, Նարիմանովը, Ա. Միկոյանը և այլոք

բողոքեցին դրա դեմ: 1921թ. հուլիսի 5-ին հավանաբար Ստալինի միջամտությամբ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ ինքնավար մարզի կարգավիճակով: Դա պատճառաբանվում էր Ադրբեջանի հետ Ղարաբաղի տնտեսական կապերով, ինչպես նաև հայերի և մահմեդականների միջև խաղաղություն հաստատելու անհրաժեշտությամբ:

1921թ. հուլիսի 16-ի նիստում ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն այդ որոշումը համարեց սխալ: Ղարաբաղցիները բուռն ձևով բողոքեցին դրա դեմ, սակայն որոշ ժամանակ անց տարբեր ճնշումների տակ ստիպված էին տեղի տալ:

1923թ. հուլիսի 7-ին Լեռնային Ղարաբաղից անջատվեց նրա դաշտային մասը և ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): 1923-1930թթ. ԼՂԻՄ-ից անջատվեցին մի շարք հայաշատ շրջաններ և միացվեցին արհեստականորեն ստեղծված Ադրբեջանի Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի և Շահումյանի շրջաններին: Ավելին՝ Շահումյանի շրջանից անջատեցին Գետաշենի հայկական ենթաշրջանը և նրա փոխարեն Շահումյանի շրջանին միացրին 4 ադրբեջանական գյուղեր: ԼՂԻՄ-ը Հայաստանից անջատելու նպատակով Ադրբեջանը 1923թ. ստեղծեց «Կարմիր Քուրդիստանի հանրապետությունը», որն իր սև գործը կատարելուց հետո 1929թ. վերացվեց: Նրա փոխարեն կազմավորվեցին Քելբաջարի (Քարվաճառ) և Լաչինի շրջանները:

1921թ. Լեռնային Ղարաբաղի բնակչության 94,5%-ը հայեր էին (131.500), մնացյալը՝ այլ ազգեր, այդ թվում և ադրբեջանցիներ: Հետագա տասնամյակներում Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ վարում էին ազգային-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ճնշման հետևողական քաղաքականություն: Դրա հետևանքով երկրամասի ազգագրական կազմը նկատելիորեն աղճատվեց: Եթե բնական աճի հետևանքով 1989թ. Լեռնային Ղարաբաղի հայության թվաքանակը պետք է կազմեր մոտ 700.000, իսկ ադրբեջանցիներինը՝ 33.000, ապա փաստական պատկերն այլ էր. Լեռնային Ղարաբաղում ապրող 188.000 բնակչությունից հայեր էին 80%-ը՝ մոտ 150.000, մնացած 20%-ը՝ մոտ 38.000, ադրբեջանցիներ և այլն:

Զանգեզուրի նկատմամբ ևս Ադրբեջանը հավակնություններ ներկայացրեց: Երկրամասին տիրանալու նպատակով Ադրբեջանը սկսեց պատերազմական գործողություններ, սակայն հանդիպեց կազմակերպված դիմադրության: 1918թ. հուլիսից տեղի հայության ինքնապաշտպանությունը գլխավորում էր զորավար Անդրանիկը, իսկ 1919թ. մարտից երկրամասի ընդհանուր զինվորական հրամանատար, կոմիսար նշանակված փոխգնդապետ Արսեն Շահմազյանը:

Այդ ժամանակաշրջանում Ադրբեջանին հովանավորում էին անգլիացիները: Մասնավորապես, 1919թ. մայիսի 2-ին Շուշիից Գորիս ժամանած անգլիական առաքելության պետ, մայոր Մակ Մեյզը զանգեզուրցիներից պահանջեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, սակայն գրավոր մերժում ստացավ: Ադրբեջանը որոշեց զենքի միջոցով հնազանդեցնել Զանգեզուրը: 1919թ. նոյեմբերի 1-ին ադրբեջանական զորքերը լայնածավալ հարձակման անցան Զանգեզուրի վրա: Մեծ դժվարությամբ կասեցնելով թշնամու առաջխաղացումը՝ նոյեմբերի 4-ին Զանգեզուրի հայկական ուժերը Արսեն Շահմազյանի գլխավորությամբ անցան հակագրոհի և ջախջախիչ հարված հասցրին ադրբեջանական զորքերին: Ադրբեջանական բանակի այս ջախջախիչ պարտությունը ունեցավ մեծ նշանակություն հայերի համար: Ընդհուպ մինչև 1920թ. հունիս ադրբեջանական բանակն այլևս չհամարձակվեց հարձակումներ կատարել Զանգեզուրի վրա:

Այս կապակցությամբ ցանկանում ենք ներկայացնել մի հուզիչ պատմություն: Գյուղերի հաջող պաշտպանության համար անհրաժեշտ էր մի քանի ժամ հետաձգել թշնամու առաջացումը Զաբուղից դեպի Տեղ գյուղ: Դրա համար պետք էր փակել Տեղ գյուղ ձգվող խճուղին և թշնամուն գամել գյուղ բերող վերելքի վրա: Գյուղի կենտրոնում հավաքված շուրջ 200 երիտասարդներին սպաներից մեկը նշում է, որ այդ խնդիրը զոհեր է պահանջում, թանկագին զոհեր, 3-4 հոգի և ավելացնում. «Ով հանձն է առնելու կատարել իմ այս խնդրանքը, պետք է քաջ գիտակցի, որ զրկվում է ամենաթանկ բանից՝ կյանքից»: Նա առաջարկում է շարքից դուրս գալ նրանց, ովքեր կամենում են նահատակվել հանուն հայրենիքի: Անշուշտ, կարելի էր սպասել, որ նվազագույնը մի քանի հայ երիտասարդներ կարծազանքեին այդ դիմումին: Սակայն, ի

զարմանք, բայց ավելի շատ ի հպարտություն հայ երիտասարդների՝ սպան չէր հասցրել իր խոսքը ավարտել, երբ ամբողջ շարքը առաջացավ: Սպան հուզվեց և չկարողացավ արցունքները պահել: Նա մի կերպ շնորհակալություն հայտնեց՝ ավելացնելով, որ «Հայրենիքը չի մոռանա իր նվիրյալ որդիներին»: Նրանցից ընտրվեցին երեքը, որոնք մի զինվորի հետ շարժվեցին դեպի Ջաբուլից եկող խճուղի և ամրացան ձորի վրա թեքված «Ցից քարի» մոտ: Նոյեմբերի 2-ի վաղ առավոտյան այստեղ էլ փոքրիկ խումբը ճակատամարտի մեջ մտավ Ջաբուլից առաջացող թշնամու հետ: Հայ քաջորդիները չորս ժամ թշնամուն զամեցին բլրալանջերին, պատճառեցին հսկայական կորուստներ և իրենք էլ հերոսաբար զոհվեցին: Դա հայկական ուժերին թույլ տվեց նոր դիրքեր կառուցել: Զգիտենք, հայրենիքը ի դեմս ժամանակի պետական գործիչների և կառույցների մոռացավ թե՞ չմոռացավ նրանց և նրանց ընտանիքներին, սակայն պարտավոր էր չմոռանալ:

1919թ. հոկտեմբերից երկրամասի պաշտպանությունը գլխավորեց ՀՀ կառավարության կողմից այստեղ ուղարկված Գարեգին Տփղեհը: Նոյեմբերի կեսերին հետ մղելով թշնամու հերթական ոտնձգությունը՝ Տփղեհի գլխավորությամբ հայկական ուժերը թշնամուց ազատագրեցին 70-ից ավելի գյուղեր:

Ձանգեզուրի նկատմամբ ոտնձգությունները նոր թափ ստացան Ադրբեջանի խորհրդայնացումից հետո: 1920թ. հուլիսի 4-ին 11-րդ Կարմիր բանակի զորամասերը Ադրբեջանի զորամասերի հետ ներխուժեցին երկրամաս և գրավեցին այն: Ձանգեզուրցիները հիմնականում չդիմադրեցին թշնամուն՝ հուսալով, որ խորհրդայնացումից հետո իրենց դրությունը կլավանա: Տփղեհի նախագգուշացումները իրենց գլխին գալիք չարիքի մասին մնացին անլսելի և նա իր փոքրիկ ջոկատով բարձրանալով խուստուսի լեռ՝ միայնակ շարունակեց պայքարը թշնամու դեմ: Տփղեհը բազմիցս օգնություն խնդրեց ՀՀ կառավարությունից, որը, սակայն, չէր կարող բացահայտ և էական օգնություն ցուցաբերել: 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված ռուս-հայկական համաձայնագրում ՀՀ-ն նույնիսկ ստիպված էր համաձայնել, որ Ձանգեզուրը հայկական այլ շրջանների հետ ժամանակավորապես զբաղեցվի խորհրդային ուժերի կողմից, որոնք տվյալ պահին արդեն գրավել էին նրա մեծ մասը:

1920թ. նոյեմբերին այլևս չկարողանալով հանդուրժել խորհրդա-ադրբեջանական ելուզակների բռնությունները զանգեզուրցիները ոտքի կանգնեցին և արյունահեղ կռիվների արդյունքում նրանց քշեցին երկրամասից:

ՀՀ խորհրդայնացումից շատ չանցած՝ 1920թ. դեկտեմբերի 25-27-ին Տաթևի վանքում գումարված համազանգեզուրյան առաջին համագումարը, թշնամիների դեմ պայքարը հաջողությամբ շարունակելու մտադրությամբ, որոշում ընդունեց Ջանգեզուրը հռչակել Ինքնավար Սյունիք: Այն ընտրեց երկրամասի ժամանակավոր կառավարություն: Նժդեհը հռչակվեց Սյունիքի սպարապետ:

1921թ. փետրվարյան ապստամբության ճնշումից հետո ստեղծված նոր իրադրությունը զանգեզուրցիներին թելադրեց գումարել նոր համագումար: Ապրիլի 27-ին Տաթևի վանքում գումարված համազանգեզուրյան 2-րդ համագումարը երկրամասը հայտարարեց Լեռնահայաստան: Նժդեհը ընտրվեց վարչապետ: 1921թ. հունիսի 1-ին Լեռնահայաստանը հռչակվեց Հայաստան: Ստեղծվեց նոր կառավարություն ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանի գլխավորությամբ:

Մինչև հուլիս Նժդեհի գլխավորությամբ զանգեզուրցիները հաջողությամբ հետ մղեցին խորհրդա-ադրբեջանական զորքերի հարձակումները, երբեմն նույնիսկ դիմելով հակահարձակումների: 1921թ. հուլիսի 9-ին Նժդեհը հեռացավ Պարսկաստան՝ խոստանալով վերադառնալ, եթե երկրամասը փորձեն միացնել Ադրբեջանին:

Երկամյա կռիվների ընթացքում զանգեզուրցիները հակառակորդին պատճառեցին ծանր կորուստներ՝ 15 հազար սպանված, 7000 գերի և այլն: Թաթարներից ազատագրվեցին և հայերին վերադարձվեցին 200-ից ավելի գյուղեր:

Այսպիսով, Գարեգին Նժդեհի գլխավորությամբ զանգեզուրցիների մղած հերոսական պայքարը մեծ չափով նպաստեց, որ Ջանգեզուրը մնա Հայաստանի կազմում:

69. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ 1921-1923 ԹԹ.

1920թ. սկսված խորհրդա-թուրքական հարաբերություններն իրենց զարգացումը ստացան 1921թ. փետրվարի 26-ից մարտի 16-ը Մոսկվայում գումարված կոնֆերանսում:

Կոնֆերանսը նախապես ծրագրվում էր անցկացնել քառակողմ՝ նաև Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ նպատակով Մոսկվա էր մեկնել հայկական պատվիրակություն՝ ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ: Հայկական կողմը պատրաստվում էր պահանջել վերականգնելու մինչև 1920թ. հայ-թուրքական պատերազմը եղած սահմանագիծը և վերադարձնել Կարսի ու Սուրմալուի գավառները:

Սակայն թուրքական կողմը կտրականապես դեմ արտահայտվեց կոնֆերանսին հայկական պատվիրակության մասնակցությամբ: Դրա հետևանքով կոնֆերանսը վերածվեց ռուս-թուրքական բանակցությունների: Այնտեղ ոտնահարվեցին հայ ժողովրդի շահերը:

1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագիր: Այն բաղկացած էր 16 հոդվածներից և հավելվածներից: Կողմերը համաձայնվում էին չճանաչել որևէ հաշտության պայմանագիր կամ միջազգային ակտ, որը կողմերին ուժով կպարտադրվեր: Ռուսաստանը համաձայնվում էր չճանաչել Թուրքիային վերաբերող և նրա Ազգային մեծ ժողովի կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ: Անշուշտ, խոսքը գնում էր առաջին հերթին Սևրի պայմանագրի մասին: Պայմանագրով որոշվում էր Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը, որը Հայաստանի հարևանությամբ անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով: Թուրքիային էր զիջվում Կարսի մարզը, ինչպես նաև երբևէ նրա կազմում չգտնված Սուրմալուի գավառը: Պայմանագրի 3-րդ հոդվածով, որպես ինքնավար տարածք, երրորդ կողմին, այսինքն Հայաստանին, չզիջելու պայմանով, Ադրբեջանին էր հանձնվում Նախիջևանը: Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկել քայլեր, որպեսզի նրանք ճանաչեին այդ պայմանագրում առկա իրենց վերաբերող հոդվածները:

Ալ. Բեկզադյանի գլխավորած Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը, որին չէր թույլատրվել մասնակցել կոնֆերանսի աշխատանքներին, բողոք ներկայացրեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը՝ հակա-

հայկական պայմանագիր ստորագրելու առթիվ, սակայն բողոքը հաշվի չառնվեց:

1921թ. սեպտեմբերի 26-ին, Կարսում, Ռուսաստանի մասնակցությամբ՝ մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սկսվեցին բանակցություններ՝ սահմանային հարցերը կարգավորելու համար: Կարսի կոնֆերանսով Ռուսաստանը և Թուրքիան անդրկովկասյան հանրապետություններին ստիպում էին ճանաչել Մոսկվայի պայմանագրի դրույթները: Այստեղ մերժվեցին հայկական կողմի բոլոր պահանջներն ու առաջարկները: Թուրքիան մինչև վերջ պնդեց պահպանելու Մոսկվայի պայմանագրի սկզբունքները:

1921թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքվեց մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի ոգուն համապատասխան պայմանագիր: Ռուսաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ճանաչում էին Նախիջևանի անցումը Ադրբեջանին:

1921թ. նոյեմբերի 6-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված համաձայնությամբ Լոռին մնաց Ռուսաստանին, իսկ Ախալքալաքը, Ծալկան, Բուլնիս-Խաչենը անցան Վրաստանին:

Սևրի պայմանագրից ամիսներ անց եվրոպական մեծ տերությունները՝ Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, ևս փոխեցին իրենց վերաբերմունքը Ռուսական հարցում: Դա առաջին անգամ ակնհայտ երևաց 1921թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը գումարված Լոնդոնի կոնֆերանսում: Ա.Ահարոնյանը և Պողոս Նուբարը կոնֆերանսում պահանջեցին պահպանել Սևրի պայմանագրի սկզբունքները և միջոցներ ձեռնարկել Արևմտյան Ռուսաստանը թուրքերից ազատագրելու համար: Սակայն այնտեղ որոշվեց վերանայել Սևրի պայմանագրի Ռուսաստանին վերաբերող հոդվածները: Կոնֆերանսը սահմանափակվեց Թուրքիայի արևելյան նահանգներում «Ռուսական ազգային օջախ» ունենալու հայերի իրավունքի ձևական ճանաչմամբ, որը, սակայն, կտրականապես մերժվեց թուրքական պատվիրակության կողմից:

Ռուսական հարցը քննվեց նաև 1922թ. նոյեմբերի 20-ից 1923թ. հուլիսի 24-ը Լոզանում (Շվեյցարիա) իրավորված միջազգային կոնֆերանսում: Նրան մասնակցում էին Անգլի-

ան, Ֆրանսիան, Իտալիան, Յունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Չարավսլավիան, դիտորդի կարգավիճակով՝ ԱՄՆ-ը:

Լոզան ժամանած Ավ. Ահարոնյանի և Ալ. Խատիսյանի գլխավորած ՀՀ պատվիրակությանը չթույլատրվեց պաշտոնապես մասնակցել կոնֆերանսին: Հիմնավորումն, անկասկած, իրավացի էր, այն այլևս չէր ներկայացնում Հայաստանը, քանզի այնտեղ հաստատվել էին խորհրդային կարգեր: Զթույլատրվեց մասնակցել նաև Գ. Նորատունկյանի գլխավորած Հայ ազգային պատվիրակությանը:

Հայկական զույգ պատվիրակությունները կոնֆերանսին ներկայացրին Հայկական հարցի լուծման, ավելի ճիշտ Հայաստանի սահմանագծման երեք տարբերակ. 1) «Հայկական ազգային օջախի» ստեղծում Վիստոյի սահմանագծած Հայաստանի տարածքում, 2) Երևանի հանրապետության սահմանների ընդարձակում՝ նրան միացնելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի Սև ծով ելքով, 3) հակառակ դեպքում՝ Հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում: Հայկական հուշագիրը չէր ամրապնդվում որևէ իրական գործոնով և, ինչպես սպասելի էր, տապալվեց:

Լոզանում Հայկական հարցը վերածվելով «հայ գաղթականության» հարցի, փոխանցվեց Ազգերի լիգային, քանզի Թուրքիան մերժեց հայ գաղթականներին իրենց նախկին բնակավայրեր վերադառնալ թույլատրելու առաջարկությունը: Լոզանի հաշտության պայմանագրով Հայկական հարցը որպես միջազգային հարց հանվեց օրակարգից: Վերանայվեց Սևրի պայմանագիրը՝ հաստատելով Թուրքիայի արդի սահմանները:

70. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Խորհրդային Հայաստանը գտնվում էր բավական ծանր վիճակում: Թուրքական արշավանքի հետևանքով քայքայվել էր երկրի ամբողջ տնտեսությունը, տրանսպորտային ցանցը: Շարունակվում էին սովը, համաճարակները: Երկրում կար մոտ 235.000 սովյալ, որոնց մեծ մասը գաղթական էր:

Երկրի քայքայված տնտեսության վերականգնման, անվտանգության ապահովման համար կարևորագույն քայլ էր

նրա մուտքը Անդրկովկասյան ֆեդերացիա և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ):

1917-1921թթ. նախկին ռուսական կայսրության տարածքում առաջացել էին մի շարք խորհրդային ազգային հանրապետություններ, որոնք շրջապատված էին հակախորհրդային, թշնամական ուժերով: Խորհրդային հանրապետությունների հետագա փոխհարաբերությունների հարցը գտնվում էր նրանց ղեկավարությունների, առաջին հերթին Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության, անձամբ Վ. Ի. Լենինի ուշադրության ներքո: Բեկում մտցնելով Ռուսաստանում բռնկված քաղաքացիական պատերազմի մեջ՝ Խ. Ռուսաստանի ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց խորհրդային հանրապետությունների միավորման ուղղությամբ: Այդ հարցը հատուկ քննարկման նյութ դարձավ 1921թ. մարտին Մոսկվայում գումարված ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում: Այդտեղ ընդունված բանաձևում նշվում էր, որ խորհրդային հանրապետությունների պաշտպանության, փոխօգնության, տնտեսության վերականգնման, ազգերի համերաշխության, ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ հաստատելու ընդհանուր շահերը թելադրում են առանձին խորհրդային հանրապետությունները միավորել:

Միավորման լավագույն ձև համարվեց ֆեդերացիան՝ դաշնությունը, որի հիմքում պետք է դրվեր խորհրդային հանրապետությունների փոխադարձ վստահության, դաշնության մեջ մտնելու կամավորության և ինքնիշխանությունը պահպանելու սկզբունքները: Առաջին քայլերից մեկն այդ ուղղությամբ Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության ստեղծումն էր:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ սկզբից ևեթ պաշտպանեց Անդրֆեդերացիայի ստեղծման գաղափարը՝ գտնելով, որ այն բխում է հայ ժողովրդի և Հայաստանի շահերից: Անդրկովկասի հանրապետություններից Հայաստանը գտնվում էր ամենից ծանր սոցիալ-տնտեսական վիճակում, չունեւր սահման Ռուսաստանի հետ, ելք դեպի ծով և այլն:

1922թ. հունվարի 30-ին բացվեց Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարը, որտեղ դրական արձագանք ունեցավ Անդրկովկասյան դաշնությունն ստեղծելու գաղա-

փարը: Այս համագումարում ընդունվեց Խորհրդային Հայաստանի սահմանադրությունը: Այն առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ:

Ռուսաստանի նախաձեռնությամբ Թիֆլիսում գումարված Անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների կոնֆերանսի կողմից 1922թ. մարտի 12-ին ստեղծվեց Անդրկովկասի Ֆեդերատիվ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԱՖԽՄՅՄ), որի կենտրոնը դարձավ Թիֆլիսը:

1922թ. դետեմբերի 10-13-ը Բաքվում գումարված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը ԱՖԽՄՅՄ-ն վերանվանեց Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության (ԱՍՖԽՀ), ընդունեց նրա սահմանադրությունը և որոշեց միավորվել Խորհրդային մյուս հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ռեկրահայի և Բելոռուսիայի հետ:

Անդրֆեդերացիան գոյություն ունեցավ մինչև 1936թ., երբ նրա կազմում գտնվող հանրապետությունները ուղղակիորեն մտան ԽՍՀՄ կազմի մեջ:

1922թ. դեկտեմբերի 30-ին ՌԽՖՍՀ-ի, ՌԵԿՐԱՀ-ի, ՌԵԼՈՐՈՍԻԱԿԻ և ԱՍՖԽՀ-ի ներկայացուցիչներն ստորագրեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ) ստեղծելու մասին պայմանագիրը, որը հաստատվեց ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարում: Խորհրդային յոթանասուն տարիներին Հայաստանն ապրեց աննախադեպ տնտեսական, գիտական, կրթական և մշակութային վերելք:

1921թ. փետրվարյան ապստամբությունից անմիջապես հետո Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ էին եղել երկրի քայքայված տնտեսության վերականգնմանը: Այդ գործում Հայաստանին որոշակի օգնություն ցուցաբերեցին Ռուսաստանը և ՌԵԿՐԱՀ-ը:

1921թ. աշնանը հրապարակած դեկրետներով Հայաստանի ժողովմիտրի թափ հաղորդեց բամբակագործության, ծխախոտագործության, խաղողագործության զարգացմանը: Գյուղատնտեսության վերականգնման համար կարևոր էր ոռոգման ցանցի վերականգնումն ու հետագա զարգացումը: Այդ նպատակով կառուցվեցին մի շարք նոր ջրանցքներ:

1925-1926թթ. ցանքատարածությունները գրեթե հավասարվեցին 1913թ. մակարդակին:

Ձարկ տրվեց քաղաքաշինությանը: 1924թ. հաստատվեց Երևանի նոր հատակագիծը, որը կազմել էր ակադեմիկոս Ալ. Թամանյանը:

1920-ական թթ. սկզբին կոմունիստական կուսակցությունը Լենինի գլխավորությամբ մշակեց մեկ առանձին երկրում սոցիալիզմ կառուցելու տեսությունը: Դրա կարևորագույն բաղադրիչներն էին երկրի ինդուստրացումը, որպես սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման կարևորագույն գործոն, գյուղատնտեսության կոլեկտիվացումը և կուլտուրական հեղափոխությունը: 1925թ. Խորհրդային Միությունը որդեգրեց ինդուստրացման կուրս, ըստ որի ԽՍՀՄ-ը մեքենաներ և սարքավորումներ ներմուծող երկրից պետք է վերածվեր այդպիսիք արտադրող երկրի, որպեսզի ապահովվեր երկրի տնտեսական ինքնուրույնությունը: Հայաստանը ևս ընդգրկվեց ինդուստրացման ծրագրի մեջ: Կառուցվեցին տասնյակ հիդրոէլեկտրակայաններ, արդյունաբերական ձեռնարկություններ:

Արդեն 1940թ. Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1913թ. մակարդակը գերազանցեց 9 անգամ և կազմեց հանրապետության համախառն արտադրանքի 72%-ը, Հայաստանը վերածվեց զարգացող արդյունաբերություն ունեցող երկրի

1940թ. դրությամբ առկա կարևորագույն դրական տեղաշարժերից էր հանրապետության բնակչության արագ աճը: 1926թ. 881.000-ի դիմաց 1939թ. բնակչության թիվը հասել էր 1.282.000-ի: Դա տեղի էր ունեցել հիմնականում բնական աճի, մասամբ նաև հայրենադարձության շնորհիվ: Պակաս կարևոր էր նաև այն, որ գրեթե դադարել էր արտագաղթը երկրից: ՀԽՍՀ աչքի էր ընկնում բնակչության ազգային կազմի միատարրությամբ, բնակչության 83%-ը կազմում էին հայերը:

1927թ. սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններ՝ ունևոր, միջակ, չքավոր, ինչպես նաև նոր հողակտորներ ստացած արևմտահայ գաղթականներն ու հայրենադարձները բռնությամբ հողագրկվեցին և մտցվեցին կոլտնտեսությունների մեջ: Ցավալի էր հատկապես այն, որ քիչ-շատ ունևոր

գյուղացիները ճանաչվեցին կուլակ և ունեզրկվեցին: Գրեթե ամենուր իշխանությունները հանդիպում էին դիմադրության: Մի շարք վայրերում՝ Շամշադինում, Թալինում, Վեդիում, Դարալագյազում (Վայոց Ձոր) գյուղացիության դիմադրությունը ստացավ զինված դիմակայության բնույթ: Գյուղացիության մի մասի բողոքն ընդունում էր այլ բնույթ. նախքան կոլտնտեսություն մտնելը նրանք ոչնչացնում էին իրենց անասունները, գյուղատնտեսական գործիքները, որպեսզի չտային կոլտնտեսություններին: Դրա հետևանքով 1929-1934թթ. հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30, իսկ մանր եղջերավորներինը՝ 50%-ով: 1937թ. դրությամբ Հայաստանում գյուղացիության մեծ մասը մտցվեց կոլտնտեսությունների մեջ:

Կոլեկտիվացումը ԽՍՀՄ տարբեր շրջաններում պատճառ դարձավ միլիոնավոր մարդկանց սովամահության, իսկ Հայաստանում հազարավոր ընտանիքների արտագաղթի: Կոլտնտեսությունները գյուղացիության դժկամության, նյութատեխնիկական բազայի թուլության, աշխատանքի արդյունավետության բարձրացման մեջ շահագրգռվածության բացակայության պայմաններում գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու փոխարեն քայքայեցին այն:

1920-ական թթ. սկզբից հալածանքներ սկսվեց քաղաքական մյուս ուժերի, հատկապես Դաշնակցության դեմ՝ նրանց վերացնելու նպատակով: Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում հաստատվեց կոմկուսի մենատիրությունը: Այն իր ձեռքում կենտրոնացրեց Հայաստանի ղեկավարման ողջ համակարգը, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը: Կոմկուսը ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում սոցիալիստական հասարակարգ կառուցելու կարևոր միջոց դարձրեց քաղաքական բռնությունները: Մարդիկ պատասխանատվության էին ենթարկվում ոչ միայն տվյալ պահին կատարած արարքների, այլև նախկինում գործած սխալների, անգամ իրենց հարազատների գործած սխալների համար:

1920-ական թթ. հալածանքներ սկսվեցին նաև կոմկուսի նախկին ղեկավար գործիչների դեմ: Շինժու մեղադրանքներով բանտարկվեցին հարյուրավոր կոմունիստներ: Հիմնականում մեղադրում էին ազգայնականության մեջ:

Բռնությունների ալիքը ուժեղացավ 1936-1938թթ.: Հայաստանում քաղաքական բռնաճնշումների ենթարկվեց ավելի քան 15.000 մարդ, որոնց զգալի մասը գնդակահարվեց:

Ծանր բռնությունների ենթարկվեց նաև Հայ առաքելական եկեղեցին: Ազգայնացվեցին հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները՝ դպրոցները, թանգարանները, գրադարանները, տպարանները՝ իրենց շարժական և անշարժ գույքով: 1920թ. դեկտեմբերին Հայիեդկոմը բռնագրավեց Էջմիածնի վանքի շենքերն ու հարստության մի մասը, այդ թվում ճեմարանի շենքը, ս. Էջմիածնի, ս. Հռիփսիմեի, ս. Գայանեի, ս. Ջվարթնոցի շինությունները, Էջմիածնապատկան այգիները և այլն: 1922թ. Ամենայն հայոց կաթողիկոսը միաբաններին ուղղած կոնդակում դատապարտեց խորհրդային իշխանության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ՝ այն համեմատելով պարսից շահերի կողմից Արարատյան դաշտը հայերից դատարկելու քաղաքականության հետ: Մինչև 1937թ. Հայաստանում փակվեցին 800 եկեղեցի, որոնցից շատերը քանդվեցին:

1920-1930-ական թթ. Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի մի մասնիկն էր հայրենադարձությունը: 1920-1930-ական թթ. Հունաստանից, Իրանից, Սիրիայից, Թուրքիայից, Ֆրանսիայից Հայաստան ներգաղթեցին 42.000 հայեր:

71. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1939թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա, որով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Դրանից մեկ շաբաթ առաջ՝ օգոստոսի 23-ին Գերմանիան և ԽՍՀՄ-ը ստորագրել էին չհարձակման համաձայնագիր, որով ազդեցության գոտիների էին բաժանել Արևելյան Եվրոպան: 1939-40թթ. Գերմանիան գրավեց գրեթե ողջ Եվրոպան, իսկ ԽՍՀՄ-ը տարածքներ գրավեց Լեհաստանից, Ֆինլանդիայից, Ռումինիայից, խորհրդայնացրեց Մերձբալթյան հանրապետությունները:

1941թ. հունիսի 22-ին Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց խորհրդային Միության վրա:

Սկսվեց խորհրդային ժողովուրդների Հայրենական Մեծ պատերազմը: Այն բաժանվում է երեք ժամանակաշրջանի: Առաջին փուլն ընդգրկում է 1941թ. մինչև 1942թ. նոյեմբեր ամիսը, երբ խորհրդային բանակը հիմնականում կրում էր պարտություններ և նահանջում՝ թշնամուն թողնելով հսկայական տարածքները: Եկրորդ փուլը սկսվում է 1942թ. նոյեմբերին, երբ ծավալվեց Ստալինգրադի ճակատամարտը, որում խորհրդային բանակը տարավ պատմական հաղթանակ և բեկում մտցրեց պատերազմի ընթացքի մեջ: Այն ամրապնդվեց 1943թ. ամռանը Կուրսկի ճակատամարտում տարած հաղթանակով: Երրորդ փուլն ընդգրկում է 1944-1945թթ., երբ խորհրդային զորքերը թշնամուց ազատագրեցին օկուպացված շրջանները, Արևելյան Եվրոպայի երկրները և հաղթականորեն մտան Բեռլին:

1945թ. մայիսի 9-ին Գերմանիայի պարտությամբ ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը, իսկ սեպտեմբերի 2-ին ճապոնիայի կապիտուլյացիայով ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը հսկայական արհավիրքներ պատճառեց ամբողջ մարդկությանը:

Հայ ժողովրդի համար ԽՍՀՄ հաղթանակն ուներ գոյապահպանական նշանակություն, քանզի Թուրքիան զաղտնի բանակցություններ էր վարում Գերմանիայի հետ և 26 դիվիզիա էր կենտրոնացրել Անդրկովկասի սահմանին՝ ԽՍՀՄ վրա հարձակվելու համար: Թուրքերի ներխուժումը Անդրկովկաս հավասարազոր էր Արևելյան Հայաստանի վերացմանը: Հայ ժողովուրդն ամենաակտիվ մասնակցություն ցուցաբերեց Գերմանիայի ջախջախման գործին ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ նաև Սփյուռքում: Խորհրդային բանակ զորակոչվեցին մոտ 600.000 հայեր, որոնցից մոտ 300.000-ը զոհվեց պատերազմում:

Պատերազմին մասնակցեցին հայկական ազգային վեց դիվիզիաներ: 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան աչքի ընկավ Ստալինգրադի ճակատամարտում և ցուցաբերած սխրագործությունների համար վերակազմավորվեց 51-րդ գվարդիական դիվիզիայի: Այնուհետև այն մասնակցեց Կուրսկի ճակատամարտին, Ուկրաինայի ու Մերձբալթիկայի ազատագրմանը: 89-րդ դիվիզիան ռազմաճակատ մեկնեց 1942թ. սեպտեմբերին և Կովկասի նախալեռներից կռիվներով

հասավ Բեռլին՝ անցնելով 3700 կմ: Դիվիզիայի հրամանատարը գեներալ Նվեր Սաֆարյանն էր: Նրա գլխավորությամբ դիվիզիան Դրինում մասնակցեց Թամանյան թերակղզու ազատագրմանը, որի համար ստացավ «89-րդ Թամանյան դիվիզիա» անունը: 390-րդ դիվիզիան մարտական ուղին սկսեց Կերչի թերակղզում 1942թ. հունվարից: Կերչի կռիվներում դիվիզիան ունեցավ մեծ կորուստներ, զոհվեց հրամանատար, գնդապետ Սիմոն Զաքյանը: 409-րդ դիվիզիան մարտական ուղին սկսելով Թերեքի մոտից՝ հաղթականորեն հասավ մինչև Դանուբ: 408-րդ դիվիզիան մասնակցեց Կովկասի սևծովյան ափերին մղվող կռիվներին: 261-րդ դիվիզիան պաշտպանում էր ԽՍՀՄ սահմանը Թուրքիայի հնարավոր ոտնձգությունից, որը սպասվում էր Մոսկվայի և Ստալինգրադի անկման դեպքում:

Այս դիվիզիաներից բացի հայերը նշանակալի կշիռ ունեին մի շարք այլ դիվիզիաներում ևս: Բացի այդ, Հայաստանի իշխանությունների որոշմամբ Հայաստանում ստեղծվեցին 10-յակ կործանիչ գումարտակներ, որոնց նպատակը ռազմական նշանակության օբյեկտների պաշտպանությունն էր, ինչպես նաև թշնամու դիվերսիաների դեմ պայքարելը: Նրանց մեջ ընդգրկվել էր մոտ 15.000 մարդ:

Հայ զինվորականները մասնակցեցին գրեթե բոլոր կարևորագույն ճակատամարտերին: Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովուրդը տվեց ԽՍՀՄ 117 հերոս (36-ը հետմահու) և մոտ 70 գեներալ: Ավելի քան 7.000 հայազգի զինվորներ պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով: Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման արժանացավ օդաչու, գնդապետ Նելսոն Ստեփանյանը: Նա հայտնի էր «Բալթիական մրրկահավ» անունով և ոչնչացրել է թշնամու 27 ինքնաթիռ, 85 տանկ, 13 նավ, 600 ավտոմեքենա և այլն:

Հայ ժողովուրդը Հայրենական պատերազմին տվեց բազմաթիվ նշանավոր զորահրամանատարներ: Մարշալ Հովհաննես Բաղդամյանի զորավարական տաղանդը ըստ ամենայնի երևաց Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման ժամանակ: Նա 1944թ. արժանացավ ԽՍՀՄ հերոսի կոչման: Խորհրդային ռազմածովային ուժերի նշանավոր հրամանատարներից էր ծովակալ Հովհաննես Իսակովը: Նա 1942-1943թթ. գլխավորել է Սևծովյան նավատորմը: Արժանացել է

հերոսի կոչման, նշանակվել ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբի պետ: Ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց) ԽՍՀՄ ավիացիայի շտաբի պետն էր: Ճանաչված զորավար էր զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը:

Հայերը հարկադրված որոշակի մասնակցություն ունեցան ռազմական գործողություններին նաև գերմանացիների կողմում: Գերմանացիները տարբեր ազգերի ռազմագերիներից կազմում էին ազգային լեգեոններ ԽՍՀՄ դեմ նրանց օգտագործելու համար: Նժդեհի, Դրոյի և այլոց նախաձեռնությամբ ստեղծվեց նաև հայկական լեգեոն: Դա մի հուսահատ փորձ էր պատերազմում ԽՍՀՄ պարտության դեպքում Գերմանիայի բարյացականությունը շահելու և Թուրքիայի կողմից իրագործվելիք հայկական ջարդերը կանխելու համար:

Պատերազմին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Հայկական սփյուռքը: Այն իր մասնակցությունը բերեց զինված պայքարի, դրամական հանգանակության, ինչպես նաև զաղափարական պայքարի ձևով: Սփյուռքում հավաքված զուևարներով ստեղծվեցին «Սասունցի Դավիթ», «Գեներալ Բաղդամյան» տանկային շարասյուները: Ֆրանսիայում հայերը ակտիվորեն մասնակցեցին ֆաշիզմի դեմ ֆրանսիական ժողովրդի մղած պայքարին: Սփյուռքահայ պարտիզաններից առավել հայտնի էր Ֆրանսիայում գործող Միսաք Մանուշյանի պարտիզանական ջոկատը: Սփյուռքահայությունը պատերազմին մասնակցեց նաև դաշնակից երկրների բանակներում: Միայն ԱՄՆ զորքերում կռվում էին մոտ 20.000 հայ զինվորներ:

72. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ 1945-1946 ԹԹ.

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, երբ Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությունն ակնհայտ էր, հայ մտավորականությունը Սփյուռքում և Հայաստանում բարձրացրեց Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը Խորհրդային Հայաստանին միացնելու հարցը՝ սփյուռքահայությանն իր հայրենիքում հաստատելու համար: Երևանում

այդ խնդիրն արծարծեցին հայ գրողներ Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Նաիրի Ջարյանը և ուրիշներ:

Հայկական հողերի հարցի լուծումը մտահոգում էր նաև Հայ Առաքելական եկեղեցուն և Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը: Այսպես, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ Զորեքչյանը 1945թ. նոյեմբերի 27-ին դիմեց ԽՍՀՄ, ԱՄՆ և Անգլիայի ղեկավարներին՝ հայկական տարածքներն իրենց տերերին վերադարձնելու և Խորհրդային Հայաստանին միացնելու համար: Իսկ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գր. Հարությունյանը 1946թ. փետրվարի 1-ի նախընտրական ճառում ՀԽՍՀ անունից դրեց Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի վերադարձման հարցը: Խորհրդային Հայաստանի ղեկավարները հայկական տարածքները վերադարձնելու անհրաժեշտության մասին հիմնավորումները նաև գրավոր ներկայացրին ԽՍՀՄ ղեկավարությանը:

Սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ հայկական տարածքների հարցը լուծելու կապակցությամբ հուլիս-ապրիլի 25-ից հունիսի 26-ը Սան Ֆրանցիսկոյում գումարված Միավորված ազգերի կոնֆերանսին:

ԽՍՀՄ-ը որոշակիորեն սատարեց հայերի ձգտումներին՝ ելակետ ունենալով այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ Թուրքիան ԽՍՀՄ նկատմամբ որդեգրել էր թշնամական դիրքորոշում և նպատակ էր ունեցել հարմար պահի հարձակվել ԽՍՀՄ-ի վրա: Նույնիսկ Խորհրդային բանակը անհրաժեշտ պատրաստվածության բերվեց հնարավորության դեպքում Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար:

ԽՍՀՄ-ը հայկական տարածքների հարցը միջազգային ասպարեզում առաջին անգամ արծարծեց 1945թ. հուլիսի 17-ին Բեռլինի արվարձան Պոտսդամում բացված մեծ տերությունների ղեկավարների հերթական կոնֆերանսում: Անգլիայի ԱԳ նախարարը հայտնեց թուրքական կառավարության տազնապը Թուրքիայի արևելյան հողերը ԽՍՀՄ-ին վերադարձնելու մասին Մոսկվայի ձգտման առիթով: Բուն կոնֆերանսում ևս արծարծվեց հայկական տարածքների հարցը: ԽՍՀՄ ներկայացուցիչները՝ ԱԳ Ժողկոմ Մոլոտովը և Ստալինը առաջ էին քաշում 1921թ. Թուրքիայի կողմից Հայաստանից և Վրաստանից խլված Կարսի, Արդվինի և

Արդահանի շրջանները վերադարձնելու անհրաժեշտությունը, սակայն Անգլիան կտրականապես դեմ էր դրան: Իսկ ԱՄՆ նախագահ Ջարրի Տրումենը, հարցն արտաքուստ համարելով ԽՍՀՄ և Թուրքիայի գործը, իրականում բռնել էր Թուրքիային հովանավորելու ուղի: Հենց նրա պահանջով էլ հարցը հանվեց օրակարգից: Այդքանով սահմանափակվեց կոնֆերանսում հայկական տարածքների հարցի քննարկումը:

Մի քանի տարի անց Ու. Չերչիլը հայտարարեց, որ հայկական տարածքների պահանջը ոտնձգություն է Թուրքիայի ամբողջականության դեմ: Իսկ ԱՄՆ նախագահ Տրումենը նշեց, թե Թուրքիայի արևելյան սահմանները ԱՄՆ սահմաններն են: Այսպիսով, Թուրքիան հակախորհրդային պատմեշ դարձնելու նպատակով, անգլո-ամերիկյան կառավարողները ոտնահարում էին հայության արդարացի ձգտումները:

Հայկական տարածքների, ավելի ճիշտ Կարսի և Արդահանի հարցը ԽՍՀՄ կողմից հերթական անգամ բարձրացվեց 1945թ. սեպտեմբերին Լոնդոնում կայացած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների ԱԳ նախարարների խորհրդակցության ժամանակ, սակայն խորհրդակցությունն ավարտվեց անարդյունք, որովհետև Արևմուտքը որոշակիորեն որդեգրել էր Թուրքիային պաշտպանելու քաղաքական գիծ:

Հետագայում ԽՍՀՄ-ը ևս նահանջեց իր դիրքերից: 1953թ. մայիսի 30-ին ԽՍՀՄ կառավարությունը հայտարարեց, որ բարիդրացիական հարաբերությունները պահպանելու և խաղաղությունն ու անվտանգությունը ամրապնդելու համար Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հրաժարվում են Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից:

Ելնելով պատերազմից հետո հայության նկատմամբ ԽՍՀՄ ղեկավարության որոշակի բարյացակամ վերաբերմունքից՝ բարձրացվեց նաև Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու հարցը: ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գր. Հարությունյանը 1945թ. և 1947թ. երկու անգամ դիմեց Ստալինին՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղի 153.000 բնակչությունից 137.000-ը հայեր են, որ նրա տնտեսությունը համանման է Հայաստանի տնտեսությանը, որ կարելի էր փոխադարձ կերպով որակյալ կադրեր պատրաստել և դրանով իսկ զարկ տալ Հայաստանի և Ղարաբաղի զարգացմանը: Նա առա-

ջարկում էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանել և որպես Ղարաբաղի մարզ մտցնել Հայաստանի կազմի մեջ: Դրական լուծման հասնելու համար Գր. Հարությունյանը ներկայացրեց բոլոր փաստարկները, այդ թվում Ղարաբաղի ժողովրդի ցանկությունը: Սակայն հարցն այդպես էլ չլուծվեց:

Այս անգամ ևս հայկական հողերի հարցը մնաց չլուծված, քանի որ ոչ մի պետություն ցանկություն չունեի հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար հարաբերությունները փչացնել Թուրքիայի հետ:

73. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1945-1988 ԹԹ.

Թեև պատերազմի տարիներին Հայաստանի տնտեսությունը չէր ավերվել, այնուամենայնիվ այն վերակառուցման և վերականգնման անհրաժեշտություն էր զգում, որովհետև պատերազմի ժամանակ ամբողջովին հարմարեցվել էր ռազմական արտադրության պահանջներին: 1945թ. հուլիսին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման մասին: 1947թ. դրությամբ ավարտվեց տնտեսության վերակառուցումը: Հայաստանի արդյունաբերության զարգացման տեմպերը ամենաբարձրերից էր ԽՍՀՄ-ում:

Հայաստանի արդյունաբերությունը հետագա զարգացում ապրեց 1950-ական թթ.: Այն բնորոշվում էր ծանր արդյունաբերության՝ գունավոր մետաղների արտադրության, մետաղամշակման, մեքենաշինության, հատկապես քիմիական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության աճի բարձր տեմպերով: Հայաստանի արդյունաբերության միակողմանի զարգացումը՝ էներգատար և մետաղատար ուղղությունների և քիմիական արդյունաբերության զարգացումը ծանրացրեց հանրապետության բնապահպանական վիճակը, ստիպեց նոր հիդրոէլեկտրակայաններ հիմնել և անխնա օգտագործել Սևանի ջուրը: Դրա հետևանքով 1952թ. Սևանա լճի կղզին վերածվեց թերակղզու:

1976թ. Մեծամորում գործարկվեց հայկական ատոմակայանը: Խիտ բնակչություն ունեցող Արարատյան դաշտում, սեյսմիկ գոտում նրա կառուցումը հետագայում շատերի կողմից գնահատվեց սխալ: Այնուամենայնիվ, այն Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն:

1960-1970-ական թթ. Հայաստանում կառուցվեցին նոր քաղաքներ՝ Աբովյանը, Զարենգավանը, Քաջարանը, Ջերմուկը, վերակառուցվեցին Ալավերդին, Ղափանը, Արթիկը, Էջմիածինը և այլն:

Հետ պատերազմյան շրջանում աճեց Հայաստանի բնակչությունը: Դրան նպաստեց նաև 1946թ. սկսված հայրենադարձությունը: Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ հաղթանակը, ինչպես նաև հայկական պատմական տարածքները Թուրքիայից վերցնելու և Հայաստանին միաց-

նելու մասին ԽՍՀՄ ղեկավարության ցանկությունը խթանել էին սփյուռքահայության նոր հայրենադարձությունը:

1946թ. Լիբանանից, Սիրիայից, Իրանից, Հունաստանից և այլ երկրներից Հայաստան ներգաղթեցին 51.000 հայեր, 1947թ.՝ 35.000, 1948թ.՝ 10.000 հայեր: Հայրենադարձությունը շարունակվեց նաև հետագայում, սակայն բավական թույլ ձևով: 1950-ական թթ. Հայաստան ներգաղթեց 4.000, 1960-1970-ական թթ.՝ 32.000 հայ: 1980-ական թթ. վերջից և հատկապես 1990-ական թթ. սկզբներից, կապված Հայաստանում սոցիալ-տնտեսական անապահովության՝ կենսամակարդակի անկման, իշխանական կամայականությունների, կաշառակերության երևույթների խորացման հետ, հայրենադարձները, նրանց հարազատները և հարյուրհազարավոր տեղացիներ հեռացան հայրենիքից:

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին ծանր հարված հասցրեց 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած 9 բալլ ուժգնությամբ Սպիտակի երկրաշարժը: Այն ընդգրկեց հանրապետության տարածքի 40%-ը՝ 1.130.000 բնակչությամբ: Լրիվ կամ մասնակի ավերվեցին Սպիտակ, Լենինական, Կիրովական, Ստեփանավան քաղաքները և հարյուրից ավելի գյուղեր: Պաշտոնական տվյալներով զոհվեց 25.000 մարդ, 530.000-ը դարձավ անօթևան: Լրիվ կամ մասամբ ավերվեցին 230 արդյունաբերական ձեռնարկություններ և արտադրամասեր՝ 82.000 աշխատատեղով: Երկրաշարժի հետևանքով հանրապետությունում վնասվեց մոտ 9 մլն քառ. մետր բնակտարածություն, որը կազմում էր ընդհանուր բնակֆոնդի 17%-ը: Աղետը Հայաստանի տնտեսությանը ընդհանուր առմամբ հասցրեց 13 մլրդ ռուբլու վնաս:

Դրությունն անմխիթար, վայրիվերումներով լի էր հասարակական-քաղաքական կյանքում: Պատերազմից հետո բռնությունները ԽՍՀՄ-ում վերսկսվեցին: Հայաստանում 1945-1952թթ. շինծու մեղադրանքներով բռնադատվեց 2.946 մարդ: 1948թ. աքսորի կամ կրկին դատապարտման ենթակվեցին 1930-ական թթ. դատապարտվածները, որոնք նոր-նոր էին տուն վերադարձել: Հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ կառավարությունն իրականացրեց ամբողջ ժողովուրդների և բնակչության առանձին խմբերի արտաքսում իրենց հայրենի բնակավայրերից դեպի հեռավոր շրջաններ: Ինչպես ողջ

ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում պետական անվտանգության մարմինները կազմեցին անբարեհույս տարրերի՝ նախկին դաշնակցականների, հայ լեզեոնականների, գերիների և նրանց ընտանիքների անդամների, նախկինում բռնաճնշման ենթարկվածների ընտանիքների անդամների ցուցակներ: 1949թ. հունիսի 14-ի առավոտյան խիստ գաղտնի պայմաններում Հայաստանից Ալթայի երկրամաս անժամկետ աքսորվեց մոտ 14.000 մարդ: Արտաքսվածների մեջ կային նաև որոշ հայրենադարձ հայեր, սակայն նրանց թիվը մեծ չէր: Ստալինի մահից հետո վերանայվեց նաև 1949թ. աքսորվածների հարցը, նրանք արդարացվեցին և իրավունք ստացան վերադառնալ իրենց բնակավայրեր:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում նկատելի էին նաև դրական երևույթներ: Տարիներ շարունակ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունների կազմակերպումն արգելող խորհրդային վարչակարգը՝ 1945թ. արտոնեց կաթողիկոսական ընտրությունների կազմակերպումը: 1945թ. հունիսի 16-ին ս. Էջմիածնում գումարվեց Ազգային եկեղեցական ժողով, որին մասնակցում էին պատգամավորներ ԽՍՀՄ և արտասահմանյան թեմերից, օտարերկրյա հյուրեր: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ Զ Զորեքչյանը: Վերաբացվեցին մի շարք եկեղեցիներ և վանքեր: Եթե պատերազմի տարիներին գործում էր 4 եկեղեցի և 2 վանք, ապա 1945-1947թթ. 13 եկեղեցի և 4 վանք: 1955թ. սեպտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Ռումինիայի թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: 1955թ. հոկտեմբերի 2-ին Մայր տաճարում տեղի ունեցավ նորընտիր կաթողիկոս Վազգեն Ա-ի օծումը (1955-1994):

1970-ական թվականներից, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում սկսվեց տնտեսության և հասարակական կյանքի լճացում: Հետզհետե արմատավորվեցին կաշառակերությունը, պաշտոնյաների կողմից կատարվող անօրինականությունները: Հասարակական սեփականությունը դիտվում էր ոչ մեկին չպատկանող, որի հետևանքվ մեծ ծավալներ ընդունեց պետական ունեցվածքի թալանը: Ժողովուրդը կորցրեց հավատը իշխանությունների և պետական լրատվամիջոցների նկատմամբ: Այս ամենը ի վերջո ծանր ներքաղաքական ճգնաժամի հանգեցրեց ԽՍՀՄ-ին:

74. ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960-ԱՎԱՆ ԹԹ.

Մինչև 1960-ական թթ. Խորհրդային Միության մեջ արգելված էր խոսել Մեծ եղեռնի մասին: 1926թ. Հայ Առաքելական եկեղեցուն արգելվեց ապրիլի 24-ին նշել ցեղասպանության զոհերի հիշատակը: Դրությունը փոխվեց 1965թ., երբ Հայաստանում սկսվեց ազգային զարթոնքը: Դա կապված էր խրուշչովյան կառավարման տարիներին ԽՍՀՄ-ում ստեղծված հասարակական ազատության հետ: 1965թ. առաջին անգամ հայրենիքում նշվեց ցեղասպանության զոհերի հիշատակը: Դրան նախորդել էր Հայաստանի ղեկավարության, առաջին հերթին ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Յակով Ջարոբյանի տևական աշխատանքը: 1960թ. վերջին նշանակվելով առաջին քարտուղար՝ Յ. Ջարոբյանը ձեռնամուխ էր եղել խիստ որոշակի ազգային ծրագրերի իրագործմանը: 1961թ. նա ՀԿԿ ԿԿ քարոզչական բաժնում ստեղծեց Արտասահմանյան կապերի ենթաբաժին, որի առջև խնդիր դրեց զբաղվել Սփյուռքի հարցերով: 1964թ. մայիսին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն:

Արդեն 1961թ. Յ. Ջարոբյանը հետաքրքրվում էր եղեռնի 50-րդ տարեդարձի հարցերով: 1961թ. հունիսին ԽՄԿԿ ԿԿ ուղղված դիմումում Գրիգոր Զոհրապի 100-ամյակը նշելու առիթով Ջարոբյանը անդրադարձավ նաև 1915թ. ողբերգությանը: Նա շեշտում էր, որ 1915թ. հայկական կոտորածի օրերին հայ մտավորականության մյուս ներկայացուցիչների հետ Զոհրապը բանտարկվել և թուրքերի կողմից զազանաբար սպանվել է: Լույս տեսան մի շարք պատմագիտական աշխատություններ, որոնցում բացահայտվում էր Հայոց ցեղասպանությունը:

1964թ. հուլիսի 16-ին մի խումբ հայ մտավորականներ ՀԿԿ ԿԿ-ին նամակ գրեցին Եղեռնի 50-րդ տարին նշելու խնդրանքով և ներկայացրին 11 առաջարկություններ, այդ թվում հուշարձան կառուցելու մասին: 1965թ. ապրիլի 24-ին եղեռնի 50-րդ տարվա առիթով Երևանի Ալ. Սպենդիարյանի

անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքում առաջին անգամ կառավարական մակարդակով նշվեց եղեռնի տարելիցը: Նրան ներկա էր ՀԽՍՀ ողջ ղեկավարությունը, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը: Նույն օրը երևանում կայացավ համագգային ցույց, որը ԽՍՀՄ պատմության մեջ առաջին զանգվածային ելույթն էր: Մոտ 30-40.000 ցուցարարներ էին հավաքվել Լենինի (Հանրապետության) հրապարակում: Նրանց առաջ ելույթ ունեցավ Հայաստանի վարչապետ Ա. Քոչինյանը, որին ցուցարարները հանձնեցին իրենց պահանջագիրը: Երեկոյան ցուցարարները հավաքվեցին Օպերայի շենքի հրապարակում և իշխանություններից պահանջեցին դատապարտել հայոց եղեռնը, հասնել նրա միջազգային ճանաչմանը, պաշտպանել հայության պատմական իրավունքները: Ցուցարարներն իրենց ներկայացուցիչներին ուղարկեցին Օպերայի շենք՝ իմանալու այդ օրը Ա. Քոչինյանին հանձնված թղթերի ճակատագրի մասին: Նրանց, պատասխանելու փոխարեն, ծեծեցին: Այդ միջադեպն էլ պատճառ դարձավ, որ ցուցարարները քարկոծեն և ջարդեն Օպերայի շենքի ապակիները: Հաջորդ օրերին ցուցարարների արարքները վերին մակարդակով դատապարտվեցին, ցույցի մի շարք մասնակիցներ ձերբակալվեցին: Հայ մտավորականության մի շարք ներկայացուցիչներ՝ Սիլվա Կապուտիկյանը, Սևակ Արզումանյանը, Համո Սահյանը և այլն, հանդես եկան ձերբակալվածների պաշտպանությամբ:

1965թ. ապրիլի 24-ին Մայր Աթոռում Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը պատարագ մատուցեց, կատարվեց հոգեհանգիստ՝ նվիրված հայ նահատակների հիշատակին: 1965թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն Ա-ը Մայր Տաճարի հյուսիսային կողմում բացեց Եղեռնի նահատակների հուշարձանը: Հայաստանում տեղի ունեցան նաև բազմաթիվ այլ միջոցառումներ: Գրողների տանը կազմակերպվեց նահատակ գրողների հիշատակին նվիրված երեկո, որում խոսեցին Ստ. Զորյանը, Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը և այլն:

1967թ. Ծիծեռնակաբերդի բլրի վրա ավարտվեց 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի կառուցումը: 1960-ական թթ. ազգային գարթոնքի նշանակալի դրսևորումներից էր 1968թ. Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակի նշումը և նրան նվիրված հուշարձանի կառուցումը:

Եղեռնի 50-րդ տարվա միջոցառումների կազմակերպման մթնոլորտում աշխուժացան նաև Հայրենիք-Սփյուռք կապերը: Եթե 1964թ.՝ հիմնադրման պահին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն կապեր էր հաստատել սփյուռքահայ 620 կառույցների և գործիչների հետ, ապա 1965թ. մայիսին արդեն 900-ի հետ: Երևանում կազմակերպվեց մտավորականության հանդիպում սփյուռքահայ ուսանողության հետ, նշվեց Վահան Թեքեյանի մահվան 20-ամյակը:

ՀԿԿ ԿԿ-ն որոշեց 1965թ. կատարելագործման նպատակով Հայաստան հրավիրել 30 սփյուռքահայ ուսուցիչների, իսկ հանգստանալու նպատակով 60 սփյուռքահայ դպրոցականների: Այդուհետ այդ երևույթը դարձավ կանոնավոր: Դեռևս 1962թ. ՀԿԿ ԿԿ Բյուրոն որոշել էր երևանում սփյուռքահայ դպրոցների համար տպագրել դասագրքեր: 1965թ. դաստացավ առավել կազմակերպված բնույթ: 1965թ. հիմնադրվեց «Հայրենիքի ձայն» թերթը, որպես Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի պաշտոնաթերթ:

1965թ. Հայաստանի ղեկավարությունը ԽՍՀՄ ղեկավարությունից խնդրեց թույլատրել շարունակել հայրենադարձությունը: Հայաստանի կառավարությանն արտոնվեց 1965-1970թթ. կազմակերպել տարեկան 1.000 մարդու հայրենադարձություն:

Համազգային զարթոնքի պայմաններում դարձյալ բարձրացվեց Ղարաբաղի հարցը: Ղարաբաղի ավելի քան 40.000 բնակիչներ ստորագրություններ դրեցին Ղարաբաղը Հայաստանին միացնելու օգտին: Նույն հարցով հանդես եկան նաև Խորհրդային Հայաստանի 1.906 մտավորականներ: 1966թ. Հայաստանի ղեկավարությունը երկու անգամ Խորհրդային Միության ղեկավարության առաջ բարձրացրեց Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին միացնելու հարցը: Սակայն, Խորհրդային Միության որոշ ղեկավարների և Ադրբեջանի անբարյացակամության, վերջինիս նորանշանակ ղեկավար Հեյդար Ալիևի գաղափարական-քաղաքական և տնտեսական հակաքայլերի հետևանքով հարցն այս անգամ էլ չլուծվեց:

75. ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ: ԼՂՀ ՀՈԶԱԿՈՒՄԸ

1985թ. ԽՍՀՄ-ում հռչակված «վերակառուցման» և դեմոկրատացման կուրսը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայության կողմից ընկալվեց Հայաստանի հետ վերամիավորվելու իրական հնարավորություն: 1988թ. փետրվարի 14-ից Լեռնային Ղարաբաղում սկսվեցին համաժողովրդական հուժկու հանրահավաքներ՝ Հայաստանի հետ վերամիավորվելու նշանաբանով: 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց խնդրել Ադրբեջանի, Հայաստանի և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին, որպեսզի ԼՂԻՄ-ը միացվի Հայաստանին: Այդ արդարացի որոշումը թշնամաբար ընդունվեց թե՛ Ադրբեջանի և թե՛ Մոսկվայի կողմից: Այս որոշումն էլ սկիզբ դրեց հայ ազգային-ազատագրական պայքարի հերթական փուլին՝ ղարաբաղյան շարժմանը, որին վիճակված էր անցնել ծանր ու երկարատև ճանապարհ: 1988թ. փետրվարի 21-ից ամբողջ Հայաստանում ծավալվեցին 100.000-ոց հանրահավաքներ, որոնցում ժողովուրդն իր գորակցությունն էր հայտնում արցախահայությանը: Շարժման ղեկավարությունն իր վրա վերցրեց «Ղարաբաղ» կոմիտեն: Հայաստանի իշխանությունները ցուցաբերեցին անտարբերություն ժողովրդի ձգտումների նկատմամբ, չփորձեցին որևէ կերպ ազդել իրադարձությունների զարգացման վրա և կարճ ժամանակ անց հեղինակազրկվեցին:

ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի ղեկավարություններն առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղան ղարաբաղյան շարժման ճնշմանը: 1988թ. փետրվարի 22-ին Մոսկվայի գիտությամբ Ադդամից 10.000-ոց ադրբեջանական ամբոխը շարժվեց Ղարաբաղի Ասկերանի շրջանի հայկական գյուղերի վրա: Սակայն, տեսնելով հայ աշխարհագորայինների ամուր շարքերը, ստիպված հեռացավ: 1988թ. փետրվարի 27-29-ին ադրբեջանական իշխանությունները Սումգայիթ քաղաքում կազմակերպեցին հայ բնակչության ջարդ:

Հետզհետե խորանում էր հակահայկական քաղաքականությունը Ադրբեջանում, հայերին սպանում, թալանում էին ամբողջ Ադրբեջանում: Սումգայիթի ջարդերից հետո Ադրբե-

ջանում սկսվեց հայերի բռնի արտաքսում: Մինչև 1988թ. վերջը Ադրբեջանից արտաքսվեց մոտ 200.000 հայ: Միաժամանակ Ադրբեջանի իշխանությունները Հայաստանի իշխանությունների համաձայնությամբ և օգնությամբ իրականացրին այստեղ բնակվող ադրբեջանցիների կազմակերպված հեռացումը: Նրանց ոչ միայն թույլ տրվեց վաճառել իրենց տները, այլև հատկացվեցին փոխադրամիջոցներ Ադրբեջան հասնելու համար: Ղարաբաղյան շարժմանը ծանր հարված հասցրեց 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը:

Ազատագրական շարժման ուժերը միավորելու նպատակով 1989թ. նոյեմբերին ստեղծվեց Հայոց համազգային շարժում կազմակերպությունը, որի Վարչության նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

1989թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը, հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, ընդունեցին որոշում Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում էին Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիության իրավունքները:

1990թ. հունվարին Ադրբեջանի ժողովրդական ճակատը Բաքվում կազմակերպեց հայկական նոր ջարդ: ԽՍՀՄ իշխանությունները միջամտեցին միայն այն ժամանակ, երբ ժողովրդական ճակատը անցավ խորհրդային կարգերի տապալմանը: Դրանից հետո 100.000-ավոր հայեր, մի կերպ ազատվելով բռնություններից, հեռացան Ադրբեջանից:

Օգտվելով շրջափակված Արցախի և Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր կացությունից՝ Ադրբեջանը Թուրքիայի ակտիվ աջակցությամբ 1990թ. սկսեց ռազմական հարձակում Հայաստանի սահմանային շրջանների վրա: Հայ աշխարհագորայինները թշնամուն հասցրին ծանր հարվածներ: 1991թ. ապրիլի վերջին խորհրդային զորքերի օգնությամբ բռնի տեղահանվեցին Խանլարի շրջանի Գետաշեն և մյուս հայկական գյուղերը:

1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի ժողպատգամավորների միացյալ նստաշրջանը հռչակեց

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը, որպես անկախ պետություն: ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց Արթուր Սկրտչյանը:

1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում միջազգային դիտորդների ներկայությամբ անցկացվեց համաժողովրդական հանրաքվե, և ձայների բացարձակ մեծամասնությամբ բնակչությունը կողմ արտահայտվեց ԼՂՀ անկախությանը:

Ադրբեջանական ուժերի հարձակումը նոր թափով վերսկսվեց 1991թ. վերջից: Հայաստանի սահմանին և Արցախի ներսում ստեղծված ռազմական հենակետերից, ինչպես նաև օդուժի միջոցով հրթիռակոծվում էին Հայաստանի և հատկապես Արցախի բնակավայրերը:

Ադրբեջանական ռազմական հենակետերի ոչնչացումը դարձել էր առաջնահերթ խնդիր: Հայ ազատամարտիկները 1992թ. փետրվարին ուժգին հարձակմամբ ազատագրեցին Խոջալուն, որը թշնամու կարևոր հենակետերից էր: Արցախյան պատերազմի առանցքային իրադարձություններից է Շուշիի ազատագրումը: Այնտեղից երկու տարի թշնամին հրետակոծում և գնդակոծում էր Ստեփանակերտը, փակում այնտեղ տանող ճանապարհը: Հայկական ուժերը Կոմանդոսի՝ գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանի գլխավորությամբ 1992թ. մայիսի 9-ին ազատագրեցին Շուշին, որը արմատական բեկումն էր արցախյան պատերազմում: Ապա ազատագրվեց Լաչինը և Հայաստանի հետ ճանապարհը բացվեց, վերացվեց Արցախի շրջափակումը: Հայաստան-Ղարաբաղ ցամաքային կապի ապահովումը արմատական ազդեցություն ունեցավ Ղարաբաղյան ազատագրական պատերազմի հետագա ընթացքի վրա, հիմք հանդիսացավ հետագա տարածքային ձեռքբերումների համար: Շուշիի և Լաչինի ազատագրումը մեծ ոգևորություն առաջացրեց հայ ժողովրդի շրջանում, բարձրացրեց հայկական զինված ուժերի մարտական ոգին:

Հայկական ուժերի այդ մեծագույն հաղթանակներին միառժամանակ հաջորդեցին ցավալի պարտությունները: 1992թ. հունիսին անցնելով հարձակման ադրբեջանական զորքերը գրավեցին Շահումյանի շրջանը և Մարտակերտի շրջանի մեծ մասը: Դրա գլխավոր պատճառներից մեկը ներքաղաքական հակասությունների սրումն էր ԼՂՀ-ում, ինչպես նաև ԼՂՀ-ի և Հայաստանի ղեկավարությունների միջև: Վերա-

կազմակերպվելով՝ 1993թ. գարնանը հայկական ուժերն անցան լայնածավալ հակահարձակման և ազատագրեցին Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ադդամի, Քելբաջարի (Քարվաճառ), Ֆիզուլու, Կուբաթլուի, Ջաբրաիլի և Ջանգեղանի շրջանները:

1993թ. դեկտեմբերին դարաբաղյան ռազմաճակատի ողջ երկարությամբ թշնամին դարձյալ անցավ հարձակման: Ադրբեջանական բանակը զինված էր թուրքական, ամերիկյան և այլ երկրների նորագույն տեխնիկայով, ռուսական բանակից ձեռք բերված տանկերով: Ադրբեջանական բանակին օգնում էին թուրքական ռազմական մասնագետներ, հազարավոր աֆղան մոջահիդներ և այլ երկրների վարձկաններ: Թեև թշնամու ուժերը մի քանի անգամ գերազանցում էին՝ հայկական ուժերը ջախջախիչ հարված հասցրին նրան և ստիպեցին հրաժարվել դարաբաղյան հարցը ռազմական ճանապարհով լուծելու մտքից: Միայն մեկ ամսվա ընթացքում ոչնչացվեց ավելի քան 4.000 թշնամական զինվոր:

1994թ. մայիսի 12-ին Ռուսաստանի միջնորդությամբ և ԵԱՀԿ Մինսկի խմբի մասնակցությամբ կնքվեց զինադադար: Այսպիսով՝ մոտ վեց տարի տևած պայքարն ավարտվեց հայ ժողովրդի փառավոր հաղթանակով: Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ մեր ժողովուրդը կարող է հաղթել նույնիսկ թվապես մի քանի անգամ գերազանցող թշնամուն, եթե լինի միասնական և հույսը դնի իր բազկի վրա:

Միայն ժամանակի հարց է Ադրբեջանին մնացած Շահումյանի, Նախիջևանի և հայկական այլ տարածքների վերադարձը մայր հայրենիքին:

76. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ

1985թ. հռչակված «վերակառուցման» քաղաքականությունը և կիսատ-պռատ բարեփոխումներն ավելի խորացրին ԽՍՀՄ-ում տիրող սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը: Օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ազգային հանրապետություններն աստիճանաբար բռնեցին անկախացման ուղի: Հա-

յաստանում այդ գործընթացը սկսվեց դարաբաղյան շարժման հիմքի վրա, 1989թ. կեսերից:

Այսպիսի իրավիճակում, 1990թ. մայիսի 20-ին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններ, որում հիմնական տեղերը գրեթե հավասարապես զբաղեցրին ՀՀԸ-ն և ՀԿԿ-ն (Հայաստանի կոմունիստական կուսակցություն): Օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը: Դրանով դրվեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը, իսկ Ղարաբաղի հարցը թևակոխեց նոր փուլ: Այն Հայաստանի անկախության գործընթացի սկիզբն ավետող առաջին իրավական փաստաթուղթն էր, որը նախանշեց նրա քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման ուղիները: Նկատենք, որ թեև դեռևս Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր և չունեի իրական անկախություն, սակայն այս ժամանակ դրվեցին Երրորդ հանրապետության հիմքերը:

Այդ փաստաթղթով ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի ժողովրդի անունից հանդես գալու բացառիկ իրավունքը վերապահվեց ՀՀ Գերագույն խորհրդին: Ընդունվեցին նոր պետականության խորհրդանիշները՝ դրոշը և զինանշանը, որոնք առաջին հանրապետության խորհրդանիշներն էին: Հռչակվեց հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը հաստատված չէր Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում: Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին Հայ Առաքելական Եկեղեցու իրավունքները: Հռչակագրում հատուկ կետ մտցվեց հայոց ցեղասպանության մասին, թեև Լևոն Տեր-Պետրոսյանը դեմ էր դրան: Հռչակագրի պատմական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ այն հիմք հանդիսացավ ազգային օրենսդրության և ՀՀ նոր սահմանադրության համար:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու

հարցով: Բնակչության ճնշող մեծամասնությունը, այսինքն՝ 2 մլն 43 հազար մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94,39%-ը), «այո» ասաց անկախությամբ: Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991թ. սեպտեմբերի 23-ին հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:

1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական ընտրություններ: Ձայների ճնշող մեծամասնությամբ ՀՀ առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

1991թ. դեկտեմբերի 8-ին, Մինսկի մոտակայքում գտնվող Բելովեժսկ բնակավայրում Ռուսաստանի, Ռկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին: Միաժամանակ ազդարարվեց միջազգային նոր սուբյեկտի՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին:

1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Աթայում նախկին խորհրդային 11 հանրապետություններ՝ Ռուսաստանը, Ռկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Ռժբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Սոլդովան, Ադրբեջանը և Հայաստանը ստորագրեցին ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիր: Դրանով ավարտվեց ԽՍՀՄ փլուզման գործընթացը: ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ Մ. Գորբաչովը ստիպված հրաժարական տվեց: Հայաստանը դարձավ անկախ պետություն:

1991թ. վերջերից Հայաստանի Հանրապետությունը սկսեց միջազգային ճանաչում գտնել: 1991թ. դեկտեմբերին ՀՀ-ն ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1991թ. դեկտեմբերին ՀՀ անկախությունը ճանաչեց նաև Թուրքիան, որը, սակայն, հրաժարվեց հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ դրա համար առաջադրելով մի շարք անընդունելի նախապայմաններ: 1992թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ, այնուհետև անդամագրվեց միջազգային մի շարք կազմակերպությունների:

77. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասում: Այն կտրվել էր նախկին տնտեսական համակարգի բոլոր օղակներից: Բացի այդ, փակվեց Ադրբեյջանից եկող գազամուղը, ընդհատվեց երկաթուղային կապը: Սկսվեց Հայաստանի էներգետիկ շրջափակումը, որը գնալով ավելի մեծ չափեր ընդունեց: Կանգնեցին հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները, ուսումնական հաստատություններում դադարեցին պարապմունքները, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ:

Նորանկախ երկրի համար առաջնահերթ նշանակություն ուներ ազգային պետության անվտանգության պահպանումը: Դրա երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը: 1992թ. հունվարի 28-ին ստեղծվեց ՀՀ Պաշտպանության նախարարությունը, որի առաջին նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: 1992-1993թթ. ստեղծվեց լավ կազմակերպված և մարտունակ բանակ: Հայկական զինված ուժերի կանոնավոր զորամիավորումները, զորատեսակները, սպայական կազմը և սպառազինությունը ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի հիմքի վրա, աճեց բանակի թվաքանակը: Մեծ ուշադրություն դարձվեց բանակի մարտական պատրաստականության կատարելագործմանը:

Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության համար:

Անկախության ուղին բռնած Հայաստանում սկսվել էր պետական շինարարության գործընթացը: Ելնելով «Անկախության մասին» հռչակագրի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման մասին դրույթներից՝ ՀՀ Գերագույն խորհուրդը, պետության կայացման

գործընթացն արագացնելու նպատակով, 1991թ. հունիսին սահմանեց Հայաստանի նախագահի պաշտոնը՝ հրաժարվելով իր լիազորությունների մի մասից: 1991թ. օգոստոսին ընդունվեց «ՀՀ նախագահի մասին» օրենքը, որի համաձայն նախագահը գլխավորելու էր գործադիր իշխանությունը:

1991թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Նա վերընտրվեց 1996թ.:

1998թ. փետրվարին Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց: 1998թ. մարտի 16-ին անցկացված ՀՀ երրորդ նախագահական ընտրությունների արդյունքում նախագահ դարձավ Ռ. Քոչարյանը, որը 2003թ. երկրորդ անգամ ընտրվեց ՀՀ նախագահ: 2008թ. հերթական նախագահական ընտրություններում նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը:

ՀՀ պետական կյանքի կարևոր իրադարձություններից էր 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով պետության հիմնական օրենքի՝ Սահմանադրության ընդունումը: Այն կոչված էր դնել ամբողջատիրական և ավտորիտար համակարգից դեպի ժողովրդավարական պետության անցնելու հիմքերը: Դրանով երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվեց Ազգային ժողով: 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրության մեջ կատարվեցին փոփոխություններ:

1995թ. դեկտեմբերին 4-ին ՀՀ-ում կատարվեցին վարչատարածքային փոփոխություններ: Երկիրը բաժանվեց մարզերի և համայնքների: Ստեղծվեցին 10 մարզեր՝ Արագածոտն, Շիրակ, Սյունիք, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Արարատ, Արմավիր, Վայոց ձոր, Տավուշ: Մարզի կարգավիճակ տրվեց Երևանին, որով մարզերի թիվը դարձավ 11:

1999թ. ավարտվեց ՀՀ սահմանադրությամբ նախատեսված նոր դատական համակարգի կազմավորումը: Ստեղծվեցին առաջին ատյանի, վերաքննիչ-վճռաբեկ, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, զինվորական և այլ դատարաններ: Կատարվեցին քայլեր դատախազական համակարգի վերափոխման ուղղությամբ:

Ցավալիորեն անկախացումից հետո Հայաստանի տնտեսական կյանքը վայրէջք ապրեց: Դրա պատճառներից էին ԽՍՀՄ փլուզումը, 1988թ. Սպիտակի երկրաշարժը, Հայաստանի շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից:

Սակայն այն ուներ նաև ներքին պատճառներ: Անկազմակերպ և վայրենի ձևով, չնչին գներով իրականացվեց պետական ունեցվածքի, այդ թվում արդյունաբերության սեփականաշնորհում: Սեփականաշնորհվող ձեռնարկությունները պետության կողմից մատնվեցին անտարբերության, որի հետևանքով դրանք չգործարկվեցին, այլ դրանց գույքը վաճառքի հանվեց այլ երկրներ: Դա հանգեցրեց արդյունաբերության փոշիացմանը, պետական ունեցվածքի կենտրոնացմանը մի խումբ մարդկանց ձեռքում: Դրա անմիջական հետևանքը եղավ համատարած գործազրկությունը, բնակչության սոցիալական դրության խիստ ծանրացումը:

Տնտեսության և բնակչության վրա ծանր ազդեցություն ունեցավ հողի սեփականաշնորհումը: Վերացվեցին կոլտնտեսությունները և հողը տրվեց շուրջ 320.000 գյուղացիական անհատական տնտեսությունների: Գյուղատնտեսական տեխնիկան սեփականաշնորհվեց և հայտնվեց մի խումբ մարդկանց ձեռքում, քայքայվեց ոռոգման համակարգը: Այդ ամենը հանգեցրեց գյուղատնտեսության անկմանը և գյուղական բնակչության արտագաղթի մեծացմանը դեպի քաղաք:

Գների չմտածված ազատականացումը նոր թշվառությունների մատնեց ժողովրդին: Մեկ տարվա ընթացքում՝ 1991թ. դեկտեմբերից մինչև 1992թ. դեկտեմբեր, գներն աճեցին մոտ 14 անգամ: 1993թ. նոյեմբերին շրջանառության մեջ դրվեց ազգային դրամը: Դա անհրաժեշտ քայլ էր անկախ պետության համար: Սակայն տնտեսական երաշխիքների բացակայության պայմաններում դրամն արագորեն արժեզրկվեց՝ էլ ավելի ծանրացնելով ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը: Դրա հետևանքով ավելի քան 1 մլն մարդ արտագաղթեց երկրից:

Վերջին տարիներին նկատվում է տնտեսության որոշակի վերելք, գործարկվել են մի շարք ձեռնարկություններ, բացվել են աշխատատեղեր, որի հետևանքով բնակչության սոցիալական դրությունը որոշակիորեն սկսել է բարելավվել:

Հանրապետության իշխանությունների հիմնական խնդիրն էր ղարաբաղյան պատերազմի դադարեցումը և շրջափակման վերացումը, որը հնարավորություն կտար բարելավել տնտեսական վիճակը: Այս նկատառումներով առաջնային պլան մղվեց ղարաբաղյան հակամարտության գոտում

երկարաժամկետ զինադադարի և խաղաղ բանակցությունների հարցը: Սակայն Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Ղարաբաղը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ: Միջազգային բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ ճկուն սկզբունքը. «Հայաստանը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողովրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»: Իսկ ԼՂՀ ղեկավարության դիրքորոշումը միանգամայն հստակ էր. այն բացառում էր որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին:

Սակայն, արտաքին ուժերի աճող քաղաքական ճնշումը ՀՀ իշխանություններին դրդեց գնալ դարաբաղյան հարցում հնարավոր զիջումների քննարկմանը: Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ենթարկվելով այդ ճնշմանը, փաստարկեց Ղարաբաղը «փուլ առ փուլ» Ադրբեջանի կազմ վերադարձնելու անհրաժեշտությունը: Հանուն Ղարաբաղի ազատության՝ անհուն զրկանքներ կրած ժողովուրդն ըմբոստացավ Ղարաբաղյան հարցում ցանկացած նահանջի դեմ: Արդյունքում 1998թ. փետրվարի 3-ին կատարվեց իշխանափոխություն: Ռ. Քոչարյանի իշխանության անցնելուց հետո սկսվեց ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը:

Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի իշխանությունները ձգտում էին պահպանել ռազմա-քաղաքական հավասարակշռությունը արևմտյան, հարավային և հյուսիսային երկրների տնտեսական ու քաղաքական շահերի միջև: ՀՀ-ն փորձում էր և փորձում է մասնակից դառնալ տարածաշրջանային տրանսպորտային տարանցիկ մայրուղիներին, երկիրը դուրս բերել հնարավոր մեկուսացումից: Այդ գործը զլուխ բերելու համար օգտագործվում են նաև Հայկական սփյուռքի հնարավորությունները:

ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը ԱՊՀ շրջանակներում հարաբերությունների խորացումն էր, քանզի այն ՀՀ համար ունի ռազմա-քաղաքական և անվտանգության ապահովման նշանակություն: Առաջնահերթ կարևորություն ունի Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացումը, որոնք ընդգրկել են ռազմա-քաղա-

քական, անվտանգության, տնտեսական, մշակութային ոլորտները: Ռուսաստանի հետ կնքվել են 100-ից ավելի պայմանագրեր ու համաձայնագրեր: Դրանցից կարևորներից է 1995թ. մարտին կնքված «ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիրը, որի համաձայն ՀՀ-ում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանը Հայաստանի զինված ուժերի հետ համատեղ ապահովում է ՀՀ անվտանգությունը նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանում: Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Ռեգենստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի հետ: Վերջինս Հայաստանին գազի գլխավոր մատակարարներից է:

Հայաստանի համար կարևորություն ունեն Վրաստանի հետ հարաբերությունները: Դրանք արտաքուստ բարեկամական են, սակայն ներքուստ կա որոշակի լարվածություն: Պատճառը Վրաստանում հայկական մշակութային հուշարձանների նկատմամբ կատարվող ոտնձգություններն են, Ջավախքի նկատմամբ վրացական իշխանությունների անբարյացակամ քաղաքականությունը և այլն:

Բարեկամական հարաբերություններ են հաստատվել Իրանի հետ: Երկու երկրների միջև ստորագրվեցին տնտեսության, մշակույթի, տրանսպորտային հաղորդակցության մասին համաձայնագրեր: Հատկապես կարևոր էր 1997թ. Իրան-Հայաստան գազամուղի կառուցման մասին պայմանագրի ստորագրումը: Գազամուղի պաշտոնական բացումը կատարվեց 2007թ. մարտին:

ՀՀ-ն ջանքեր գործադրեց և շարունակում է գործադրել Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար, սակայն Թուրքիան առաջադրում է անընդունելի նախապայմաններ. հրաժարվել Ցեղասպանության հիշատակումից և պահանջատիրությունից, ճանաչել Ադրբեջանի գերակայությունը Ղարաբաղի նկատմամբ:

ՀՀ-ն լավ հարաբերություններ հաստատեց ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Կանադայի, Արգենտինայի, Ռեուզվայի, Չինաստանի և այլ երկրների հետ: Այդ հարաբերությունները ընդգրկում են տարբեր ոլորտներ: Հայաստանն ԱՄՆ-ից ստացել է մոտ մեկ մլրդ դոլարի «մարդասիրական օգնություն»:

1998թ. ի վեր ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը:

78. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՔԸ 1920-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատմական անբարենպաստ պայմանների բերումով հայերը ստիպված են եղել անընդհատ արտագաղթել սեփական հայրենիքից: Դարերի ընթացքում ձևավորվել է հայկական սփյուռքը: Ժամանակակից սփյուռքահայ համայնքները մեծապես համալրվել են Հայոց մեծ եղեռնի պատճառով Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի տարբեր վայրերից տեղահանվածների հաշվին:

1920-ական թվականներին սփյուռքահայության թիվը հասնում էր մոտ մեկ միլիոնի: Նրանք հիմնականում տեղաբաշխված էին Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Եգիպտոսում, Բուլղարիայում, Հունաստանում, Ռումինիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Վրաստանում, Ռուսաստանում: Հայության ստվար զանգված էր պահպանվել Կ.Պոլսում:

Սկզբնական շրջանում սփյուռքահայերն ապրում էին դժվարին պայմաններում: Առավելապես ծանր էր Եվրոպայում և ԱՄՆ-ում հաստատվածների վիճակը: Ջրկված լինելով քաղաքական և սոցիալական իրավունքներից, ինչպես նաև չունենալով համապատասխան մասնագիտական որակավորում և լեզվի իմացություն, գերազանցապես երկրագործ և արհեստավոր ներգաղթողները ստիպված են եղել կատարել ծանր և ցածր վարձատրվող աշխատանքներ:

Մերձավոր Արևելքում հաստատված հայերը հայտնվել էին համեմատաբար ավելի լավ վիճակում: Այդ երկրներում հայկական համայնքների հնուց ի վեր գոյության ունեին, ինչպես նաև այստեղի սոցիալ-տնտեսական ցածր զարգացածության հանգամանքը, հնարավորություն տվեց ներգաղթող հայերին արագորեն հարմարվելու: Սակայն ընդհանուր առմամբ տասնամյակներ են պահանջվել, որ սփյուռքահայերի նոր սերունդները կարողանան կրթություն ստանալ, ինքնահաստատվել և հաստատուն տեղ ունենալ իրենց ապրած երկրների տնտեսական, հասարակական, մշակութային կյանքում և այլ ոլորտներում:

Բացի կյանքի դաժան սոցիալ-տնտեսական խնդրից, սփյուռքահայերը կանգնեցին նաև իրենց ազգային նկարագիրը պահպանելու հրամայականի առջև: Իրենց հաստատված երկրներում սփյուռքահայերը ստեղծում են մշակութային, կրթական հաստատություններ: Բացվեցին դպրոցներ, թերթեր: Գրեթե բոլոր համայնքներում հիմնվեցին հայկական եկեղեցիներ: Եկեղեցին ազգապահպանման, միասնական լինելու առումով կարևոր դեր է կատարել: Կրթամշակութային հաստատություններից առավել արդյունավետ գործեց 1936 թ. Բեյրութում ստեղծված Համազգային հայ կրթամշակութային միությունը:

Սփյուռքահայ գաղութներում իրենց գործունեությունը շարունակեցին հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Քաղաքական կուսակցություններից առավելը ազդեցիկը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն էր, որը քննադատական վերաբերմունք ուներ խորհրդային վարչակարգի նկատմամբ: Սփյուռքում գործել մյուս երկու՝ Ռամկավար-ազատական և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունները համեմատաբար ավելի լոյալ էին վերաբերվում խորհրդային վարչակարգին:

Հասարակական կազմակերպություններից առավել մեծ հեղինակություն ուներ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Ակտիվ էին նաև Հայ օգնության միությունը, Հայ օգնության խաչ բարեգործական կազմակերպությունները:

Խորհրդային Հայաստանում սփյուռքի հետ կապեր հաստատելու և զարգացնելու համար 1921 թ. ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն, որի առաջին նախագահը Հովհաննես Թումանյանն էր: Հայաստանի օգնության կոմիտեն իր մասնաճյուղերն ստեղծեց սփյուռքահայ տարբեր համայնքներում:

Սփյուռքահայ համայնքների ձևավորման հենց սկզբից Հայաստանի առաջին Հանրապետության, ապա նաև Խորհրդային Հայաստանի կառավարությունները կարևոր խնդիր են համարել հայրենադարձության կազմակերպումը: 1919-1920 թթ. Հայաստանի կառավարությունը կազմակերպել է Ադրբեջանի Շամախի, Նուխի, Արեշ և այլ գավառների հայության տեղափոխումը Հայաստան: Այս առաջին կազմա-

կերպված հայրենադարձության շնորհիվ Հայաստան տեղափոխվեց շուրջ 20.000 հայ:

Հայկական հարցի լուծման տապալունից և գաղթական հայությանը Արևմտյան Հայաստանում կրկին տեղավորելու հույսերը կորցնելուց հետո առավել կարևորվեց հայրենադարձության խնդիրը: 1921-1936 թթ. Խորհրդային Հայաստանի կառավարությունը կազմակերպեց մոտ 42.000 հայերի հայրենադարձությունը Միջագետքից, Իրանից, Սիրիայից, Թուրքիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Բուլղարիայից: Հայրենադարձները բնակեցվում էին նորաստեղծ բնակավայրերում, որոնք անվանակոչվում էին Արևմտյան Հայաստանի քաղաքների և երկրամասերի անունով՝ Նոր Կիլիկիա, Նոր Խաբերդ, Նոր Մալաթիա, Նոր Արաբկիր, Նոր Բուքարիա:

Սփյուռքահայությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին ակտիվ մասնակցություն ունեցավ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում: Արտասահմանի հայերը դրականորեն արձագանքեցին ֆաշիզմի դեմ համախմբվելու Խորհրդային Հայաստանի ականավոր մտավորականության կոչին: Սփյուռքում հավաքված միջոցներով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարայունը, որը 1944թ. ուղարկվեց ռազմաճակատ: Սփյուռքահայությունը ակտիվ մասնակցություն ունեցավ նաև եվրոպական երկրներում կազմակերպված Դիմադրական շարժմանը: Ֆրանսիայում կազմավորված բազմազգ ջոկատը բանաստեղծ Միսաք Մանուշյանի գլխավորությամբ զգալի վնասներ հասցրեց ֆաշիստներին: Հետմահու (1944 թ. փետրվարին Մ. Մանուշյանին ֆաշիստները մահապատժի ենթարկեցին) նրան տրվել է Ֆրանսիայի ազգային հերոսի կոչում:

Սփյուռքահայության կյանքը էական փոփոխությունների ենթարկվեց Երկրորդ աշխարհամարտից հետո: Արդեն պատերազմի վերջին շրջանում Խորհրդային Հայաստանում ստեղծվեց Արտասահմանյան երկերների հետ մշակութային կապի կոմիտեն, որի գործունեության հիմնական նպատակը հայրենիքի հետ սփյուռքահայերի կապերի ընդլայնումն ու ամրապնդումն էր:

1946-1948 թթ. Խորհրդային Հայաստանը կազմակերպեց սփյուռքահայերի ևս մեկ լայնածավալ հայրենադարձություն, որի ընթացքում Լիբանանից, Սիրիայից, Իրանից,

Հունաստանից և այլ երկրներից Հայաստանի վերադարձավ մոտ 90.000 հայ:

Սփյուռքահայերը վերադառնում էին ոչ միայն Հայաստան, այլև՝ քաղաքական իրերի բերումով, մի երկրից տեղափոխվում էին մեկ ուրիշ երկիր: Այսպես՝ Եգիպտոսում, Լիբանանում, Կիպրոսում, Իրանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո բազմաթիվ հայեր այս երկրներից արտագաղթեցին Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայկական սփյուռքի աշխարհագրական սահմաններն ընդլայնվեցին:

Խորհրդային վարչակարգի փլուզումից հետո Հայաստանի և սփյուռքի միջև հարաբերությունները մոր որակ ստացան: Ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի հիմնական միջոցները կուտակվում են սփյուռքահայ բարերանների կողմից և ուղղվում Հայաստանի վերաշինությանը: Հայրենիքին օգտակար լինելու, սփյուռքահայ համայնքներն ուժեղացնելու և այլ նպատակներով պարբերաբար անցկացվում են տարբեր տիպի միջոցառումներ: 1999 թվականից կազմակերպվում են Հայաստան-Սփյուռք համաժողովներ: Պարբերաբար տեղի են ունենում նաև Հայաստան-Սփյուռք խորագրով առանձին համաժողովներ՝ մամուլի, կրթության, մշակույթի, գործարարության ոլորտների ներկայացուցիչների մասնակցությամբ: 2001թ.-ից անցկացվում են համահայկական մարզական խաղեր:

Սփյուռքի խնդիրների լուծմանն առավել աջակցելու, հայրենադարձությանը կազմակերպված բնույթ հաղորդելու, ինչպես նաև սփյուռքի ներուժը հանուն Հայաստանի զարգացման հնարավորինս արդյունավետ օգտագործելու նպատակով 2008 թ. Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեց Սփյուռքի նախարարություն:

79. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայկական մշակույթը սկզբնավորվում է հազարամյակների խորքից, երբ Հայաստանում ստեղծվում են մշակութային առաջին արժեքները: Հնագույն մշակույթը

հեթանոսական ժամանակաշրջանում է զարգացել և գոյատևել է մինչև Հայաստանում քրիստոնեության ընդունումը:

Հնագույն մշակույթի տարրերից ամենահինը ժայռապատկերներն ու ժայռագրություններն են, որոնցից հայտնաբերվել են Արագածի լանջին, Գեղամա և Սյունյաց լեռներում, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում: Ժայռապատկերների միջոցով մենք պատկերացում ենք ստանում մեր նախնիների կյանքի, կենցաղի, զբաղմունքների, աշխատանքային գործունեության, տիեզերագիտական պատկերացումների մասին և այլն: Ք. ա. III հազարամյակից. սկսած ժայռապատկերներում ի հայտ են գալիս ժայռագրությունները կամ պատկերագրերը: Գիտնականների մի մասի կարծիքով այդ պատկերագրերն օգտագործվել են մաշտոցյան գրի ժամանակ:

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից ունեցել է իր կրոնական պատկերացումները և հավատքը: Դեռևս հնագույն ժամանակներից տարածված են եղել երկնային լուսատուների, առանձին ցեղերի մոտ տարածված տոտեմների պաշտամունքները: Տարածված է եղել նաև սրբազան «կենաց ծառերի» պաշտամունքը:

Հայ ժողովրդի կազմավորմանը զուգընթաց ձևավորվել է հայկական հնագույն կրոնական պանթեոնը (դիցարանը), որում, ըստ երևույթին, տեղ են գտել ժողովրդի համար պաշտելի դարձած առաջնորդները: Հին պանթեոնի գլխավոր աստվածը եղել է Հայկը, որը համարվում է մեր նահապետը: Ըստ ավանդության մեր ժողովուրդը հայ անունը ստացել է նրա անունից: Հին պանթեոնի աստվածներից էին նաև արիեստների և արվեստների հովանավոր Տորքը, բնության աստված Արա Գեղեցիկը, ջրի աստված Ծովինարը և այլն:

Արարատյան թագավորությունն ունեցել է զարգացած և ինքնատիպ մշակույթ, որի մասին մենք պատկերացում ենք կազմում նրա թագավորների թողած ավելի քան 600 սեպագիր արձանագրությունների միջոցով:

Վանի թագավորության մեջ պաշտում էին 79 աստվածներ, որոնց անունները Իշպուհնի և Մենուա թագավորները արձանագրել են Վանի մոտ՝ «Միերի դուռ» կոչվող ժայռի վրա: Հետագայում ավելացել են ևս երեք աստվածներ: Գլխավորը տիեզերքի աստված Խալդին էր, որի տաճարը գտնվում էր

Մուսասիրում: Նա պատկերվում էր առյուծի վրա կանգնած մարդու կերպարանքով: Նրա կինը Արուբանի աստվածուհին էր: Երկրորդը պատերազմի ու տարերքի աստված Թեյշեբան էր: Տաճարը Կումենու քաղաքում էր, կինն էր Խուբա աստվածուհին: Երրորդը արևի աստված Շիվինին էր, որի տաճարը Տուշպայում էր, կինն էր մայրաքաղաքի հովանավոր աստվածուհի Տուշպուեան:

Այստեղ բարձր զարգացման էին հասել քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, ջրանցքաշինությունը և տնտեսության ու մշակույթի այլ ճյուղեր: Դրա վառ վկայություններից է Էրեբունի ամրոցը, որն ունեցել է եռանկյունաձև միջնաբերդ՝ 15-20 մ բարձրությամբ և մոտ 3 մ լայնությամբ: Այն ունեցել է պալատական համալիր՝ իր աշխարհիկ և հոգևոր շենքերով, թագավորական սյունազարդ, հանդիսավոր ընդունելության հրաշալի դահլիճ, Խալդ աստծուն նվիրված տաճար, ցորենի խոշոր պահեստ, գինու մառան և այլն:

Ճարտարապետական բարձր մակարդակով և առանձնահատկություններով հատկապես աչքի է ընկել Մուսասիրում գտնվող Խալդի աստծո տաճարը: Նրա մասին մենք պատկերացում ենք կազմում Դուր Շարուկինի պալատի դահլիճներից մեկում Սարգոն II-ի հրամանով քանդակված Մուսասիրի տաճարի գրավման տեսարանից, որի նկարն է միայն պահպանվել: Այն եղել է սյունազարդ: Քանդակը, որը գտնվել էր 1840-ական թթ., Ֆրանսիա տեղափոխելիս խորտակվել է Տիգրիս գետում: Հետազոտողները այն համարում են հունական դասական ճարտարապետության նախատիպերից մեկը:

Կառուցված ջրանցքներից հատկապես հռչակավոր է Մենուայի կառուցած 72 կմ երկարությամբ ջրանցքը Վանում, որը հայտնի է Շամիրամի ջրանցք անունով և գործում է առ այսօր: Բավական է նշել, որ ջուրը տեղ տեղ անցնում է մոտ 20 մ բարձրություն ունեցող անշաղախ պատերի վրայով, որոշ տեղերում՝ փորված ժայռերի միջով:

Երվանդունիների օրոք ձևավորվում է հայկական կրոնական նոր պանթեոնը, որն իր վրա կրում էր պարսկական ազդեցությունը: Նոր պանթեոնի գերագույն աստվածն էր

Արամազդը, որը բոլոր աստվածների հայրն էր, երկնքի և երկրի արարիչը:

Հայերի մոտ առանձնապես մեծ տարածում է ունեցել մայրության և պտղաբերության աստվածուհի Անահիտի պաշտամունքը: Անահիտը եղել է Հայոց աշխարհի և Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր աստվածուհին:

Քաջության, հերոսության, ռազմի և ամպրոպի աստվածն էր Վահագնը: Սիրո և գեղեցկության աստվածուհին էր Աստղիկը: Նա կապված է եղել նաև ջրի պաշտամունքի հետ և նրան էր նվիրված Վարդավառի տոնը: Արևի աստվածն էր Միհրը, իսկ դպրության աստվածը՝ Տիրը: Նանեն հանդիսանում էր ողջախոհության և ընտանիքի հովանավոր դիցուհին: Ինքնատիպ աստվածներ էին Ամանորը՝ նոր տարվա աստվածը և Վանատուրը՝ հյուրընկալության աստվածը:

Ք.ա. 3-րդ դարից Հայաստանում սկսում է տարածվել հելլենիստական մշակույթը, որը ձևավորվել էր Արևելքի ժողովուրդների և հունական մշակույթի շփման միջոցով: Հելլենիստական մշակույթը բարերար ազդեցություն ունեցավ հայկական մշակույթի վրա:

Հայաստանում, ինչպես ժամանակի այլ երկրներում, պետական գրագրությունները կատարվել են հիմնականում արամեերենը և հունարենը: Որոշ գիտնականների կողմից առաջ է քաշվում կարծիք, որ գոյություն է ունեցել նաև հայկական մեհենական գիր:

Նախաքրիստոնեական Հայաստանում ստեղծվել են նաև գրական և պատմական երկեր: Առաջին հայ հեղինակը եղել է Արտաշես I-ի որդի Վրույրը, որի մասին մեզ տեղեկություններ է հայտնում Պատմահայր Մովսես Խորենացին: Տեղեկություններ են պահպանվել նաև Ք.ա. 1-ին դարի պատմագիրներից Ողյունյա քրմի մասին, որը գրել է «Մեհենական պատմությունը» աշխատությունը, որը, ցավիք, մեզ չի հասել: Տիգրան Մեծի ժամանակ Հայաստանում են ապրել և ստեղծագործել հույն նշանավոր պատմագիր և հռետոր Ամֆիկրատես Աթենացին և Մետրոդորոս Սկեպսացին:

Ասորի պատմագիր և փիլիսոփա Մար Աբաս Մծուրնացին հայոց Վաղարշ II արքայի հանձնարարությամբ գրում է Հայաստանի պատմությունը: Այս աշխատությունը ևս մեզ չի

հասել, սակայն դրանից մեծապես օգտվել է Մովսես Խորենացին իր «Հայոց պատմությունը» շարադրելիս:

Իր ժամանակի զարգացած գործիչներից էր հայոց Արտավազդ II թագավորը, որը պատմիչների վկայությամբ գրել է ողբերգություններ, ճառեր և պատմական աշխատություններ:

Հայաստանում որոշակի տարածում է ունեցել նաև թատրոնը: Թատերական ներկայացումներ հիմնականում բեմադրվել են մեծ քաղաքների՝ Արտաշատի, Տիգրանակերտի թատրոններում, արքայական պալատներում, իսկ հասարակ ժողովրդի շրջանում տարածված էին գուսանների կողմից կազմակերպվող ելույթները, որտեղ հաճախ հանդես էին գալիս դերասանուհի-պարուհիները, որոնք կոչվում էին «վարձակներ»:

Մշակույթի զարգացած բնագավառներից էր հայկական հնագույն տոմարը, որը եղել է արեգակնային: Հին հայերի մոտ տարին բաժանված է եղել 12 երեսուներորդ ամիսների և մեկ կարճատև ամսի, որը կոչվել է Ավելյաց և ունեցել է հինգ օր: Յուրաքանչյուր ամիս, ամսվա օր և անգամ օրվա ժամերը ունեցել են իրենց անվանումները: Նոր տարվա սկիզբը համարվել է Նավասարդ ամսի 1-ը (օգոստոսի 11-ը): Ըստ Ղևոնդ Ալիշանի Ք.ա. 2492թ. հենց այդ օրն է Հայկ նահապետը նետահարել Բելին:

Հելլենիստական ժամանակաշրջանում բարձր զարգացման է հասել նաև ճարտարապետությունը և քանդակագործությունը: Կառուցվել են տասնյակ քաղաքներ, որոնց մասին հիացմունքով են խոսել անգամ օտարները: Սակայն դրանցից ամբողջական տեսքով գրեթե ոչինչ չի պահպանվել: Միակ երջանիկ բացառությունը Ք.ա. 3-րդ դարում կառուցված, 1-ին դարում վերակառուցված Գառնիի թագավորական ամրոցն է, որը կիսականգուն վիճակով հասել է մեզ: Հայկական հնագույն ճարտարապետության զարդերից է Տրդատ I-ի օրոք կառուցված Գառնիի հեթանոսական սյունազարդ տաճարը: Հետագայում Գառնիում կառուցվել է պալատական բաղնիքի շենքը: Այն իր 5 սենյակներով և բաժանմունքներով, տաքացման համակարգով հրաշալի կառույց է, որի հատակին կա նաև գունավոր խճանկար:

Հնագույն մշակույթի բնագավառներից էր ժողովրդական բանահյուսությունը, որից մեզ տեղեկություններ են հասել միջնադարյան մեր պատմիչների՝ Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Գրիգոր Մագիստրոսի և այլոց շնորհիվ: Ժողովրդական բանահյուսության թեման եղել է պատմական իրական կյանքը, նախնիների հերոսական գործերը և այլն: Մեզ են հասել «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», Վահագնի և այլ հերոսների մասին առասպելներ կամ գրույցներ:

80. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 5-8-ՐԴ դԱՐԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր պատմության «Ոսկե դարը»: Հայոց «Ոսկեդարը» հանդիսացավ 5-րդ դարը, որն ամենից առաջ պայմանավորված էր հայոց գրերի ստեղծմամբ: Հայոց այբուբենը հանդիսացավ հայ ժողովրդի մշակութային կյանքի ամենախոշոր իրադարձությունը և պաշտպանական հզոր վահան հանդիսացավ օտարերկրյա նվաճողների վարած քաղաքականության դեմ: Հայոց գրերի առաջացումը պատահականություն չէր և այն, պետության բացակայության պայմաններում, հայապահպանման կարևոր դեր էր ունենալու աշխարհասփյուռ ողջ հայության համար:

Հայոց գրերը ստեղծվել են 405թ. Մեսրոպ Մաշտոցի (361-440 թթ.) կողմից, որը Տարոն գավառի Հացեկաց գյուղից էր: Մաշտոցի և հայոց գրերի ստեղծման մասին մեզ մանրամասն տեղեկություններ է հայտնում Մաշտոցի աշակերտ Կորյունը իր «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ: Այդ ժամանակ Հայաստանում կրթությունը հունարեն էր և ասորերեն, եկեղեցական արարողակարգը կատարվում էր ասորերեն: Մաշտոցը Տարոնում ստանում է կրթություն, այնուհետև Վաղարշապատի արքունիքում անցնում է ծառայության իբրև զինվոր և գրագիր: Հետո նա դառնում է հոգևորական և մեկնում Գողթան գավառ քարոզելու: Այստեղ նա մայրենի լեզվով գրքեր չլինելու պատճառով դժվարությունների է հանդիպում և այդ ժամանակ էլ հղանում է ստեղծել հայոց գրեր: Նա այդ մտադրությամբ Վաղարշապատում ներկայա-

նում է կաթողիկոս Սահակ Պարթևին և Վռամշապուհ թագավորին: Նրանք տալիս են իրենց հավանությունը:

Վաղարշապատում Մաշտոցին հայտնում են, որ Դանիել Ասորի եպիսկոպոսի մոտ կան հայկական նշանագրեր: Թագավորի կարգադրությամբ բերվում են այդ գրերը և Մաշտոցն ու Սահակը, հավաքելով մանուկներին, մոտ երկու տարի դասավանդում են այդ «դանիելյան» գրերը: Նրանք շուտով հասկանում են, որ այդ գրերը լիովին չեն արտահայտում հայերենի հնչյունային համակարգը և անհրաժեշտ է ստեղծել նոր, ավելի կատարյալ նշանագրեր: Այդ նպատակով Մաշտոցը մի քանի աշակերտների հետ մեկնում է Ժամանակի կրթական կենտրոնները՝ Ամիդ ու Եդեսիա: Եդեսիայում էլ Մաշտոցը ստեղծում է 36 տառերից բաղկացած հայոց այբուբենը, որից հետո վերադառնում է Վաղարշապատ: Մայրաքաղաքում նրան ընդունում են մեծ հանդիսություններով: Մաշտոցյան այս գիրը հայ հնագրության մեջ կոչվում է «բոլորածն երկաթագիր»:

Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը իրենց աշակերտներ Յովհան Եկեղացու և Յովսեփ Պաղնացու հետ իրականացնում են Աստվածաշնչի թարգմանությունը: Հայերեն գրված առաջին բառերն էին Սողոմոնի առակներից թարգմանված «ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարո» նախադասությունը: Թարգմանչական գործունեությունից բացի Մաշտոցը և Սահակ Պարթևը ձեռնամուխ են լինում գրերի տարածմանը և հայկական դպրոցների բացմանը: Առաջին վարդապետարանը ուսուցիչներ պատրաստելու համար հիմնվում է Վաղարշապատում: Հետո Մաշտոցը իր աշակերտների հետ կրկին մեկնում է Գողթն և Արևելյան Հայաստանի մյուս շրջանները՝ դպրոցներ բացելու:

Մաշտոցը հասկանում էր, որ անհրաժեշտ է հայոց գրերը տարածել նաև Արևմտյան Հայաստանում, ուստի նա մեկնում է այնտեղ, սակայն հանդիպում է բյուզանդական իշխանությունների խոչընդոտներին: Մաշտոցը մեկնում է Կ. Պոլիս բյուզանդական կայսեր ու պատրիարքի մոտ և թույլտվություն է ստանում Արևմտյան Հայաստանում դպրոցներ բացելու համար: Հայ պատմիչները վկայում են, որ

Մաշտոցը տառեր է ստեղծել նաև վրացիների և աղվանների համար:

Մեսրոպ Մաշտոցը մահանում է 440թ. և իր աշակերտ Վահան Ամատունու ցանկությամբ թաղվում է Օշականում, ուր կառուցվում է դամբարան, իսկ հետագայում՝ 1879թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու կողմից նրա վրա կառուցվում է եկեղեցի:

Հայոց գրերի ստեղծումը հսկայական խթան հանդիսացավ հայկական մտավոր մշակույթի զարգացման համար, և պատահական չէ, որ 5-րդ դարը կոչվում է «ոսկեդար»: Թարգմանչական գրականության կողքին ստեղծվում է հայ մատենագրությունը, որում առաջնակարգ դերը պատկանում է պատմագրությանը:

Պատմագիտական ամենահին գործերից է Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց» աշխատությունը, որը նվիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունմանը: Փալստոս Բուզանդի «Հայոց Պատմության» մեջ նկարագրված են 4-րդ դարի դեպքերը՝ քրիստոնեության ընդունումից մինչև Հայաստանի առաջին բաժանումը: Ղազար Փարպեցին շարունակել է Բուզանդին և նկարագրել է 387-485թթ. իրադարձությունները:

Կորյունը գրել «Վարք Մաշտոցի» աշխատությունը, ուր ներկայացրել է իր ուսուցչի կյանքն ու գործունեությունը:

Հին հայկական մատենագրության ամենակարկառուն ներկայացուցիչը պատմահայր Մովսես Խորենացին է: Նրա «Հայոց պատմություն»ը մեր ժողովրդի պատմության առաջին համակարգված և ամբողջական շարադրանքն է, սկսվում է նախապատմական շրջանից և շարունակվում մինչև 440թ.՝ Մեսրոպ Մաշտոցի մահը: Աշխատությունը խտացված է անկախության, ազատասիրության և հայրենասիրության սրբազան գաղափարներով:

5-րդ դարի պատմիչ Եղիշեն իր «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» աշխատությամբ անմահացրել է հայ ժողովրդի 450-451թթ. ազատագրական պայքարը Պարսից տերության դեմ:

7-րդ դարի պատմիչներ են Սեբեոսը, Հովհան Մամիկոնյանը, Մովսես Կաղանկատվացին: Արաբական խալիֆա-

յության դեմ հայ ժողովրդի պայքարին է նվիրված 8-րդ դարի պատմիչ Ղևոնդի աշխատությունը:

5-8-րդ դարերում զարգանում էր նաև փիլիսոփայությունը: Դեռևս 4-րդ դարում Աթենքում մեծ հռչակի հասած փիլիսոփա, հռետոր և մանկավարժ էր Պարույր Յայկազը (Պրոտերսիոսը), որի պատվին Յռոմում արձան է կանգնեցվում՝ «Աշխարհի թագուհի Յռոմից՝ հռետորների թագավորին» մակագրությամբ: Մաշտոցի աշակերտներից էր փիլիսոփա Եզնիկ Կողբացին, որի «Եղծ Աղանդոց»-ը ուղղված էր զրադաշտականության դեմ: 6-րդ դարի հայ փիլիսոփաներից է Դավիթ Անհաղթը, որը գրել է «Սահմանք իմաստասիրության» աշխատությունը:

Բնական գիտությունների հիմնադիրը հայ իրականության մեջ համարվում է 7-րդ դարի գիտնական Անանիա Շիրակացին, որը գրել է մի շարք աշխատություններ, որոնցից կարևոր են նրա թվաբանության դասագիրքը, «Տիեզերագիտությունը», որտեղ նա երկիրը նմանեցնում է ձվի կազմությանը: Նա ճիշտ է բացատրում Ծիր Կաթնի էությունը, խոսում է լուսնի և արեգակի խավարումների մասին և տալիս ճիշտ մեկնաբանություններ: Շիրակացուց մեզ են հասել նաև չափ ու կշռին, թանկագին քարերին նվիրված աշխատություններ: Շիրակացին սուր քննադատության է ենթարկում բախտագուշակներին, աստղագուշակներին և նրանց համարում կախարդներ: Իր բացառիկ արժեքով կարևորվում է Շիրակացու «Աշխարհացույցը»:

5-8-րդ դդ զարգացած էր նաև ճարտարապետությունը և մանրանկարչությունը: Այդ շրջանի ճարտարապետական հայտնի կառույցներից են Օձունի, Յոփսիմեի, Զվարթնոցի տաճարները: Աշխարհիկ կառույցներից հայտնի են Ամբերդի պալատ-ամրոցը, Դվինի կաթողիկոսական պալատը և այլն: Մեզ են հասել հիշյալ ժամանակաշրջանին վերաբերող մի շարք մատյաններ, որոնց էջերն ունեն գեղեցիկ նկարազարդումներ: Մեզ հասած ամենահին հայկական մանրանկարները Մատենադարանում պահվող 6-րդ դարին պատկանող «Փղոսկրյա» կոչվող ձեռագրի մանրանկարներն են:

81. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 9-14-ՐԴ դԱՐԵՐՈՒՄ

9-14-րդ դարերում հայկական մշակույթը հասավ զարգացման բարձր աստիճանի, որը նախևառաջ պայմանավորված էր հայկական պետականության վերականգնմամբ: Հայ թագավորների և իշխանների հոգատարությունը, քաղաքական կյանքի վերածնունդը, հարևան երկրների հետ բազմապիսի շփումների աշխուժացումը լուրջ խթան հանդիսացան մշակութային վերելքի համար:

Առանձնակի աշխուժացում ապրեց կրթական կյանքը: Գործում էին տարրական և բարձր տիպի դպրոցներ: Տարրական դպրոցները գործում էին պետության և եկեղեցու միջոցներով և տալիս էին նախնական կրթություն: Կային նաև վճարովի մասնավոր դպրոցներ: Տարրական դպրոցներում սովորեցնում էին տառաճանաչություն, ընթերցանություն, թվաբանություն, երգեցողություն: Տարրական դպրոցից հետո հետագա կրթությունը շարունակվում էր վարդապետարաններում, որոնց հիմնումը նոր երևույթ էր հայ իրականության մեջ: Վարդապետարանները այդ ժամանակի բարձրագույն դպրոցներն են եղել: Վարդապետարան ավարտողները ստանում էին վարդապետի աստիճան, որը նրանց ուսուցչությամբ զբաղվելու իրավունք էր տալիս: Վարդապետարաններից հայտնի էին Անիի, Գլաձորի, Տաթևի համալսարանները: Անիի համալսարանը իր ծաղկման շրջանն ապրել է 11-12-րդ դարերում՝ Հովհաննես Իմաստասերի ուսուցչապետության օրոք: Գլաձորի համալսարանը հիմնադրվել է 13-րդ դարի վերջին՝ Ներսես Մշեցու կողմից: Համալսարանը վայելել է Պռոշյան և Օրբելյան իշխանների հովանավորությունը: Գլաձորի համալսարանի համբավավոր ուսուցչապետներից էր նաև Եսայի Նշեցին: Տաթևի համալսարանը, որը սկսել է գործել Գլաձորի համալսարանի փակվելուց հետո, նույնպես ժամանակի հայտնի կրթական կենտրոններից էր: Այստեղ դասավանդել են նշանավոր գիտնականներ Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին: Միջնադարյան Հայաստանի համալսարաններում սովորում էին հարյուրավոր երիտասարդներ:

Պետականության պայմաններում Հայաստանում զարգանում էր նաև գիտությունը՝ պատմագրությունը, փիլիսոփայությունը, իրավագիտությունը, բնական գիտությունները:

«Հայոց պատմությունների» շարքը շարունակեց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, որի աշխատությունը ներառում է Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 924 թ.: Այս շրջանում տարածված էր առանձին հայկական թագավորությունների և նշանավոր տոհմերի պատմության շարադրումը: Այսպես՝ Թովմա Արծրունին գրեց «Պատմություն Արծրունյաց տան», աշխատությունը, Ստեփանոս Օրբելյանը՝ «Սիսական նահանգի պատմությունը», իսկ Սմբատ Գունդստաբլը՝ Կիլիկյան Հայաստանի արքայատոհմերից երկուսի՝ Ռուբինյանների և Հեթումյանների ժամանակաշրջանին վերաբերվող «Տարեգիրքը»: Որոշ հայ պատմիչներ էլ գրի են առել հարևան երկրների պատմությունը: Նման աշխատությունները կոչվում էին «Տիեզերական պատմություն»: Միջնադարյան հայ պատմիչներից տիեզերական պատմություններ են գրել Ստեփանոս Տարոնեցին, Վարդան Արևելցին:

Նշված ժամանակաշրջանում վերելք է ապրում նաև հայ փիլիսոփայական միտքը, որի ներկայացուցիչներն էին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Իմաստասերը, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին:

Աննախադեպ էր հայ իրավագիտության զարգացումը: 12-րդ դարի սկզբին կենցաղային հարցեր կարգավորող կանոնագիրք գրեց Դավիթ Գանձակեցին: 12-րդ դարի վերջին Մխիթար Գոշը գրեց «Գիրք դատաստանի»՝ նշանավոր աշխատությունը, որը երկար ժամանակ օգտագործվել է որպես օրենսգիրք և դեռևս միջնադարում թարգմանվել է տարբեր լեզուներով: 13-րդ դարում Սմբատ Գունդստաբլի գրած Դատաստանագիրքը հարմարեցված էր Կիլիկյան Հայաստանի պայմաններին:

9-14-րդ դարերում Հայաստանում զարգանում էին նաև բնական գիտությունները՝ թվաբանությունը, մաթեմատիկան, կենսաբանությունը, բժշկագիտությունը: Առանձնապես հիշատակության է արժանի 12-րդ դարի հռչակավոր բժիշկ Մխիթար Հերացին, որն իր գործունեությունը ծավալել է Կիլիկիայում: Մ. Հերացու «Ջերմանց մխիթարություն»

աշխատությունը գրված է ժողովրդին հասկանալի լեզվով և չափազանց օգտակար է:

Մեծ զարգացում ապրեց նաև հայ ժողովրդական բանահյուսությունը, գեղարվեստական գրականությունը, առակագրությունը: Բանահյուսության մեջ հարստացվեցին ժողովրդի կողմից ստեղծվող երգերը, հարսանեկան, սիրային խաղիկները: Լրացվեց «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը:

Ժամանակաշրջանի հայ գրականության ամենավառ դեմքը համարվում է Գրիգոր Նարեկացին, որի «Մատյան ողբերգության» պոեմը գրված է բանաստեղծական բարձր ճաշակով ու ճոխ լեզվով: Նարեկացու այս աշխատությունը ժողովրդի մեջ հայտնի է նաև «Նարեկ» անունով: Այն թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով և մեծ հռչակ է վայելում:

Իրենց գրական ստեղծագործություններում հայ ժողովրդի վիճակն են ներկայացրել Ներսես Շնորհալին և Ֆրիկը: Ներսես Շնորհալին գրել է նաև հանելուկներ: 12-13-րդ դարերում որպես գեղարվեստական գրականության առանձին ճյուղ Հայաստանում զարգանում է առակագրությունը, որի կարկառուն ներկայացուցիչներն էին Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

Բուռն վերելք ապրեց հայ ճարտարապետությունը: Առաջ եկան վանական համալիրները, որոնք իրենց մեջ ընդգրկում էին եկեղեցիներ, մատուռներ և օժանդակ շենքեր: Նշանավոր է Այրիվանքի (Գեղարդավանքի) վանական համալիրը՝ ժայռափոր եկեղեցիներով: Մանուել ճարտարապետը Աղթամար կղզում 10-րդ դ. առաջին քառորդում կառուցում է Սուրբ Խաչ եկեղեցին: Եկեղեցու պատերը դրսից զարդարված են գեղեցիկ քանդակներով, իսկ ներսից՝ որմնանկարներով: Դարաշրջանի հայ ճարտարապետության փայլատակման իսկական արգասիք էր Անին: Անիի ամենամշանավոր կառույցը Մայր տաճարն էր (10-րդ դ. վերջ), որի ճարտարապետը Տրդատն էր:

Հայ մշակույթի մեջ նոր երևույթ էին խաչքարերը: Խաչքարային արվեստը անընդհատ կատարելագործվել է: Խաչքարն ընդհանրապես հայ մշակույթի յուրահատկության և կատարելության դրսևորումներից մեկն է համարվում: Միջ-

նադարում խաչքար կերտող վարպետներից նշանավոր է ճարտարապետ, քանդակագործ և մանրանկարիչ Մոմիկը:

Հայ միջնադարյան ճարտարապետության բաղկացուցիչ մասն էին կազմում քանդակագործությունը և որմնանկարչությունը, որոնք նույնպես բուռն վերելք ապրեցին:

Ձարգացման բարձր մակարդակի հասավ մանրանկարչությունը: Հայ մանրանկարիչները գեղեցիկ նկարներով զարդարում էին մատյանների առաջին էջերը, լուսանցքները և կարևոր հատվածները: Մանրանկարչությունն առանձնապես բուռն վերելք ապրեց Կիլիկիայում: Կիլիկյան Հայաստանի մանրանկարչության ամենակարկառուն ներկայացուցիչը Թորոս Ռոսլինն էր:

82. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 15-18-ՐԴ դարերում

Սոսկալի դժվարությունների հանդիպելով հանդերձ հայ մշակույթը 15-18-րդ դարերում շարունակում էր զարգանալ: Այն զարգանում էր նվիրյալ անհատների և մշակութային հարուստ ժառանգության շնորհիվ:

15-րդ դարում շարունակում էր գործել Տաթևի համալսարանը, որը ղեկավարում էր խոշոր աստվածաբան, փիլիսոփա, ազգային-եկեղեցական գործիչ Գրիգոր Տաթևացին: Համալսարանն ավարտողները գրում էին ավարտաճառեր և ստանում կրթական աստիճան: 17-րդ դարի սկզբներից սկսում է գործել Սյունյաց Մեծ անապատի դպրոցը, որի շրջանավարտները Հայաստանի տարբեր վայրերում դպրոցներ էին բացում: 1763 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու նախաձեռնությամբ բացվում է Էջմիածնի դպրոցը: Դպրոցներ են բացվում նաև հայկական գաղթօջախներում: 15-րդ դարում գործում էր Ղրիմի հայոց Անտոն վանքի, 17-րդ դարից Նոր Զուղայի, 18-րդ դ. սկզբներից Վենետիկի սուրբ Ղազար կղզու վանական դպրոցները, 18-րդ դարից սկսում է գործել նաև Պոլսի Սկյուտարի դպրոցը:

16-րդ դարում հայ մշակութային կյանքում տեղի ունեցավ խոշոր իրադարձություն՝ սկզբնավորվեց տպագրական գործը: 1512 թվականին Վենետիկում Հակոբ Մեղապարտի շնորհիվ լույս տեսավ առաջին հայերեն տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: Հետագայում հայկական տպարաններ

ստեղծվեցին Կ.Պոլսում, Լվովում, Նոր Ջուղայում, Ամստերդամում: Ի դեպ, Նոր Ջուղայի հայկական տպարանը առաջինն էր Պարսկաստանում, իսկ Ամստերդամի հայկական տպարանում 1668թ. առաջին անգամ տպագրվել է հայերեն Աստվածաշունչը:

Տպագրական գործի զարգացումը ազդակ հանդիսացավ հայ պարբերական մամուլի առաջացման համար: 1794 թ. Մադրասում Հարություն Շնավոնյանի ջանքերով լույս տեսավ առաջին հայկական պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը:

15-18-րդ դարերում զարգանում էր նաև հայ գրականությունը: 15-րդ դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշը գրել է բնության, գեղեցկության և պանդխտության մասին: Իր ստեղծագործություններում սիրո թեման է արծարծել 16-րդ դարի բանաստեղծ Նահապետ Քուչակը: Այս շրջանում տարածված էին «Տաղարան» և «Աղվեսագիրք» ժողովածուները, որոնցից առաջինում հավաքվում էին ժողովրդական և բանահյուսական երգեր, իսկ երկրորդում առակներ և երգիծական ստեղծագործություններ:

18-րդ դարի հայ գրականության փայլուն ներկայացուցիչն է Սայաթ Նովան (Հարություն Սայադյան): Ծնունդով լոռեցի այս բանաստեղծը ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում: Նա իր երգերում արծարծել է սիրո, ազատության արդարության գաղափարները: Սայաթ Նովան ստեղծագործել է մի քանի լեզուներով:

15-րդ դարում բժշկագիտության մեջ մեծ հռչակ էր ձեռք բերել Ամիրդովլաթ Ամասիացին, որը եղել է թուրքական սուլթանի անձնական բժիշկը: Նա ժամանակակիցների համար հասկանալի լեզվով գրել է դեղաբույսերի և դեղանյութերի վերաբերյալ աշխատություններ:

Առաջընթաց տեղի ունեցավ նաև պատմագիտության ասպարեզում: 15-րդ դ. պատմիչ Թովմա Մեծոփեցին որպես ժամանակակից ու ակտիվ գրում է Լեոկսենուրի արշավանքների մասին: 17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ ներկայացնում է 17-րդ դ. առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները: Նույն ժամանակաշրջանի աչքի ընկնող պատմիչներից էր նաև Ջաքարիա Քանաքեռցին:

18-րդ դարի առաջին տասնամյակների Հայաստանի պատմությունը ներկայացրել են երեք հեղինակներ: Ստեփանոս Շահումյանը գրեց Դավիթ Բեկի պատմությունը, Եսայի Հասան Զալալյանը՝ Ղարաբաղի պատմությունը, իսկ Աբրահամ Կրետացին՝ թուրք-պարսկական կռիվների պատմությունը:

18-րդ դ. վերջին լույս է տեսնում Միքայել Չամչյանի «Հայոց պատմություն» եռահատոր աշխատությունը: Այն գրելիս հեղինակն օգտագործել է հայ և օտար բազմապիսի աղբյուրներ: Մ. Չամչյանը երկրորդն էր Մովսես Խորենացուց հետո, որ գրեց հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև իր ապրած օրերը:

Հայ գիտության ասպարեզում լուրջ իրադարձություն էր 1717 թ. Վենետիկի սուրբ Ղազար կղզում Մխիթար Սեբաստացու կողմից Մխիթարյան միաբանության ստեղծումը, որը անգնահատելի գործունեություն ծավալեց հատկապես հայագիտության բնագավառում: Մխիթարյանների գիտամշակութային գործունեությունը շարունակվում է նաև մեր օրերում:

83. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայ մշակույթը 19-րդ դարում մեծ վերելք ապրեց: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, որտեղ կային բարենպաստ պայմաններ հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային առաջընթացի համար: Միաժամանակ հայ մշակույթը շարունակեց իր վերելքը նաև գաղթօջախներում: Հայ մշակույթի խոշոր կենտրոններն էին Թիֆլիսը, Բաքուն, Նոր Նախիջևանը, Մոսկվան, Կ.Պոլիսը, Վենետիկը և այլն: Վենետիկում և Վիեննայում հաստատված Մխիթարյան միաբանության անդամները շարունակեցին իրենց բեղուն գիտակրթական ու մշակութաստեղծ գործունեությունը:

Մշակույթի կարևոր ոլորտներից է դպրոցը: Վերընթաց ուղի մտավ կրթական գործը, ինչի համար բարենպաստ հող ստեղծեց մի շարք նշանավոր հայկական միջնակարգ դպրոցների բացումը: 1799թ. Ջմյուռնիայում բացվեց Մեսրոպյան վարժարանը, 1810թ.՝ Աստրախանի Աղաբաբյան դպրոցը,

1815թ.՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանը, 1824թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1837թ.՝ Երևանի, իսկ 1838թ.՝ Շուշիի թեմական դպրոցները, 1838թ. Կ.Պոլսում՝ Սյուլտարի ճեմարանը, 1874թ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1878թ.՝ Վանի վարժապետանոցը, 1881թ.՝ Էրզրումի Սանասարյան վարժարանը և Երևանի ուսուցչական սեմինարիան:

19-րդ դ. երկրորդ կեսին բացվեցին նաև իգական դպրոցներ՝ Շուշիում՝ Մարիամ-Ղուկասյան, Երևանում՝ Գայանյան, Թիֆլիսում՝ Գայանյան, Մարիամյան-Յովնանյան, Ախալցխայում՝ Եղիսաբեթյան, Ալեքսանդրապոլում՝ Արղուրյան:

20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ շրջաններում, ի հեճուկս թուրքական բռնապետության արգելքների ու հալածանքների, գործում էին 300-ից ավելի հայկական դպրոցներ՝ մոտ 40.000 աշակերտներով: Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության հայաբնակ այլ շրջաններում գործում էին տարբեր տիպի 400 հայկական դպրոցներ՝ մոտ 30.000 աշակերտներով և 900 ուսուցիչներով: Հայկական դպրոցներին ծանր հարված հասցրեց հայ եկեղեցական գույքը բռնագրավելու մասին 1903թ. ցարական հրամանագիրը, որը բարեբախտաբար 1905թ. չեղյալ համարվեց: 20-րդ դարի սկզբին շարունակում էին գործել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Երևանի և Շուշիի հոգևոր թեմական դպրոցները և այլն:

Բարձր զարգացման հասավ հայ մանկավարժական միտքը: Այդ ոլորտում խոշոր ներդրում ունեցան Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ռեթես Պերպերյանը և ուրիշներ:

Բարձր զարգացման հասան հայագիտությունն ու պատմագիտությունը: Հայագիտական և պատմագիտական արժեքավոր աշխատություններ հրատարակեցին Մաղաքիա Օրմանյանը, Քերովբե Պատկանյանը, Ալեքսանդր Երիցյանը, Սկրտիչ Էմինը, Լեոն, Ղևոնդ Ալիշանը, Նիկողայոս Ադոնցը և ուրիշներ:

Ս. Օրմանյանի հրատարակած բազմաթիվ աշխատություններից են «Հայոց եկեղեցին», եռահատոր «Ազգապատումը»: Նա իրավացիորեն գտնում էր, որ հայոց եկեղեցին

ազգային բնույթ ունի, և որ հայ եկեղեցու և ազգի պատմությունը կազմում են միասնություն: Լեոն հրատարակեց մեծաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ: Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծարժեք աշխատությունը համակողմանիորեն ներկայացնում է միջնադարյան Հայաստանը:

Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի գրչին են պատկանում Հայաստանի պատմությանը, հուշարձաններին ու պատմական աշխարհագրությանը նվիրված 45 հատոր մեծարժեք աշխատություններ:

19-րդ դարում աննախադեպ վերելք ապրեց հայ գրականությունը: Խ.Աբովյանի շնորհիվ հիմք դրվեց հայ նոր գրականությանը: Նրա «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» պատմավեպը աշխարհաբարով գրված առաջին ստեղծագործությունն էր:

Թուրքական լծի տակ գտնվող արևմտահայության ծանր վիճակը և ազատագրական ծգտումները 19-րդ դարի երկրորդ կեսին այն գործոններն էին, որոնց ազդեցությամբ հայ գրականության մեջ մեծ ծավալ ստացավ հայրենասիրությամբ ոգեշնչված և ազատագրական պայքարի մղող բանաստեղծությունների ու պատմավեպերի հրատարակությունը: Բաֆֆու, Մուրացանի, Մ. Պեշկեպաշյանի, Մ. Նալբանդյանի և այլոց ստեղծագործությունները մինչ այժմ էլ գոտեպնդում են հայ երիտասարդությանը:

Գարեգին Սրվանձտյանին ենք պարտական «Սասնա ծռեր» էպոսի այժմյան տեսքի համար, քանզի նա հավաքեց և հրատարակեց հայ ժողովրդի հավաքական ուժը, ոգին, արդարանությունը խորհրդանշող այս արժեքավոր բանահյուսական ստեղծագործություն-հերոսապատումը:

Հայ երգիծաբանության հիմնադիրը հանդիսացավ մեծանուն գրող Հակոբ Պարոնյանը: Նշանավոր դրամատուրգ ու երգիծաբան էր Գաբրիել Սունդուկյանը: Նրանք խիստ քննադատության էին ենթարկում տիրող անարդարությունները, աղճատված բարքերը: Նրանց ստեղծագործությունները, երբեմն՝ կատակերգական, երբեմն՝ ողբերգական, խթանեցին հայ թատերարվեստի զարգացմանը:

20-րդ դարասկզբին հայ գրական երկնականարում էին հայ պոեզիայի և արձակի փայլուն ներկայացուցիչներ Միսաք

Մեծարենցը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Երվանդ Օտյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Տերյանը, Նար Դոսը, Մուրացանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Գաբրիել Սունդուկյանը, Լևոն Շանթը, Ավետիս Ահարոնյանը, Արփիար Արփիարյանը, Գրիգոր Ջոհրապը, Ռուբեն Ջարդարյանը, մանկագիր Ղազարոս Աղայանը, Ավ. Իսահակյանը, Պերճ Պռոշյանը:

Արևմտահայ երգիծաբան Ե. Օտյանը երգիծանքի միջոցով ծաղր ու ծանակի էր ենթարկում ազգային այն գործիչներին, որոնք խոսքով ներկայանում էին որպես հայրենասերներ, հեղափոխականներ, իսկ իրականում արժեզրկում էին սուրբ գաղափարները: Նա սպանիչ ծաղրի է ենթարկում նաև կեղծ բարերաններին, աշխարհիկ և կրոնական հարստահարիչներին: Ավ. Իսահակյանը գրում է նշանավոր «Աբու Լալա Մահարի», «Սասնա Միեր» պոեմները և այլն:

20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայ գրականության կենտրոնական դեմք Հովհ. Թումանյանը հրատարակեց «Անուշ», «Լոռեցի Սաքուն», «Մարո», ապա «Սասունցի Դավիթ», «Թմկաբերդի առունը» մեծարժեք պոեմները և այլն:

Երաժշտությունը ևս զարգացում էր ապրում: Երաժշտական արվեստի հսկաներից էր Կոմիտասը, որը հավաքեց և մշակեց շուրջ 3000 երգ: Տիգրան Զուխաջյանը գրեց առաջին հայկական օպերան՝ «Արշակ Բ»: Ալեքսանդր Սպենդիարյանը հիմնադրեց սիմֆոնիկ երաժշտությունը՝ գրելով «Ալմաստ օպերան»: Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի հիման վրա Արմեն Տիգրանյանը գրեց համանուն օպերան, որը բեմադրվեց Ալեքսանդրապոլում 1912թ.: Ջարգանում էր նաև աշուղական երգարվեստը, որի փայլուն ներկայացուցիչներից էին Ջիվանիկ և Շերամը:

Հայ իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ թատրոնը հիմնվում է Կ.Պոլսում, 1846թ.: Այն հիմնականում ունեցել է կրկեսային և մնջախաղային բնույթ, բայց ներկայացրել է նաև պատմական դրամաներ ու մելոդրամներ: 1847թ. Կ.Պոլսի Բերա թաղամասում կառուցվել է թատրոնի մշտական շենք կրկեսային և դրամատիկական ներկայացումների համար: Թատրոնն ունեցել է նվագախումբ, դիրիժոր, դերասանների մշտական կազմ:

1851թ. Թիֆլիսում ստեղծվեց Թամամշյանի թատրոնը: 1861թ. Կ.Պոլսում հիմնադրվեց Արևելյան թատրոնը: 1863թ. Կ.Պոլսում Հակոբ Վարդուկյանի ստեղծած թատրոնում ներկայացումներ էին տրվում հայերենով և թուրքերենով: Թատերարվեստի զարգացման գործում խոշոր ավանդ ներդրեցին դերասաններ Պետրոս Աղամյանը, Գևորգ Չմշկյանը, Սիրանուշը, Հովհաննես Աբելյանը և ուրիշներ:

19-րդ դարի նշանավոր նկարիչներից էին Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանները, որոնք շարունակեցին իրենց տաղանդավոր տոհմի ավանդույթները: Ճանաչված նկարիչ էր Ստեփան Ներսիսյանը, որի վրձինն են պատկանում բազմաթիվ հայ նշանավոր գործիչների դիմանկարներ: Համաշխարհային ճանաչում ունեցող ծովանկարիչ էր Հովհաննես Այվազովսկին, որը բազմաթիվ կտավներ է կերտել նաև հայկական թեմաներով: 20-րդ դարասկզբի հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչներն էին Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, Մարտիրոս Սարյանը և ուրիշներ:

Օսմանյան կայսրության բարձրարվեստ ճարտարապետական կոթողներից շատերի հեղինակներն են հայկական Պալյան և Ութուճյան նշանավոր տոհմերի ներկայացուցիչները, որոնց սուլթանները վստահում էին արքունի ճարտարապետի պաշտոնը:

20-րդ դարի սկզբի ճարտարապետության հայտնի դեմքերից էին Ալեքսանդր Թամանյանը, Թորոս Թորամանյանը, Հովհաննես Քաջազնունին և ուրիշներ:

Բնագիտության ասպարեզի խոշոր գիտնականներից էր ֆիզիկոս Հովհաննես Աղամյանը, որը հանդիսացավ գունավոր հեռուստատեսության հիմնադիրը:

Հայ մշակույթին ծանր, շատ կողմերով անդառնալի հարված հասցրեց 1915-1916թթ. Հայոց ցեղասպանությունը, որի ընթացքում ոչնչացվեց արևմտահայ մտավորականությունը, Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող հազարավոր պատմա-մշակութային հուշարձաններ և տասնյակ հազարավոր հնագույն ձեռագրեր:

84. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը այն իրադարձությունն էր, որը հայ ժողովրդին հնարավորություն տվեց ոտքի կանգնել և զարկ տալ իր մշակույթի զարգացմանը: Թեև ՀՀ գոյության տարիները հայ մշակույթի զարգացման համար դժվարին տարիներ էին, այնուամենայնիվ այդ շրջանում արձանագրվեցին դրական տեղաշարժեր: Որոշակիորեն բարելավվեց կրթական գործը: Եթե 1918-1919 ուստարում երկրում գործում էին 133 տարրական դպրոցներ, որոնցում սովորում էին 11 հազար աշակերտներ, ապա 1919-1920 ուստարում արդեն գործում էին 456 տարրական դպրոցներ՝ 41 հազարից ավելի աշակերտներով: Երկրում գործում էին նաև 20 միջնակարգ ուսումնական հաստատություններ՝ 283 ուսուցիչներով և 5.000-ից ավելի սովորողներով:

ՀՀ կրթամշակութային կյանքում կարևորագույն տեղ է զբաղեցնում համալսարանի հիմնումը: 1919թ. մայիսի 16-ին որոշում կայացվեց համալսարան բացելու մասին, իսկ բացումը կատարվեց 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում: 1920-1921 ուստարում այն փոխադրվեց Երևան:

ՀՀ իշխանությունները մեծ ջանքեր հատկացրին գիտական ու գեղարվեստական երկերի թարգմանության, աշխատությունների հրատարակության համար: Այդ տարիներին հիմնադրվեցին գրադարանային և թանգարանային մի շարք հաստատություններ: Ստեղծվեց Հնությունների պաշտպանության կոմիտե, որը Թ. Թորամանյանի գլխավորությամբ ձեռնամուխ եղավ Անիի ավերակների ուսումնասիրությանը: 1920թ. հուլիսին կազմակերպվեց գիտական արշավախումբ՝ Հայաստանի հնագիտական քարտեզ կազմելու նպատակով, չափագրվեցին մեծ թվով հուշարձաններ, հայտնաբերվեցին նոր հուշարձաններ: 1919թ. մայիսին նկարիչներ Գ. Բաշին-ջաղյանի, Մ. Սարյանի և այլոց մասնակցությամբ Երևանում բացվեց հայ արվեստագետների առաջին ցուցահանդեսը: Այստեղ կառավարության կողմից պետական թանգարանի համար ձեռք բերված կտավները հիմք դարձան Պետական պատկերասրահի համար:

Հայ մշակույթը դանդաղ, բայց հաստատուն քայլերով վերելք ապրեց Հայաստանի խորհրդայնացումից հետո: Առաջին հերթին խնդիր դրվեց վերացնել անգրագիտությունը: ՀԽՍՀ ժողկոմխորիը 1921թ. սեպտեմբերին հատուկ դեկրետ

հրապարակեց Հայաստանում չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին, ամբողջ հանրապետությունում հիմնվեցին անգրագիտության վերացման կայաններ՝ «լիկկայաններ»։ Արդյունքում 1940թ. անգրագիտությունը Հայաստանում հաղթահարվեց։

Վիթխարի աշխատանք կատարվեց ժողովրդական կրթության զարգացման ուղղությամբ։ Բոլոր բնակավայրերում սկսվեց դպրոցների կառուցում։ Միայն 1926-1932թթ. կառուցվեց մոտ 500 դպրոցական շենք։ Ձեռնարկված քայլերի հետևանքով 1932թ. Հայաստանում լուծվեց տարրական կրթության հարցը և խնդիր դրվեց ամբողջությամբ անցնել յոթնամյա կրթության։ Եթե 1921-1922 ուստարում՝ Հայաստանում կար 47.000 աշակերտ, ապա 1940-1941 ուստարում՝ 350.000։

Աննախընթաց զարգացում ապրեց բարձրագույն կրթությունը։ Երևանի պետական համալսարանի կողքին բացվեցին նորերը։ 1923թ. հիմնվեց Երևանի պետական կոնսերվատորիան, 1928թ.՝ անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը։ 1930թ. համալսարանի ֆակուլտետների հիման վրա ստեղծվեցին գյուղատնտեսական, պոլիտեխնիկական, բժշկական և մանկավարժական ինստիտուտները։ Վերջինս համալսարանի մանկավարժական ֆակուլտետի հիման վրա բացվել էր դեռևս 1922թ.-ին, սակայն 1924-1925թթ. դարձյալ միացվել էր համալսարանին։ 1940թ. Հայաստանում գործում էր 9 բուհ՝ 11.000 ուսանողով։

Խորհրդային Հայաստանում լուրջ ուշադրություն դարձվեց նաև գիտության զարգացմանը։ Արդեն 1921թ. Էջմիածնի մատենադարանի և թանգարանի հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի Գիտական ինստիտուտը, որը 1925թ. վերափոխվեց Գիտության և արվեստի ինստիտուտի։ Այստեղ աշխատում էին պատմաբաններ Լեոն, Հակոբ Մանանդյանը, Աշոտ Յովհաննիսյանը, գրականագետ՝ Մանուկ Աբեղյանը, լեզվաբաններ՝ Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, ճարտարապետ՝ Ալեքսանդր Թամանյանը և ուրիշ անվանի գիտնականներ։

Գիտության զարգացման առումով բեկունճային եղավ 1935թ., երբ հիմնվեց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղը, որը միավորեց հանրապետության

բոլոր գիտահետազոտական ինստիտուտներն ու հիմնարկները: Նրա առաջին նախագահ ընտրվեց բնագետ-երկրաբան, ակադեմիկոս Լևոնտ-Լեսսինգը: 1938թ. նախագահ ընտրվեց նշանավոր արևելագետ Յովսեփ Օրբելին:

1939թ. կառավարության որոշմամբ Մատենադարանը Էջմիածնից տեղափոխվեց Երևան՝ Ժողկոմխորհին կից պետական ծեռագրատան կարգավիճակով:

Զարգացում ապրեց նաև գրականությունը: 1920-ական թթ. իրենց գրական գործունեությունը սկսեցին Եղիշե Չարենցը, Ալսեկ Բակունցը, Գուրգեն Մահարին (Աճեմյան), Նաիրի Ջարյանը, Վահրամ Ալազանը և ուրիշներ: Իրենց գործերով խորհրդահայ գրականությունը հարստացրին Զ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Նար-Դոսը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Ջորյանը և ուրիշներ: 1932թ. ստեղծվեց Հայաստանի գրողների միությունը:

Կերպարվեստը ևս զարգացում ապրեց: 1932թ. ստեղծվեց Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը: Իրենց բարձրաժեշտ ստեղծագործությունները նորերով հարստացրին Հակոբ Կոջոյանը և Մարտիրոս Սարյանը: Նշանավոր նկարիչներ էին նաև Եղիշե Թադևոսյանը, Փանոս Թերլեմեզյանը և այլն:

Բարձր զարգացման հասան ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Ճարտարապետության գլխավոր ներկայացուցիչը Ալ. Թամանյանն էր: Նա կազմեց Երևանի գլխավոր հատակագիծը: Նրա նախագծերով ստեղծվեցին օպերայի և բալետի թատրոնի, Հայաստանի կառավարության հոյակապ շենքերը և այլն:

Մեծ վերելք ապրեց երաժշտությունը: 1923թ. բացվեց առաջին երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական կոնսերվատորիան, որի առաջին ռեկտորն էր Ռոմանոս Մելիքյանը: Ստեղծվեց պետական ֆիլիհարմոնիան: 1933թ. Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ցուցադրմամբ բացվեց Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը: Իրենց ստեղծագործություններով աչքի ընկան երգահաններ Ալ. Սպենդիարյանը, Արմեն Տիգրանյանը, Արամ Խաչատրյանը:

Վերելքի ուղի բռնեց թատերական կյանքը, որի նշանավոր ներկայացուցիչներն էին Յովհաննես Աբելյանը, Վահ-

րան Փափագյանը, Հրաչյա Ներսիսյանը: 1922թ. «Պեպո» պիեսի ներկայացմամբ բացվեց Երևանի պետական դրամատիկական թատրոնը, որը 1937թ. կոչվեց Գ. Սունդուկյանի անվան:

Սկիզբ դրվեց հայկական կինոարվեստին: 1923թ. ստեղծվեց Պետկինոն (1957թ.՝ Հայֆիլմ): 1925թ. ցուցադրվեց «Խորհրդային Հայաստան» կինոակնարկը, ապա՝ հայ իրականության առաջին գեղարվեստական կինոնկարը՝ «Նամուս»ը: 1935թ. ցուցադրվեց հայկական առաջին հնչյունային կինոնկարը՝ «Պեպո»ն:

Զարգացում ապրեց գրադարանային համակարգը: 1922թ. Երևանում հիմնվեց հանրապետական հանրային գրադարանը, որը 1925թ. կոչվեց Ա. Մյասնիկյանի անունով: 1940թ. Հայաստանում կար 908 հանրային գրադարան՝ 900 հազարից ավելի գրքային ֆոնդով:

Հայ ժողովրդի մշակութային կյանքի կարևորագույն իրադարձությունը 1939թ. «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի տոնակատարությունն էր, որի կապակցությամբ լույս տեսավ նրա ակադեմիական հրատարակությունը:

Զնայած բազում դժվարություններին՝ նոր ձևավորվող Սփյուռքում նույնպես 1920-ական թթ. սկսած արձանագրվեցին մշակութային ձեռքբերումներ: Սփյուռքահայ տարբեր համայնքներում բացվեցին տասնյակ դպրոցներ, որոնք մեծ դեր խաղացին մատաղ սերնդին հայեցի դաստիարակելու գործում: Սփյուռքահայ մշակույթի մեջ կարևոր դեր էր կատարում մամուլը: Արդեն 1927թ. տարբեր համայնքներում լույս էին տեսնում ավելի քան 55 ամուն թերթ ու հանդես: Ժամանակի աչքի ընկնող հանդեսներից էին «Հայրենիք»ը, «Վեմ»ը:

Սփյուռքահայ գրական աշխարհը ներկայացնում էին Երվանդ Օտյանը, Զապել Եսայանը, Վազգեն Շուշանյանը, Շահան Շահնուրը, Ավետիս Սիարոնյանը, Լևոն Շանթը, Վահան Թեքեյանը, Արշակ Զոպանյանը և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի դժվարագույն տարիներին անգամ հայ մշակույթը արձանագրեց մեծ նվաճումներ:

1943թ. ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի շուրջը համախմբվեցին խոշոր գիտնականներ՝ ֆիզիոլոգ Լևոն Օրբելին, ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ

Ալիխանյանները, աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը, գրականագետ Մանուկ Աբեղյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը և ուրիշներ: Ակադեմիայի առաջին արեգիդենտ ընտրվեց ականավոր արևելագետ Հովսեփ Օրբելին:

Պատերազմի տարիներին մեծ նվաճումներ արձանագրեց հայ գրականությունը: Ավետիք Իսահակյանը ստեղծեց ռազմակոչային քնարերգության մի այնպիսի գլուխգործոց, ինչպիսին է «Ռազմակոչը»: Նաիրի Ջարյանը գրեց «Ձայն հայրենականը», Հովհաննես Շիրազը՝ «Բիբլիականը», քնարական պոեմները և այլն: Դերենիկ Դեմիրճյանը գրեց «Վարդանանք», Ստեփան Ջորյանը՝ «Պապ թագավոր» պատմավեպերը, որոնք անցյալի հերոսական օրինակներով խորացնում էին ժողովրդի հայրենասիրական ոգին: Այդ տարիներին ստեղծվեցին հայրենասիրական թեմաներով պիեսներ: Նրանցից է Նաիրի Ջարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը, որում արծարծվում է հայ ժողովրդի նախնիների հերոսական պայքարը ազատության համար:

Հետպատերազմյան տարիներին հայ մշակույթն ապրեց աննախընթաց բուռն վերելք: 1950-ական թթ. վերջին Հայաստանում մտցվեց պարտադիր ութամյա կրթություն: 1965թ. դրությամբ Հայաստանում գործում էին 1.247 դպրոցներ և 42 միջնակարգ մասնագիտական ուսումնարաններ: 1980թ. Հայաստանում գործում էր 1500 դպրոց՝ 600.000 սովորողներով:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում շարունակեց զարգացում ապրել բարձրագույն կրթության համակարգը: Նոր բուհեր կամ նրանց մասնաճյուղեր ստեղծվեցին Լենինականում (Գյումրի), Կիրովականում (Վանաձոր), իսկ հետագայում նաև Ստեփանավանում և Գորիսում: 1980թ. հանրապետության գործում էին 14 բուհեր՝ ավելի քան 50.000 ուսանողներով:

Եթե նախախորհրդային շրջանում Հայաստանում չկար ոչ մի գիտահետազոտական հիմնարկ, ապա 1965թ. դրանց թիվը հասնում էր 85-ի, որոնցում աշխատում էին 6500 գիտնականներ, այդ թվում՝ 58 ակադեմիկոսներ, 200-ից ավելի դոկտորներ և 1800-ից ավելի թեկնածուներ:

Հետպատերազմյան տարիներին շարունակվեց գրադարանային ցանցի ընդլայնումը: 1976թ. Հայաստանում կար 1327 գրադարան, որոնց գրքային ֆոնդը կազմում էր 11 մլն միավոր և 37 թանգարան:

Հայրենական Մեծ պատերազմի ավարտից անմիջապես հետո հիմնադրվեց Բյուրականի աստղադիտարանը: Այն աշխարհահռչակ աստղաֆիզիկոս, ակադեմիկոս, 1947թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, մեծ հայրենասեր Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ կարճ ժամանակ անց դարձավ համաշխարհային մասշտաբի աստղաֆիզիկական գիտահետազոտական կենտրոն:

Նշանակալի ձեռքբերումներ արձանագրվեցին էլեկտրատեխնիկայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, քիմիայի բնագավառներում: Տաղանդավոր ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրների ղեկավարությամբ 1967թ. Երևանում գործարկվեց ԽՍՀՄ ամենախոշոր էլեկտրոնային արագացուցիչը: Նշանավոր քիմիկոս էր Արաքսի Բաբայանը, որը դարձավ ՀԽՍՀ ԳԱ առաջին կին ակադեմիկոսը: Նրա աշխատանքների գլուխգործոցն է «Ֆավորսկի-Բաբայան» կոչվող ռեակցիայի հայտնաբերումը, որը հայ քիմիկոսի մասնակցությամբ ստեղծված միակ անվանական ռեակցիան է:

1960-80-ական թթ. բուռն վերելք ապրեց ճարտարապետությունը և քանդակագործությունը: Ստեղծվեցին բազմաթիվ բարձրարժեք կառույցներ՝ Մատենադարանի և Պատմության թանգարանի շենքերը, Եղեռնի զոհերին և Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշարձանները, Հրազդան մարզադաշտը, «Զվարթնոց» օդանավակայանը, Երևանի մետրոպոլիտենը, Մարզահամերգային համալիրը, աշխարհում ամենաբարձրերից մեկը հանդիսացող Արզնիի կամուրջը (118 մ) և այլն: Նշանավոր ճարտարապետներից էին Ռաֆայել Իսրայելյանը, Կարո Հալաբյանը և ուրիշներ:

Քանդակագործության ոլորտի նշանավոր ներկայացուցիչներից էին Նիկողայոս Նիկողոսյանը, Լևոն Թոքմաջյանը, Երվանդ Քոչարը և ուրիշներ: Բարձրարժեք հուշարձաններից են Սասունցի Դավթի, Միքայել Նալբանդյանի, Դավիթ Բեկի հուշարձանները և այլն:

Նոր բարձրունքների հասավ հայ կերպարվեստը՝ ի դեմս Ս. Սարյանի, Գրիգոր Խանջյանի, Մինաս Ավետիսյանի, Էդվարդ Իսաբեկյանի:

Վիթխարի վերելք ապրեց հայ թատերական կյանքը: Հանրապետության տարբեր քաղաքներում հիմնվեցին բազմաթիվ թատրոններ: Ոլորտի նշանավոր ներկայացուցիչներն էին Հրաչյա Ներսիսյանը, Վահրամ Փափազյանը: Նրանց ավանդույթները շարունակեցին Մետաքսյա Սիմոնյանը, Բաբկեն Ներսիսյանը, Խորեն Աբրահամյանը, Սոս Սարգսյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Արուս Ասրյանը, Միեր Մկրտչյանը (Ֆրունզիկ) և ուրիշներ, որոնք հայ թատրոնը դարձրին իրոք ժողովրդական:

Վերելք ապրեց նաև հայկական կինոն, ստեղծվեցին բազմաթիվ մեծարժեք կինոնկարներ՝ «Նահապետը», «Ձորի Միրոն», «Մենք ենք, մեր սարերը», «Հարսնացուն հյուսիսից», «Հին օրերի երգը», «Նռան գույնը» և այլն: Ճանաչված կինոբեմադրիչներ էին Հենրիկ Մալյանը, Ֆրունզե Դովլաթյանը, Սերգեյ Փարաջանովը:

Բարձր զարգացման հասավ հայ երաժշտական արվեստը: Իր բեղմնավոր գործունեությունն էր շարունակում Ա. Խաչատրյանը, որի «Սպարտակ» բալետը ստացավ համաշխարհային հնչեղություն: Ժամանակաշրջանի մյուս խոշորագույն կոմպոզիտորներից էին Առնո Բաբաջանյանը, Էդուարդ Միրզոյանը, Կոստանդին Օրբելյանը, Ռոբերտ Ամիրխանյանը: Նշանավոր երգիչներ էին Լուսինե Ջաքարյանը, Գոհար Գասպարյանը, Հովհաննես Բադալյանը, Օֆելյա Համբարձումյանը, Ռուբեն Մաթևոսյան:

Նոր բարձրունքների հասավ հայ լեզվաբանությունը: Այս բնագավառի հսկան Հրաչյա Աճառյանն էր: Նա տիրապետում էր 18 լեզուների և հեղինակ է ավելի քան 200 աշխատությունների՝ 250 հազարից ավելի էջերով: Իրենց գործունեությունն էին շարունակում Ստեփան Մալխասյանցը, Գրիգոր Ղափանցյանը: Լեզվաբանական դպրոցի ավանդույթները շարունակեցին Գևորգ Ջահուկյանը, Էդուարդ Աղայանը:

Գրական նոր գոհարներ էին ստեղծում Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հր. Քոչարը, Ն. Ջարյանը, Ստ. Ջորյանը, Վահագն Դավթյանը, Գուրգեն Մահարին: Նրանց կողքին և նրանցից հետո իրենց ստեղծագործություններով աչքի ընկան

Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը, Հրանտ Մաթևոսյանը, Մուշեղ Գալշոյանը, Սերո Խանգադյանը և ուրիշներ:

Հսկայական էին պատմագիտության նվաճումները: Տասնյակ արժեքավոր աշխատություններ հրատարակեցին Սկրտիչ Ներսիսյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Սուրեն Երեմյանը, Ծատուր Աղայանը, Գալուստ Գալոյանը, Հրանտ Ավետիսյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Սիմոն Կրկյաշարյանը, Ազատ Համբարյանը, Մանվել Զուլալյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Վլադիմիր Ղազախեցյանը, Լևոն Շահինյանը և ուրիշներ: Հայ պատմագիտության մեծ նվաճումներից էր Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի կողմից հայ ժողովրդի պատմության ութհատորյակի հրատարակումը:

Հայաստանի մշակույթային կյանքի մեծագույն ձեռքբերումներից էր 12 հատորյա Հայաստանի մեծարժեք հանրագիտարանի հրատարակումը (1974-1988թթ.):

Հայ մշակույթի զարգացման մակարդակը խորհրդային տարիներին թույլ է տալիս ասել, որ այդ ժամանակաշրջանում այն ապրեց իր երկրորդ «Ոսկեդարը»:

Հայ մշակույթը, հաղթահարելով բազում դժվարություններ, զարգանում էր նաև Սփյուռքում: Այստեղ գործում էին հարյուրավոր հայկական դպրոցներ, որոնց դերը չափազանց մեծ էր հայապահպանության առումով: 1960-80-ական թթ. Սփյուռքում հրատարակվում էր մոտ 150 ամուն պարբերական: Այն մեծ դեր էր կատարում ինչպես հայապահպանության, հայ քաղաքական մտքի զարգացման, այնպես էլ գեղարվեստական գրականության զարգացման առումներով: Մշակույթի ոլորտներից Սփյուռքում զարգացում էին ապրում հատկապես գրականությունը և պատմագրությունը:

Գրական խոշոր կենտրոններ էին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Լիբանանի հայ համայնքները: Սփյուռքի նշանավոր գրողներից էին Ենոք Արմենը, Վիլյամ Սարոյանը, որը, սակայն, ստեղծագործում էր օտար լեզվով, Համաստեղը, Շահան Շահնուրը և ուրիշներ:

Սփյուռքահայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչներից են Արշակ Ալպոյաճյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Վահագն Դադրյանը:

Արվեստի բնագավառում ևս արձանագրվեցին որոշակի հաջողություններ: Արվեստի հայտնի ներկայացուցիչներից էին համաշխարհային համբավ վայելող երգիչ-երգահան Շառլ Ազնավուրը, կինոռեժիսոր Ռուբեն Մամուրյանը, կոմպոզիտոր Ալան Զովհաննեսը, օպերային երգիչ Լիլի Զուգասզյանը և ուրիշներ:

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո, երկրի սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, մշակույթին տրվող ֆինանսավորման կրճատման, արտաքին մշակութային ուժգին ճնշման և այլ պատճառներով, հայ մշակույթը միառժամանակ անկում ապրեց: Հանրապետությունից հեռացան հարյուրավոր հայ մտավորականներ, փակվեցին կամ պարապուրդի մատնվեցին բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկներ, մի մասն էլ իր գոյությունն ապահովելու համար ապավինեց արտասահմանյան ֆինանսավորմանը, որը նշանակում էր հայ գիտությունը ծառայեցնել արտասահմանի շահերին: Փակվեցին 2000-ից ավելի գրադարաններ. 1987թ. Հայաստանում գոյություն ունեցող 3300 գրադարանից 2006թ. պահպանվել էր 1042-ը:

Երկրի սոցիալ-տնտեսական դրության որոշակի կայունացման շնորհիվ հայ մշակույթն աստիճանաբար բռնեց զարգացման ուղին: Աստիճանաբար վերելք ապրեց 1990-ական թվականներին անկում ապրած թատերական կյանքը, վերաբացվեցին փակված կինոթատրոններից մի քանիսը: Աշխուժացավ հայ երաժշտական կյանքը: Ստեղծագործական գործունեության ազատության շնորհիվ որոշակի վերելք նկատվեց նկարչության, քանդակագործության ոլորտներում: Մշակութային կարևոր ձեռքբերումներից էր մեծ թվով կրթամշակութային օջախների վերանորոգումը և համապատասխանեցումը ժամանակի պահանջներին:

Շոշափելի նվաճումներ արձանագրեց հայ պատմագիտությունը: Անկախության տարիներին հայ պատմագրությունը հնարավորություն ստացավ լիարժեք անդրադարձ կատարելու հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին հանրապետության, Հայ եկեղեցու պատմության և բազում այլ կարևոր հարցերին: